

ՋԱՀՈՒԿՅԱՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ-2008

Հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ
(Երևան, մայիսի 7-8, 2008թ.)





НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМ. Р. АЧАРЯНА

ДЖАУКЯНОВСКИЕ ЧТЕНИЯ—2008

доклады республиканской научной сессии
(Ереван, май 7–8, 2008г.)

INSTITUTE OF LINGUISTICS OF NAS OF RA

JAHUKIAN REDINGS – 2008

Republican Scientific session reports
(Yerevan, May 7–8, 2008)

ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО “ГИТУТЮН” НАН РА
2008

9291809, 198.1 Զատիկյան 2

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԳԵՄԻԱ
ՀԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՋԱՀՈՒԿՅԱՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ-2008

Հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ
(Երևան, մայիսի 7-8, 2008թ.)



ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2008

A 93746

ՀՏԴ 80

ԳՄԴ 81

Ջ 229

*Տպագրվում է ՀՀ ԳԱԱ ՀԱճառյալի անվան շեղվի ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ*

- Ջ 229 Ձախուկյանական ընթերցումներ-2008
Հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ
(Երևան, 2008թ., մայիսի 7-8). – Եր.: «Գիտություն» հրատ., 189էջ:

ԳՄԴ 81

ISBN 978-5-8080-0739-0

© ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, 2008թ.

ԱՐՈՐ ԳՈՐԾԻՔԱՆԻՇ ՀԱՍԿԱՅՈՒԹՅԱՆ
ԲԱՌԱՋՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆԻ
ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ

Արոր (գրբ. *արոր*) բառանունը ընդգրկված է «Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրի» բառային զուգաբանությունների բաժնում (հոդված 95):

Ըստ Հ.Աճառյանի¹ և Գ.Ջահուկյանի² *արոր* բառը ծագում է հնիւ. aratrom «վարելու գործիք» ձևից, որը կազմված է *arə - «հերկել» արմատից և *-tro- գործիք նշանակող գոյականակերտ ածանցից³: Իր հոդվածներից մեկում այլ տեսակետ է առաջ քաշել Ն.Սկրտչյանը⁴, ըստ որի՝ *արոր* բառը փոխառված է ակկադական *harār-* «ակոսել» բայից⁵: Այդ կապակցությամբ հրապարակված են Գ.Ջահուկյանի և Ի.Դյակոնովի հոդվածները⁶, որոնցում հերքվում են ոչ միայն *արոր*, այլև Ն.Սկրտչյանի նշած մի շարք այլ բառերի, այդ թվում *փետատ*, *մանգաղ*, *մանկեռ*, *ցաքան* և այլ գործիքանիշ բառերի՝ ակկադերենից փոխառված լինելը:

Հայերենում *արոր* բառանվան գործածության մասին վկայություններ կան դեռևս V դ. հայ թարգմանական գրականության մեջ⁷:

¹ Տե՛ս Հ.Աճառյան, Հայերեն արմատական բառարան /այսուհետ՝ ՀԱԲ/, Կ.Ա. Երևան, 1971, էջ 350:

² Տե՛ս Գ.Բ.Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան /այսուհետ՝ ՀԼՊՆԺ/, Երևան, 1987, էջ 58:

³ Տե՛ս մահ. Գ.Բ.Ջահուկյան, ՀԼՊՆԺ, էջ 468-474, Մ.Հանգեյան, Հայերենի հնդեվրոպական բառապաշարի քեմատիկ-իմաստային մի քանի խմբերի տարածքային բնութագիրը. – Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր, պր.2, Երևան, 1998, էջ 187-189 և այլն:

⁴ Տե՛ս Н.А.Мкртчян, “Отклонения” от закономерностей армянского языка в свете данных аккадского языка. – Պատմա-բանասիրական հանդես /այսուհետ՝ ՊԲՀ, 1979, 4, էջ 219–234/

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 220, մահ. Н.А.Мкртчян, Семитские языки и армянский, Ереван, 2004, էջ 200–201:

⁶ Տե՛ս Г.Б.Джаукян, Об аккадских заимствованиях в армянском языке. – ՊԲՀ, 1980, 3, էջ 107–119, 1980, 4, էջ 96–106, И.М.Дьяконов, К древневосточному субстрату в армянском языке. – ՊԲՀ, 1981, 1, էջ 56–78:

⁷ Տե՛ս Ա.Արրահամյան, Գործիքանիշ բառերը V դարի հայ մատենագրության մեջ և դրանց արտացոլումը հայերենի բարբառներում. – Հայոց գրեր. 1600, Երևան, 2006, էջ 339:

ՆՀԲ-ն ու ՀԱԲ-ը հղում են Ս.Գիրքը, Մեքերիանոսին, Ոսկեբերանին, Բարսեղ Կեսարացուն⁸: Բառը գտել ենք մահ Ոսկեբերանի այլ երկերի ոսկեդարյան թարգմանություններում, որ չեն հղել ՆՀԲ-ն ու ՀԱԲ-ը⁹: Բառանունը վկայված է մահ հետիինգերորդարյան հայ մատենագրության մեջ և թարգմանություններում, որոնցից ՆՀԲ-ն հղել է Նարեկացուն, Սարգիս վարդապետին, Գրիգոր Սկևռացուն, Վարդան Բարձրբերդցուն, Հովհաննես Երզնկացուն¹⁰: Գտել ենք ՆՀԲ-ում չհղված այլ վկայություններ ևս¹¹:

⁸ Տե՛ս Նոր բազմիք հայկազեան լեզուի (ՆՀԲ), հ.Ա, Երևան, 1979, էջ 386–387, ՀԱԲ, հ.Ա, էջ 350:

⁹ «...որս քեզէն սերմանեա յակօսս. չիք անդ *արօր*/այս և հետագա ընդգծումներն իմն են – Ա.Ա./, չիք մահ ունել, և ոչ եզինս հարկաց լծել...» (Ոսկեբերան, Մեկնութիւն Առաջին բոլորյն Տիմոթեայ /Ճառ ԺԳ/. – Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպոլսի եպիսկոպոսապետի Մեկնութիւն Թորոցն Պատրիարքի, հ.1, Վենետիկ–Ս.Ղազար, 1862, էջ 122), «...բայց անդ առանց *արօրոյ* և եզանց և մշակաց և ամենայն տարժանման սերմանողացն բուսանին պտուղը...» (Նույնի, Յարարածն, Ա.–Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպոլսի եպիսկոպոսապետի Ճառք, Վենետիկ–Ս.Ղազար, 1853, էջ 64), «Եւ որպէս ի մահս *արօրոյ* վաստակատրն արկանէ ի խոր և ի ներքուստ պատառէ զերկիրն և զգոշութեամբ պատարատէ տեղի պահատեան սերմանն..., այսպէս հարկ է և մեզ առնել. ըստ օրինակի *արօրոյ* վարել և խզել զսիրտս խորին երկրի» (Նույնի, Անդրիական ճառք, Դ. – Նույն տեղում, էջ 709), «Սորա իւրաքանչիւր զայս իմացեալ՝ այժմ լծեալ եզինս *յարօրի* ուսանին զմահս վարել ի խոր ակօսս հատանելով. այժմ ի սուրբ քեմս ելանելով և զանձինս աշխատելոց ի մեղս իբր մանգաղա՝ որ զփուշս հատանէ զերկրի՝ այնպէս քանի զմեղս մաքրեն ի ձեմջ» (Նույն տեղում, ԺԹ, էջ 891) և այլն:

¹⁰ Տե՛ս ՆՀԲ, հ.Ա, էջ 386–387:

¹¹ Ահա մի օրինակ Ոսկեբերանի «Ի Մեծն Գրիգորիոս Լուսատրիչն Հայաստանեաց» գործի միջնադարյան թարգմանությունից. «...և մահ (Գրիգոր Լուսատրիչը – Ա.Ա.) ինքն մի մշակ՝ միով բազկաւ կալեալ զմահոյ արօրոյ...» (Նորին Յովհաննու Ոսկեբերանի ի Մեծն Գրիգորիոս Լուսատրիչն Հայաստանեաց. – Սովետրբ հայկականք, հ.Դ, Վենետիկ–Ս.Ղազար, 1853, էջ 97): Այստեղ, անշուշտ, կա այլաբանություն: Ի դեպ, մեր գտած վկայությունների մի մասը այլաբանական իմաստ ունի, ինչպէս, օրինակ, Հակոբ Մծբնեցու («Դիցէ զլուծ իւր վերայ ուսոց սպըստամբաց. և *զարօր* խաչի քոյ սիրով ընկալցին ի պարանոցս իւրեանց» /Ճառ երանելոյն Յակօբայ Մծբնայ եպիսկոպոսի ասացեալ յաղագս աստեղն և մոգուցն և մանկացն Բերդեհեմի. – Գիրք և Ճառ հոգեշահ արարեալ յողափառ և յաստուածաբան վարդապետաց, Կոստանդնուպոլիս, 1722, էջ 124/), Հովհաննես Երզնկացու («...և ձգեցին *արօրով* բանին զսերմն հաւատոյ ի սիրտս դաշտաց բանական ազգաց մարդկային» /Մեկնութիւն Սուրբ Աւետարանին, որ ըստ Մատթեոսի, արարեալ ի սրբոյն Ներսիսէ շնորհալոյ մինչ ի համարն 17. հինգերորդ գլխոյն. և անտի ասարեալ յերանելոյն Յօհաննու Երզնկացոյ՝ որ և կոչի Ծործորեցի, Կոստանդնուպոլիս, 1825, Ժ, էջ 224/) գործերում և այլն:

Հայ մատենագրության մեջ և թարգմանություններում ավանդված են նաև **արոր* արմատով կազմված բարդ և ածանցավոր հետևյալ բառերը. *արորաբեկ*, *արորաբար*, *արորադիր*, *արորադիր լինել/առնել*, *արորադրել*, *արորադրութիւն*, *արորածիգ*, *արորայեղ*, *արորավար*, *արորել*, *արոր ձգել*, *կրկնարոր*, *երերկնարոր*, *անարոր*, *անարորադիր* և այլն:

Հայերենի բարբառագիտական ատլասի (ՀԲԱ) նյութերում բառանունը գրաբարյան (*արոր*) ձևով գրանցված է 25 խոսվածքներում և ընդգրկում է արևմտյան խմբակցության Փոքր Ասիայի բարբառախմբի Պոլսի միջբարբառը (Պարտիզակ, Օրդու), Ալմի (Ալն), Կարինի (ք.Ախալքալաք), Խարբերդ-Երզնկայի (ք.Խարբերդ, Բազմաշեն, Չմշկածագ), Մեքաստիայի (Ջարա) բարբառները, Մուշ-Տիգրանակերտի բարբառախմբի Մուշի (Մառնադբյուր /Անիի շրջան, ՎԲ Ալաշկերտից/) և Սասունի (Մշկեղ) բարբառները, Համշենի միջբարբառախմբի Համշենի (Ճենիկ) բարբառը, Վանի միջբարբառախմբի Վանի (ք.Վան, Տղացալար) բարբառը, Կիլիկիայի միջբարբառախմբի Մարաշ-Ջեյթունի (ք.Մարաշ) բարբառը, արևելյան խմբակցության Խոյ-Մարադայի (Ն.Խաթունարխ /Էջմիածնի շրջան, ՎԲ Խոյից/, Բուրաստան /Արտաշատի շրջան, ՎԲ Խոյից/ և Չանախչի /Արարատի շրջան, ՎԲ Խոյից/ Թաղիաբաղ /Մարադա/) բարբառը, Արարատյան բարբառախմբի Երևանի կամ Արարատյան (Երևան /կենտրոն/), Բայազետի (Արծափ) բարբառները, Ղարաբաղ-Շամախիի միջբարբառախմբի Ղարաբաղի (Հադրութ, Մեծ շեն) բարբառը և այլն:

Տարածական լայն ընդգրկում ունեն բառանվան հատկապես հնչյունական գուգաբանությունները՝ *հարոր*¹², *հարոր*, *հրրոր*,

¹² Հարոր ձևը նույնպես վկայված է հայ միջնադարյան թարգմանություններում. օրինակ՝ «Սա է Հայրն, որ ի ձեռն Որդոյն գնեաց զմարդկային զպիտանացուս. զամենայն ինչ վաճառեաց զերկրային ստացուածս իւր, զի գնեսցէ *զհարորն* երկրիս գոր ինքն ստեղծ» (Տեառն Եփրեմի Ի մարգարիտն յայտնութիւն. – Սրբոյն Եփրեմի Մատենագրութիւնը, Վենետիկ–Ս.Ղազար, 1836, էջ 359), «Եւ զմէկ հարօրն չորս եզոր պարտ է բանեցընել, որ փոփոխեն զիրեար, և հերկեն զգետինն ծանր խոփովքն. և առնեն զհերկն երեք *հարօր*, և *զհարօրն* խոփովն խորոս տանին, որ ի գետինն պարարտութիւնն հասանի» (Գիրք Վաստակոց. թարգմանութիւն նախնեաց յարաբացի լեզուէ, Վենետիկ–Ս.Ղազար, 1877, Դուռն ԺԸ, էջ 17) և այլն: Բառաձևն առկա է նաև Ներսէս Շնորհալու հանելուկներից մեկում /թանաք/. «Մերմն սև ու ջրաց հողով, / Դաշտըն ներկած սպիտակ բամբկով. / Ի հինգ լուծն *հարօրով*, / Ի իրեանց վաստակն ընթանալով» (Ներսէս Շնորհալի,

խարոր, խարուր, խերոր և այլն, որոնք ՀԲԱ նյութերում գրանցված են 143 խոսվածքներում և հիմնականում ընդգրկում են արևմտյան խմբակցության Մուշի (51 խոսվածք), Սասունի (19), Վանի (19), Կարինի (29), Խարբերդ-Երզնկայի (5), Համշենի (3), Ջեյթունի (1՝ Ֆուռնուս), Մեքաստիայի (2՝ Մանջալիկ, Խուռնավիլ), Քեսաբի (1՝ Խտրբեկ), Մալաթիայի (1՝ Մալաթիա), Եդեսիայի (1՝ Կարմունջ), Պոլսո (2՝ Արմաշ, Խասկալ) և արևելյան խմբակցության Երևանի (8), Ղազախ-Կիրովաբադի (1՝ Նյուսգեր) բարբառները։ Կան նաև եզակի՝ միայն մեկ խոսվածքում հանդիպող տարբերակներ, ինչպես, օրինակ, *արուր* (ԼՂՀ գ. Խանաբադ), *արօլ* (Սասունի գ. Ռաբատ), *հայէյ* (ք. Հաջըն), *հայոյ* (ք. Ջեյթուն), *հերոր* (ք. Քեսաբ)։ Հ. Աճառյանը Ասլանբեկի բարբառում արձանագրել է *աքո՛ր*, իսկ Ջեյթունի բարբառում՝ *հայթոյ* և *հայրթոր* տարբերակները¹³։

Հայերենի բարբառներում «արոր» հասկացությունն ունեցել է նաև այլ բառանվանումներ՝ *ալաք*, *գյործեն*, *չորոց*, *վեցկի*, *չութ*, *կեռ*, *գութան* և այլն։

1. Ալաք

Հ. Պողաճյանը իր «Տաճկերեն-հայերեն» համառոտ բառարանում բառը ծագեցնում է արաբերենից, որում այն նաև «գործիք» նշանակությունն ունի¹⁴։ Բառը նույն այդ նշանակությունն ունի նաև պարսկերենում¹⁵։ Թե որ լեզվից է հայերենը փոխառել, բարբառագիտական ու ազգագրական գրականության մեջ նշված չէ։ ՀԲԱ նյութերում բառանունը «արոր» նշանակությամբ գրանցված է 20 բնակավայրերի խոսվածքներում և ընդգրկում է Ղարաբադի (Ղարադաղ /6/, Ղարաբաղ /11/, Սյունիք /3՝ ք. Կապան, Ներքին և Վերին Խոտանան գյուղեր/) և Շամախիի (1՝ Շահումյանավան) բարբառները։ Նկատի ունենալով բառանվան տարածման շրջանակները /այդ տարածքը դարեր շարունակ եղել է պարսկական տիրապետության տակ/ և այն, որ որպես գործիքի անուն բառը գործածված չէ մեզ ծանոթ մատենագրական

Յաղագս երկնի և զարդուց նորա, Հանելուկներ, Ողբ Եդեսիո /կազմեց, առաջաբանը և ծանոթագրությունները գրեց՝ Գ. Ա. Հակոբյան/, Երևան, 1968, էջ 41)։

¹³ Տե՛ս ՀԱԲ, հ. Ա, էջ 350։

¹⁴ Տե՛ս Համառոտ բառարան տաճկերեն-հայերեն, հորինելու Յակովբոս Պողաճյանի Սյուխարեան ուխտեն, Բ տպագրություն, ի Վիեննա, 1858, էջ 9։

¹⁵ Տե՛ս Персидско-русский словарь, т. 2, Москва, 1985, էջ 115։

գրականության մեջ, գտնում ենք, որ այն կարող էր փոխառված լինել պարսկերենից:

Ի դեպ, միայն այս տարածաշրջանում է, որ արոթ գործիքը կոչել են հենց «գործիք» նշանակությամբ, ընդ որում՝ ոչ միայն փոխառյալ բառանվամբ:

2. *Գործեն*

Բառի արմատն է **գործ*, որը ծագում է հնդեվրոպական նախալեզվի *vorg*՝ «գործ, աշխատանք» արմատից և հայերենում նաև «հողը մշակել» նշանակությունն է ունեցել¹⁶: ՀԲԱ նյութերում բառանունը *գօրծին* ձևով գրանցվել է Սյունիքի մարզի Կարճևան գյուղի խոսվածքում¹⁷, որն ընդգրկված է Մեղրու բարբառում: Փաստորեն «գործիք» ընդհանուր հասկացությունը, որի ծավալում ներառվում են բոլոր գործիքները, այս խոսվածքում դարձել է դրանցից միայն մեկի անվանումը, այսինքն, ինչպես նշում է Հ.Մուրադյանը, «այստեղ կատարվել է իմաստի նեղացում»¹⁸: Է.Աղայանը բառանվան գործածությունը *գօրծէն* տարբերակով արձանագրել է Մեղրի գյուղի խոսվածքում¹⁹: Պետք է նշել, որ բառաձևը գործածվել է Մեղրու բարբառի ոչ բոլոր խոսվածքներում: Օրինակ՝ Հ.Մուրադյանն իր «Կաքավաբերդի բարբառը» գրքում, որում խոսում է Վարհավար, Գուդեմնիս, Կուրիս, Ագարակ գյուղերի խոսվածքների մասին, բառանվան գործածությունը փաստել է միայն Վարհավար գյուղի խոսվածքում՝ *գօրծան* տարբերակով²⁰:

3. *Չորոց*

Բառը վկայված է դեռևս XV դարի սկզբի (1412 թ.) մի վիճական արձանագրությունում²¹:

Ըստ Հ.Աճառյանի՝ *չորոց* բառանունը ծագում է բնիկ հայկական **չոր/ս/* ձևից²²: Իր «Գաւառական բառարանում» նա «Չորոց» բառահոդվածում նշում է, որ Ղարաբաղի և Վանի

¹⁶ Տե՛ս ՀԱԲ, հ.Ա, էջ 583–584:

¹⁷ Տե՛ս նաև Հ.Գ.Մուրադյան, Կարճևանի բարբառը, Երևան, 1960, էջ 191:

¹⁸ Նույն տեղում, էջ 184:

¹⁹ Տե՛ս Է.Աղայան, Մեղրու բարբառը, Երևան, 1954, էջ 266:

²⁰ Տե՛ս Հ.Գ.Մուրադյան, Կաքավաբերդի բարբառը, Երևան, 1967, էջ 168:

²¹ «Ես Գրիգոր տվի գձագունանց հողերն զմեր բաժինն իւր չորեցովն...» (Արցախ, երկասիրեց Մակար եպս. Բարխուտարեանց, Բագու, 1895, էջ 205):

²² Տե՛ս ՀԱԲ, հ.Գ, Երևան, 1977, էջ 632, նաև Հ.Աճառեան, Հայերենի գաւառական բառարան /այսուհետ՝ ՀԳԲ/, Թիֆլիս, 1913, էջ 884:

բարբառներում այն նշանակում է «չորս եզ՝ այն է երկու լուծ լծուած արօր», իսկ Բաբերդի և Ախալցխայի խոսվածքներում (*չորոշ*)՝ «չորս լուծով լծուած գութան»²³, այսինքն՝ բառանունը տրվել է գործիքին՝ նկատի ունենալով քաշող կենդանիների կամ լուծերի քանակը: Նույնն է նշում նաև Մ.Բարխուդարյանը. «Արցախում արօրով հերկած ժամանակ լծում են երկու գոմէշ եւ երկու եզն, որ կոչւում է *չորեց, չորուց, չարկով*, ծագած *չորս* բառից»²⁴: Բառը հայերենից փոխառվել է նաև թուրքերենի մի բարբառում՝ *čoros* «*չորոց, չորս* եզով արօր»²⁵: Վ.Բդոյանը գտնում է, որ «անունը թեև ծագում է չորս բառից, բայց կապ չունի եզների քանակի հետ», այլ արտահայտում է «արորին լծելու մասնակցած հարակաշի կոչումը կամ նման մի սկզբունք»²⁶: ՀԲԱ նյութերում բառանունը (իր հնչյունական տարբերակներով՝ *չիրօց, չնիրուց, չօրեց* և այլն) գրանցվել է ընդամենը 25 բնակավայրերի խոսվածքներում և ընդգրկում է Մուշի (14), Վանի (2՝ Կտրածքար, Հազարեն), Կարինի (1՝ գ.Բուլանըխ /Կարս/), Դիադինի (3), Բայազետի (1՝ Կարմիր /ՎԲ Բայազետից/), Երևանի կամ Արարատյան (1՝ Աստապատ), Ագուլիսի (1՝ Տանակերտ), Ղարաբաղի (2՝ Վերին Հոռաթաղ, Վաղուհաս), բարբառները:

4. Վեցկի

Բառը վկայված է դեռևս XI դարի մի վիմական արձանագրությունում²⁷, Մատթեոս Ուռհայեցու (XII դար)²⁸, Սմբատ Սպարապետի (XIII դար, կրկնում է Մատթեոս Ուռհայեցուն)²⁹ գործերում և հետագա շրջանի հայ մատենագրության մեջ³⁰:

²³ Տե՛ս ՀԳԲ, էջ 884:

²⁴ Մակար եպս. Բարխուտարեանց, նշվ. աշխ., էջ 205:

²⁵ Տե՛ս ՀԱԲ, հ.Գ, էջ 632:

²⁶ Վ.Հ.Բդոյան, Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, 1972, էջ 249:

²⁷ «...ազատեցին զվեցկէ կոռ...» (հղվում է ըստ՝ Վ.Հ.Բդոյան, նշվ. աշխ., էջ 248):

²⁸ «...բայց զայս բազում անգամ լուեալ է մեր ի բազմաց յաղագս բորեախսկոպոսին՝ որ ասէին Դաւթուկ, եթէ զգանձատունն նորա Աբրիիմն էառ և քառասուն ոտտ բարձան զգանձարանն նորա, ութ հարիւր *վեցկի* եզանց ելանէին ի տանն նորա» (Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 103):

²⁹ «Էր անդ քոր եպիսկոպոս մի Դաւիթ անուն. առին զգանձս նորա. բարձին քառասուն ըտտու. եւ հարիւր վեցկի եզանց ելանէր ի տանն» (Տարեգիրք արարեալ Սմբատայ Սպարապետի Հայոց, որդոյ Կոստանդնայ կոմսին Կոռիկոսոյ, ի լոյս ընծայեաց հանդերձ ծանօթութեամբք Կարապետ վարդապետ Շահնազարեանց, Փարիզ, 1859, էջ 66):

³⁰ Օրինակ, բառը գործածված է XV դարի (1415 թ.) մի Ավետարանի հիշատա-

ՀԱՃՈՒՅԱՆՆԵՐ *վեցկի* բառանունը ծագեցնում է բնիկ հայկական **վեց* արմատից՝ այն նշելով համապատասխան բառահոլվածի գավառական բառերի շարքում³¹՝ այդտեղ ընդգրկելով նաև *վեցկատոր* բառը, որ նշանակում է «հերկող, երկրագործ»³²: ՀԳԲ-ում նշվում է, որ Բաբերդի խոսվածքում *վեցկին* նշանակում է «*վեց* լուծ լծում զուբան», իսկ արոր նշանակությունն ունի Երևանի (*վեքի*), Խոյի և Ղարաբաղի (*վոսկի*), Սալմաստի և Վանի (*վիծկի*) բարբառներում³³: Կ.Շահնագարյանը, որը հրատարակության է պատրաստել Սմբատ Սպարապետի Տարեգիրքը, *վեցկի* բառի ծանոթագրության մեջ նշում է. «Գոթան եւ *վեցկի*՝ կրկին գործիք արօրադրելոյ գերկիր, այսու տարբերին ի միմիեանց. զի առաջինն ձգի յեօթն լուծ եզանց կամ զոմշոց. երկրորդն՝ յերից լծոց, ուստի *վեցկին* նշանակէ որպէս թէ *վեցեկի*»³⁴: Նույն բացատրությունն ենք կարդում նաև Սահակ վրդ. Ամատունու «Հայոց բառ ու բան»-ում, որը, հղելով «Մանանա» ժողովածուն, նշում է. «Արօրը... տեղ կայ, որ չորս լուծ կը լծեն, ուստի կանուանեն «Չորոց», տեղ ալ կայ, որ *վեց* լուծ կը լծեն, ուստի և կանուանեն «Վեցկի»»³⁵: Վ.Բդոյանը, վերլուծելով *վեցկի* բառանվան նշանակությունը Սյունիքի տարբեր շրջանների խոսվածքներում, եզրակացնում է, որ «Սյունիքում *վեցկի-վեսկի-վեցկան* ո՛չ մի առնչություն չունի *վեց* բառի հետ», այլ «կոմպլեքս է նշանակել» և «իր մեջ ունի խմբական աշխատանքն արտահայտող իմաստ»։ Նա նաև նշում է, որ բառանունն այդ իմաստը պետք է

կարսնում. «...և նոյն իսկ Թումայ վանից հօր ձեռք Նաջբադնի *վեցրու* հողն արտ՝ ամիրաց մըքաթոթովն և նշանովն, Սուրբ Վարդանայ մուլք (սեպհականութիւն) գնուաւ» (Սօտարք Հայոց, հաւաքեալ եւ լոյս ածեալ ձեռամբ Ղեւոնդ վարդապետի Փիրդալեմեան Տոսբեցոյ, Կ.Պօլս, էջ 46): Բառն առկա է նաև միջնադարյան հետևյալ վիմակալ արձանագրության մեջ. «Կաման Աստուծոյ եւ Թաճ Մրլաքս դուստր Մխիթարայ թոռն Խալայ շահին տվի մէկ *վեցկի* իմ գերեզմանատունս, միաբանք սահմանեցին Գ ժամ Սանդխտոյ տօնին՝ Բ ինձ, Բ իմ մօրն: Կատարիչք օրհնին յԱստուծոյ» (Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, աշխատասիրութեամբ Տեառն Սարգսի Սանահնեցոյ Ջալալեանց, մասն Բ, Տիֆլիս, 1858, էջ 212):

³¹ Տե՛ս ՀԱԲ, հ.Դ, Երևան, 1979, էջ 333:

³² Տե՛ս ՀԳԲ, էջ 1000:

³³ Տե՛ս նույն տեղում:

³⁴ Տարեգիրք արարեալ Սմբատայ Սպարապետի Հայոց, ծան. 31, էջ 147:

³⁵ Մանանայ, ժողովեաց և ի լոյս էաճ Գ.Վ.Սրուանձտեանց, Կ.Պօլս, 1876, էջ 453 (տե՛ս Հայոց բառ ու բան, աշխատասիրեց Սահակ վրդ. Ամատունի, Վարդապատ, 1912, էջ 390):

ունենար ոչ միայն Սյունիքի, այլև հայերենի բարբառների բոլոր այն խոսվածքներում, որոնցում «արորը *վեսկի-վեցկի* անունով է հայտնի»³⁶: ՀԲԱ նյութերում բառանունը (իր հնչյունական տարբերակներով՝ *վեսկի, վիսկի, վիցկի, վոսկի* և այլն) գրանցված է 145 բնակավայրերի խոսվածքներում և ընդգրկում է արևմտյան խմբակցության Մուշի (3), Վանի (33), Կարինի (4), Դիաղինի (1՝ Ջուջան) և արևելյան խմբակցության Երևանի (13), Բայազետի (4), Ջուղայի (6), Ագուլիսի (2), Խոյի (30), Ղարաբաղի (8) և պարսկահայոց (Աստրախանի, 36) բարբառները: Կան նաև միայն մեկ խոսվածքում հանդիպող տարբերակներ, օրինակ՝ *վեշճի* (Նախիջևանի գ.Ազա), *վեցկ* (Վանի գ.Ալյուր), *վիծկի* (ք.Վան), *յեսկի* (Սյունիքի գ.Խնձորեսկ), *ոսճյի* (Ուրմիայի գ. Բադիլթո):

5. Չուր

Ըստ Հ.Աճառյանի՝ բառը ծագում է պահլավերեն juxt «զույգ» ձևից. պարսկերենից է փոխառյալ թուրքերեն շիֆ «զույգ, հերկ» բառը: Հայերենը բառը փոխառել է թուրքերենից և քրդերենից³⁷: ՀԲԱ նյութերում բառանունը (իր հնչյունական տարբերակներով՝ *չոնթ, չուտ, ջուրթ, ճոնթ*) գրանցված է շուրջ 115 բնակավայրերի խոսվածքներում և ընդգրկում է հայերենի արևմտյան խմբակցության Մալաթիայի (1՝ Մալաթիա), Տիգրանակերտի (2՝ Տիգրանակերտ, Սևերեկ), Բեյլանի (2՝ Սովուլուխ և Աթլիս), Եվդոկիայի (1՝ Եվդոկիա), Եղեսիայի (1՝ Եղեսիա), Մուշի (6), Սասունի (12), Վանի (2՝ Վան, Ծոկու), Դիաղինի (1՝ Ջուջան), Խարբերդ-Երզնկայի (2՝ Բազմաշեն, Սվջող), Կարինի (10) և արևելյան խմբակցության Երևանի կամ Արարատյան (31), Բայազետի (1՝ Աշտարակի շրջանի Կարբի գյուղի խոսվածք, վերաբնակներ Բայազետից), Խոյ-Մարաղայի (25), Ագուլիսի (1՝ Յղնա), Ղազախ-Կիրովաբադի (7), Ղարաբաղի (9) բարբառները: Շապին-Գարահիսարի բարբառում արձանագրվել է *չիֆթ* տարբերակը:

6. Կեն

ՀԱԲ-ը բառանունը ծագեցնում *կեն* «ծուռ, կոր» հայակերտ բառից³⁸: Բառանունը գործիքին է անցել՝ նկատի ունենալով դրա կառուցվածքը: ՀԲԱ նյութերում բառանունը (իր հնչյունական

³⁶ Վ.Հ.Բղոյան, նշվ. աշխ., էջ 247:

³⁷ Տե՛ս ՀԱԲ, հ.Դ, էջ 133:

³⁸ Տե՛ս նույն տեղում, հ.Բ, Երևան, 1973, էջ 574:

տարբերակներով՝ *կեռ, կրեռ, կրռ*) գրանցվել է 29 բնակավայրերի խոսվածքներում և ընդգրկում է Ղարաբաղ-Շամախիի բարբառախումբը (Մեհտիշեն /1/, Ղարաբաղ /25/, Ղազախ-Կիրովաբաղ /3/):

7. *Գութան*

Որոշ վայրերում արորը անվանվել է *գութան*, թեև որպես գործիք գութանի կառուցվածք չի ունեցել: Հայ լեզվաբանության մեջ բառանվան փոխառության աղբյուրի վերաբերյալ կան տարբեր տեսակետներ: Ըստ Հ.Աճառյանի՝ բառը փոխառյալ է հարավկովկասյան լեզուներից /հմմտ. վրացերեն გუთანი միմգ-րելերեն gutani, ինգուշերեն gotanger, չեչեներեն got'a, թուշերեն /վրաց. բարբառ/ gut'a, gutan, ավարերեն k'ot'an, kutan, օսերեն gut'on, աբխազերեն a-k.w/ata/n(a) բոլորն էլ «արոր կամ գութան» նշանակությամբ³⁹: Հ.Աճառյանը մասնաշաղկապում է, որ բառի «փոխառեալ լինելը հաստատում է խունսագ. kutan «ցանել», որ ցոյց է տալիս թե բառը բնիկ է հիւսիսային կովկասեան լեզուներից»⁴⁰: Գ.Ջահուկյանը նշում է, որ «*գութան (գութայ)* բառը զուգահեռներ ունի կովկասյան մասնաշաղկապում, այդ թվում մասնաշաղկապում բնույթի օսերենում (guton, goton), ընդ որում դրանք կովկասյան արմատներով չեն մեկնվում. պետք է ենթադրել հայերենի և այդ լեզուների համար մի ընդհանուր աղբյուր (ուրարտերենը)»⁴¹:

Բառը վկայված է հայ միջնադարյան մատենագրության մեջ: Նորայր Բյուզանդացին, ՆՀԲ-ն և ՀԱԲ-ը հղում են «Ոսկիփորիկ» ժողովածուն⁴²: Բառը գտել ենք մասնաշաղկապում XV դ. մի ձեռագրի հիշատակարանում⁴³: Բառաձևը վկայված է մասնաշաղկապում դարերի հայ

³⁹ Տե՛ս նույն տեղում, հ.Ա., էջ 587:

⁴⁰ Նույն տեղում:

⁴¹ Հ.Լ.ՊՆԺ, էջ 592:

⁴² «*Գութայ*» մի բոլոր ետ յիշատակ (ի վանս Արծուաբեր Աստուածածնի) եւ միաբանք ուխտին պաշտմամբ եւ պատարագօր աղաչեցին զսուրբ Աստուածածինն» (տե՛ս Նորայր Ն. Բիւզանդացի, Բառգիրք ստորին հայերենի ի մատենագրութեանց ԺԱ-ԺԵ դարոց /այսուհետեւ՝ ԲՍՀ/, Ժնեւ, 2000, էջ 148, ՆՀԲ, Մնացորդը և յաւելած, հ.Բ, Երևան, 1980, էջ 1049, ՀԱԲ, հ.Ա., էջ 548):

⁴³ «Քրիստոս Աստուած քո սուրբ ծնադի բարեխաւսութեամբդ ողորմեա ամենայն հաւատացելոց. եւս առաւել ուսքա խալիֆին, որ յամէն տարի Բ (2) *գութան* է տուէր սուրբ Վարդանայ...» (Մ.Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. 1524, էջ 921բ. հղվում է ըստ Լ.Խաչիկեան, Աշխատութիւններ, հ.Բ, Երևան, 1999, էջ 322):

մատենագրության մեջ⁴⁴: Նորայր Բյուզանդացին գտնում է, որ *գութայ* բառին նախորդել է *գութան* ձևը, և հղում է Ճառընտիր ժողովածուն⁴⁵:

Բառանունը «արոր» նշանակությամբ /հնչյունական տարբերակներ՝ *գոթան*, *գ'ոտան*, *կ'ոթան*, *կ'ոտան* և այլն/ գործածվել է 14 բնակավայրում՝ ընդգրկելով Վանի (2), Կարինի (3), Ջուղայի (1՝ Նախիջևանի գ.Կյաղ), Ղազախ-Կիրովաբադի (3), Ղարաբադի (5) բարբառների առանձին խոսվածքներ: Գրանցվել են նաև *թթան* (թ.Օրդու) և *քէտան* (Տրապիզոնի գ.Բալլուղ) տարբերակները:

Ինչ վերաբերում է բառանվան «գութան» նշանակությանը, ապա այն գրանցվել է հայերենի բարբառների շուրջ 400 խոսվածքներում՝ հիմնականում հնչյունական տարբերակներով:

8. *Խիշ* /*հիշ*

ՀԲԱ նյութերում գրանցվել է «արոր» հասկացության նաև *հիշ* (1՝ Իրանի Մուծումբար քաղաքի խոսվածք) / *խիշ* (2՝ Հավարիկի /Ադրբեջանի Արեշի շրջանում/ բարբառ, Շամախիի Սաղյան գյուղի խոսվածք) զուգաբանությունը⁴⁶:

Ա.Ղ.Լուսենցն իր «Արեշի բարբառը» գրքում *խիշ* «արօր» բառանվան կապակցությամբ նշում է մի շարք բառեր /մեծ մասը՝ ՀԱԲ-ից⁴⁷/՝ *խիշտ* «տեգ, նիզակ», *խշտաոր* «նիզակաոր», *խշթել* /Վանում՝ «միսը ասեղ, փուշ և այլն խրել»/, *խշթիկ* /Վանում՝ «էշ քշելու խթան»/, *խշտիկ* /Մուշում՝ փայտի ծայրին անցկացրած սուր երկաթ»/ և այլն, և բերած օրինակների հիման վրա պնդում, թե այդ «բառերի արմատը... հայկական *խիշ* բառն է, և բոլորն էլ նշանակում են որևէ սրածայր՝ սուր գործիք»⁴⁸: Այդտեղից էլ նա եզրակացնում է, թե *խշել* բայը /Հ.Աճառյանի մոտ՝ «ղաղարիլ»/ «կարող է նշանակել խիշով հերկել, արորով վարել, արորել», *խշխթել* բայը նշանակում է «ոչ թե «սփռվել, հոգալ», այլ խիշ խթել, ծակծկել, կոխել... *խշտրել*՝ ոչ թե «արհամարհել...», այլ

⁴⁴ Տե՛ս, օրինակ, Ջամբո, համաժողովեցեալ և տարադրեցեալ ի Սիմեօնե կաթողիկոսէ Երևանցոյ, Վաղարշապատ, 1765, էջ 28, 107, 114, 131, 132–133, 215:

⁴⁵ «Ո՛չ ուստք գտանի ողորմութիւն, բայց ի տեղիս տեղիս շարժին ի սէրն Քրիստոսի, ոմն պատարագ եւ ընծայ նուիրելով, ...եւ ոմն ռիսկ առնելով, եթէ ազարակ եւ կամ ջրադաց, եւ այլ որ՝ *գութան*» /Ճառընտիր, ԻԹ, 715/(տե՛ս ԲԱՀ, էջ 147):

⁴⁶ Տե՛ս նաև Ա.Ղ.Լուսենց, Արեշի բարբառը, Երևան, 1982, էջ 150:

⁴⁷ Տե՛ս ՀԱԲ, հ.Բ, էջ 368, 381, 382, 431:

⁴⁸ Ա.Ղ.Լուսենց նշվ. աշխ, էջ 150:

ծակել, նիզակահար անել... *խրիչել*⁴⁹ ոչ քե «խրտնել», այլ խրել, խչել, որևէ սուր գործիքով խոր ծակել...»⁴⁹: Անշուշտ, այստեղ արհեստական մոտեցում է ցուցաբերված: Նաև հաշվի չի առնված այն հանգամանքը, որ Հ.Աճառյանը տարբերակել է դրանք, իսկ «խիշտ» բառահոդվածում ուղղակի նշել, որ բառը փոխառված է պարսկերեն *xišt* «նիզակ, աշտ» ձևից⁵⁰: Ինչ վերաբերում է *խիշ* «արօր» բառանվանը, կարծում ենք, որ այն փոխառված է պարսկերեն *xiš* «գութան, արոր» ձևից⁵¹:

9. Սաբան

Թուրքիայի Ռոդոսքո քաղաքի խոսվածքում գրանցվել է *սաբան* բառաձևը: Բառի ստուգաբանությունը հայերենի բառաբաններում չենք գտել: Բառանունը փոխառվել է թուրքերեն *saban* [գութան, արօր] ձևից⁵²:

ՀԲԱ նյութերում գրանցվել են նաև *արոր* հասկացության հազվադեպ հանդիպող այլ բառանուններ ևս, ինչպիսիք են՝ *բարանա* (գ.Մյասնիկով /Աբխազիա/), *լուսկ* (գ.Դենդիլ /Մեքսատիա/), *ծան* (ք.Վան), *կօրատ* (ք.Խանլար /Ադրբեջան/), *վար* (ք.Մուժումբար /Իրան/), *փանդան* (ք.Օրդու /Տրապիզոն/):

Վ.Բդոյանը արձանագրել է այլ բառանուններ ևս՝ *հարօնա* (Ախալքալակ, Ախալցխա), *արօնա և հառել* (Ախալքալակի գ.Գյումբուրդա), *կըռաշուք* (Իջևան), *ճղա-ճղի-ճղի* (Կարին, Մակու)⁵³:

Այսպիսով, «արոր» հասկացությունը հայերենի բարբառներում ունի ավելի քան 15 զուգաբանություն, որոնցից, ըստ ՀԲԱ նյութերի, լայն տարածական ընդգրկում ունեն *արոր* (168 խոսվածք), *վեցկի* (145 խոսվածք), *շուք* (115 խոսվածք) բառանունները՝ իրենց հնչյունական տարբերակներով: ՀԲԱ նյութերում խոսվածքների քանակով քիչ գրանցում ունեն *կեռ* (29 խոսվածք), *շորոց* (25 խոսվածք), *ալաք* (20 խոսվածք), *գութան* (արոր նշանակությամբ՝ 14 խոսվածք) բառանունները: Մնացածը (*խիշ*, *սաբան* և այլն) դասվում են հազվադեպ հանդիպող բառանունների թվին:

⁴⁹ Նույն տեղում:

⁵⁰ Տե՛ս ՀԱԲ, հ.Բ, էջ 368:

⁵¹ Տե՛ս Персидско-русский словарь, т.1, Москва, 1985, էջ 595:

⁵² Տե՛ս М.Фасмер, Этимологический словарь русского языка, т.3, Москва, 1964, р. 541, Турецко-русский словарь, Москва, 1977, էջ 740:

⁵³ Տե՛ս Վ.Հ.Բդոյան, նշվ. աշխ., էջ 246:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏՎՅԱԼՆԵՐ ՇԱՄՇԱԴԻՆԻ
ԽՈՍՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ

Բ.Մեծունցի «Շամշադին-Դիլիջանի խոսվածքը» աշխատությունն իր ուրույն տեղն ունի հայ բարբառագիտական ուսումնասիրությունների մեջ: Այն Շամշադին-Դիլիջանի խոսվածքին նվիրված միակ աշխատությունն է, որտեղ հեղինակը ներկայացնում է խոսվածքի հնչյունական, ձևաբանական և բառապաշարային առանձնահատկությունները, բառացանկ՝ ցույց տալով գրաբարյան բառերի փոփոխությունները խոսվածքում, տարբեր գյուղերից հավաքված նմուշներ, ինչպես նաև զավառական որոշ բառերի բացատրություններ: Աշխատության բոլոր արժանիքները բարձր գնահատելով հաղերձ՝ ուզում ենք խոսել աշխատությունում եղած հնչյունական, ձևաբանական և բառային որոշ վրիպումների մասին, որոնք, անկասկած, պայմանավորված են աղբյուրների կամ տեղեկորդների պակասով:

Մեր նկատած վրիպումները կարելի է խմբավորել հետևյալ կերպ.

1. Հեղինակը չի նկատում հնչյունափոխական որոշ երևույթներ, այդ թվում նաև զուգաձևություններ:

2. Որպես օրինաչափություն ներկայացնում է քերականական այնպիսի երևույթներ, որոնք խոսվածքում կամ մահացման եզրին են, կամ շատ քիչ են գործածվում:

3. Բառացանկում ներկայացնում է մի խումբ բառեր, որոնք խոսվածքում ընդհանրապես չեն գործածվում:

4. Ե՛վ հնչյունափոխության, և՛ ձևաբանության, և՛ բառային կազմի մեջ եղած զուգաձևությունները ներկայացնելիս հազվադեպ է նշում նրանց կիրառման տարածքը:

5. Կիրառում է խիստ անհասկանալի տերմիններ՝ չներկայացնելով դրանց իմաստը և չնշելով ոչ մի օրինակ:

Մենք անդրադարձել ենք Տավուշի շրջանի խոսվածքի այն ձևերին, որոնք ներկայացված չեն, կամ նշված ձևերից ոչ մեկը չի համապատասխանում խոսվածքի հնչյունափոխական, ձևաբանական երևույթներին կամ բառային կազմի իրական փաստերին:

Հնչյունափոխական վրիպումներ

Նշված աշխատության մեջ նկատված հնչյունափոխական վրիպումները հիմնականում վերաբերում են ձայնավորներին:

Ա ձայնավորի պատմական ա>ը հնչյունափոխության որոշ դեպքեր հեղինակը ներկայացնում է կամ որպես ա>է հնչյունափոխություն կամ չի նկատում, ինչպես՝ ծեք, կարօտիլ, հասնիլ, պակասիլ, հարըստանալ, փոխանակ ծըք, կըրօտիլ, հըսնիլ, պըկասիլ, հըրըստանալ և այլն:

Կան որոշ բառեր, որոնց մեջ ա ձայնավորը քմայնանում է, բայց ներկայացված են առանց դրա, ինչպես՝ քառ, լծկան, դաղիլ, փոխանակ քնռ, լծկնն, դնդիլ և այլն:


Հանդիպում է նաև հակառակ երևույթը, երբ խոսվածքում բառը չի քմայնանում, սակայն աշխատությունում ներկայացված է քմայնացմամբ, ինչպես՝ զանգ, շուշան, պնդնրճ, փոխանակ զանգ, շուշան, պաղարճ և այլն:

Հատկապես մեծ թիվ են կազմում է /ե/>ը հնչյունափոխությանը վերաբերող վրիպակները: Բ.Մեծունցը անդրադառնում է հնչյունափոխական նշված երևույթներին, սակայն ստորոբերյալ բառերը, որոնք խոսվածքում ենթարկվում են այդ հնչյունափոխությանը, աշխատության բառացանկում ներկայացված են առանց հնչյունափոխության, ինչպես՝ հանէր, անթէղ, խէխտիլ, կէռ, նէղանալ, փէսա, փոխանակ հանըր, անթըղ, խըխտիլ, կըռ, նըղանալ, փըսա և այլն:

Խոսվածքում ո ձայնավորը ենթարկվում է նաև ո>ու հնչյունափոխության, որը հեղինակն ընդհանրապես չի ներկայացնում, ինչպես՝ խօրըցընիլ, հօվանալ, մօտըցընիլ, օռնալ, փոխանակ խուրըցնիլ, հուվանալ, մուտըցնիլ, ոռնալ և այլն:

Հանդիպել են մի քանի բառեր, որոնք ներկայացված են առանց քմայնացման, ինչպես՝ բօռ, պօխի, փոխանակ բօռ, պծխի և այլն:

Բառամիջում նախաշեշտ ո ձայնավորը ենթարկվում է ո>ը հնչյունափոխության, որին թեև հեղինակը անդրադառնում է, սակայն նշված հնչյունափոխությանը ենթարկվող որոշ բառեր ներկայացնում է որպես ո>է հնչյունափոխության պատկանող բառեր, այսպես՝ սավէր, սըվէրիլ, փոխանակ սավըր, սըվըրիլ և այլն:



Ըստ Բ.Մեծունցի՝ -ավոր ածանցը Դիլիջանում արտասանվում է ավօր, իսկ մնացած շրջաններում՝ ավեր: Տավուշի շրջանում -ավոր ածանցը արտասանվում է ավրը, ինչպես՝ բախտավրը, կեղծավրը, ճրքնավրը և այլն:

Որս, որսկան բառերը հեղինակը ներկայացնում է վէրս, վէրսկան ձևով, մինչդեռ խոսվածքում այդ բառերը հանդես են գալիս հ-ի հավելմամբ՝ հորս, հորսկան:

Խոսվածքում հանդիպում են մաս հնչյունափոխական զուգաձևություններ, որոնց հեղինակը չի անդրադառնում, ինչպես՝ անըմ/անում, կ'ել/կիլ, կ'ըծլիս/կ'ըռլիս, կօղանալ/կոռնալ, հարիր+հարուր և այլն:

Խոսվածքում այսպես, այդպես, այնպես ցուցական դերանունները հնչյունափոխվելով դառնում են ոչ թե էսպես, էդպես, էնպես, այլ սըհը, տըհը, նըհը:

Բառապաշարային վրիպումներ

Աշխատության բառացանկում ներկայացված են մի խումբ բառեր, որոնք գործածական չեն խոսվածքում, ինչպես՝ ախպ, տիլար, մանառ, ապուր, մարագ, առնետ, քաղհան և այլն: Մրանց փոխարեն խոսվածքում կիրառվում են ըխպըհար, գիբիլ, մատղաշ, ամլիկ, շիրա, տակի տուն, շորվա, խորակ, սուպ, կոխ, քոխա բառերը:

Որոշ բառեր էլ իրենց օտար համարժեքների համեմատությամբ շատ քիչ են կիրառվում, այսպես՝ նոր, օգնել, մայել և այլ բառերի փոխարեն ավելի շատ գործածվում են քնզն, քծմակ անիլ, քըմաշ անիլ բառերը:

Կան մի շարք բայեր, որոնք խոսվածքում ունեն հարադրական կազմություն, սակայն բառացանկում ներկայացված են ոչ այդպես, օրինակ՝ անցընիլ, կաղիլ, խօստանալ, լիզիլ, պաննալ, մաշառիլ, նշանիլ, փոխանակ անց կըմալ, կաղի տալ, խօսկը տալ, լոճ տալ, պանց անիլ, մաշառ անիլ, նշան տընիլ և այլն:

Ըստ հեղինակի՝ բարձել, իմանալ, լսել, մլավել բայերը խոսվածքում հնչյունափոխվում են՝ դառնալով պանքցիլ, մաննալ, լըսիլ, մըլավիլ, սակայն խոսվածքում դրանք կազմված են այլ արմատներից, ինչպես՝ պեռնիլ, գիդանլ, մաննալ, կըլավիլ:

Ձևաբանական վրիպումներ

Խոսվածքում ներգոյական հոլովի, ինչպես նաև անկատար դերբայի -ում վերջավորությունը գյուղերի մի մասում մնում է անփոփոխ՝ -ում, իսկ մյուս մասում դառնում է -ըմ, մինչդեռ հեղինակը ներկայացնում է միայն -ըմ ձևը:

Ըստ Բ.Մեծունցի՝ -ուքին ածանցով կազմված վերացական գոյականները ենթարկվում են ի հոլովման, բայց ժամանակակից հայերենի ազդեցությամբ թեքվում են նաև ներքին ա հոլովմամբ: Ներկայում /հաշվի ենք առել երեք սերնդի լեզվական տվյալները/-ություն ածանցով կազմված բոլոր գոյականները ենթարկվում են ա ներքին հոլովման՝

ուղղ. ախպըրուցյուն

սեռ. ախպըրուցյան

տր. ախպըրուցյանը

բաց. ախպըրուցյունից

գործ. ախպըրուցյունով

ներգ. ախպըրուցյունումը /ըմը/

Ըստ Բ.Մեծունցի՝ ընկեր բառը ենթարկվում է և՛ ի, և՛ ոչ հոլովման, սակայն վստահ ենք, որ այս բառը ենթարկվում է միայն ի հոլովման, քանի որ երբեք չենք հանդիպել հընգերօչ, հընգերօչից, հընգերօչով, հընգերօչըմ ձևերին:

Ա /ւն/ ձայնավորով վերջավորվող բառերը որոշյալ հոդից առաջ մշտապես ենթարկվում են հնչյունափոխության՝ դառնալով ը, այսպես՝ տղա և գուլպա բառերի ուղղականը կլինի ոչ թե տըղան, գյուլքան, այլ՝ տըղըն, քյուլքեն: Եվ ուղղական հոլովով պայմանավորված՝ գործիական և ներգոյական հոլովները չեն լինի տըղայով/ը/, տըղայըմ/ը/, այլ՝ տըղովը, տըղումը:

Ըստ հեղինակի՝ եղբայր բառի բացառական, գործիական և ներգոյական հոլովները կազմվում են և՛ ուղղական, և՛ սեռական հոլովներից, ինչպես՝ ախպերիցը, ախպերովը, ախպերըմ և ախպօրիցը, ախպօրովը, ախպօրումը: Սակայն խոսվածքում եղբայր բառի նշված հոլովները կազմվում են միայն սեռականից:

Տուն և շուն բառերի բացառական ու գործիական /ներգոյական հոլովը առանձին ձև չունի/ հոլովները խոսվածքում ունեն միայն մեկ ձև՝ տանիցը, տանովը, շանիցը, շանովը, թեև հեղինակը ներկայացնում է նաև շընիցը, շընովը, տընիցը, տընովը ձևերը:

Կանայք բառը սեռականում ունենում է ոչ թե -օց/ը/ վեր-
ջավորությունը, ինչպես ներկայացված է աշխատությունում, այլ՝
- ունց/ը/՝

ուղղ. կընանիք/ը/

սեռ. կընանունց/ը/

տր. կընանունց/ը/

բաց. կընանունցից/ը/

գործ. կընանունցով/ը/

ներգ. կընանունցում/ը/

Մենք և դու դերանունների տրականի ձևերի մեջ նշված են
նաև մեզ և քեզ ձևերը, և սրանցով կազմված բացառական, գոր-
ծիական, ներգոյական /մեզանից, մեզանով, մեզանըմ, քեզանից,
քեզանով, քեզանըմ/ զուգահեռ ձևերը, որոնք խոսվածքին հատուկ
չեն:

Ըստ Բ.Մեժունցի՝ սա, դա, նա ցուցական դերանունները կա-
րող են հոլովվել և՛ քմայնացմամբ, և՛ առանց քմայնացման: Սա-
կայն խոսվածքին հատուկ չէ նշված դերանունների առանց
քմայնացման կիրառումը:

Որտեղ հարցական դերանունը հնչյունափոխվում է ոչ թե
վե՞րդեղ, այլ վերդի՞, որի բացառականը կազմվում է ոչ թե -ից-ով,
այլ յան-ով և ներգոյականի ձև չունի.

ուղղ. վերդի՞

սեռ. վերդիի՞

տր. վերդիի՞ն

բաց. վերդյա՞ն

գործ. վերդյօ՞վ

ներգ.

Տավուշի շրջանի խոսվածքին հատուկ չեն ամենը, ամենքը,
դիվը, չիմը որոշյալ դերանունները: Խոսվածքի որոշյալ դերա-
նուններն են՝ լօխ, սաղ, լրիվ, ամըն մինը, ամըն մի:

Ոչինչ ժխտական դերանվան փոխարեն ավելի շատ գործած-
վում է մի զատ էլ ա, մի պան էլ ա արտահայտությունները, իսկ
ոչինչ դերանվան հոլովված ձևերի փոխարեն՝ պան և զատ բա-
ռերի հոլովված ձևերով կազմված արտահայտությունները՝ մի
պանից էլ ա, մի պանով էլ ա, մի զատից էլ ա և այլն:

Գրքում կան լծորդության վրիպումներ, որոնցից նկատելի
են խոսել, աղալ և տեսնել բայերը, որոնք ներկայացված են

խօսիլ, աղիլ, տեսնիլ ձևով, միմյնդեո ճիշտ են խօսալ, աղալ, տընալ ձևերը:

Ըստ Բ.Մեծունցի՝ Շամշադին-Դիլիջանի խոսվածքում կա ութ դերբայ՝ անորոշ, անկատար, ապակատար, վաղակատար, հարակատար, ենթակայական, համակատար և ձևի:

Ըստ հեղինակի՝ խոսվածքում գործածվում է ապակատար դերբայի մեկ ձև՝ անորոշ+ի կազմությամբ, ինչպես՝ խըմիլ-խըմիլի, ուտիլ-ուտիլի և այլն: -Ի վերջավորությամբ ապառնի դերբայն արտահայտում է կատարելի կերպային գաղափար և ունի միայն անվանական գործածություն: Մակայն հեղինակի ներկայացրած բոլոր օրինակները ցույց են տալիս, որ դրանք ոչ թե ապակատար դերբայ են, այլ անորոշ դերբայի սեռական հոլովաձևեր:

Բ.Մեծունցն ընդունում է հարակատար դերբայով և օժանդակ բայով հարադրված հարակատար ներկա և հարակատար անցյալ ժամանակաձևերը, միմյնդեո դրանք խոսվածքում կիրառվում են միայն վիճակային բայերի հետ, ինչպես ժամանակակից հայերենում: Խոսվածքին հատուկ չեն լրվացած էմ, լրվացած ի, մընըցրած էմ, մընըցրած ի և նման ձևերը:

Մեծունցն առանձնացնում է նաև -էն վերջավորությամբ ձևի դերբայ, որը ցույց է տալիս գործողության կատարման ձևը և ունի մակբայական գործածություն: Խոսվածքում իսկապես գոյություն ունի -էն վերջավորությամբ ձև, ինչպես՝ քընալէն, պիրիլէն, նըստիլէն և այլն: Մակայն սրանք գործողության ձևը չեն ցույց տալիս, սրանք ավելի շուտ ժամանակ ցույց տվող ձևեր են, որոնք համապատասխանում են ժամանակակից հայերենի անորոշ դերբայի բացառական հոլովին՝ գնալուց, բերելուց, նստելուց, և նախադասության մեջ կատարում են ոչ թե ձևի պարագայի պաշտոն, այլ ժամանակի պարագայի պաշտոն:

Գրքում նշվում է, որ սահմանական եղանակն ունի 8 ժամանակաձև, որոնցից վեցը բաղադրյալ են՝ ներկա, անկատար անցյալ, վաղակատար ներկա, վաղակատար անցյալ, հարակատար ներկա, հարակատար անցյալ, իսկ երկուսը՝ պարզ՝ անցյալ կատարյալ և անկատար անցյալ երկրորդ ձև: Մակայն խոնարհման հարացույցում ոչ մի տեղ անկատար անցյալ երկրորդ ժամանակաձև չի նշվում, և մեզ համար խիստ անհասկանալի է, թե ինչ ձև նկատի ունի հեղինակը: Անորոշ է նաև ապառնի

Ժամանակի հարցը, թերևս այն պատճառով, որ խոսվածքում այդ ժամանակվա ճանաչման չէ ժամանակակից հայերենի համապատասխան ձևին: Մահմանական եղանակի ապառնին և ապակատար անցյալը խոսվածքում այժմ կազմվում են անորոշ դերբայով և օժանդակ բայի ներկայի և անցյալի ձևերով, որոնց վրա ավելանում է դ եղանակիչը, որը պիտի եղանակիչի կրճատված ձևն է, և իմաստով լիովին համապատասխանում են արդի հայերենի համապատասխան ժամանակաձևերին:

Մահմանական ապառնի

պիրիլ դեմ	պիրիլ դենք
-----------	------------

պիրիլ դես	պիրիլ դեք
-----------	-----------

պիրիլ դի	պիրիլ դեն
----------	-----------

Ապակատար անցյալ

պիրիլ դի	պիրիլ դինք
----------	------------

պիրիլ դիր	պիրիլ դիք
-----------	-----------

պիրիլ դեր	պիրիլ դին
-----------	-----------

Խոսվածքում գրեթե մահացած են քնալ բղեն, քնալ բղես, քնալ բղի, քնալ բղենք, քնալ բղեք, քնալ բղեն ձևերը:

Իսկ հարկադրական եղանակը ներկայում կազմվում է արդի հայերենի նման՝ պետք է / պիտի եղանակիչը չի գործածվում/ եղանակիչը ավելանում է ըղձական եղանակի ձևերին.

ապառնի

պլտկ ա կըրեմ	պլտկ ա կըրենք
--------------	---------------

պլտկ ա կըրես	պլտկ ա կըրեք
--------------	--------------

պլտկ ա կըրի	պլտկ ա կըրեն
-------------	--------------

անցյալ

պլտկ ա կըրեի	պլտկ ա կըրեինք
--------------	----------------

պլտկ ա կըրեիր	պլտկ ա կըրեիք
---------------	---------------

պլտկ ա կըրեր	պլտկ ա կըրեին
--------------	---------------

Հարկադրական եղանակի անցյալի իմաստն արտահայտվում է նաև հետևյալ կերպ

պլտկ ա կըրել ի	պլտկ ա կըրել ինք
----------------	------------------

պլտկ ա կըրել իր	պլտկ ա կըրել իք
-----------------	-----------------

պլտկ ա կըրել էր	պլտկ ա կըրել ին
-----------------	-----------------

Մեծունցը ներկայացնում է ըղձական անցյալի ի, իր, ար, ինք, իք, ին վերջավորություններով կազմված ձևերը /մընի, մընիր, մընար, մընինք, մընիք, մընին/, սակայն այս ձևերը ներկայում

այնքան էլ գործածական չեն: Ավելի շատ գործածվում են ըղձական անցյալի՝ արդի հայերենին նման ձևերը՝ մընայի, մընայիր, մընար, մընայինք, մընայիք, մընային: Ըղձական անցյալի ժխտականը ևս կազմվում է արդի հայերենի նման՝ չըմընայի, չըմընայիր և այլն:

Վրիպումներ ենք նկատել նաև որոշ անկանոն բայերի անցյալ կատարյալ և հրամայական ձևերում, այսպես՝ տընիլ բայը անցյալ կատարյալում ունենում է ոչ թե ա, ար, ավ, անք, արք, ան վերջավորությունները, ինչպես կարծում է հեղինակը, այլ ի, իր, ավ, ինք, իք, ին:

տըրի	տըրինք
------	--------

տըրիր	տըրիք
-------	-------

տըրավ	տըրին
-------	-------

Անցյալ կատարյալ երրորդ դեմքում տալ բայը չունի իրեւ ձևը, իսկ պիրիլ բայը՝ էպիր ձևը, ինչպես կարծում է հեղինակը: Նշված բայերի անցյալ կատարյալ երրորդ դեմքն ունի տըվավ/տըվուց և պիրավ/պիրուց ձևերը:

Բանալ բայի հրամայականը ոչ թե պա՛ց է, այլ պա՛ց արա, տընիլ բայի եզակի հրամայականը ոչ թե տի՛ր է, այլ տըրո՛ւ, տօղալ բայի հրամայական հոգնակին տո՛ղըցրըք է և ոչ թե տօղացե՛ք:

Խոսվածքում չի գործածվում ունիլ բայը, հետևաբար այն բոլոր ժամանակային ձևերը, որոնք ներկայացնում է հեղինակը, խոսվածքին հատուկ չեն: Կալ արմատը պահպանվում է որոշ քարացած ձևերում, ինչպես՝ կըլծիւր կալած, նի կալ և այլն:

Խոսվածքում ա խոնարհման բայերի կրավորականը կազմվում է և՛ ներկայի հիմքից, և՛ կատարյալի հիմքից, ինչպես՝ աղվիլ-աղացվիլ, կառթվալ-կառթացվիլ, խօսվալ-խօսացվիլ և այլն, սակայն հեղինակը ներկայացնում է միայն ներկայի հիմքից կազմված ձևերը:

Այսպիսով, ներկայացնելով մեր ճշգրտումները, հուսով ենք, որ դրանք կնպաստեն խոսվածքի իրական փաստերի ներկայացմանը հայ բարբառագիտության մեջ:

Օգտագործված գրականություն

1. Ս.Հ. Բաղդասարյան-Թափալցյան, Արարատյան բարբառի խոսվածքները
Հոկտեմբերյանի շրջանում, Երևան, 1973:
2. Կ.Դավթյան, Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Երևան, 1966:
3. Ա.Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Երևան, 1953:
4. Բ.Մեծունց, Շամշադին-Դիլիջանի խոսվածքը, Երևան, 1989:
5. Գ.Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972:

ՅՈՒՅԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱԽՄԱՍՏԱՅԻՆ
ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ

Մեծանուն գիտնական Անտուան Մեյեն¹ հին հայերենը ներկայացնում է որպես իսկական ժողովրդական լեզու, որ գրի է առնվել իր զարգացման այնպիսի պահին, երբ նրա կառուցվածքային տարբեր մասերը հասել էին ամենակատարյալ համաձայնության վիճակին: Խոսելով ցուցականների մասին՝ Մեյեն նկատում է, թե վերին աստիճանի համաչափ այդ համակարգը հայերենի ստեղծագործությունն է. հնդեվրոպական ոչ մի ուրիշ լեզու չունի դրա համագործը, և միայն հատուկենտ լեզուներից կարելի է համեմատելի ձևեր ներկայացնել: Ապա ավելացնում է. «Նույնիսկ դա էլ դժվար է, որովհետև հնդեվրոպական լեզուներն իրենց քերականության և բառագանձի ոչ մի մասում այնքան տարբերություններ չեն ներկայացնում, որքան դերանունների հարցում»¹:

Մեյեն հայերենի դերանվական համակարգի հարցը քննելիս հանգամանորեն անդրադառնում է *ս*, *դ*, *մ* արմատական տարրերի ծագմանն ու նշանակությանը և զարգացնում այն միտքը, որ հայերենում քերականական սեռի գաղափարն անհետացել է և դա մասամբ փոխարինվել է այն ճշգրտությամբ, որով դեմքերը որոշվում են ցուցական տարրերի միջոցով: Իր բնույթով դիմային տարբերակումը գրավոր լեզվում մույն ծառայությունները չի մատուցում, ինչ խոսակցականի մեջ, ուր ցուցականների կիրառությունը խիստ որոշակիություն և հստակություն է մտցնում եռադիմային հարաբերակցությամբ:

Ճանաչված բարբառագետ Ա. Ղարիբյանը բարբառների ձևաբանության մեջ դերանվանական համակարգը համարում է ամենահետաքրքրականը՝ նկատելով, թե շատ հաճախ դերանուններն են բարբառների հարևանության հանգամանքը պարզելու հուսալի հայտանիշը, թեև ոչ մի բարբառ դերանվանական մոր արմատ չի գործածում: Բոլորն օգտագործում են համա-

¹ Տե՛ս Ա. Մեյեն, Հայագիտական ուսումնասիրություններ, Ե., 1978, էջ 293:

ժողովրդական լեզվի միևնույն արմատական ձևերը՝ տարբեր արտասանությամբ:²

Հայտնի է, որ դերանուններին նվիրված 1-ին ամբողջական ուսումնասիրությունը Հ. Աճառյանի **ԼՁՀԼ** բազմահատորյակի 2-րդ գիրքն է:³ Պատմահամեմատական մեթոդով գրված այս աշխատության մեջ առանձին բաժիններ են նվիրված դերանունների ծագմանը, գրաբարում, միջին հայերենում, աշխարհաբարում, ինչպես նաև *բարբառներում*՝ նրանց ունեցած քերականական առանձնահատկություններին:

Քննության առարկա դարձնելով հայերենի բարբառներում գործառող դերանունները՝ մասնավորապես ուզում ենք անդրադառնալ ցուցական դերանուններին:

Ըստ Հր. Աճառյանի՝ ցուցական դերանունների թիվը հայերենի բարբառներում 100-ից անցնում է: Հին գրական հայերենի առավել գործածական *սա, դա, նա, սոքա, դոքա, մոքա, այս, այդ, այն, սոյն, դոյն, մոյն* և նման ձևերը միջին հայերենում ներկայանում են մասնակի փոփոխությամբ՝ պահպանելով եռադիմալին հարաբերակցությունը: Ցուցական դերանունները, արտահայտելով հաղորդակցվողների նկատմամբ հարաբերակցություն ունեցող առարկայի կամ հատկանիշի գաղափար, դրսևորում են ձևաբանական ու գործառական մույն հատկությունները, ինչ հարաբերակից խոսքի մասը (գոյական, ածական, թվական, մակբայ): Ցուցական դերանունների համար դիմացուցական իմաստավորումն է հատկանշականը , ոչ թե դիմառությունը, ինչն առկա է անձնական դերանունների մեջ:

Հարցի քննության համար հայերենի բարբառները շատ հարուստ նյութ կարող են տալ: Հաշվի ենք առել բարբառագիտական մենագրություններում, ազգագրական-բանահյուսական ուսումնասիրություններում եղած փաստերը, հայ ժողովրդական հեքիաթներից դուրս գրած նյութերը: Իսկ ամենահիմնավոր փաստերը քաղել ենք հայերենի բարբառների հավաքչական աշխատանքների արդյունքում ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնում կուտակված 500 խոսվածքային միավորների նյութերից:

«Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաք-

² Տե՛ս Ա. Ղաիրեյան, Հայ բարբառագիտություն, Ե., 1953թ

³ Տե՛ս Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 2, Ե., 1954:

ման ծրագրի» (այսուհետ՝ Ծրագիր) առաջին բաժինը, որ վերաբերում է հասկացական-բառանվանողական զուգաբանություններին, իր մեջ ընդգրկում է նաև որոշյալ, հարցական և ցուցական դերանունների մասին հարցում կատարող բառահոդվածներ (համապատասխանաբար՝ 459-465 կետերը): Իսկ Ծրագրի քերականական բաժինը, որի առանցքը հայ բարբառների ձևաբանական, մասամբ նաև շարահյուսական համակարգում հանդես եկող տարբերություններն են, հիմքում ունի այն սկզբունքը, թե տվյալ քերականական իմաստը ձևական ի՞նչ միջոցներով է արտահայտվում:

Ինչպես հայտնի է, Ծրագրով հավաքված բարբառային նյութերը հետագա քարտեզագրության համար նախապատրաստման փուլում են: Լեզվի ինստիտուտի բարբառագետների կողմից մշակվում են քերականական բաժնի նյութերը, և մենք ստանձնել ենք 593-611 կետերի հարցումով հայերենի բարբառների դերանվանական համակարգի իրողություններն արտացոլող նյութերի դասդասումը: Ընդ որում՝ 602-606 կետերը նվիրված են ցուցական դերանուններին: Հետաքրքիրն այն է, որ խոսվածքների գրանցման փուլում նկատել ենք, թե ցուցական դերանունները Ծրագրում բերված հարացույցով՝ *սա, դա, նա, այս, այդ, այն* կամ ասենք, շարահյուսական մակարդակում այդ խնդիրն ամրակայող՝ *Սա Հակոբն է, դա տուն է...* հարցումին պատասխանելիս ի՞նչ շփոթություն և տարակուսանք են ապրում այն բարբառախոսները, որոնց մայրենի խոսվածքում բացակայում են համարժեք ձևերը: Իսկ իրականում բանն այն է, որ հայերենի ոչ բոլոր բարբառներն են դրսևորում միաժամանակ *սա, դա, նա* և *այս այդ, այն* ցուցականների գործառույթ: Նույնպիսի տարակուսանքի մեջ են հայտնվում բարբառախոսները, երբ գրանցողի հարցումին ի պատասխան եռադիմության փոխարեն երկդիմություն են արձանագրում: Ասենք, Մշո բարբառում *իդա, իդա, ինա* ցուցականների 1-ին և երկրորդ ձևերի նույնություն կա:

Ինչպես գիտենք, ակադ. Գ.Ջահուկյանն իր վիճակագրական բարբառագիտության տվյալները համակարգելիս ելակետային հասկացությունը բարբառային հատկանիշն է համարել: Ընտրված 120 բարբառախոս վայրերի համար ներկայացված 100 հատկանիշների աղյուսակի 68-րդ հորիզոնականն

զբաղեցնում է ցուցական դերանունների երկդիմության հատկանիշը՝ մի դեպքում 1-ին դեմքի բացակայությունը, մյուս դեպքում՝ 2-րդ դեմքի: Հատկանիշի առկայությունը նշանակվում է այլուսով, բացակայությունը՝ միմուսով, իսկ միաժամանակ երկու նշանների առկայությունը միևնույն սյունակում փաստում է սկզբնավորման կամ մահացման գործընթացը: Ահա այս հատկանիշի առկայություն վկայված է 20 վայրի համար:

Բերենք օրինակներ՝ ապացուցելու համար, որ տարածքային մոտիկությունն այս հարցում խիստ էական չէ, ինչպես կարծում է Ա.Ղարիբյանը: Այսպես, ըստ Գ.Ջահուկյանի՝ բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման՝ Մշո և Տիգրանակերտի բարբառները ներառված են Արևմտյան խմբակցության հարավ-կենտրոնական բարբառախմբում: Ի տարբերություն Մշո բարբառի՝ Տիգրանակերտի բարբառը ճանաչում է *էս, էն, ըսի, ընի, ըսսիզի, ընիզի* ձևերը, ուր, ինչպես նկատելի է, բացակայում է հին հայերենի *այդ*-ը, այլ խոսքով՝ դարձյալ 1-ին և երկրորդ ձևերի նույնություն կա՝ այդ-ի բացակայությամբ: Ասենք, եթե Վանա բարբառում առկա է *էսա, էտա, էնա* եռադիմությունը, ապա Մոկսում այս բառը, ինչպես վկայում է «Արմատական բառարանը», ջնջված է:⁴

Ցուցական դերանունները մատնացույց են անում առարկան կամ նրա հատկությունը, թիվը, ինչպես նաև գործողության հատկանիշը՝ ձևը, չափն ու քանակը և այլն: Բերենք մեր ձեռքի տակ եղած նյութերից քաղած օրինակներ՝ փաստելու համար հայերենի տարբեր բարբառներում ցուցական դերանունների գործառույթը: Այսպես՝ Արևելյան խմբակցության բարբառներից Արարատյան բարբառի տարբեր խոսվածքների գրանցումները փաստում են, որ դերանունների հարցում գրական արևելահայերենից տարբերություններ գրեթե չկան, բացի ցուցական դերանուններից՝ *էս, էդ, էն* (սեռ-տր հոլ.՝ ըստուր, ըտուր, ընդուր և այլն): Նույն խմբակցության Ագուլիսի բարբառում՝ *հոկ, դոկ, մոկ, աս, ատ, ան, սո, դո, մո* և այլն:

Պոլսի բարբառում՝ *աս, ադ, ան, սա, դա, մա, ասի, ադի, անի, ասիզա, ադիզա, անիզա, ասանք, ադանկ, անանկ* և այլն:

Մշո բարբառում՝ *իդա, ինա, իդադէխ, ինադէխ, իդաքան,*

⁴ Տե՛ս՝ Հ.Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ.1, Ե., 1971, էջ 171:

ինաքան, իդախըդդիգ (այսչափ), ինախըդդիգ: Առկա է երկդիմություն:

Համչենի բարբառում՝ *աս* կամ *խսա, ադ, իդա* կամ *էդ, ըն* կամ *ինա* : Կան նաև *հօս, հօդ, հօն* և այլն:

Օրինակ՝ *Օրի՞ մըննագ նըստած էս հօդ* (Ինչու՞ ես մենակ նստել այդտեղ):

Այն, որ ցուցական դերանունները հոլովվում են, ներկայացնենք Վանի բարբառում գործառնող ցուցական դերանունների օրինակով: Ասենք, էս կամ էսա, էտ կամ էտա, էն կամ էնա և հոգնակին՝ *խօսնքյ, իտօնքյ, ինօնքյ* ցուցականները .

Եզակի՝

Ու. հ.	էս, էսա,	էտ, էտա,	էն, էնա
Ս. տ.	խօր,	իտօր,	ինօր
Բ.	խօրից,	իտօրից,	ինօրից
Գ.	խօրով,	իտօրով,	ինօրով

Հոգնակի՝

Ու. հ.	խօսնքյ, իտօնքյ, ինօնքյ
Ս. տ.	խօսնց, իտօնց, ինօնց
Բ.	խօսնցից, իտօնցից, ինօնցից
Գ.	խօսնցով, իտօնցով, ինօնցով :

Բերենք 1-2 օրինակ .

Էսա պիպէն պիպդի պատ (Այս մեխը մեխիւր պատին):

Կէլնի-չէլնէ մէյ մարթ-կընիկ. *ինօնց* մէյխատ տըղա կէլնի, անուն Ալէքսանդր:

Էտա տըղին կըպախէն փակ էօդի մէջ:

Կան նաև *էսիկ, էտիկ, էնիկ* ձևերը, բայց սրանք անհոլով են: Նույնը կարելի է ասել նաև այն բարբառների մասին, ուր էս, էդ, էն ձևերին զուգահեռ գործառնում են *-իկ* ածանցումով ձևերը, ինչպես Կարնո բարբառում՝ *էս, էդ, էն, իսի, իդի, ինի, իսիկ, իդիկ, ինիկ, էսիկ, էդիկ, էնիկ* (Գյումրի) և *աս, ադ, ան* (Ջավախք):

Մեր ձեռքի տակ եղած բարբառագիտական, ազգագրական նյութերը վկայում են, որ գրաբարյան *սա, դա, նա* շարքը շատ բարբառներում բացակայում է: Պետք է նկատի ունենալ, որ *սա, դա, նա* դերանուններն ունեն գոյականական գործածություն և

նախադասության մեջ հանդես են գալիս ենթակայի և խնդրի պաշտոնով, իսկ *էս, էտ, էն* դերանուններն ունեն նաև ածականական գործածություն և նախադասության մեջ կարող են հանդես գալ ոչ միայն ենթակայի և խնդրի, այլև որոշչի պաշտոնով: Ընդ որում՝ սա, դա, նա ցուցականները, չտարբերվելով առարկայական նշանակությամբ, տարբերվում են քերականական նշանակությամբ՝ արտահայտելով առարկայական ընդհանուր նշանակություն ըստ առաջին, երկրորդ կամ երրորդ դեմքի նկատմամբ ունեցած տարածական հարաբերության: Այս մասին հետաքրքիր դիտողություն ունի ճանաչված լեզվաբան, բարբառագետ Մ.Ասատրյանը. «Մ,դ,ն հոդերը, սկզբնապես ունենալով ցուցական իմաստ, հետագայում վերածվել են զուտ ստացական իմաստի, բայց *սա-այս, դա-այդ, նա-այն* դերանունների մեջ տարածական իմաստը միշտ եղել է ու կա: Հոլովման տեսանկյունից հարցը քննելիս կարելի է *սա-սրա, դա-դրա, նա-նրա* ձևերը տարարմատ ձևեր համարել: Տրականաձև *սրան, դրան, նրան* ձևերում առկա *ն-ն* փաստորեն որպես հոդ չի գիտակցվում, և *սրան դրան, նրան* ձևերն էլ ընկալվում են որպես պարզ բառեր, թեև ծագումնաբանորեն առկա է *ն* որոշիչ հոդը»:⁵ Այլ խոսքով՝ *սրան, դրան, նրան* ձևերը պիտի համարենք պարզ բառեր՝ ձևաբանորեն անտարրալուծելի:

Ներկայացնենք հայերենի բարբառներում ցուցական դերանունների իմաստային կողմին առնչվող որոշ խնդիրներ:

Սա-ն հավասարապես կարող է մատնացույց անել թե՛ անձ, թե՛ իր: Արևելյան խմբակցության բարբառների համար սովորական է *սա, դա, նա*-ի առարկայական, գոյականական իմաստը: Օր.՝ Սա հենց կարծըմա՝ մենք դավի փօր էնք ճըղէ (Երևանի Նորքի խոսվածք): Իսկ, ասենք, արևմտահայ գրական լեզվի հենքը դարձած Պոլտ բարբառում *սա, դա* ձևերին բնորոշ է ածականական-հատկանշային իմաստը՝ սա մարթը, սա դըդան, սա շունը:

Այս, այդ, այն ցուցականները արևելյան խմբակցության բարբառներում հանդես են գալիս օրինաչափորեն հնչյունափոխված՝ էս, էդ, էն ձևերով: Իսկ լայն գործառույթ դրսևորող

⁵ Տե՛ս՝ Մ.Ասատրյան, ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր» Ե., 1973, էջ 139:

էտնց, էտէնց, էնէնց և անկումով՝ *ստնց, տէնց, նէնց* ձևերը ընդունված է *այն* դերանվան գրաբարյան հոգնակի սեռական-տրականի քարացած հոլովածներ համարել:

Հայերենի և՛ արևելյան, և՛ արևմտյան խմբակցությունների բարբառներում լայնորեն գործառող *էսի, էտի, էնի* ձևերի ծագումը Հ. Աճառյանը համարում է *-իկ* ածանցումով *էսիկ, էնիկ* ձևերից *կ-*ի անկումով առաջացած ձայնավորահանգ ձևեր, իսկ *ըսիգի, ընիգի* (ասիկա, անիկա) դերանունների *իկ* մասնիկը կապում է գրաբարի *այս, այդ այն* ցուցականների մասնիկավոր հոլովածների հետ (այսորիկ, այսմիկ) և դիտում որպես ետգրաբարյան գոյացումներ:⁶

Գ. Ջահուկյանը ցուցական դերանունների *իկ-*ը հակված է համարելու հին հայերենի համապատասխան ձևերի մնացորդ:⁷

Մշո բարբառում, ուր առկա է երկդիմություն, *իդա, ինա*, բառաբարդումով առաջացած մնացած ցուցականներն էլ հանդես են գալիս երկդիմությամբ՝ *իդադէխ, ինադէխ, իդաքան, ինաքան, իդապէս, ինապէս, իդախըդրիգ (այսչափ), ինախըդրիգ*: Խարբերդի բարբառում (ըստ վիճակագրական դասակարգման՝ բարբառների արևմտյան խմբակցության Փոքր Ասիայի կամ արևմտյան բարբառախմբի Խարբերդ-Երզնկայի բարբառ), ձևի մակբայի արժեքով գործառող *այսպէս, այդպէս, այնպէս* ձևերին համարժեք բարդություններ է հանդես բերում՝ *սաբէս, տաբէս, նաբէս, անսցէխ, անտցէխ, անցցէխ* (համարժեք է *այսպիսի, այդպիսի, այնպիսի* ձևերին), *հօս, հօտ, հօն* և դրանցից ածանցված՝ *հուսա, հուդա, հունա* ցուցականները:

Միջին հայերենի հուշարձաններում վկայված *հօս, հօդ, հօն* ցուցականները, որոնք Աճառյանը չի ստուգաբանում, հայերենի շատ բարբառներում առկա ցուցական դերանուններ են, և նրանց ցուցականությունն արժևորվում է հենց այդ *ս, դ, ն* վերջնահնչյուններով: Դերանվանական արմատական այդ հնչյունները վկայում են բնիկ հայկական ծագում:

Ցուցական դերանունները անպայմանորեն ներառում են մատնանշական իմաստ: Այդ մասին հետաքրքիր դիտարկումներ

⁶ Տե՛ս՝ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ.2, Ե. էջ246:

⁷ Տե՛ս՝ Գ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Ե. էջ 87:

ունի Հակոբ Չոլաքյանն իր մայրենի Քեսաբի բարբառի իրողություններն արտացոլող մենագրության մեջ: Խոսելով *աս, ադ, ան, իստու, իդու, ինու* ցուցականների մասին՝ Հ. Չոլաքյանն անդրադառնում է նաև բանագետ-բանահավաք Տիգրան Անդրեասյանի՝ Սվեդիայի բարբառի ուսումնասիրության մեջ արտահայտած մտքին, թե *ըստու, իդու, ինու* ցուցականներին բնորոշ է մատնանշական իմաստ, ինչը չունեն *աս, ատ, ան* զուգաձևությունները: Չոլաքյանը գտնում է, որ ցուցական դերանուններին իմաստային այդպիսի զատորոշում վերագրելը սխալ է, քանի որ մատնանշական իմաստ պարունակելը պարտադիր պայման է ցուցական դերանունների համար, և որ «Որել է ցուցական դերանուն ցուցական է ճիշդ այդ *մատնանշական* իմաստին համար միայն»⁸: Քեսաբի բարբառում այս, այդ, այն ցուցականների դիմաց օրինաչափ հնչյունափոխության արդյունքում (այ>ա) առկա են *աս, ադ, ան* ձևերը և մասնակի այ>ի հնչյունափոխությամբ՝ *իս*: Վերջինս հանդիպում է ժողովրդական խաղիկներում՝ *այս* ցուցականի արժեքով, ինչպես՝

Հուօրս պըր ըննուօս իս դարա (Հարս պիտի լինես այս տարի):

Անդրադառնալով նաև ցուցական դերանունների՝ որոշ բարբառներում առկա ինքնատիպ ձևերին: Բերենք բառակազմական հետաքրքիր դրսևորումների օրինակներ, ասենք, Մոկսի բարբառով: *Այս* ցուցականի համար ունենալով *ան*, նաև՝ *նան*, այդի համար *ատ*, և այն- *ան*, *այսպես*, *այդպես*, *այնպես* ձևերի համար թուրքերեն *կանդար* փոխառյալ ձևի հետ հայաբանության արժեք է ձեռք բերել *նանկանդար* ձևը՝ *այսպես*, իսկ *անկանդար*՝ *այնպես* իմաստներով:

Հատուկ մատնացույց անելիս կիրառելի է նաև *անան*, որ նշանակում է՝ *ահա այդ*: Նմանատիպ ձևեր կան նաև Մշո բարբառում, ուր *իդա*, *իդա*, *ինա* երկդիմության կողքին կա նաև *հայդա* ձևը՝ *ահա դա*, *հենց դա* նրբերանգով: Օր.՝ *Իդա իմուն է*: *Հայդա է իմուն*:

Հետաքրքիր ձև է նշված Ն.Հովսեփյանի՝ Ոգմի բարբառի ուսումնասիրության մեջ: Հեղինակը գրում է, թե այստեղ ցուցական դերանունները, խիստ տարբերվելով Վանի բարբառի նույն

⁸ Տե՛ս Յակոբ Չոլաքեան, Քեսապի բարբառը, Հալեպ, 1986, էջ85:

դերանուններից, հանդես են գալիս մի առանձնահատկությամբ, որ տարբերում են հեռվում գտնվող, բայց տեսանելի առարկաները նո, դո, զո ձևերի և հան ցուցականի կապակցությամբ՝ նույն ձևերի օ ձայնավոր հնչյունի խիստ երկարացումով: Օրինակ՝ Մասեիս զօ՞հան ա (Սա Մասիսն է):

Նօ՞ հան հախալըրի ճօուր անօշ ա (Այն աղբյուրի ջուրը անուշ է):

Բարբառագետը նկատում է, որ երբեմն ցանկալի հեռուն ցույց տալու համար իր հայրենի երկրին կարոտած ոգնեցին կարող է նույնատիպ կառույց կազմել՝ այդ զօ կամ նօ մասնիկը առանց երկարացնելու, ինչպես՝

Նօ հան մը Շըքիբու մըլէէն ա (Այն մեր Շքիբի անտառն է):

Ընդ որում՝ զօ -ն դրվում է 1-ին և 2-րդ դեմքին մոտ առարկաները մատնացույց անելու համար, նօ-ն՝ 3-րդ:⁹

Բարբառագետ Ա.Ղարիբյանը, ներկայացնելով Արամոյի բարբառը, էական է համարում հարազատությունը գրաբարին: Նաև այն միտքն է զարգացնում, թե որոշ դեպքերում բարբառն առավել հետևողականություն է դրսևորում, քան գրաբարը: Ասենք, հատկանշական է, որ երբ Արամոյի բարբառում ցուցական դերանունը նախադաս է, հաջորդող գոյականը ստանում է այն դերանվան արմատական բաղաձայնը, որը գործածվում է գոյականի հետ, ինչպես գրաբարում: Օրինակ՝

Նօու յաս ըտկուլիս հայ ուղա (Նա այս գդալով(ս) ուտում է):

Իսկ այդ ցուցականի գործածության դեպքում կունենաք՝ յադ ըտկուլիդ - այդ գդալով, կամ, ասենք, հոգնակի թվով՝ այդ գդալներով- յադ ըտկալնայդ¹⁰:

Միանգամայն օրինաչափ է, որ ածականներին հարաբերակից դերանունները՝ *այսպիսի, այդպիսի, այնպիսի*, բարբառներից յուրաքանչյուրում հանդես է գալիս բարդությամբ, որի առաջին բաղադրիչը հնչյունափոխություն կրած տարբերակն է (էս, էդ, էն կամ աս, ադ, ան), իսկ երկրորդը պես կապին համարժեք ձևերը:

⁹ Տե՛ս՝ Ն.Հովսեփյան, Ոգմի բարբառը, Ե., 2001 (ատենախոսության սեղմագիր):

¹⁰ Տե՛ս՝ Ա. Ղարիբյան, Հայերենի նորահայտ բարբառների մի նոր խումբ, Ե., 1958, էջ 14:

Թուրքերենից փոխառյալ *չէշիդ* բառի բաղադրությամբ ձևերը գործողության կատարման ձևը կերպը ցույց տալու համար *այսպես, այդպես, այնպես* իմաստներով կիրառելը Մշո բարբառում, ասենք, ըդչէշիդ, բարբառախոսներից մեկի վկայությամբ Էրզրից բերված իրողություն չէ այլ՝ Կարնո բարբառի ազդեցություն է: Շիրակի մարզում Մշո խոսվածքներ գրանցելիս ունեինք ուշիմ բարբառախոսներ, որոնք տարբերակում էին նաև այդ կարգի իրողություններ:

Ամփոփելով այս փոքրիկ անդրադարձը հայերենի բարբառներում ցուցական դերանունների ձևաիմաստային դրսևորումների՝ նշենք, որ բարբառագիտական մենագրություններից քաղած հարուստ տեղեկություններին հավելելով քարտեզագրման համար մշակվող նյութերը՝ կարելի է ամբողջացնել ցուցական դերանուններին նվիրված հետաքրքիր ուսումնասիրություն:

Օգտագործված գրականության ցանկ

- 1) Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 2, Ե., 1954:
- 2) Աբրահամյան Ս. Գ., Արդի հայերենի դերանունները, Ե., 1956:
- 3) Բարսեղյան Հ. Խ., Հայերենի խոսքի մասերի ուսմունքը, Ե., 1980:
- 4) Հարությունյան Հ. Ա., Ածական. դերանուն, Ե., 1976:
- 5) Աճառյան Հ., Քննություն Վանի բարբառի, Ե., 1952:
- 6) Աճառյան Հ., Քննություն Համշենի բարբառի, Ե., 1947
- 7) Աճառյան Հ., Քննություն պոլսահայ բարբառի, Ե., 1941:
- 8) Ասատրյան Մ., Լոռու խոսվածքը, Ե., 1968:
- 9) Բաղդասարյան -Թափալցյան Ս., Մշո բարբառը, Ե., 1958:
- 10) Գրիգորյան Ա., Հայ բարբառագիտության դասընթաց, Ե., 1957:
- 11) Կոստանդյան Դ., Երզնկայի բարբառը, Ե., 1979:
- 12) Հանեյան Ա., Տիգրանակերտի բարբառը, Ե., 1978:
- 13) Հովսեփյան Ն., Ոգմի բարբառը, Ե., 2001 (ատենախոսության սեղմագիր):
- 14) Ղարիբյան Ա., Հայ բարբառագիտություն, Ե., 1953:
- 15) Ղարիբյան Ա., Հայերենի նորահայտ բարբառների մի նոր խումբ, Ե., 1958:
- 16) Մարգարյան Ալ., Գորիսի բարբառը, Ե., 1975:
- 17) Մարկոսյան Լ., Արարատյան բարբառ, Ե., 1989:
- 18) Մեյե Ա., Հայագիտական ուսումնասիրություններ, Ե., 1978:
- 19) Սկրտչյան Հ., Կարնո բարբառը, Ե., 1953:
- 20) Մուրադյան Հ., Կարճևանի բարբառը, Ե., 1960
- 21) Մուրադյան Մ., Շատախի բարբառը, Ե., 1962:
- 22) Պոլաքեան Հ., Քեսապի բարբառը, Հալեպ, 1986:
- 23) Պետրոսյան Վ., Սասունի բարբառը, Ե., 1954:
- 24) Զահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972:

ԽՆԴՐԱՌԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԽԱԼ
ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱՐԴԻ ՄԱՍՈՒԼՈՒՄ

Խնդրառությունը բառերի ստորադասական կապակցության եղանակ է, ինչպես և առողությունը: Ի տարբերություն վերջինիս՝ խնդրառության ժամանակ ստորադաս անդամն ընդունում է գերադաս անդամի պահանջած համապատասխան ձևը (հոլովը), որը պայմանավորված է լրացյալի իմաստով, իսկ եթե այն բայ է, նաև սեռով: Միևնույն բայը կարող է ստանալ ուղղականաձև կամ տրականաձև արտահայտված լրացում՝ պայմանավորված լրացման բնույթով (սիրել երեխային, սիրել վարդը):

Մեր խոսքն այստեղ ոչ ճիշտ խնդրառական կապակցությունների մասին է:


Արդի մամուլի լեզվի տարատեսակ շարահյուսական կապակցություններին ևս բնորոշ են խնդրառական կապակցությունների սխալ դրսևորումներ: Մեր նկատած սխալները հիմնականում բաժանվում են.

ա. Ոչ ճիշտ ձևեր՝ պայմանավորված եղանակավորողների խնդրառական առանձնահատկություններով:

Հայերենը հարստանում է նաև այլ ժողովուրդներից կատարած փոխառություններով, որոնց մի մասը, հիարկե, ճիշտ է և նպաստում է մեր լեզվի զարգացմանը: Սակայն մույնությամբ ընդօրինակվում են այնպիսի շարահյուսական կառույցներ, որոնք հայերենում ընդունելի չեն: Սա հիմնականում վերաբերում է քարգմանական գրականությանը և մամուլին, որտեղ մույնացվում են հայոց և ռուսաց լեզուների իրողությունները՝ հաշվի չառնելով, որ ռուսերենի անորոշ դերբայը չի մույնանում հայերենի անորոշ դերբայի հետ:

Օր.՝ «Ես կուզեմայի, որ անուններ տայիք, քանզի շատերն են խոսում ձեռքբերումների ու լավ գրքերի մասին, բայց անուններ տալ (-ուց) *խուսափում են*» (ԳԹ, 13.5.2005):

Ճիշտ չեն՝ *պատվիրել, առաջարկել, թույլ տալ, հանձնարարել, հրամայել* եղանակավոր բայերի և անորոշ դերբայի թեք ձևերը: «Տնօրենը *առաջարկել էր* արտաժամյա *աշխատելու*» (-ել) (Հայոց աշխ., 17.1.2008): «Բնավ կարիք չկա *թույլ տալ* ինչ որ



հատուկ քարտերի միջոցով այդպիսի տվյալներ *հավաքելու* (-ել) (Հայոց աշխ., 17.1.2008): «Առողջական ծանր վիճակում գտնվող շարքային անդամին *հանձնարարել էր* օգնություն *տրամադրելու* (-ել) (Իր., 13.7.2007): «Կուզենայի Ձեզ *չհավատալու* (-ալ)» (Իր., 22.1.2008):

բ. Արդի մամուլում հաճախակի են հանդիպում շարահյուսական այնպիսի կառույցներ, որոնցում *պետք, պիտի, հարկավոր, հնարավոր, պարտավոր, անհրաժեշտ, կարելի* և նման նշանակությամբ այլ միավորների, էական բայի և անորոշ դերբայների կառույցներում հոլովառությունը տատանումներ է տալիս հոգուտ ուղղականի: Սա որոշակի միտում է: Մինչդեռ նույն կառույցներում անորոշ դերբայի փոխարեն գոյական դրվելիս կանոնավորապես պահանջվում են թեք հոլովաձևեր: Նախադասի դեպքում թեք ձևն է ճիշտ (սիրելու, վիճելու կարիք չկա), իսկ հետադասի դեպքում՝ կարիք չկա *սիրելու* (-ել), *վիճելու* (-ել) ուղիղ ձևերը: Դիշտ կամ ոչ ճիշտ լինելը հետագայի հարց է:

գ. Ոչ ճիշտ ձևեր՝ պայմանավորված բարբառի կամ խոսակցական լեզվի ազդեցությամբ:

Եղանակավոր բայերի կողքին անորոշ դերբայի փոխարեն ըղձական եղանակով դիմավոր բայի գործածությունն բարբառայնության արտահայտություն է և գրական հայերենում՝ անընդունելի:

Օր.՝ «Ես *ո՞նց կարամ* նրա առաջարկությանը միանգամից պատասխան *տամ* (ՉԻ, պատգամավորի խոսք, 22.6.2007):

Դիշտ է՝ Ես *ինչպես կարող եմ ... պատասխան տալ*:

Ժողովրդախոսակցական ոճի դրսևորում պետք է համարել *սեռական+վրա* կապակցությունները, որոնցում *վրա* կապը գործածված է *համար, մասին* իմաստներով:

Օր.՝ «Երեկ օրվա կեսը վատնեցինք մի պարզ տեղեկատվություն *ճշտելու վրա*» (Առ., 23.2.2007):

Դիշտ է՝ վատնեցինք մի պարզ տեղեկատվություն *ճշտելու համար*:

«Արևմուտքը, ըստ էության, *սկսել է «մատերիալ» հավաքել* ՀՀ *իշխանությունների վրա*» (Իր., 8.11.2005):

Դիշտ է՝ *սկսել է «մատերիալ» հավաքել* ՀՀ *իշխանությունների մասին*:

«Ուղևորահոսքը նվազել է, և բացի այդ, գազալցակա-

յաններում ունեցած նախկին վճարվող գումարի դիմաց ավելի քիչ գազ են լցնում, իսկ գազի գումարը *վարորդների վրա է*» (Հայկ. ժամ., 4.7.2006):

Վերջին օրինակում *սեռական + վրա* կառույցում *վրա*-ի կապական իմաստը մթազնված է, և կապակցությունը ձեռք է բերել դարձվածի արժեք:

Մեր համար, քո համար կապակցությունները հատուկ են խոսակցական լեզվին, քանի որ առաջին և երկրորդ դեմքի անձնական դերանուններով արտահյուսված կապի խնդիրը դրվում է տրական հոլովով, իսկ մյուս դերանուններով կապի խնդիրը՝ սեռական հոլովով:

Օր.՝ «Իզուր տեղը չեղած տեղից *քո համար* պրոբլեմներ մի ստեղծի» (Հայկ. ժամ., 15.3.2008):

Ճիշտ է՝*քեզ համար*մի ստեղծիր:

«Որ *մեր համար* նորանոր բարդություններ է ստեղծում» (Ազ., 8.10.2004):

«Ճիշտ է՝ Որ *մեզ համար* է ստեղծում:

Կապակցության մեջ *իմ* դերանվան սեռական հոլովաձևի հետ *ս* հոդի կիրառությունը ճիշտ չէ: Քանի որ վերջինս ունի դերանվանական ծագում և պահպանում է *ես*-ի սեռական հոլովի իմաստը:

Օր.՝ «*Իմ ցուցմունքս* սկսում եմ նրանից» (ՀՀ, 6.7.2007):

Ճիշտ է՝ Իմ ցուցմունքը կամ ցուցմունքս ...

դ. Ոչ ճիշտ ձևեր՝ պայմանավորված օտար լեզվի ազդեցությամբ:

Հայերենի համար օրինաչափական չեն, և սովորաբար՝ ներգոյական հոլովաձևերը գործածական չեն *շահում է այն բանում, խնդիրը նրանում է, ինչում է մեղքը* կապակցությունները:

Օր.՝ «Պետությունը *շահում է այն բանում*, որ երիտասարդ ընտանիք է ձևավորում» (Իր., 17.4.2007):

Ճիշտ է՝ Պետության *շահը այն է*, որ:

«Մեր ժողովրդի ամենամեծ *խնդիրը կայանում է նրանում*, որ ջուրը շուրջօրյա չէ» (Փակ., 19.4.2007):

Ճիշտ է՝ ամենամեծ *խնդիրը այն է*, որ ...

«Հիվանդանոց *այցելելով՝ մենք* փորձեցինք հասկանալու, թե ինչ է պատահել և *ինչում է բժշկուհու մեղքը*» (Հայկ. ժամ., 19.7.2005):

Գիշտ է՝ փորձեցինք հասկանալ, թե ինչ է պատահել և ինչն է բժշկուհու մեղքը:

Օտարաբանության դրսևորումներ կան հետևյալ նախադասություններում.

«Եվ ասեմ, որ ջերմուկ հանքային ջուրը *դա* արտադրողների սեփականությունը չէ, *դա* Հայաստանի Հանրապետության, հայ ժողովրդի սեփականությունն է» (Իր., 20.3.2007):

Գիշտ է՝ ջերմուկ հանքային ջուրը արտադրողների սեփականությունը չէ, այլ Հայաստանի Հանրապետության, հայ ժողովրդի սեփականությունն է:

«Վերագրման մյուս *ռեգերվը դա* բացականերն են» (Առ., 24.4.2008):

«Այս բացթողումը *սկսել է աղետալի արդյունքների բերելը*» (Հայկ. ժամ., 2.2.2006):

Գիշտ է՝ Այս բացթողումը աղետալի *արդյունք է տվել*:

Կամ՝ Այս բացթողումը *սկսել է* աղետալի *արդյունք տալ*:

«Ուրը նշել է, թե իրենց գործընկերոջ հիմնավորումները շատ լուրջ *անհանգստություն են առաջացրել իր մոտ*, և ԵԱՀԿ-ն պետք է անպայման ուշադրությամբ անդրադառնա այդ հարցին» (Առ., 23.2.2007):

Գիշտ է՝ հիմնավորումները շատ լուրջ *անհանգստացրել են իրեն*:

Ոչ ճիշտ կապային կապակցություններ:

Ինչպես հայտնի է, կապերը հարաբերակից են հոլովներից և դրվելով այս կամ այն հոլովաձևերի վրա՝ արտահայտում են տարբեր հարաբերություններ, այսինքն՝ մի դեպքում առկա է հոլովներով, մյուս դեպքում՝ հոլովական կապով արտահայտված խնդրառություն:

Մակայն մեր խոսքը այստեղ ևս ոչ ճիշտ կապային կապակցությունների մասին է:

Արդի մամուլում ռուսերենի ազդեցությամբ առավելապես տարածված են *պայքարել*, *պատերազմել* բայերի գործածությունը *հետ* կապով լրացումների հետ: Հետ կապը միասնության իմաստ է արտահայտում, մինչդեռ այդ բայերը պահանջում են ընդդիմության իմաստ արտահայտող *դեմ* կապը:

Օր.՝ «Նա խոստացավ, որ ամեն ինչ անելու է, որ կառավարությունն այդ նախագիծը չհաստատի: Այսինքն՝ միայնակ պայ-

քարելու է Երևանի քաղաքաշինական խորհրդի հետ» (Առ., 27.10.2005):

Ճիշտ է՝ պայքարելու է ... *խորհրդի դեմ*:

«ԱՄՆ-ը պատրաստվում է պատերազմելու Իրանի հետ» (Իր., 13.4.2007):

Ճիշտ է՝ պատրաստվում է *պատերազմել Իրանի դեմ*:

Ռուսերենի ազդեցությամբ է նաև պայմանավորված *պատահել* բայի *հետ* կապի խնդիրը:

Օր.՝ «Նույն բանը պատահեց նոր խորհրդարանի հետ» (ՀՀ, 13.4.2008):

Ճիշտ է՝ *պատահեց* նոր *խորհրդարանին*:

Իբրև մի բանի հետևանքի իմաստ արտահայտող *հետևանք* կապը պետք է գործածվի իր լրացման հետ:

Օր.՝ «Ապրիլի 25-ին Մասիկ գետի վարարման հետևանքով ողողվել է Գեղարքունիքի մարզի Շատվան գյուղի հողատարածքները: Իսկ Վայոց ձորում Արփա գետի հետևանքով ջրածածկվել են Վայքի Թեւ-Խարափ բաղամասին հարակից ցանքատարածությունները» (Հայկ. ժամ., 27.4.2005):

Ճիշտ է՝ ... Արփա գետի *վարարման հետևանքով* ջրածածկվել են ...

Իբրև մի բանի պատճառ չի կարող գործածվել հետևանք կապը:

Օր.՝ «Գլխավոր քարտուղար Վալդել Ռոդեն թողեց պաշտոնը *հիվանդության հետևանքով*»:

Ճիշտ է՝թողեց պաշտոնը *հիվանդության պատճառով*:

Մեռական + հետ կապային կառույցով ձևավորված միասնության հարաբերությանը անձի դեպքում բնորոշ է փոխադարձ գործողությունը և ընդունում է միասնության պարագա, իսկ իրի դեպքում՝ հանգման խնդիր:

Օր.՝ *Հասցրել ենք ծանոթանալ Երևանի նոր հատակագծի հետ*» (Իր., 2.9.2005):

Ճիշտ է՝ *Հասցրել ենք ծանոթանալ Երևանի նոր հատակագծին*:

Նույնը կարող ենք ասել *հանդիպել* բայի մասին, որը ըստ իմաստի կարող է ընդունել միասնության պարագա (հանդիպել (հանդիպում ունենալ) ուսանողության հետ) կամ հանգման խնդիր (հանդիպել ընկերուհուն):

Օր.՝ «ԱՄՆ պետքարտուղար Քոնդոլիզա Ռայսը *հանդիպեց* Հայաստանի արտգործնախարար Վ.Օսկանյանի *հետ* և այժմ էլ հանդիպելու է Ադրբեջանի արտգործնախարար Է.Մամեդյարովին» (ՀՀ, 13.3.2007):

Դիշտ է՝ հանդիպելու է Է.Մամեդյարովի *հետ*:

«Նախորդ շաբաթ Բրյուսելում ոչ պաշտոնական *հանդիպում է տեղի ունեցել* ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանյանի և Ադրբեջանի ԱԳ նախարար Էլմար Մամեդյարովի *միջև*» (Հայկ. ժամ., 29.6.2005):

Դիշտ է՝ ... ոչ պաշտոնական հանդիպում է ունեցել Վ.Օսկանյանը ... Էլմար Մամեդյարովի *հետ*:

Ոչ ճիշտ ձևեր՝ պայմանավորված անվանական խնդրառական առանձնահատկություններով:

Եթե բայական խնդրառության մեջ վճռական դերը կատարում են բայիմաստն ու սեռային հատկանիշը, ապա անվանական խնդրառության մեջ՝ բառիմաստը, երբեմն մասնական հատկանիշ ունենալը:

Ձեր ձեռքով, իր բառիմաստով պայմանավորված, պահանջում է բացառական հոլովով դրված խնդիր:

«Մինչդեռ Վենետիկի հանձնաժողովն էլ պնդում էր, որ հանձնաժողովը լինի պրոֆեսիոնալ՝ *զերծ քաղաքականությունը*» (ՀՀ, 2.4.2005):

Դիշտ է՝ *զերծ քաղաքականությունից*:

Հարձակում բառը՝ իր անվանական խնդրառությամբ, պահանջում է ուղղություն, տարածական հարաբերություն արտահայտող *վրա* կապով լրացում, սակայն բերված օրինակում հակառակության, ընդդիմության իմաստ արտահայտող *դեմ* կապ է գործածված:

Օր.՝ «Թույլ չտանք Ադրբեջանին խախտել պայմանագիրը, մենք կապահովենք Հայաստանի անվտանգությունը և կկանխենք Ադրբեջանի հնարավոր հարձակումը և՛ Լեռնային Ղարաբաղի, և՛ Հայաստանի դեմ» (Իր., 1.6.2007):

Դիշտ է՝ ... կկանխենք հարձակումը *Հայաստանի վրա*:

Ոչ ճիշտ հոլովաձևեր՝ պայմանավորված բայերի խնդրառական առանձնահատկություններով:

Սա այն դեպքն է, երբ լրացումը՝ ստորադաս անդամը, չի ընդունում լրացյալի՝ գերադաս անդամի պահանջած համապատասխան ձևը:

Ներկայացնել բայը պահանջում է ուղիղ խնդիր լրացում:
Ներկայացնել մի բան (մեկին):

Օր.¹ «Իսկ հանդիպման ընթացքում նրանց շատ հստակ ներկայացրեց իր ապագա ծրագրերին ու անելիքներին» (Իր., 13.4.2007):

Ճիշտ է՝ ներկայացրեց իր ապագա ծրագրերը ու անելիքները:

Նույն թերթի մեկ այլ համարում հանդիպում ենք ներկայացնել բայի ենթակայի ուղղական հոլովի փոխարեն, բացառական հոլովի գործածությամբ:

Օր.² «Այս խնդրի շուրջ պարզաբանումներ է ներկայացնում «Ջերմուկ գրուպ» ՓԲԸ հիմնադիր ՀՀ ԱԺ պատգամավոր Աշոտ Արսենյանից»:

Ճիշտ է՝ պարզաբանումներ է ներկայացնում Աշոտ Արսենյանը:

Կամ՝ ... պարզաբանումներ Աշոտ Արսենյանից:

Մասնական բացառական ենթակայի ձևավորումը, ամբողջությամբ գործողությամբ մասնակցելով, ճիշտ չէ, որովհետև անվանումն էլ ասում է, որ նա մասամբ է մասնակցում գործողությանը:

Օր.³ «Ինչևէ, դեռ գրեթե մեկ ամիս ժամանակ կա, որպեսզի *թեկնածուներն ամեն մեկը* յուրովի ընտրողների գլխին քարոզ կարդա» (Հայոց աշխ., 22.1.2008):

Ճիշտ է՝*թեկնածուներից ամեն մեկը* քարոզ կարդա:

Հորդորում են դադարեցնել բայական կառույցը պահանջում է ուղիղ խնդիր:

«Կոչի հեղինակները Թուրքիային *հորդորում են դադարեցնել* ազգային փոքրամասնությունների նկատմամբ *խտրականությանը*» (Հայկ. ժամ., 10.4.2007):

Ճիշտ է՝ *հորդորում են դադարեցնել* *խտրականությունը*:

Կամ՝ «Դուք ինչպե՞ս եք *պատրաստվել քվեարկել* «Հեռուստատեսության և ռադիոյի մասին օրենքի *փոփոխություններին*» (ՉԻ, 4.7.2007):

Ճիշտ է՝ պատրաստվում քվեարկել ... օրենքի փոփոխությունները:

Պատասխանել բայը ուղիղ խնդիր չի պահանջում, ներգործական սեռի բայ չէ (պատասխանել ինչի):

Օր.՝ «Ես կարծում եմ, որ նա *պետք է պատասխանի* այդ մեղադրանքները» (Հայք, 8.11.2008):

Ճիշտ է՝*պետք է պատասխանի* այդ մեղադրանքներին:

Կրավորական կառուցվածքի նախադասությունում ներգործող խնդիրը լինում է բացառական կամ գործիական հոլովներով:

Օր.՝ «Մենք չենք ուզում, որ բոլոր հարցերը *քննարկվեն* միայն կառավարությունների մակարդակում» (Իր., 14.8.2007):

Ճիշտ է՝ քննարկվեն միայն կառավարությունների մակարդակով:

Կամ՝ «Այն մինչ այդ ռուսական մայրաքաղաքում պարբերաբար *էր իրականացվում* «Ոսկենուռ» կոչվող առևտրական տոնավաճառի մակարդակում » (Իր., 23.3.2008):

Ծառայել չեզոք սեռի բայ է, պահանջում է մի բանի / մեկին ծառայել, հանգման խնդիր:

Օր.՝ «Արդյունքում ազատված շինությունները, որտեղ կրթօջախներ են տեղակայված եղել, *պետք է ծառայեն* միայն կրթական նպատակներով»:

Ճիշտ է՝ *պետք է ծառայեն* միայն կրթական նպատակների:

Շնչել բայը պահանջում է ուղիղ խնդիր:

Օր.՝ Պարոնայք ամերիկացիներ, դուք երբևիցե մեր խորհրդարանի մթնոլորտում գտնվել եք, խորհրդարանի *օդով* շնչել եք» (Զի, 8.3.2005):

Ճիշտ է՝ *օդը* շնչել եք:

Գնալ բայը պահանջում է ո՞ւր հարցը և ոչ թե՛ որտեղով հետևյալ նախադասության մեջ.

Օր. «Կզմանք մինչև այնտեղ, ու նոր բոլորս *կզմանք* մեր տներում» (Հայկ. Ժամ., 26.2.2008):

Ճիշտ է՝ կզմանք մեր տները:

Զիջել բայը պահանջում է մի բան / մեկին խնդիր:

«Այն ոչնչով չի *զիջում* միջազգային բեմերի մակարդակից» (Իր., 12.4.2005):

Ճիշտ է՝ չի զիջում բեմերի մակարդակին:

Այսպիսով, արդի մամուլի խնդրառական կապակցություններին ևս բնորոշ են ոչ ճիշտ դրսևորումներ՝ պայմանավորված եղանակավորողների, բայերի, անվանական, հոլովներով և հոլո-

վական կապով արտահայտված խնդրառական առանձնահատկություններով:

Համառոտագրություններ

Առ. – Առավոտ (թերթ)

Ազ. – Ազգ (թերթ)

ԳԹ – Գրական թերթ (թերթ)

Իր. – Իրավունք (թերթ)

ՀՀ – Հայաստանի Հանրապետություն (թերթ)

Հայկ. ժամ. – Հայկական ժամանակ (թերթ)

Հայոց աշխ. – Հայոց աշխարհ (թերթ)

ՉԻ – Չորրորդ իշխանություն (թերթ)

Փակ. – Փակագիծ (թերթ)

ԲԱՅԻ ԱՆԴԵՄ ՁԵՎԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ
ՏԱՐԱՐԺԵՔՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՈՒՄԸ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ

Հայտնի է, որ դերբայների գործառական դասակարգմամբ տարբերակվել է անդեն բայերի երկու խումբ, որոնց տարարժեքությունը նրանց գործառական հատկանիշների մեջ է դրսևորվել: Այս մոտեցմամբ առանձնացվել են անկախ և կախյալ դերբայներ /Մ. Աբրահամյան, 1969, Մ. Ասատրյան, 1973/, ինչպես նաև՝ դերբայներ և ձևաբայեր /Ֆ. Խլղաթյան, 1999/: Տարբերակման հիմունք է համարվել այն, որ անդեն բայաձևերի մի մասը ունի վերլուծական բայահիմքի գործառույթ, իսկ մյուսներին այդ հատկանիշը բնորոշ չէ: Վերջիններս հատկանշվում են որպես գոյականի, ածականի, մակբայի գործառությամբ հանդես եկող անկախ ձևեր:

Բայական անդեն միավորների վերոնշյալ բաժանումը բարբառներում չի գործում: Այստեղ անկախ և կախյալ դերբայների միջև եղած տարարժեքությունը համահարթեցվել է, և դերբայական բոլոր ձևերին որպես գործառական հատկանիշ բնորոշ է կախյալությունը, այսինքն՝ որպես կախյալ անդամ հանդես գալը: Նկատի ունենալով, որ առավել հետաքրքրություն է ներկայացնում անկախ դերբայների գործածությունը որպես եղանակային ձևերի բաղադրիչ կամ որպես վերլուծական բայահիմք, այս հոդվածում կանոնադաշտնադրվում անդեն բայերի այդ գործառությին:

Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներում անորոշ դերբայը դիմաեղանակային ձևերի համար դիտվում է որպես ելակետային միավոր, ունի անկախ գործածություն. եղանակային ձևերի կազմությանը չի մասնակցում: Նրան հատուկ է հոլովման քերականական կարգը և խոսքաշարում շարահյուսական տարբեր պաշտոններով գործառելը:

Այլ է պատկերը բարբառներում, որտեղ անորոշ դերբայը հանդես է գալիս որպես եղանակաժամանակային զուգորդումների հիմնական իմաստի կրող:

Այսպես՝ Նախիջևան, Եղեգնաձոր տարածքի մի շարք խոսվածքներում, որոնց բնակչությունը գաղթել է Խոյից և Մարա-

ղայից, անորոշը ձևավորում է սահմանական եղանակի ներկա և անկատար ժամանակաձևերի խոնարհման հարացույցը՝ սիրել էմ, սիրել էս, սիրել ի, սիրել ենք, սիրել եք, սիրել են / Հայերենի բարբառագիտական ատլասի նյութեր, այսուհետև՝ ՀԲԱՆ, Նախիջևան, Նորս, 144/:

Անորոշի՝ ներկայի իմաստով գործածությունը գալիս է հին-հայերենյան շրջանից: Դրա առաջին վկայությունները հասնում են 7-րդ դար, իսկ նախատիպերը առկա են արդեն իսկ մեր մատենագրության սկզբնավորման փուլում:

Հավանաբար անորոշով ներկան և անկատարը սկզբնական շրջանում, երբ արդի բարբառների հնչյունական և ձևաբանական էական առանձնահատկությունները դեռ նոր էին սկսում գծագրվել, ընդգրկել է հայերենի ողջ տարածքը՝ կիրառվելով գրաբարյան ներկային զուգահեռ: Հետագայում միայն՝ հին շրջանում գոյություն ունեցող բարբառային տարբերությունների խորացմանը զուգընթաց, անորոշով կաղապարային կառույցները կենտրոնացել են արևելյան տարածքի բարբառների մի մասում /Մարաղա, Խոյ/՝ որպես սահմանական ներկայի և անկատարի կազմության հիմնական ձև:

Անորոշով հարադրությունները գործածվում են նաև Համշենի տարածքում: Այստեղ, սակայն, կիրառվում է անորոշի ուշ ձևությամբ փոփոխակը:

Հիշյալ հարադրություններով, ըստ Աճառյանի, դրսևորվում է շարունակական ներկայի իմաստ, որը կազմության երկու ձև ունի. «...հները դնում են ուղղական ենթակա, որին կցում են անորոշ դերբայը՝ ավելացնելով էական բայի եզակի Գ դեմքը, իսկ նորերը այս ձևը չգիտեն և ենթական դնում են սեռական հոլովով: Այսպես ըստ նորերի՝ յես էգոշ ա, տու էգուշ ա...» /Հ. Աճառյան, 1961, էջ 100/:

Հետագա ուսումնասիրողների կողմից ևս /Ղարիբյան, 1953, Ա. Աբրահամյան, 1953, Ա. Գրիգորյան, 1957/ Համշենի տարածքում շարունակականի վերոնշյալ կազմությունն է ներկայացվել:

Սակայն Հայերենի բարբառագիտական ատլասի /այսուհետև՝ ՀԲԱ/ ծրագրով հավաքված նյութերում, որոնք լրացված են համշենցիների օգնությամբ, շարունակականի կազմության ոչ մի դեպք նշված չէ /Համշեն, Դենիկ /39/, Օրդու /94/, Չիբլուխու /52/:

Շարունակականի հիշյալ ձևերի առկայությունը ստուգելու նպատակով տարբեր վայրերում բնակվող համշենահայերին ուղղված մեր հարցումները ևս դրական արդյունք չեն տվել /բարբառախոսները շարունակականի այդպիսի ձևեր չեն ճանաչում/: Հետևաբար կարելի է ենթադրել, որ վերոբերյալ կազմությունները գրաբարյան անորոշով ներկայի վերապրուկային ձևերն են, որոնք, սակավ գործածություն ունենալով, կիրառվել են կը նախամասնիկով ներկային զուգահեռ և հետագայում դուրս մղվել գործածությունից:

Անորոշ դերբայը Համշեն, Նոր Նախիջևան տարածքում մասնակցում է նաև ժխտական ներկայի հարացույցի ձևավորմանը, այսպես՝ չիմ բերիլ, չիս բերիլ, չի բերիլ, չիք բերիլ, չէք բերիլ, չին բերիլ /ՀԲԱՆ, Համշեն, Չիբլուխու, 52/:

Հայտնի է, որ միջինհայերենյան շրջանից սկսած՝ գրաբարյան ներկա և անցյալ անկատար բայաձևերի ժխտական կազմություններին զուգահեռ առաջացել է ժխտականի նոր ձև՝ անորոշով կազմված, որն անշուշտ պայմանավորված էր հինհայերենյան բայական ժամանակների դրական խոնարհման փոփոխությամբ:

Ըստ մատենագիտական վկայությունների՝ անորոշի ժխտական կազմությունները, ի տարբերություն դրականի, լայն գործածություն են ունեցել և հանդիպում են միջինհայերենյան գրեթե բոլոր գրավոր աղբյուրներում:

Դրանք ժամանակի ընթացքում ենթարկվել են ձևափոխությունների, և ներկայումս հայերենի տարածական տարբերակներում գործառում են անորոշի փոփոխակները:

Անորոշ դերբայը մասնակցում է նաև ենթադրական եղանակի ժամանակաձևերի կազմությանը: Ագուլիս, Կարճևան, Կաքավաբերդ, Մեղրի, Կոզեն, Հավարիկ բարբառային գոտում ենթադրական եղանակի ժամանակաձևերին բնորոշ է անորոշ դերբայ+օժանդակ բայ կադապարային կառույցը՝ խըմիլ իմ, խըմիլ իս, խըմիլ ա, խըմիլ իքյ, խըմիլ իքյ, խըմիլ ին /Մուրադյան, 1967, էջ 140/:

Թերևս վերոնշյալ բարբառային գոտում անորոշով ապառնիի առկայությունը կապվում է հինհայերենյան անորոշով ներկայի հետ, որն ունեցել է նաև ապառնիի իմաստ: Հավանաբար այս բարբառային տարածքում ևս դրանք ունեցել են երկակի արժեք:

Հետագայում թերևս սահմանական ներկայի և ենթադրական ապառնիի ձևային տարբերակման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ ստեղծվել են ներկայի արտահայտման նոր ձևեր /Ագուլխում՝ ում վերջույթով, Մեղրի, Կարճևան, Կոզեն բարբառային գոտում՝ լիս վերջավորությամբ դերբայներով և նրանց փոփոխակներով/, իսկ անորոշով կազմությունները պահպանվել են միայն ենթադրական ապառնիի հարացույցում:

Բարբառներում անորոշով կազմությունները արտահայտում են նաև հարկադրական ապառնիի իմաստ: Այսպես՝ անորոշով և պիտիլ բայի խոնարհված ձևերի հարադրմամբ կազմվում է Արարատյան, Շաղախի, Թքիլիսիի, Գորիսի, Հաղլուքի բարբառների հարկադրական եղանակը՝ ասիլ պէտէմ, ասիլ պէտէս, ասիլ պէտի, ասիլ պէտենք, ասիլ պէտէք, ասիլ պէտեն /Մարգարյան, 1975, էջ 179/:

Արարատյան բարբառի որոշ խոսվածքներում /Ալավերդի, Ստեփանավան, Իջևան, Դիլիջան/ պիտիլ եղանակիչը կրել է հնչյունական փոփոխություններ, և նրանից մնացել է միայն երկրորդ վանկը, այսպես՝ կըրիլ դէմ, կըրիլ դէս, կըրիլ դի, կըրիլ դենք, կըրիլ դէք, կըրիլ դէն /ՀԲԱՆ, Շամշադին, Նավուր, 175/:

Բարբառներում անորոշ դերբայը նաև արգելական հրամայականի ժամանակաձևեր է կազմում: Այսպես՝ Նոյեմբերյան, Իջևան, Շամշադին, Նախիջևան, Գորիս, Ղափան, Սիսիան, Ղարաբաղ, Ղարադաղ, Շամախի, Արեշ, Համշեն բարբառային տարածքում գործառում է անորոշով արգելական հրամայականը՝ մի քաշիլ, մի տալ /Մարգարյան, 1975, էջ 179/:

Անորոշով ժխտականը հատուկ է եղել միջին հայերենին ներկայի և ապառնիի իմաստով և հավանաբար սրա հետ է կապվում նաև արգելականի՝ անորոշով կազմությունը. թերևս ապառնիության իմաստով գործածվող բայաձևը օժանդակ բայի փոփոխությամբ կարող էր արտահայտել նաև արգելական հրամայականի իմաստ: Այս վարկածի հավաստիությունը հետևյալ փաստարկով կարելի է հիմնավորել: Վերոբերյալ տարածքում արգելական հրամայականի և ենթադրական ապառնիի կազմությունները հատկանշվում են ձևային նույնարժեքությամբ. դրանք ունեն միևնույն հիմքը /անորոշ դերբայ/, և տարբերությունները միայն օժանդակ բայերի մեջ են. ենթադրական ապառնիի դեպքում՝ են,

արգելական հրամայականի դեպքում՝ մի: Այսպես՝ կյիբիլ չըմ, չըս չի /ենթադրական ապառնի/ և մընալ մի /արգելական հրամայական/ /Շամշադին, 175/:

Համակատար դերբայը ևս բարբառներում մասնակցում է եղանակաժամանակային ձևերի կազմությանը: Գրական լեզուներում այն ներկայի հարացույցում գործառնում է միայն գալ, լալ, տալ միավանկ բայերի դեպքում: Այլ է պատկերը բարբառներում, որոնցում այն գործածվում է սահմանական ներկայի և անկատարի հարացույցում: Համակատարի այս հատկանիշը հատուկ է արևելյան խմբակցության բարբառների մի մասին՝ Արդվին, Ղարադաղ /մասամբ/, Մեղրի /Կուրիս, Ագարակ Վարհավար, Գուդեմնիս գյուղերում՝ ել, ալ լծորդության բայերում/, Դզմար, Բեյվան, Հաղրոթ /մասամբ/, Շաղախ, Խոյ /մասամբ/, Սալմաստ, Ուրմիա, Կարճևան, Կոզեն, այսպես՝ ուզիս ըմ, ուզիս ըս, ուզիս ա, ուզիս ըք, ուզիս էք, ուզիս ըն /Ղարադաղ, Բեյվան, 101/:

Նշված տարածքում լիս ձևությով դերբայը գործառնում է յիս, յս, ս, լ փոփոխակներով, որոնց համար ենթադրվում է զարգացման երկարատև ուղի:

Հիշյալ դերբայի զարգացման ընթացքը առաջին անգամ տվել է Աճառյանը. «Ամենահին ձևը պահում է Արդվինը /փնտռելիս է/, որ ուրիշ բան չէ, եթե ոչ անորոշ դերբայի ներգոյականը օժանդակ բայի հետ խոնարհված: ...Բարբառների Ել ճյուղի մեջ ներկայի այս ձևի կազմությունը ընդհանուր է դարձել: Այնուհետև արագաբանության օրենքով այդ ձևը սկսել է սղվել երկու ուղղությամբ: Նախ՝ շրջման ժամանակ՝ դերբայը մնալով ծայրին, կորցրել է իր ս ձայնը...: Ղարաբաղի բարբառը այնուհետև շրջյալ կրճատման այս ձևը ընդհանրացրել է և գործածում է նաև դրականում, ինչ. ասելի եմ, բերելի եմ և հետո օժանդակի միացմամբ էլ՝ ասելիմ, բերելիմ ևն:

Երկրորդ ուղղության հետևում են Ուրմիա, Սալմաստ, Խոյ, որոնք թեև շրջման ժամանակ ընդունում են հիշյալ ձևը, բայց սովորական գործածության մեջ սղելով անորոշի վերջավորությունը՝ բայաբնատը ուղղակի կցել են ներգոյականի վերջավորության և օժանդակ բային, այսպես՝

երթալիս եմ > երթալս եմ > երթաս եմ » /Հ. Աճառյան, 1926, էջ 279-280/:

Աղայանը լիս-ով դերբայի պատմական զարգացումը ներկայացնում է հետևյալ հաջորդականությամբ՝ գնալիս >/ գ/նէլիս /Կարավաբերդ/ > /գ/ նէիս > /գ/նէյս /Մեղրու հնագույնը/ >գինէս /Մեղրի/ > /գ/նէյ /Կարճևան/: /Է. Աղայան, 1954, էջ 12/:

Աղայանը չի նշում լ > յ անցումը և յ-ի առկայությունը բացատրում է էի > էյ փոփոխությամբ:

Մուրադյանի կարծիքով նախ՝ լ > յ հնչյունափոխության հետևանքով առաջացել է յիս դերբայական տարբերակը, ապա շեշտագուրկ ի-ն, զրկվելով իր ձայնավորական հատկանիշից, վերածվել է յ հնչյունի և նույնացել իրեն նախորդող յ ձայնորդի հետ, որի հետևանքով ստացվել է յս վերջավորությամբ ձևը: Բարբառների մեկ այլ խմբում շեշտակիր ի-ն է իրեն ձուլել հաջորդ յ ձայնորդը, և առաջացել է ս հնչյունով վերջավորվող դերբայը. «Մյուս բոլոր բարբառներում փոփոխությունն այստեղ էլ կանգ է առնում, մինչդեռ Կարճևանի բարբառում փոփոխությունը մի աստիճան էլ առաջ է ընթանում: Կարճևանի բարբառում այդ նոր փոփոխության հետևանքով առաջանում են մընայ, գիրիյ, մըռնիյ, բիճրինիյ դերբայական ձևերը, որոնք իրենցից ներկայացնում են դերբայական նույն ձևերը, ուր, սակայն, ընկել է վերջնահանգ ս-ն» /Հ. Մուրադյան, 1960, էջ 10/:

Ընդհանրացնելով վերը բերված փաստերն ու կարծիքները՝ կարելի է լիս-ով դերբայի հնչյունափոխության երկու ուղի նշել. առաջին՝ լիս > յիս > յս /շեշտագուրկ ի-ի անկմամբ և ոչ թե ի > յ փոփոխությամբ/ > ս > 0 > յ /մընալիս > մընայիս > մընայս > մընաս > մընա > մընայ/, երկրորդ՝ լիս > լս > ս /մընալիս > մընալս > մընաս/:

Ամենայն հավանականությամբ առաջին ճանապարհով են առաջացել Մեղրի, Ղարադաղ, Հաղորթ, Կոզեն բարբառային գոտու խոսվածքների մընաս տիպի ձևերը: Երկրորդ ուղիով է զարգացել հավանաբար Ուրմիա, Խոյ, Սալմաստ տարածքի համակատար դերբայը:

Հարակատար դերբայը ևս բարբառներում հանդես է գալիս որպես վերլուծական բայահիմք:

Երկու գրական լեզուներում էլ գործածվում են հարակատար ներկա և անցյալ ձևերը, որոնք ունեն վերլուծական կազմություն՝ հարակատար դերբայ և օժանդակ բայի համապատասխան ժամանակաձև: Հիմնական տարբերությունը կիրառության

ուղորտների մեջ է: Եթե արևմտահայերենում այս ժամանակա-
ձևերը գործառության լայն ոլորտ ունեն. հնարավոր է բոլոր
բայերի հարակատարների զուգորդումը օժանդակ բայի հետ,
ապա արևելահայերենում հարակատարով ձևերը ունեն ծավա-
լային սահմանափակում. հատուկ են միայն կրավորական սեռի
բայերին և չեզոք սեռի այն բայերին, որոնց ցույց տված գործո-
ղությունը ունի հետևանքային ավարտ կամ որոնք վիճակ, դրու-
թյուն են ցույց տալիս:

Բացի այդ, արևելահայերենում դրանք որևէ ժամանակա-
կետի հետ չեն առնչվում, չեն հակադրվում այլ ժամանակաձևերի,
հետևապես եղանակաժամանակային կազմություններ չեն և
դուրս են մնում սահմանական եղանակի խոնարհման հարա-
ցույցից /տես Է. Աղայան, Հ. Բարսեղյան, 1974/:

Հարակատարով կազմությունների գործածությունը տարբեր
է մակ բարբառներում, որոնցում դրանք երկակի արժեք ունեն.
արտահայտում են վաղակատարի և հարակատարի իմաստ:
Մենք հիմնականում կանդրադառնանք դրանց՝ վաղակատարի
քերականական իմաստով դրսևորումներին, քանի որ, ինչպես
արդեն ասվեց, հարակատարության իմաստի դեպքում դրանք
եղանակաժամանակային ձևեր չեն, հետևաբար չեն առնչվում
հարցի քննությանը:

Բարբառային մի որոշակի տարածքում հարակատարը հան-
դես է գալիս որպես սահմանական եղանակի վաղակատար
ներկա և անցյալ ժամանակաձևերի բաղադրիչ, այսպես՝ բիծրի-
յած ըմ /բարձրացել եմ և բարձրացած եմ/, բիծրիյած ըս,
բիծրիյած ա, բիծրիյած ըք, բիծրիյած ըք, բիծրիյած ըն /
Մուրադյան, 1960, 146/:

Վերջիններս ներգործական սեռի բայերի դեպքում արտա-
հայտում են վաղակատար ներկա ու անցյալ ժամանակների
իմաստ, իսկ չեզոք և կրավորական սեռի բայերի դեպքում՝ միա-
ժամանակ վաղակատար և հարակատար ներկա ու անցյալ
ժամանակների իմաստ, այսպես՝ ասած ըմ - ասել ըմ, էի, բայց
մընացած ըս - մընացել ես, էի, մնացած ես, էի և այլն:

Այս երևույթը բնորոշ է Ղարաբաղ-Շամախիի կամ ծայր հյու-
սիսարևելյան միջբարբառախմբի Ղարաբաղի բարբառի որոշ
խոսվածքային միավորների (Շաղախ, Հադրութ, Ղարադաղ) և
Ագուլիս-Մեղրիի կամ արևելյան բարբառախմբին:

Բարբառային հիշյալ տարածքը հատկանշվում է անցյալ կատարյալի բաղադրյալ կազմությամբ: Այստեղ անցյալ կատարյալ ժամանակահամաստը դրսևորվում է վաղակատար դերբայ և օժանդակ բայ կաղապարային կառույցով:

Գուցեն հարակատար դերբայի վերոբերյալ բազմիմաստությունը պայմանավորված է վաղակատարի՝ կատարյալի իմաստով գործառությամբ և նախապես բնորոշ է եղել կատարյալի բաղադրյալ կազմությամբ բարբառներին՝ որպես տվյալ տարածքին բնորոշ բարբառային իրողություն, իսկ ավելի ուշ համաբանությամբ ընդգրկել նաև այլ բարբառային միավորներ:

Հիշյալ վարկածի հավաստիությունը թերևս հիմնավորվում է այն փաստով, որ կատարյալի պարզ կազմությամբ բարբառների մեծ մասը գուրկ է հարակատարով ժամանակաձևերից և վաղակատարության քերականական իմաստը դրսևորում է վաղակատար դերբայով, այսպես՝

ՎԱՂԱԿԱՏԱՐ

զըբէր էմ զըբէր էնք
զըբէր էս զըբէր էք
զըբէր է զըբէր էն

/Շապին Գարահիսար, 3/

ԱՆՑՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼ

սիրէցի սիրէցինք
սիրէցիր սիրէցիք
սիրէց սիրէցին

Բարբառների մեկ այլ խմբում վաղակատար ժամանակների իմաստը ներգործական սեռի բայերի դեպքում արտահայտվում է հարակատար դերբայով և ունել բայի խոնարհված ձևերով, իսկ չեզոք և կրավորական սեռի բայերի դեպքում՝ հարակատար դերբայով և օժանդակ բայով՝ գըբրած ունիմ, գըբրած ունիս, գըբրած ունի, գըբրած ունինք, գըբրած ունիք, գըբրած ունին, իսկ չեզոք բայի դեպքում՝ մընացած իմ, մընացած իս, մընացած ա, մընացած ինք, մընացած իք, մընացած ին /ՀԲԱՆ, Խոտրջուր, Միջին թաղ, 59/: Չուգաբանական այս հատկանիշով միավորվում են Համշեն, Կարին, Խոտրջուր տարածքները:

Հարակատար դերբայի հետաքրքիր գործառություն է առկա Ալաշկերտ, Շատախ, Բիթլիս, Մոկս, Աղբակ /Հասպտան/, Գավաշ /Հարպերտ/, Բայազետ բարբառային տարածքում: Այստեղ հարակատարով կազմությունները հատուկ են ներգործական սեռի որոշ բայերի, որոնք գործածվում են վաղակատարով հարացուցային միավորների միայն 3-րդ դեմքում՝ արտահայտելով

վաղակատար ժամանակի մի նրբերանգը՝ ընդհանրապես կատարված գործողություն՝ կըրած ի /նշանակում է՝ ընդհանրապես գրել, վերջացրել են/, տարած ի /ընդհանրապես տարել են/, օրինակ՝ Պուլօ ախչիկ տարած ի /Պողոսի աղջկան տարել են, այսինքն՝ նա ամուսնացել է/: Շատախ, 17/: Հարկ է նաև հավելել, որ հիշյալ ձևերը Ալաշկերտում թե հոգնակի, թե եզակի թվում ունեն նույն կազմությունը, այսպես՝ քաղեր իմ, քաղեր իս, քաղած ա, քաղեր ինկ, քաղեր իկ, քաղած ա /Մաղաթյան, 1985, 123/:

Թերևս նախապես այս տարածքում հարակատարով կազմությունները, ինչպես այլ վայրերում, դրսևորել են վաղակատարի իմաստ, իսկ հետագայում դրանք ծավալային սահմանափակման հետևանքով պահպանվել են միայն 3-րդ դեմքում:

Ենթակայական դերբայը բարբառներում ժամանակների կազմությանը չի մասնակցում և ունի զուտ դերբայական ու փոխանվանական գործածություն: Այս առումով բացառություն է կազմում Համշենը, որտեղ այն ապառնիության գաղափար է արտահայտում: Ընդ որում Չիբլուխու, Օրդու բնակավայրերում այն սահմանական և ենթադրական ապառնիի իմաստ է դրսևորում, այսպես՝ ասող ըմ, ասող ըս, ասող ա, ասող ընկ, ասող ըկ, ասող ըն /ասելու են, կասեն/ / ՀԲԱՆ, Համշեն, Չիբլուխու, 52/:

Օրդուում հարկադրականի հարացույցում օդ-ով ձևերին գուգահեռ գործածվում են պիտի-ով կազմությունները՝ նըստիմ բիդի, նըստիս բիդի, նըստի բիդի, նըստինք բիդի, նըստեք բիդի, նըստին բիդի կամ փօրօղ ըմ, ըս, է, ընք, էք, ըն պիտի նստեն և պիտի փորեն /Համշեն, Օրդու, 94/: Մինչդեռ Համշենի Սամսուն գավառում ապառնիի վերոբերյալ ձևերը գործառական հստակ տարբերակվածություն ունեն: Օդ-ով կազմությունները սահմանական ապառնիի հարացույցում են գործառում, իսկ պիտի-ովը՝ հարկադրական, այսպես՝ ուղօղ իմ, ուղօղ իս, ուղօղ ա, ուղօղ ինկ, ուղօղ իկ, ուղօղ ին /ուտելու են/ և կըրիմ իդի, կըրիս բիդի, կըրա: բիդի, կըրինկ բիդի, կըրիկ բիդի, կըրին բիդի /հարկադրական ապառնի/ /Համշեն, Սամսուն, 187/: Հետաքրքրական է նաև այն փաստը, որ Տրապիզոնի Ծինգիր և Միմեր խոսվածքներում /տես ՀԲԱՆ, 99/ օդ-ով ձևերը պահպանվել են միայն հարկադրականի ժխտական

կազմություններում, այսպես՝ կըրօդ չիմ, չիս, չա, չիկ, չէկ, չին /չպիտի գրեն/ /Տրապիզոն, Ծինգիր և Միմեր, 99/:

Այս փաստերը հիմք են տալիս ենթադրելու, որ հիշյալ վայրերը սահմանական և հարկադրական ապառնիների տարբերակման ձևաբանական միջոց են ընտրել ենթակայական դերբայը, որը, նախապես գործածվելով պիտի-ով նախամասնիկավոր ձևերին զուգահեռ, հետագայում ձեռք է բերել միայն սահմանական ապառնիի իմաստ, իսկ որոշ վարերում պահպանվել է միայն ժխտական խոնարհման հարացույցում:

Դերբայների կիրառական առանձնահատկությունների քննությունից հետևում է, որ դրանց եղանակային ձևերը բնորոշ են եղել լեզվի զարգացման նախորդ փուլերին և բարբառներին, իսկ արևելահայ և արևմտահայ գրական լեզուներին հատկանշական է դերբայների անկախ գործածությունը, շարահյուսական տարբեր պաշտոններով կիրառվելը՝ այս կամ այն հոլովածով պայմանավորված:

Այսպիսով, բարբառային միավորները դերբայական ձևերի թե կազմության և թե գործածության տեսակետից գրական լեզուների և լեզվի նախորդ շրջանների համեմատությամբ երևան են հանում որոշակի ընդհանրություններ և տարբերություններ՝ դրանցով իսկ ակնառու դարձնելով բարբառների դերբայական համակարգի միանգամայն ինքնատիպ բնույթը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ա. Աբրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953:

Ա. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի քերականություն, Ե., 1969:

Է. Աղայան, Հ. Բարսեղյան, Հայոց լեզու, Ե., 1974:

Հ. Աճառյան, Մարադայի բարբառը, Երևան, 1926:

Հ. Աճառյան, Համշենի բարբառը, Երևան, 1947:

Հ. Աճառյան, Հայ բարբառագիտություն, 1911, էջ 69:

Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հտ.4, մաս Բ, Երևան, 1961:

Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Ե., 1973:

Ա. Գրիգորյան, Հայ բարբառագիտության դասընթաց, Երևան, 1957:

Ֆ. Խլղաթյան, Հայոց լեզու, Երևան, 1999:

Հայերենի բարբառագիտական ատլաս, Երևան, 1985:

Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Երևան, 1953:

Ա. Մաղաթյան, Ալաշկերտի բարբառը, Երևան, 1985

Ա. Մարգարյան, Գորիսի բարբառը, Երևան, 1975:

Հ. Մուրադյան, Կարճևանի բարբառը, Երևան, 1960:

Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974:

Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Ե., 1969:

Օգտագործված են Հայերենի բարբառագիտական ատլասի
ծրագրով հավաքված նյութերը, որոնք պահվում են ՀՀ ԳԱԱ Հր.
Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում:

ՕԺԻՏ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ

Հայոց հարուստ և բազմաշերտ բառապաշարի մեջ կարևոր տեղ են գրավում հագուստ և զարդ նշանակող բառերը: Դրանք գալիս են խոր հնադարից՝ կապված հայ ժողովրդի մտածողության, իստոկացի, պատկերացումների և այլնի հետ: Հագուստն առաջին անհրաժեշտության պարագաներից է, ուստի հնդեվրոպական մախալեզվում, ի թիվս այլ բառերի, գտնում ենք նաև հագուստ մատնանշող բնիկ հայերեն բառեր, ինչպես օրինակ՝ *անկողին* /անկ-արմատից/, *արդ, բարձ, գինդ, զգեստ*/զգեմուլ բայից/, *օղ/կոշիկ*/ և այլն: Իր դարավոր զարգացման ընթացքում մարդը համալրել է կենսականորեն անհրաժեշտ հագուստի և արդուզարդի պարագաները՝ դրանք վերափոխելով և հասցնելով գեղագիտական կատարելության: Ուստի հագուստը ոչ միայն անհրաժեշտություն է, այլև դարձել է գեղագիտական պահանջներ բավարարող պարագա: Այլապես ազգային հագուստները/տարազ/ այդքան գեղեցիկ և բազմագույն չէին լինի, եթե չարտացոլեին դրանք կրող ժողովրդի հոգու գեղեցկությունը, գեղագիտությունը, գույնի, ձևի, չափի նուրբ զգացողությունը և ընկալումը:

«Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրում» տեղ են գտել հագուստի և արդուզարդի որոշ անվանումներ: Դրանք են՝ *անկողին, ակնոց, վզնոց, ձեռնոց, գոտի, օձիք, վարտիք, քղանցք, տրեխ, տրեխի քուղ, մաշիկ, տակաշոր* և *օժիտ*: Այս բառերը մի փոքր մասն են կազմում հագուստ նշանակող բազմաթիվ բառերի, որ գոյություն ունեն թե գրական հայերենում և թե հայերենի բարբառներում: Այսպես, օրինակ՝ Հ.Փափագյանի «Հայկական տարազ» գրքում առանձին շարքերով տրվում են կանանց և տղամարդկանց հագուստի և արդուզարդի անվանումները, ինչպես նաև դրանց նկարագրությունը: Այդ արժեքավոր աշխատության մեջ ներկայացվում է հայ ազգագրության տարբեր ոլորտների վերաբերող հարուստ նյութ, որի տարազ ընդհանուր բաժնի մեջ մի առանձին մաս են կազմում արդուզարդը, հագուստը: Այսպես՝ զարդերից՝ խազ «մազը

մեջտեղից բացված, մազի հետ հյուսած կարմիր բամբակե դերձան», սաչլըխ «ծամկալ», ճակտնոց «շղթա՝ ոսկե դրամներով, գագաթի շուրջը կապելու համար», գեարդանլըխ «կրծքազարդ, արծաթներ, մեջտեղը կիսալուսին/ միջից կկախվի ոսկե կամ արծաթե դրամ/, քթի զարդ «քթի աջ կողմը ոսկե դրամ» և այլն: Հագուստի տեսակներից նշվում են՝ սրտանոց «սև չուխա, վրան սըրմայով նախշ, օձիքը հետևից կոճկված», չատըրիկ «գոգնոց, միզար, բուրդ՝ կարմիր սըրմայով բանված», պուճ «գունավոր գուլպա, զարդերով նախշված՝ և այլն:

Վերադառնալով բուն նյութին՝ «Ծրագրում» գետեղված հագուստների և զարդերի անվանումներին, նշենք, որ այս դեպքում անդրադառնում ենք միայն *օժիտ* բառին: *Օժիտ* հասկացության անվանումները գործածվել են հայերենի գրեթե բոլոր բարբառներում և ունեն իրենց մի քանի տասնյակից ավելի տարբերակները, ինչպես՝ *ջրհեզ, բաժինք, կալան, փայ, բոխչա, կութի, օժիթ, պարաք, զումաշ*: Ընդ որում պետք է նշել, որ բերվածներից յուրաքանչյուրն ունի իր այս կամ այն կարգի հնչյունափոխության ենթարկված դրսևորումները: Ստորև ըստ այդմ առանձնացնում ենք հետևյալ խմբերը.

ա/ ձայնավորների տարբերակմամբ, օրինակ՝ *ջրհեզ-ջիհեզ-ջեհիզ, բաժինկ-բեժինք, պաժինք-պեժինք, ջեզ-ջեզ, ճրհեզ-ճեհեզ, ճայեզ-ճեյեզ*, բ/ձայնորոգների տարբերակմամբ, օրինակ՝ *ջեհեզ-ջեյեզ, ճեհեզ-ճեյեզ, բաժինկ-պաժինք*, գ/բաղաձայնների տարբերակմամբ, օրինակ՝ *ջիհեզ-ճայեզ, բաժինկ-բեժինք, բաժինք-պաժինք* և այլն: Մնացածները հանդես են բերում մեկ կամ մի քանի տարբերակ, այսպես՝ *կալան-խալան-կալամ, բոխչա-բոխճա-բոխչա, օժիտ-օժիթ-ուժեղ*:

Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանում»² *օժիտ* բառն ունի «*հարսի բաժինք*», «*ընծա, պարզև*» իմաստները, որից ունենք *օժտել* «պարզել» բառը: Ըստ Հ. Աճառյանի՝ Հյուբշմանը գտնում է, որ *օժիտ* բառի ծագման վերաբերյալ եղած ստուգաբանական փորձերը համոզիչ չեն՝ նշելով «բառի համեմատությունը անստույգ է», որովհետև համեմատություն անցկացնելով սանսկրիտի *ahiti* բառի հետ, որ գալիս է հնդեվրոպական նախալեզվի *anghiti-* նախաձևից, հայերենում ստացվում է *ընծայ*:

¹ Է. Փափազյան, Հայկական տարագ, Երևան 2002 թ., էջ 28:

² Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, 1979, էջ 611:

Հայ հին մատենագրության մեջ հանդիպում է *օժիտ* հասկացության մեկ այլ անվանում՝ *պաշտատական* բառը. օրինակ՝ «*Ետ զնա փարատոն պաշտատական դատեր իւրում*» կամ «*Պաշտատական այս անուշայ ի նոյն մարաց, որ առ ոտամբ լերինն քնակեցան*»¹: Նույն բացատրությունն ենք տեսնում «Նոր բառգիրք հայկազյան լեզվի» բառարանում՝ «պաշտական, պաշտատական»²: Հ.Աճառյանը նունպես տալիս է *պաշտատական* բառի մեկնաբանումը՝ «հարսի բերած օժիտը փեսային»³: Այնուհետև նշում է ծագումը՝ կապելով պարսկերեն *pesdar* «կանխագույն տուեալ, կանխիկ հարուցյալ» բառի հետ, հունարեն *nactac* «առագաստ» բառի հետ: Գ. Ջահուկյանն իր «Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան» գրքում ևս անդրադարձել է այս բառին՝ նշելով օժիտի «*պաշտատական*» հոմանիշը⁴:

Այսուհանդերձ նշենք, որ հայ բարբառներում ամենից տարածված բառաձևը *ջրիէզն* է, որը հանդիպում է, օրինակ՝ Բիքլիսի, Սասունի, Վանի, Խոյի, Ղարսի, Էրզրումի,

Սալմաստի, Ապարանի, Աբովյանի, Ղարաբաղի բնակավայրերի բարբառներում և խոսվածքներում: Ինչպես նշվեց վերում այս բառն ունի հնչյունափոխված տարբերակներ՝ կապված բարբառի հնչյունական կազմի և արտասանության հետ, ինչը ներկայացրինք առանձին խմբերով՝ նկատի ունենալով հնչյունական տարբերակները: Այժմ անդրադառնանք այդ տարբերակների տարածքներին, այսինքն՝ թե որ բնակավայրում ինչպիսի տարբերակով է հանդես գալիս: Այսպես, մի շարք բարբառներում գործածում են ջիհէզ տարբերակը՝ պայմանավորված *ը>ի* հնչյունափոխությամբ: Նման հնչյունափոխություն ունեն Եղեսիայի, Ուրմիայի, Սեբաստիայի, Արեշի, Մարտակերտի շրջանների բարբառները: Փոքրաթիվ բարբառներ կան, որտեղ գործածական են՝ *ջէյիզ, ջէհիզ, ջէյէզ, ջէհէզ, ջիյէզ, ջէզ, ջ'էզ* տարբերակները: Այստեղ հարկ է խոսել *ի > յ* հնչյունափոխության մասին: Սովորաբար *ի-ն* հնչյունափոխվում է՝ վերածվելով *յ* կամ *ֆ* հնչյունների՝ *հայ-խայ, հող-ֆող*: Բայց այստեղ հնչյունա-

¹ Մեջբերումն ըստ «Նոր բառգիրք հայկազյան լեզվի», Վենետիկ, 1836, էջ 597:

² Նույն տեղում:

³ Հ.Աճառյան, Արմատական բառ., էջ 23:

⁴ Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակ., Ե., 1978, էջ 393:

փոխվել է բառամիջի *h* հնչյունը: Այսպիսի հնչյունափոխության երևույթ ունեն Նիկոմեդիայի, Բոզդանովկայի, Ռոդոսքոյի, Ալաշկերտի խոսվածքները:

Աստրախանի, Շամախու, Ղարաբաղի, Հադրուքի, Խոյի, Մարաղայի, Ռիմնիայի, Վանի բարբառներին բնորոշ է ձայնեղ բաղաձայնների խլացման երևույթը¹: Այսպիսի հնչյունափոխության են ենթարկվել *ծրհեզ, ճեհեզ, ճէյեզ, ճէյիզ, ճայեզ* ձևերը, որոնք գործածվել են Բոզդանովկայի, Տրապիզոնի, Եվդոկիայի, Նիկոմեդիայի, Ախալքալաքի, Ջեյթունի խոսվածքներում:

ճայեզ /Բոզդանովկայի շրջան, Մարաղա գյուղ/ բարբառային տարբերակում առկա է *ս* ձայնավորի փակության երևույթը, որը բնորոշ է հայ բարբառների մի մեծ խմբի՝ Ագուլիս, Ուրմիա, Կարճևան, Մարաղա, Վան, Կարին, Կիլիկիա և այլն:

Կա բարբառների մի խումբ, ինչպես, օրինակ՝ Մշո, Նոր Նախիջևանի, Ջուղայի, որոնց բաղաձայնական համակարգում առկա են շնչեղ ձայնեղներ՝ *բ՛զզ՛ ճ՛ ճ՛*:

Բառասկզբում շնչեղ ձայնեղ / *ջ՛* ունեն *ջհեզ, ջէյեզ, ջեհեզ, ջէզ* բարբառային ձևերը, որոնք գործածվել են Ալաշկերտի, Թալինի, Խուքի, Խնուսի, Բայազետի, Բասենի խոսվածքներում:

Բավական շատ տարբերակներ ունի *բաժինք* ձևը: Նախ նկատելի է բառասկզբի շնչեղ ձայնեղների առկայությունը՝ *բ՛աժին* /Մուրմալու՝ Մոլլաղամար/, *բ՛աժինք՝* /Ապարան, Վարդենիս, Մակու/, *բ՛աժինկ* /Մուրմալու՝ Բլուր/, *բ՛աժինք* /Փերիա, Ապարան, Մառնետլ, Կոշ, Չալմահալ.../: Հաջորդը ձայնեղ բաղաձայնների խլացման երևույթն է. *պաժինք* (Իջևան), *պաժին* /Վան, Դռնաշեն գյուղ/, *պէժինք՝* /Հադրուք, Մարտակերտ, Ղարաբաղ/, *պէժինք՝* /Ղարաբաղի Վաղուհաս, Կոճողոտ, Ճարտար գյուղեր/, *պէժինք՝* /Մարտակերտ, Առաջածոր, Սողոմագոմեր/, *պաժինք* / Զրվեժ, Պտղնի, Իջևան, Քանաքեռ/, *պըժինք* /Շամխոր՝ Լղարակ/, *պըժինք* /Շուլավեր/, *պէժինք* / Շամշադին, Գորիս, Գանձակ, Շամխոր, Գետաշեն և այլն /, *պէժինք* /Ղարաբաղ/, *պաժինք՝* /Շատախ/:

Բաղաձայնի քմայնացման երևույթ կա նաև բառավերջում՝ *պէժինք՝* /Հադրուք, Մարտակերտ, Վաղուհաս, Առաջածոր/:

¹ Ա. Ղարիբյան, Նյութեր հայ բարբառագիտության, Ե., 1945, էջ 13:

Բառակազմորեն *բաժինք* բառը դիտվում է որպես ածանցավոր՝ *ք-*ն գրաբարյան հոգնակերտն է: Իսկ *բ՛աժին* /Մուրմալու, Մոլլադամար/, *պն՛ժին* / Վան՝ Դոնաշեն գյուղ/, *պաժին* /Բիթլիս, Մոտկան, Թադիաբադ գյուղ/ բարբառային ձևերում առկա է ին ածանցը: Ուսումնասիրված բարբառներում կազմությամբ պարզ ձևեր են՝ *ջեզ* /Էրզրում/, *ջեզ* /Ախալքալաք/, *ջ՛եզ* /Ուլքիլիսա/, *փայ* /Փերիա, Ապարան/, *կուքի* /Արտաշատ՝ Արևշատ/:

Բօխչա-բօխճա բարբառային տարբերակներում նկատելի է շնչեղ բաղաձայնի խլացման երևույթը, որը բնորոշ է Ջուղայի բարբառին: *Բօխճա* ձևը Չալմահալ գավառի Մեծոփ գյուղի բարբառային տարբերակն է: Շնչեղ ձայնեղ բաղաձայն է առկա *բ՞օխչա* /Չալմահալ, Ադբալաշ/ ձևում, իսկ *բօխչա* /Խոյ/ տարբերակում՝ *ա* ձայնավորի փակության երևույթը:

Կալան /Արճակի Մանդան/- *խալան* /Բասեն՝ Գոմաձոր/ - *կնլնմ* /Բիթլիս՝ Խիզան /- *կալան* /Մոտկան՝ Մցու/ բարբառաշարքում նկատելի է կ խուլ բաղաձայնի՝ արաբերենից փոխառյալ արտասանություն:

Օժիտ /Թադիաբադ /- *օժիթ* /Ախալքալաք՝ Բեժանո /- *ուժեղ* /Սվեդիա՝ Խտրբեկ / տարբերակներում առկա են *և՛* ձայնավորների /*օ>ու*, *ի>* *ե* /, *և՛* բաղաձայնների /*դ>տ>ք* / հնչյունափոխության երևույթները: *Կուքի* /Արտաշատ՝ Արևշատ /, *պարաք* /Չեյթուն /, *գումաշ* /Քաբուսիե/, *փայ* /Փերիա՝ Հազարջիբիբ, Ազնավու/ տարբերակներում չեն նկատվել այլ՝ հնչյունափոխված ձևեր: Այսպիսով *օժիտ* բառը հայերենի բարբառներում ունի հարուստ դրսևորումներ՝ շուրջ 57 բարբառային տարբերակ: Հարկ է նշել, որ *օժիտ* բառն անվանում է մի շատ հին և հետաքրքիր ավանդույթ՝ կապված ամուսնացող աղջկա հարսանեկան պատրաստության հետ: Ավանդույթն այնքան հին է, որքան վկայում են ազգագրական փաստերը. «Օժիտը հնամենի ինստիտուտ է և նրա արմատները պետք է փնտրել համայնական-տոհմային կարգերի պայմաններում»: «Ամուսնացող աղջկան օժիտ տալու սովորույթը հայերի, ինչպես և այլ ժողովուրդների մեջ պատմական տարբեր ժամանակաշրջաններում շատ տարածված երևույթ է եղել»¹: Որքան հին է աղջկան օժիտ տալու երևույթը, այնքան էլ արդիական: Այն այսօր էլ պահպանվում է հայերի մեջ և համարվում է ավանդական կարևոր և հե-

¹ Է. Կարապետյան, Օժիտը հայոց մեջ, Ե., 1978, էջ 9 և 15:

տաքքիւր սովորույթներից մեկը: Միայն հնում, հատկապէս հայկական գաղառներում, այն խորհուրդ ուներ իր մեջ, օրինակ՝ Սեբաստիայում հարսն անպատճառ ինքը պետք է նախօրոք պատրաստեր իր օժիտը՝ գուլպաներ, վերնաշապիկ, գոյնզգոյն թւերից գործած բրդե շալ, հատակի կարպետ /ջեջիմ /, գործած սփռոց, ոսկեգոյն նախշակարով բրդե գոգնոց, ինչպէս և նվերներ սկեսրայրի և սկեսուրի համար: Նույնիսկ օժիտի պատրաստմանը մասնակցում էին հարսնացուի ընկերուհիները: Բերենք մի շարք օրինակներ բանահյուսությունից.

«Ճեհեզ դըվի ախճկոնըս»¹: «Ըխճըկանը մառթու տըվալ, լալ պէժինք տըվալ»²: «Ախճըգան կարկեմ ու վենճ ջըյեզ տըվէմ»³: «Ախչիզը գարքեց հեմ դե աղվօր ջիյեզ տուվալ»⁴:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աճառյան Հ., Հայերեն արձատական բառարան հհ. 1-4, Երևան, 1979:
2. Աւետիքյան Գ., Սիւրմէյան Խ., Աւգերյան Մ., Նոր բառգիրք հայկազեան լեզուի վ., 1836:
4. Կարապետյան Է., Օժիտը հայոց մեջ, Ե., 1978:
5. Համշենահայ բանահյուսություն, Ե., 1991:
6. Ղարիբյան Ա., Նյութեր հայ բարբառագիտության, Ե., 1945:
7. Ջահուկյան Գ., Բարբառագիտության ներածություն Ե., 1972:
8. Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987:
9. Փափազյան Հ., Հայկական տարագ, Ե., 2002:

¹ Համշենահայ բանահյուսություն, Ե., 1991, էջ 21:

² Բարբառագիտական տետր, Ղարաբաղ՝ Մարտակերտ ավան:

³ Նույնը՝ Կարս՝ Փաղըրվան:

⁴ Նույնը՝ Ռոդոսքո:

«ԱՐԵՎԵԼԱԻՐԱՆԱԿԱՆ ՄԻՋՆԱՇԵՐՏԻ» ՈՐՈՇ
ՆՄՈՒՇՆԵՐ ՀԱՅՈՑ ԲԱՌԱՊԱՇԱՐՈՒՄ

Իրանական ծագում ունեցող բառերն այն աստիճանի են համարվել հայերենում, որ «անգն աչքով» բավական դժվարությամբ են տարբերվում «բնիկ» բառերից և դեռևս գրաբարյան շրջանից սկսած՝ կազմում են հայոց բառապաշարի անբաժան մասը¹:

Այդ բառերը, սակայն, հին պարսկերենից կատարված փոքրաթիվ փոխառություններից և որոշ միջին պարսկական («պահլավական») բառերից զատ, մեծ մասամբ պարսկական, այն է՝ հարավարևմտաիրանական ծագում չունեն: Ավանդաբար դրանք համարվում էին պարթևական բառեր, որոնք ներմուծվել են ոչ թե դրսից՝ միջցեղային հարաբերությունների արդյունքում, այլ սերում են Մեծ Հայքում Արշակունյաց գահատոհմի տիրապետության շրջանից:

Ընդ որում՝ պարթևական *պարն* կամ սկյութական *դահ* ցեղերից սերող Արշակունիները դուրս են եղել զրադաշտական կրոնի ազդեցության ոլորտից², ինչպես և սկյութներն ու ալանները: Հետևաբար և այդ ժողովուրդները մշակույթով ու լեզվով զգալիորեն կտրված են եղել հարավարևմտաիրանական հանրույթից: Ուշագրավ է, որ Մեծ Հայքի՝ պարթևական ու ալանական ծագում ունեցող որոշ իշխանական տոհմեր (ինչպես, օրինակ՝ Կամսարականները, Առավելյանները ևն) արդեն երկրորդ կամ երրորդ սերնդում ամբողջովին հայացել են՝ իրենց տոհմական լեզուների շատ բառեր ինքնաբերաբար ներմուծելով գրական հայերեն:

20-րդ դարավերջի ուսումնասիրությունները փորձ արեցին

¹ Դրա հետ մեկտեղ, գրաբարի իրանական բառաշերտերի գիտական վերլուծությունը մեծապես նպաստում է նաև իրանական լեզուների ու բարբառների ուսումնասիրության առաջընթացին, տե՛ս Լ.Շ. Հովհաննիսյան. Հայերենի իրանական փոխառությունները, Երևան, 1990, էջ 5:

² Ա. Մեյե. Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1978, էջ 18, 121; Դ.Շ. Асатрян. Контакты армянского с новоиранскими языками (дис. на соискание ученой степени доктора фил. наук), Ереван, 1991, с. 5-6.

սահմանելու հայերենում մաս «մարական» կամ «միջինմարական» կոչվող բառաշերտի առկայությունը³: Ալանա-սկյութական ազդեցությունը, սակայն, երբեք հատուկ ուշադրության առարկա չի եղել հայագիտության մեջ: Այնինչ հայերենի և արևելաիրանական լեզուների միջև առկա բազմաթիվ զուգաբանությունները մասամբ պետք է բացատրվեին մաս հայ-ալանական շփումներով:

Հետաքրքիր է, որ հայերենում մոտ երեսուն օսական (ալանական) փոխառություններից բացի, առկա են բազմաթիվ բառեր, որոնք զուգահեռներ ունեն արդի օտերենում, սակայն, ըստ ամենայնի, ծագում են երրորդ աղբյուրից: Ներկա հոդվածում ընդգրկված են հայոց լեզվի՝ հենց այդ իրանական կազմություններից մի քանիսը. դրանք առավել մոտ են արևելաիրանական ձևերին և հատկապես կամ ի մասնավորին՝ օտերենին, սակայն առկա փաստերը թույլ չեն տալիս այդ բառերը հայերենում համարելու ալանական կամ օսական փոխառություններ:

Պետք է նշել, որ արևելաիրանական ձևերի հետ հայերենի ունեցած մերձակցության մեջ կարևոր տեղ ունի նույն պարթևերենը, որը, քերականությամբ լինելով արևմտաիրանական լեզու (ինչպես պարսկերենը)՝ թեև հյուսիսային խմբին պատկանող, զգալիորեն կրել է արևելաիրանական լեզուների լեզվամշակութային ազդեցությունը, որոնց թվին է դասվում մաս օտերենը՝ ալանների լեզվի միակ ժառանգորդը: Հայերենի մեծաթիվ զուգադիպումները Միջին Ասիայի արևելաիրանական լեզուների՝ սողդերենի, սակերենի, մանիքեական տեքստերի լեզվի, ինչպես և օտերենի ու պարթևերենի հետ, թույլ են տալիս խոսելու հայերենում առանձնահատուկ «արևելաիրանական ենթաշերտի» գոյության մասին, որը պայմանականորեն կարելի է կոչել միջնաշերտ:

Ստորև բերվում է այդ «միջնաշերտին» պատկանող բառերից մի քանի տիպական նմուշ: Նախ տրվում են համապատասխան իրանական կազմության՝ ժամանակակից օտերենում պահպանված տարբերակները, ապա դրանց հայերեն զուգահեռները և հնարավոր ստուգաբանությունները:

1. *Օս. amayəṇ (ղիզորական բարբառով՝ amayun) «շարել»*,

³ А.Г. Периханян. Материалы к этимологическому словарю древнеармянского языка, часть I, Ереван, 1993.

«սարքավորել», «կառուցել» – հայ. հմայ-ել «կախարդել»: Առաջին հայացքից տարբեր թվացող այս նշանակություններն իրականում սկզբնապես միավորված են եղել մեկ հասկացության մեջ, ինչպես *հ.-ե. *uerg'h-* նախածնից ունենք *հայ. գործ և միջ. պարսկ. warz-* «հմայք, դյութանք» բառերը: Օտերենը, իր սովորության համաձայն, չի պահել բառասկզբի /h/-ն, քանի որ այդ հազագային հնչյունն օտերենում բացակայում է, իսկ այլ դիրքերում տալիս է /x/:

Բառը հայտնի է դեռ Ավեստայից՝ *humaya-* / *humāya-*, որը տարբեր կերպ է քարգմանվել (*օրհնյալ, հնարագետ, առողջ, ծառայության պատրաստ, անձնվեր* ևն), համեմատվել է *հ.հնդ. su-māya-* «հրաշալի գործություն, հնարագիտություն, խորամանկություն» բառի հետ, ինչպես նաև *միջ.պարսկ. humāy-* «օրհնված», *պարսկ. humāyūn-* همايون «բախտավոր», *humāy-* همای «փյունիկ, բախտի թռչուն», որոնց բոլորի արմատը համարվում է **māyā-* «օրհնություն, երջանկություն» ձևը⁴: Հ. Աճառյանը հայերեն ձևը համարում էր փոխառյալ միջին պարսկերենից, սակայն Հ. Հյուբշմանն այս մոտեցումը չէր ընդունել՝ հայերեն և միջին պարսկերեն բառերի իմաստների տարբերության պատճառով⁵:

Իրան. հս- «լավ» նախածանցը ծագում է *հ.-ե. *su-* «լավ» ձևից, որից հայերենում ունենք *հ(ը)-* սաստկականը՝ *հլու, հմուտ* բառերում, հետագայում այն խառնվել է *իրան. հս-* մասնիկին և հաճախ գիտակցվել որպես հայկական, օր. *հ-գոր*⁶: *Ou. amayəñ* բառը Վ. Աբաևի կողմից բխեցվում է **mā-*, *ավեստ. māy-* «կառուցել, չափել» արմատից, որը սակերենում բարդություն է կազմում մույնպես *հ-* նախամասնիկով՝ *սակ. haməñ* «կառուցել, անել» (? *ha-mā*)⁷:

Ըստ ամենայնի, ի դեմս *հմայ-* արմատի՝ գործ ունենք

⁴ Հ. Աճառյան. Հայերեն արմատական բառարան (ՀԱԲ), հ. III, Երևան, 1977, էջ 103:

⁵ H. Hübschmann. Armenische Grammatik, II Teil, Leipzig, 1897, S. 180.

⁶ Գ. Բ. Ջահուկյան. Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 245, 567:

⁷ В. И. Абаев. Историко-этимологический словарь осетинского языка (ИЭСОЯ), т. I, М.-Лен. 1958, с. 140.

հայերենի «արևելաիրանական միջնաշերտին» պատկանող մի բառի հետ, ընդ որում սրանից կազմված Հմայեակ անձնանվան զուգահեռը գտնում ենք նաև սկյութերենում՝ *Ἀμαίακος* / *Ἀμαείακος*, որը Վ. Աբաևի կողմից բխեցվում է հենց *ou. amayəṇ* «կառուցել», *amayæg* «շինարար» արմատից⁸:

2. *Ou. æmbūdān* (ըիզորական բարբառով՝ *æmbodun*) «հոտ առնել, զգալ» – *հայ. համբոյր. վերջինս ենթադրվում է առաջացած իրանական ham-bōd* ձևից և համեմատվում մանիքեական *սողդ. ʾnβyδ* (< *ham-baudaya-) «իրար հպվել, համբուրել» բառի հետ⁹, գրեթե նույնանուն է *պարթ. ʾmbwy* (ham-bōy) «համբույր» ձևին¹⁰: Օսերենը ծագում է նույն մախաձևից, հմմտ. նաև *պարսկ. anboyidan* «հոտ առնել», «բուրել»¹¹. Ուշված բոլոր բառերի արմատը *ավեստ. baod-* / *baod* – «զգալ» (> *հայ. բոյր*) ձևն է: Սակայն քանի որ այս արմատը, ինչպես և համ- մախա-ծանցը անկախաբար գործածվել են հայերենում¹², տեսականորեն միանգամայն հնարավոր է, որ սույն բարդությունը կազմվեր հայերենում՝ թեկուզև պատճենման միջոցով: Այնպես որ, համբոյր բառի ընդգրկումը «արևելաիրանական միջնաշերտի» խմբում պայմանական բնույթ է կրում:

3. *Ou. ændon* «պողպատ» – *հայ. ասպանդակ* / *ասպանտակ*, տարբերակներն են՝ *ասպատան*, *ասպատանկ/զ*: Հայերեն բառն ակնհայտ իրանական կազմություն է, սակայն ծագումը համարվել է անհայտ. «*ասպանդակ*» իմաստով բնիկ հայերեն ձևն է՝ *ամբարձի*¹³:

Ասպանդակները պատրաստում էին պողպատից, ուստի կարելի է վերականգնել *իրան. *asp-andān-* մախաձևը, որից /ն/-ի սղմամբ և /դ/-ի խլացմամբ առաջացել է *հայ. ասպատան*

⁸ В.И. Абаев. Осетинский язык и фольклор, т. I, М.-Лен. 1949, с. 153.

⁹ Գ.Բ. Ջահուկյան. Նշվ. աշխ., էջ 530:

¹⁰ Л.Շ. Հովհաննիսյան. Հայ-իրանական զուգադիպումներ.– Բանբեր Երևանի Համալսարանի, 1988, N 3, էջ 170:

¹¹ В.И. Абаев. ИЭСОЯ, т. I, с. 140.

¹² Ընդ որում համ- մախաձանց կարող էր ուղղակիորեն ծագել հ.-ե. * səm- «մեկ, միակ» մախաձևից (Л.Շ. Հովհաննիսյան, 1990, էջ 145), քեև նրանից արդեն իսկ առկա է ամ- ձևը՝ *ամուսին*, *ամորձիք* բառերում (Գ.Բ. Ջահուկյան. Նշվ. աշխ., էջ 245):

¹³ Հ. Աճառյան. ՀԱԲ, հ. I, Երևան, 1971, էջ 272, 413:

«ասպանդակ» ձևը, իսկ *asp-andān-ak տարբերակից՝ հայ. *ասպանդանակ (> ասպանդակ) > ասպատանկ/զ ձևերը: Փաստորեն, սույն հայերեն բառի ծագումը վերականգնելիս՝ մեզ անգնահատելի օգնություն է ցուցաբերում օսերեն «պողպատ» բառը, որի ծագումը թեև միանշանակ չէ, սակայն այն զուգահեռներ ունի իրանական այլ լեզուներում և մասնավորապես՝ սկյութերենում:

Իրան. -ak ածանցի -ik տարբերակով է կազմված **andanik** պողպատի տեսակի անվանումը, որի մասին հաղորդում է Պարսկաստանում ճանապարհորդած Մարկո Պոլոն¹⁴: Ըստ երևույթին, սկյութերենում *asp-andān-ak ձևի գոյությունն է հաստատում Տանախում՝ Դոնի շրջանում տարածված ¹⁵Ἰασα[v]δάνακος կամ [¹⁶Ἰασ]ανδάνακος անձնանունը¹⁵, հմմտ. նաև նույն տարածքներում հանդիպող *սկյութ.* Ἀσπάνδανος անունը (III դ.), որը թարգմանվում է որպես «պողպատածի»¹⁶:

Հայ. ասպանդակ բառը կարող է և փոխառյալ լինել սկյութերենից (ալաներենից) կամ պարթևերենից, սակայն քանի դեռ նշված լեզուներում այդ փոխառու ձևը չի գտնվել, անհնար է ապացուցել սույն ենթադրությունը: Այս է պատճառը, որ բառը զետեղում ենք «արևելաիրանական միջնաշերտի» խմբում: Ինչ վերաբերում է օսերենին, ապա նրանում այս կազմությունը կունենար *(y)æfsændon կամ *(y)æfsænd[on]æg ձևը¹⁷:

4. *Օս.* awazən (*ղիզոր.* awazun) «զետն ամբարտակել» – *հայ.* առազան. համարվում է իրանական փոխառություն¹⁸, բայց

¹⁴ В.И. Абаев. Об иранских названиях стали:– Иранский сборник (к семидесятипятилетию профессора И.И. Зарубина), Москва, 1963, с. 206.

¹⁵ St'x Корпус воспорских надписей (под редакцией В.В. Струве), М.-Лен., 1965, с. 778-779, 765-766.

¹⁶ Նույն տեղում, էջ 767-768; В.И. Абаев. Осетинский язык и фольклор, с. 153, 157.

¹⁷ Օս. ændon «պողպատ» բառը (փոխառությամբ) հանդիպում է ուգրո-ֆիննական և կովկասյան (*ինգուշ.* ondæ «պողպատ», *չեչեն.* ondun «ամուր»՝ ինչպես հայ. պողպատ > պողպատյա «ամուր, պինդ», *ուրդխ.* andæ «դուր, հատիչ») լեզուներում: Սկյութական նշված անձնանունները հավաստում են *os.* ændon բառի հնությունը և Հ. Հյուբշմանի՝ օսերենը ինգուշերենից փոխառյալ համարելու ենթադրության սխալականությունը (տե՛ս Н. Hübschmann. Etymologie und Lautlehre der Ossetischen Sprache, verlag von Karl J. Trübner, Strassburg, 1887, S. 124): Վ. Աբաևը *os.* ændon բառի համար ենթադրում է իրանական ծագում՝ *ham-(han-)dāna-նախածկից (В.И. Абаев, 1963, с. 206):

¹⁸ Н. Hübschmann, 1897, S. 111-112.

բուն փոխառու ձևը հայտնի չէ: Հայերենին ամենամոտ զուգահեռները բերվում էին *սողդ. "w'zh (āwaza) «լիճ, ավազան»*¹⁹ և բուղդայական *սողդ. "w'zn* ձևերը²⁰. օսերեն բառը ցույց է տալիս, որ սրանք, ինչպես և *հայ. աւազան* ձևը նշանակում են բառացիորեն «ամբարտակված»:

Ou. awaz- արմատը ծագում է *vaz-* «շարժման մեջ լինել» ձևից (որից ունենք *հայ. վազ-ել*)՝ *a-* նախամասնիկով²¹: *Հայ. աւազ* բառը, որին վերագրվում է *հ.-ե.* ծագում **psə-bh-* նախաձևից, և *-ազ* վերջավորությունը մնում է չբացատրված²², կարող է նույնպես ծագած լինել **a-waz* ձևից՝ որպես «(ջրից) դուրս հոսած, դուրս բերված». **waz-* արմատի զուգահեռները հայտնի են այլ *հ.-ե.* լեզուներում՝ *ռուս. веэти*, գերմանական լեզուներում՝ *vāgr «ծով», wāg «ալիք»* ևն:

5. *Ou. awærdəŋ* (*ղիզոր. awærdun*) «խնայել, ափսոսալ» – *հայ. աւարտ*. համեմատվում է մանիքեական *պարթ. an-āvard «անվերջ, անավարտ»* բառի հետ²³: Հայերենն ու օսերենը բավական հեռու են իմաստներով, բայց երկուսն էլ կարող են բխել **ā-var-t «ծածկված, փակված»* ձևից, որի արմատը նույնն է, ինչ *ou. nəwærdəŋ «ծածկել»* բառում, և հանգում է *հ.-ե. *wer- «փակել, ծածկել, պատնեշել»* նախաձևին: Օսերենի *awærdəŋ* ձևը հանդիչ ստուգաբանություն չունի²⁴:

Հնարավոր է, որ նույն արմատը երկար ձայնավորներով առկա է *ou. wajavard «պապանձված, լեզուն կապ ընկած»* բառում, որի առաջին արմատն է՝ *ou. wac* (*ղիզոր. wac[æ], was*) «լուր» (< *իրան. *vāč «խոսք»*), իսկ երկրորդ բաղադրիչը կարելի է համադրել վերի ձևերին և ամբողջ կազմությունը բացատրել որպես «խոսքավարտ» կամ «խոսքի փակում, կապում»:

6. *Ou. ævdīsəŋ* (*ղիզոր. ævdesun*) «ցույց տալ» – *հայ. հանդես «ցույց, տեսարան»*. հայերեն ձևը ենթադրվում է կազմված *հան-* / *համ-* ածանցով՝ **դես-* արմատից, որը համեմատվում է

¹⁹ Գ.Բ. Ջահուկյան. Նշվ. աշխ., էջ 517:

²⁰ Ск'ю Г.С. Асатрян. Указ. соч., с. 14.

²¹ В.И. Абаев. ИЭСОЯ, т. I, с. 85-86.

²² Հ. Աճառյան. ՀԱԲ, հ. I, էջ 351; Գ.Բ. Ջահուկյան. Նշվ. աշխ., էջ 116:

²³ Հ. Աճառյան. ՀԱԲ, հ. I, էջ 356:

²⁴ Հմմտ. В.И. Абаев. ИЭСОЯ, т. I, с. 87.

ավեստ. *daēs*, սակ. *dis* «ցույց տալ» բառերի հետ²⁵: Օսերեն *ձը՝ չը*- նախամասնիկով նույնպես ծագում է *dis-* / *des-* արմատից, որը հանդիպում է նաև օսերենի որոշ բարդություններում. այն զուգահեռներ ունի նաև պամիրյան լեզուներում²⁶: Սողոդերենում նույնպես հայտնի են այս արմատից՝ տարբեր նախամասնիկներով գործածվող կազմություններ, որոնցից հայերենի հետ է նույնանուն *՝ոծ՝ys-* «ցույց տալ» *ձը*²⁷:

7. *Ou. æwwayəṇ* (ղիզոր. *æw[w]ayun*) «կծկվել, կուշ գալ» – *հայ. հաւաք* / *աւաք*. ծագումն անհայտ է համարվում: Հայերեն *ձևում* –ք վերջավորությունն անջատելու դեպքում՝ **հաւա-* հիմքը կրկին մնում է անհասկանալի: Օսերենը ենթադրվում է **æm-wayəṇ* *ձկից*, սակայն վերջին բաղադրիչն օսերենում հայտնի չէ²⁸:

8. *Ou. æwwændəṇ* (ղիզոր. *æwwændun*) «վատահել», «*հավատալ*» – *հայ. հաւատ* / *աւատ* «*հավատք, հավատարմություն, վատահոություն*»: Գ. Ջահուկյանը այս բառի *h-*-ն ստուգաբանությունը՝ **au-* «*ընկալել, ըմբռնել*» նախաձևից, համարում է կասկածելի²⁹, ուստիև մնացությունը *h.սլալ*. **avě* «*հասկանալի, հայտնի, ակնհայտ*» արմատի հետ³⁰, հավանաբար, պետք է որ պատահական լինի:

Հայ. *հաւատ* բառը Վ. Հենինգի կողմից համադրվել է *պարթ. hmwd* «*հավատալ*» *ձկի* հետ, ակնհայտ է այս բառերի մնացությունը նաև քրիստոնեական սողոդերենում և խորեզմերենում հայտնի *wt, wd* «*հավատ, կրոն*» *ձկերի*ն: Մրանց հիման վրա

²⁵ Գ.Բ. Ջահուկյան. Նշվ. աշխ., էջ 530, 566:

²⁶ В.И Абаев. ИЭСОЯ, т. I, с. 198.

²⁷ *Ou. dis / des* արմատն անկախ գործածվելիս նշանակում է «զարմանք», ինչպես սողո. *wyð's-* «զարմանալ» (В.И Абаев. ИЭСОЯ, т. I, с.363): Նույն արմատն առկա է նաև *ou. fældisəṇ* (ղիզոր. *fældesun*) 1. «արարել», 2. «հանգուցյալին նվիրաբերել» բառի մեջ, որը ծագում է իրան. **pari-dais-* «շուրջը ցույց տալ, շրջանել, պատել» *ձկից* (В.И Абаев. ИЭСОЯ, т. I, с. 435-436). սրանից հայտնի են՝ *ավեստ. pairi-daēza* «շրջապարիսպ», սողո. **parðēs-* (*prð'ys-*), *հայ. պարտեզ*, *նաև՝ արաբերեն* (<պարսկ.) *firdaus* فردوس, *fāliz* فاليز «պարտեզ, դրախտ» և այլ փոխառություններ եվրոպական լեզուներում (H. Hübschmann, 1897, S. 229):

²⁸ Հմմտ. В.И Абаев. ИЭСОЯ, т. I, с. 215.

²⁹ Գ.Բ. Ջահուկյան. Նշվ. աշխ., էջ 113, 254, 274:

³⁰ Стен Л.А. Сараджева. Древнейшие религиозные представления праармян и праславян в свете данных сравнительно-исторического языкознания. – ИФЖ, 1988, N 1, с. 79.

վերականգնվում է *իրան*. ***ham-vāta-** նախածնը, որի **vat-** արմատն ավեստերենում նշանակում էր «ընկալել, հասկանալ, իմանալ»³¹:

Վ. Աբակի կողմից *ou. æwwændæn* բառը համարվում է ծագած ***æm-wændæn** ձևից՝ /m/-ի տարնմանմամբ, սակայն *ou. wændæn* բայը պահել է միայն «*համարձակվել*» նշանակությունը³²:

Ինչպես տեսնում ենք, հայերենի և արևելաիրանական լեզուների տվյալները հուշում են *(h)aw-wa(n)t- ձևի գոյության հնարավորությունը, ըստ որում հայերենն առավել մոտ է այդ ձևից ծագած քրիստոնեական սողդերենի տարբերակին: Մինչդեռ *ou. æwwændæn* ձևին նույնանում է *հայ. աւանդ* «*պահ տրված իր, կտակ, գաղտնիք, խորհուրդ*» բառը, որը հենց զարգացել է «*վստահել, հավատալ*» նշանակությունից. այս բառի ծագումն անհայտ էր համարվում³³:

9. *Ou. bīræ* (դիզոր. *beræ / bewræ*) «շատ» – *հայ. բիր / բեր* «բյուր, 10 հազար»: Հայերենը համարվում էր փոխառյալ մ.*պարսկ. bēvar* «բյուր» բառից³⁴, սակայն, ամենայն հավանականությամբ, իրավացի է Վ. Աբակը՝ հայերեն բառը կապելով ավանդների հետ³⁵, քանի որ *հայ. բիր* ձևը լրիվ նույնանում է օսերենի արևելյան՝ իրոնական բարբառի ***bīwræ** > **bīræ**, իսկ *բեր* ձևը՝ արևմտյան՝ դիզորական *bewræ* տարբերակների հետ (վերջինից, ըստ Վ. Աբակի, փոխառյալ են նաև *չերքեզ. beure* և *վրաց. bewri* «շատ» բառերը):

Հայ. եւ / իւ երկբարբառային տարբերակների գոյությունը համարվում է հայոց լեզվի հնագույն բարբառային տարբերություն³⁶. հնարավոր է, որ այդ բարբառային խմբերի տարածման շրջանն ինչ-որ ժամանակ սահմանակցել է համապատասխանաբար դիզորական և իրոնական բարբառների նախակրողների հետ:

³¹ А.Г. Периханян. Указ. соч., с. 55-56.

³² Ст'ю В.И Абаев. ИЭСОЯ, т. I, с. 215.

³³ Հ. Աճառյան. ՀԱԲ, հ. I, էջ 354:

³⁴ H. Hübschmann, 1897, S. 121.

³⁵ В.И Абаев. ИЭСОЯ, т. I, с. 262.

³⁶ Հայերենում եւ / իւ հերթագայության մասին տես Ա. Մելե. Նշվ. աշխ., էջ 455-457; Գ.Բ. Զահուկյան. Նշվ. աշխ., էջ 374:

Ինչպես նշում են հետազոտողները, բառս գալիս է Ավեստայի լեզվից՝ *ավեստ. baevare* «բյուր», ընդ որում իրանական մյուս բոլոր ձևերն ունեն /v/ կիսաձայնին հաջորդող /a/ ձայնավոր, բացի *սակ. byūra, byurru* «բյուր, շատ» բառի. հայերենն, այսպիսով, մոտենում է արևելաիրանական ձևերին՝ օտերենին և սակերենին³⁷: Հետաքրքիր է, որ բիւր բառն առաջին անգամ վկայված է «Արտաշես և Սաթենիկ» վիպասքի պահպանված պատառիկում՝ ալանաց արքայի խոսքում. «Եւ ուստի՞ տացէ քաջն Արտաշես / Հազարս ի հազարաց և բիւրս ի բիւրուց / Ընդ քաջազգոյ կոյս օրիորդիս Ալանաց» (Խորենացի II, Ծ.)³⁸:

10. *Օս. būd* (դիզոր. *bodæ*) «անուշահոտություն, խունկ» – *հայ. բուրվառ* «խունկ ծխելու աման». միանգամայն կարող է կազմված լինել *հայ. բոյր* և *վառ*- արմատներից, սակայն Հ. Աճառյանը *բուր- արմատը նույնացնում է *օս. būd* «խունկ» բառի հետ, որը նույնպես ծագում է *իրան. *bauda-*, *ավեստ. baod-* «բույր» ձևից³⁹ (տե՛ս սույն հոդվածում N 2):

Ա. Մեյեն բուրվառ բառը համարում էր ժողովրդական ստուգաբանության արդյունք, և *բուրվար անհայտ ձևը փոխառյալ էր դնում *սողդ. βωδβρν* բառից: Սակայն այս եզրը կարող էր քրիստոնեկան կրոնի հետ միասին քափանցել արևելաիրանական լեզուներ, ընդ որում *հայ. բոյր* բառի համար հնարավոր է ենթադրել նաև «խունկ» նշանակությունը, հմնտ. բուրկեն «ամպար» բառը:

Ամեն դեպքում, *օս. būd* – *հայ. *բուր*- համապատասխանությունը դիտարկելի է միայն ընդհանուր իրանական լեզվաբանության համատեքստում⁴⁰, և այդ բառերը մեկը մյուսից փոխառյալ չեն, ինչպես *օս. ænūs* (դիզ. *ænos*) «ժալվերժություն» – *հայ. անոյշ*, *անուշ*-ակ «անմահական» զուգահեռները հնարավոր չէ պայմանավորել մեկը մյուսով:

³⁷ Հմնտ. В.И Абаев. ИЭСОЯ, т. I, с. 262; Գ.Բ. Ջահուկյան. Նշվ. աշխ., էջ 366, 519, ծանոթ. 29:

³⁸ Ինչ վերաբերում է վրաց. *bewri* բառին, ապա այն կարող էր փոխառվել թե՛ ալաներենից, թե՛ հայերենից (հմնտ. Գ.Բ. Ջահուկյան. Նշվ. աշխ., էջ 555):

³⁹ Հ. Աճառյան. ՀԱԲ, հ. I, էջ 471; В.И Абаев. ИЭСОЯ, т. I, с. 269. Նմանապես, իրան. **xauda-*, ավ. *xaoδā-* «զվարկ, սաղավարտ» ձևից ունենք *օս. xūd* (դիզոր. *xodæ*) «զվարկ, փափախ», *հայ. խոյր*:

⁴⁰ Հետաքրքիր է, բայց իմաստային տեսակետից՝ փոքր-ինչ տարօրինակ, որ *օս. դիզոր. bod æn* «սխտոր» բառը նույնպես քիսեցվում է իրան. **bauda-na-* ձևից (В.И Абаев. ИЭСОЯ, т. I, с. 264):

ՏԵՂԱՆՎԱՆԱԿԵՐՏ ԿԵՆՍՈՒՆԱԿ ԱԾԱՆՅՆԵՐՆ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Յուրաքանչյուր լեզվի բառապաշար բաց համակարգ է, որը ոչ թե քարացած, այլ շարունակաբար փոփոխվող միավորների ամբողջություն է: Բառապաշարի տեղաշարժերն ուղղակիորեն արտահայտում են այդ լեզվի կրող հանրության կյանքի զարգացումը՝ բոլոր ոլորտներում՝ սկսած քաղաքականությունից, տնտեսությունից, մինչև հոգևոր մշակույթ և լեզվամտածողություն: Բաց համակարգ ներկայացնող բառապաշարի մեջ տեղանունները կազմում են հարաբերականորեն փակ ենթահամակարգ, որովհետև այս բառաշերտում փոփոխություններ թեև կատարվում են, սակայն շատ ավելի դանդաղ. տեղանունների համար ժամանակն ավելի դանդաղ է հոսում, և գոյության հաշվարկային միավորը ոչ թե դարերն են, այլ հազարամյակները: Անգամ այլալեզու նվաճողների ասպատակությունները կամ երկարամյա տիրապետությունը տեղանունների վրա անդրադառնում է ոչ այնքան արմատական փոփոխություններով, որքան հնչյունական պատկերի խաթարմամբ, նվաճողները կամ բնակիչների նոր մեծամասնությունը բնիկ տեղանունների արտասանությունը համապատասխանեցնում է իր հնչարտաբերական հնարավորություններին և ոչ թե վերանվանում դրանք: Ճիշտ է, տեղանունների բառաշերտում կան այնպիսի միավորներ, որոնք առավել ենթակա են ժամանակի ընթացքին, ինչպես օրինակ՝ բնակավայրերի անունները, իսկ լեռնանունները և ջրանունները այս ենթահամակարգի ամենակայուն միավորներն են:

Ա. Մարգարյանն իր «Ժամանակակից հայոց լեզու. Բառագիտություն» աշխատության մեջ գրում է. «Լեզվի բառապաշարը մի հայելի է, որը պատկերում է ժողովրդի պատմական կյանքը, ցույց է տալիս, թե մա այլ ցեղերի, ժողովուրդների, ազգերի հետ ինչպիսի շփումներ, տնտեսական-հասարակական ինչպիսի կապեր ու հարաբերություններ է ունեցել տարբեր ժամանակներում»:՝ Տեղանուններն այս տեսանկյունից առավել հարուստ

՝ Ա. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու. Բառագիտություն, Եր., 1993, էջ 126:

պատմական վավերագրեր են, որոնց ուսումնասիրության և ստուգաբանության միջոցով հնարավոր է բացահայտել ցանկացած տարածքի հնաբնականների և հետագա նվաճողների կամ խաղաղ վերաբնականների լեզվական ինքնությունը, անվանված աշխարհագրական օբյեկտների կամ բնակավայրերի նախնական տեսքն ու բնութագրական հատկանիշները: Հայտնի տեղանվանագետ Վ.Նիկոնովն անդրադառնալով տեղանվանագիտության զարգացման միտումներին՝ արձանագրում է, որ վերջին տասնամյակներում տեղանվանագիտական հետազոտություններում ծանրության կենտրոնը ծագումնաբանությունից տեղափոխվում է դեպի բառակազմություն. «Տեղանվանագիտությունը դուրս է գալիս մանկական տարիքից, երբ նրան հետաքրքրում էր միամիտ հարցը՝ «Ի՞նչ է նշանակել այս անվանումը»: Գիտությունը սկսվում է այնտեղ, որտեղ հետաքրքրասիրությունը բարձրանում է օրինաչությունների որոնման մակարդակի»²: Տեղանունների բառակազմական քննությունը թույլ է տալիս բացահայտել տվյալ լեզվին բնորոշ տեղանվանակերտ միջոցները, տիպաբանությունը, վերականգնել որոշակի տարածքների աղավաղված կամ անգամ կորսված տեղանվանական շերտերը, իսկ համաժամանակյա կտրվածքով դա հնարավորություն է ստեղծում նոր տեղանուններ կազմելիս հարազատ մնալ տվյալ լեզվի բնույթին և հնի հետ ոչ թե հակասության մեջ մտնող, այլ տրամաբանական և ներդաշնակ, այսինքն՝ նոր տեղանունների մնալուն, ժառանգորդական կապը պահպանող ենթահամակարգ ձևավորել:

Բառակազմության տեսանկյունից, ինչպես լեզվի սովորական բառերը, տեղանունները բաժանվում են արմատական, պարզ և բաղադրյալ կառույցների, որոնք բառակազմական վերլուծության ընթացքում վերածվում են մեկից ավելի բաղադրիչների: Գ.Ջահուկյանը, անդրադառնալով բուն հայկական տեղանունների կազմությանը, առանձնացնում է 4 տիպ. 1) բաղադրյալ (տեղանուն-բառակապակցություններ), 2) բարդ, 3) ածանցավոր, 4) պարզ: Ընդ որում նշում է, որ բաղադրյալ տեղանունները հաճախ ունեն գուգաձև բարդ տարատեսակներ, մասամբ ըստ էության՝ *Ագռավուց քար-Ագռավաքար*, մասամբ ըստ գրու-

² Никонов В.А. Славянский топонимический тип / Географические названия, М. 1962, т. 17:

քյան՝ Չորոյ փոր-Չորոփոր (Չորափոր):³ Տեղանվանգիտության մեջ ընդունված է առանձնացնել 5-րդ տիպը, որ կոչվում է՝ թեքույթային (ֆլեքսիվ), դրանք որոշ պայմանականությամբ կարելի է միավորել ածանցավոր կազմությունների հետ՝ տարբերություն չդնելով բառակազմական և բառահարաբերական ձևային միջև:

Արմատական տեղանունները բնականաբար մենաձևային են, իսկ նրանց հակադրվող բաղադրյալ տեղանունները՝ բազմաձևային, ընդ որում այդ ձևայինները կարող են լինել և՛ հիմնական, և՛ երկրորդական: Մեկ կամ ավելի հիմնական և մեկ կամ ավելի երկրորդական ձևայիններից կազմված հայկական տեղանունների, այսինքն՝ պարզ և բարդ ածանցավոր կառույցների ի մի բերումը և քննությունը հնարավորություն է տալիս բացահայտել այն ածանցները, որոնք դարերի ընթացքում իրենց այլ իմաստների հետ մեկտեղ ձեռք են բերել զուտ տեղանվանակերտ արժեք, ընդ որում երբեմն նման դեպքերում կարելի է խոսել ածանցների ոչ միայն բազմիմաստության, այլև համանունության առաջացման մասին, երբ հնչյունական կազմով նույն ածանցներն իմաստով հստակ տարբերակվում են: Այսպես՝ *ական* վերջածանցը հայերենում անուն խոսքի մասերից և բայարմատներից ու մակբայներից հարաբերական ածականներ կազմող կենսունակ, արտադրողական ածանցներից է, որը միաժամանակ նաև տեղանվանակազմիչ հայկական ածանցներից է, ինչպես անցյալում, այնպես էլ այսօր: Արցախյան շարժումից հետո սկսված տեղանունների հայացման, վերանվանման վերջին գործընթացը ցույց տվեց, որ *ական* ածանցը կայուն տեղանվանական կաղապարներ է ստեղծել և ստեղծում հայերենի զարգացման բոլոր փուլերում՝ *Ջանգելան* – *Կովսական*, *Ջաբրայիլ* – *Ջրական*, *Վերին Կորչլու* – *Չորական*, *Ալիսալի* – *Արվական* և այլն: Նման իրողություններն ապացուցում են, որ ածանցները ոչ միայն բառակազմական, այլև իմաստաբանական արժեք են ստանում լեզվի պատմական զարգացման ընթացքում:

Էդ. Աղայանի սահմանմամբ. «Ածանցումներն այն համադրական բաղադրություններն են, որոնք իրենց կազմում ունեն մեկ և ավելի ածանցներ (երկրորդական բառակազմական ձևային»

³ Գ.Բ.Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն/Նախագրային շրջան, Երևան, 1987, էջ 412-413:

ներ)....Իրենց կազմում ածանց կամ ածանցներ ունեցող համադրական բաղադրությունները կոչվում են ածանցավոր բառեր»:⁴ Ըստ ածանցների քանակի՝ ածանցավոր բաղադրությունները լինում են մենածանց, մասն տեղանուններն ամենահաճախահեղինակ են, դրանք կազմված են մեկ արմատից և մեկ ածանցից *Արև-ուտ*, *Արեգ-ունի*, *Չոր-ակ*, *Շաղ-իկ*, *Ջր-ական...*, և բազմածանց՝ բաղկացած մեկ արմատից և մի քանի ածանցից. տեղանունների պարագայում այսպիսի կառույցները շատ ավելի սակավ են հանդիպում, քան մենածանցները: Բերենք բազմածանց տեղանունների օրինակներ՝ *Ավետ - արան-ոց*, *Կայ-ան-իկ*, *Վարդ-են-ի* ... Բավական տարածված են մենածանց բարդ տեղանունները, հատկապես երկարմատ՝ *Հայկ-ագ-յան*, *Ջր-ալի-ի*, *Արտ -ա -բույն-ք*, *Ուղտ-ակ-ունք...*

Ածանցները բաղադրական հիմքին միանում են և սկզբից, և վերջից: Ածանցներն ինքնին օժտված են որոշակի իմաստով, ուստի ճիշտ չէ դրանք դիտարկել իբրև անշանակ մասնիկներ, որովհետև դրվելով բառերի կամ արմատների վրա՝ ածանցները փոփոխում են նրանց իմաստները և ստեղծում նոր բառեր: ⁵ Գ. Ջահուկյանը, քննելով ածանցման դերը հայկական տեղանունների առաջացման ընթացքում, նշում է. «Բուն հայկական ծագման տեղանունների մեջ ածանցավոր կազմությունները բաղադրյալ և բարդ տեղանունների համեմատությամբ ավելի փոքր տեղ են գրավում: Մասնավորապես քիչ են բուն հայկական հիմքերով և հայկական ածանցներով կազմությունները»:⁶

Լեզուները դարերի ընթացքում ձևավորում են իրենց տեղանվանական տիպը, այսպես՝ սլավոնական լեզուներին բնորոշ են ածանցավոր տեղանունները, գերմանական լեզուներին՝ բարդ տեղանունները⁷, իսկ հայերենի հին և հնագույն շրջանում տեղանուններ որպես կանոն կազմվել են արմատական բառերից, որոնք կամ մաքուր ձևով էին դառնում տեղանուն, կամ քեքված՝ հոգն. քիվ, սեռական հոլով, իսկ հետագա շրջաններում տեղանուններ ստեղծվում էին բառաբարդման եղանակով՝ հիմնականում որոշիչ-որոշյալի կամ հատկացուցիչ-հատկացյալի իմաստ արտահայտելով:

⁴ Էդ.Բ.Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 279:

⁵ Տես Ս.Ա.Էդյան, Ածանցները ժամանակակից հայերենում, Եր., 1965, էջ 23:

⁶ Տես Գ.Բ.Ջահուկյան, նշյալ աշխատությունը, էջ 415:

⁷ Никонов, В.А., Славянский топонимический тип/ Вопросы географии, 1962, էջ 12:

Հայերենի նախածանցները, վերջածանցների համեմատությամբ, ավելի սակավաթիվ են և գործառական ու ձևախմաստային հատկանիշներով սահմանափակ: Տեղանունների բառակազմական քննությունը ցույց է տալիս, որ նախածանցավոր կազմությունները խիստ հազվադեպ են, ընդ սմին՝ տեղանուններում վկայված են հիմնականում խոր հնադարից եկող հայերենի ժխտական ածանցները կամ, ինչպես Մ.Աբեղյանն է կոչում՝ բացասական մասնիկները, և ոչ թե 6-րդ դարից հետո հունաբան հեղինակների շնորհակալ ջանքերով ստեղծված շուրջ երկու տասնյակ համեմատաբար երիտասարդ դրական նախածանցները: Բերենք նախածանցավոր տեղանունների մի քանի օրինակ՝ *Ան-արծաթ*, *Ան-կշտ-ան*, *Ան-մահ-ության ջուր*, *Դժ-գույն*, *Դժ-գույնք*, , *Նախ-ա-վկա Նախ-ե-դուռն*, *Անդր-կովկաս* կամ *Այսր- կովկաս*, *Նախ-իջե-վան** ... Այս և այլ նախածանցավոր տեղանունների պարզ դիտարկումն ակնհայտ է դարձնում, որ դրանք տեղանվանակերտ արժեք չունեն հայերենում, ընդամենը հնարավոր է նախածանցավոր կառուցվածք ունեցող հասարակ գոյականների տեղանվանացում՝ ելնելով անվանակոչվող միավորի այլևայլ բնութագրիչներից՝ *Անարծաթ* - գյուղի բնակիչները հայտնի են եղել իրենց անշահախնդրությամբ, *Անկշտան* - բնակիչները անկուշտ մարդկանց համբավ են ունեցել, *Անմահության ջուր*՝ աղբյուրի հանքային ջուրը հայտնի է եղել իր բուժիչ հատկություններով, *Դժգույն* կամ *Նախեդուռն* - ավանները կարող էր այսպես անվանակոչվել տեղանքի բնակլիմայական կամ դիրքային հատկանիշների շնորհիվ: Նույնը վերաբերում է *Անդրկովկաս* կամ *Այսրկովկաս* տեղանուններին: *Անբերդ* (Ամբերդ) տեղանվան վերաբերյալ կան ստուգաբանական երկվորյուններ: Գ.Ջահուկյանը ան/ամ բաղադրիչների համար երկու ենթադրություն է կատարում, կամ բուն հայկական «ան- համա-, միա-» իմաստով, կամ պահլավական *am/aṣ* նախածանցից:⁸ Գ. Ղափանցյանն ավելի վաղ պնդում էր, որ այս ան/աṣ-ը

* Այս տեղանվան ստուգաբանության վերաբերյալ կան տարբեր վարկածներ, սակայն Նախ- իջևան առասպելական երանգ ունեցող բացատրությունը հիմնավորվում է հետևյալ փաստով՝ գրավոր աղբյուրներում (1-ին դ.) առաջին անգամ Նախիջևանի մասին հիշատակել է Հովսեփոս Փլավիոսը, որն այն կոչում է Ապովատիրիոն՝ հունարեն նշանակում է իջևան: Տեղանվան բառապատճենում է արվել:

⁸ Գ.Ջահուկյան, նշյալ աշխատությունը, էջ 415:

խորհտական արմատ է «աստված» նշանակությամբ, որի վերապրուկային ձև է համարում *Ծովիան* – *Ծովինար* հատկանվան վերջին բաղադրիչը:⁹

Բուն նախածանցների հետ մեկտեղ ժամանակակից հայերենում բառակազմական արժեք են ստացել գրաբարյան նախդիրները՝ *առ, գ, ի(յ), ընդ, ըստ, ց*: Մեր լեզվի հին շրջանում նախդիրները գործածվել են տարբեր հոլովներով դրված գոյականների հետ՝ արտահայտելով քերականական բազմազան իմաստներ: Լեզվի պատմական զարգացման ընթացքում նախդիրների արտահայտած բազմազան իմաստները և տարբեր հոլովների հետ գործածվելու հատկանիշը սկսել են մթագնել և ջնջվել, հաղթանակել է խոսքում ամենահաճախ դրսևորվող իմաստներից մեկը, որի պատճառով էլ նախդիրները աստիճանաբար վերածվել են բառակազմական ձևայինների: Տեղանունների պարագայում այսպիսի արժեք ունի *առ* նախդիրը, որովհետև այն հայցական կամ տրական հոլովների հետ դրվելով՝ արտահայտել է ինչ-որ բանին մոտ լինելու իմաստը, իսկ տեղանվանակոչման ժամանակ շատ կարևոր է տեղանքում արդեն հայտնի միավորին մոտ գտնվելու հանգամանքը, որը տեղանունների առաջացման հատկապես հնագույն հատվածում դառնում էր անվանման հիմք: Այս եղանակով են հայերենում կազմվել հետևյալ տեղանունները՝ *Առ-ինձ, Առ-բերդ, Առ-ավան, Առ-գոմ, Առ-ուս, Առ-միստ, Առ-ափի* և այլն:

Մնացյալ նախդիրները տեղանվանակերտ արժեք չեն դրսևորել հայերենի զարգացման ոչ մի փուլում: Գ.Ջահուկյանը մանտիպի կազմությունները պայմանականորեն է համարում նախածանցավոր, որովհետև, նրա դիտարկմամբ, օրինակ, բուն հայկական հիմքով և ածանցով *Առքերան(ի)* –ն, նախդրավոր կապակցության (առ բերան(ի)) միասնացումն է որպես տեղանուն և ոչ թե բուն նախդրավոր կազմության:¹⁰

Հայերենի ածանցները բավական մանրամասն քննարկված են և տարժամանակյա, և համաժամանակյա կտրվածքներով, սակայն տեղանվանակերտ դարձած ածանցները յուրահատուկ բնույթ ունեն և դրանց առանձին վերլուծություն, եթե եղել է, ապա՝

⁹ Գ.Ղափանցյան, Սովետական Հայաստանի մոր տեղանունների մասին, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», N1, 1954, էջ 15:

¹⁰ Գ.Ջահուկյան, նշյալ աշխատությունը, էջ 415:

բռնուցիկ: Առաջացած լինելով հասարակ գոյականներ, ածականներ, անգամ բայեր կերտող ածանցներից՝ այսպիսի ձևույթները հատուկ գոյականներ կազմելով՝ ըստ էության փոխում են իրենց ունեցած առաջնային իմաստները:

Հայերենում, ինչպես և այլ լեզուներում տեղանվանակերտ հստակ արժեք ունեն վերջածանցները: Մեր լեզվում վերջածանցների ընդհանուր թիվը հասնում է 200-ի: Վերջածանցներն իբրև բառակազմական ձևույթներ ձևի և իմաստի միասնություն կազմող լեզվական միավորներ են, որոնց ձևը հնչյունական կազմն է, իսկ իմաստը՝ այն նշանակությունը, որ արտահայտվում է նրանով: Ունենալով թե՛ ձև, թե՛ իմաստ՝ վերջածանցները, սակայն վերացարկված լեզվական միավորներ են՝ նյութական որոշակի իմաստ չարտահայտող: Ծագումնաբանական տեսանկյունից վերջածանցները՝ ա)մթագնած իմաստով բառարմատներ են՝ հնչյունափոխ կամ անհնչյունափոխ՝ *հատ - ատ, կերտ, շեն, վան, վետ ... բ)* քերականական իմաստը կորցրած ձևույթներ՝ հոգնակերտներ, հոլովիչներ, հոլովակերտներ, խոնարհման վերջավորություններ..*ք, ս, ի, ոց, եալ. ող... և գ)* փոխառյալ մասնիկներ՝ *ան, աշ, են, պատ...* Գ.Ջահուկյանը տեղանունների առումով նշում է, որ հնդեվրոպական ծագման ածանցների հետ մեկտեղ հայոց լեզվում տեղանվանակերտ գործառույթ շատ ավելի հաճախ ստացել են փոխառյալ ածանցները՝ հիմնականում իրանական՝ *ակ, ական, իկ, պատ, ստան, վան...*

Ընդունված դասակարգմամբ՝ տարբերակվում են անվանական և բայական վերջածանցները: Անվանական վերջածանցները կազմում են անուն խոսքի մասեր, իսկ բայական ածանցները՝ բայեր կամ դերբայներ: Տեղանունների բառակազմական քննության տեսանկյունից ուշադրության են արժանի ոչ միայն անվանական վերջածանցները, այլև բայական: Դիշտ է, վերջիններս տոկոսային հարաբերակցությամբ շատ ավելի փոքր տեղ են գրավում անվանական վերջածանցների համեմատությամբ, սակայն հայոց լեզվի զարգացման տարբեր փուլերում դերբայակերտ վերջածանցները կազմել են նոր տեղանուններ: Արդի հայերենում դերբայակերտ ածանցներն այլևս տեղանվանակերտ արժեք չունեն: Թվարկենք դերբայակերտ այն վերջածանցները, որոնք հայերենում տեղանուններ են կազմել՝ *-յալ- Առաքյալ, Երևյալ, -իչ- Չարդարիչ, -ելի- Չմայլելի, Առակելի,*

-ող- Աղոթող, Ծաղկող... Միաժամանակ նշենք, որ նման ածանցներն այսօր կենսունակ չեն, նրանցով նոր տեղանուններ չեն կազմվում:

Տեղանվանակերտ այն ածանցները, որոնք իբրև բառակազմական ձևությամբ շարունակում են նոր բառեր ստեղծել, կոչվում են գործուն կամ կենսունակ՝ ի տարբերություն այն ածանցների, որոնցով առհասարակ նոր տեղանուններ չեն կազմվել: Այս հոդվածի նպատակը արդի հայերենում տեղանվանակերտ կենսունակ այն ածանցների վերհանումն է, որոնք գծային շարքեր են կազմում՝ ջրանուն-հարակից բնականուն – մանրատեղանուն և այլն: Դրանք սակավաթիվ են, որովհետև ներկայումս հայկական տեղանվանակազմության հիմնական եղանակը բառաբարդումն է: Հայերենի զարգացման տարբեր փուլերում տեղանվանակազմիչ արժեք ունեցող շուրջ 3 տասնյակ ածանցներից (-աշ, -ակ, -արան, -ան, -անի, -աս, -ատ, -ավոր, -եկ, -են, -ես, -ի, -իկ, -ին, -իս, -իք, -կան, -նի, -ոս, -ող, -ստան, -վետ, -ուկ, -ունի, -ունիք...) այսօր կենսունակ է ոչ լրիվ մեկ տասնյակը, այն էլ ներքին վերապահումներով: Այս երևույթը վկայում է հայոց լեզվում տեղանվանակազմության մեջ միօրինակացման և համակարգայնության հաստատման հզոր միտումի մասին: Մեր կողմից առանձնացված կենսունակ ածանցների վերհանման համար հիմք են ծառայել 1990 – 2006թթ. Հայաստանի և Ղարաբաղի Հանրապետություններում պաշտոնապես կատարված տեղանունների վերանվանումները կամ անվանակոչումները, որ արտացոլված են նոր վարչատարածքային բաժանումներն արտացոլող ժամանակակից քարտեզներում և պետական գրագրության մեջ:

1. ԱԿԱՆ- պարթևական ծագման այս ածանցը(akān) և՛ հին, և՛ նոր ժամանակներում կազմել և կազմում է նահանգների, մարզերի անուններ, բնականություններ, անգամ ջրանուններ ամենատարբեր ծագման հիմքերից՝ *Կովսական, Ջրական, Գինական, Կուտական, Արվական, Արզական, Բուժական, Տափերական, Այգեգործական, Լեռնական, Կոճղական, Գետական...*

2. ԱԿ- իրանական ծագման ածանց է (ak)՝ գերազանցապես բնականություններ, սակավ՝ ջրանուններ կազմող, իր կենսունակությամբ զիջում է *ական*-ին, նվազական իմաստը մեծամասամբ ուժեղ արտահայտված է, քեև կարող է նաև բացակայել՝ *Անտառակ, Բերդակ, Գանձակ, Դարանակ, Երիզակ, Զորակ, Ծովակ, Լճակ, Շամբարակ, Հանդակ...*

3. ԻԿ- իրանական ծագման ածանց է (īk)՝ դարձյալ տեղանուններում ևս զգալի նվազական իմաստով, բնականություններ, գետանուններ կազմող՝ *Աղվորիկ, Բերդիկ, Դարբնիկ, Դարիկ, Դրախտիկ, Իշխանիկ, Հացիկ, Հերիկ, Հողմիկ, Խաչիկ, Զաղաքիկ...*

4. ԿԵՐՏ-(ակերտ)- իրանական ծագման ձևույթ է, որը հիմնականում ստեղծում է բնականություններ՝ *Գեղակերտ, Լեռնակերտ, Հայակերտ, Չեռնակերտ, Մարտակերտ, Սարակերտ, Տիգրանակերտ, Տուֆակերտ, Զարակերտ*

5. ՅԱՆ- իրանական ծագման այս ածանցը (yān), որը գրաբարյան ա ներդրական հոլովման սեռական հոլովածն է և հայերենում ազգանվանակերտ, ինչպես նաև ածականակերտ բազմիմաստ կենսունակ ձևույթներից է, անցյալի և ներկայի բնականությունների, գործուն տեղանվանակազմիչ՝ *Ախուրյան, Արտավանյան, Մայիսյան, Նոյեմբերյան, Հոկտեմբերյան, Հայկազյան, Միլիկյան, Բաղրամյան, Իվանյան ...* Այս ածանցի պարագայում առկա է հետաքրքիր երևույթ. հնագույն՝ ուրարտական ժամանակներից եկող *ianī* ածանցը որոշ տեղանուններում հնչյունական համաբանության նույնացել է աստիճանաբար կայուն տեղանվանակազմիչ դարձող *յան* ածանցի հետ՝ *Ախուրիանի - Ախուրյան...*

6. ՈՒՏ- Գ.Ջահուկյանը այս տեղանվանակազմիչի ծագումը կապում է հնդեվրոպական *ōd ածանցի հետ: Այս ածանցի հիմնային նշանակությունը ինչ-որ բանով հարուստ վայր ցույց տալն է, այսինքն՝ այն ի սկզբանե տեղանիչ է՝ *Այգուտ, Արևուտ, Գաղթուտ, Գիհուտ, Թեղուտ, Թխկուտ, Լեռնուտ, Լորուտ, Ծաղկուտ, Կավճուտ, Կառնուտ, Կեչուտ, Տանձուտ...*

7. Թ- Տեղանվանակերտ արժեք ունեցող ուղղական հոլովի այս հնագույն հոգնակերտը (հ.-ե. *-es) հատկանուններ է կազմում ինչպես առանձին, այնպես էլ այլ կազմիչների հետ՝ *երք, եղք, եք, անք, ունք, անք, ինք, իք, ունիք...* հավաքականության իմաստով: Վերջիններս, սակայն, տեղանվանակազմության արդի փուլում գործուն չեն: Գր. Ղափանցյանը կարծում է, որ նախնական լեզվամտածողությանն ընդհանրապես բնորոշ է հոգնակի թվով դրված անվանմանը փոխաբերաբար հաղորդել նաև տեղանքի նշանակություն: Նա բերում է իր ասածի հիմնավորումներ տարբեր լեզուներից՝ հայկական՝ *Պարնի, Բջնի,*

Սոսոցի, Գառնի, Կործալք, Կոստալք, Վիրք, Հալք, Թելեր, Ճովեր,
վրաց.՝ Notanebi, Vaslebi..., րուս.՝ Боровичи, Черкасы, Сумы,
Կյմրի, հուն.՝ Athenai, Thebai և այլն¹¹:

Բերենք *p* ածանցով ներկայումս գործուն տեղանունների օրինակներ՝ *Վանք, Բերք, Այրք, Արտաբույնք, Գոմք, Դալք, Դժգույնք, Զուլք, Ծափալք, Կայք, Կիցք, Հովք, Մարմարք...* Բաղադրյալ կազմություններից՝ *Արեգունիք, Բարձրունիք, Ծաղկունիք, Վանեք, Աղբերք...*

¹¹ Ст'и Гр. Капанцян, Суффиксы и суффикгируемые элементы в топонимике древней Малой Азии, Ереван, 1948, т.9 22:

**ՈՐՄՆԱՆՈՐՇ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ
ՁՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆԻ
ԲԱՐԲԱՆՆԵՐՈՒՄ**

Տուն և տնտեսություն իմաստային դաշտն արտացոլող բառանվանումների ցանկում ընդգրկել ենք նաև սենյակում պատի մեջ թողած, երեսը բաց պահարան հասկացության բառագուգաբանությունները: Նշված հասկացության բարբառային ներկայանակը բավականին խայտաբղետ է: Մասնավորապես այն կարելի է տարանջատել երեք խմբի՝

1. բնիկ հայերեն բառեր.
2. բարբառային բառեր.
3. փոխառյալ բառեր:

Բնիկ հայերեն բառերից սենյակում պատի մեջ թողած, երեսը՝ բաց պահարան հասկացության բառագուգաբանություններ են **ականատ, դոնակ, աճկոծ, աչկունք** բառանունները:

Ականատ-ը բնիկ հայերեն բառ է, որն առաջացել է **ակն(աչք)** և **հատ(ել)** բառերի բառաբարդումից: Ակն բառի սեռական հոլովը՝ **ական-ը**, անկախ գործածված չէ, սակայն շատ սովորական ոճ է **ական հատանել** «փոս փորել, պատ ծակել» (*տե՛ս Հրաչյա Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հտ. 1, Երևան, էջ 107*): Հր. Աճառյանը բերում է **ականահատ** «գերեզմանակրկիտ», «ականամոմ» մի տեսակ մոմ, որով մեղուները փեթակի մուտքն են փակում, **ական հատանել** «ոճի վրայից» կազմված **ականատ** «մկան և ուրիշ կենդանիների թակարդ», որը և բարբառներում առկա է նաև **ակնատ** տարբերակով: Այնուհետև լեզվաբանը վկայակոչում է **ականատ** բառի գավառական ձևերը՝ **ակնատ** և **ականատ**, որոնք բարբառներում հանդես են գալիս թռչուն որսալու ցանց իմաստով, ինչպես նաև **ակնատ, ականատ**՝ պատի մեջ բացված դարան կամ սենյակից սենյակ բացված փոքր պատուհան նշանակությամբ, որը և հաստատում է **ականատ** բառի բացատրությունը՝ **ական հատանել** (Հր. Աճառյան, ՀԱԲ, հտ. 1, էջ 109):

Նույն բացատրությունն է տալիս Հայկազեան բառարանը. **ականահատ**- որ **ական հատանել** գտուն. **ծակ** բացող,

պատը ծակող (*Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հտ 1, Ե., 1979, էջ 22*):

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնում առկա բարբառագիտական նյութերը և հայերենի բարբառներին նվիրված մենագրությունները ևս գալիս են հաստատելու Հր. Աճառյանի և ՆՀԲ-ի՝ ականատ բառի բացատրությունները:

Ականատ բառանունը հայերենի բարբառներում հիշատակված է մի շարք հնչյունական տարբերակներով՝ ակընատ (Խոյ-Սալմաստ), ականատ (Վան, Նախիջևան), ազմատ (Մուշ, Կարս), անկանատ (Շատախ), հանկանատ (Մոկսի Մամուտանց), ակնատ (Արտաշատի խոսվածք, Խոյի Փայաջուկ գ.), ակնադ (Մուշի Վարդենիս գ.) և այլն: Այսպիսով՝ ականատ բառանունը հնչյունական տարբերակներով առկա է հիմնականում հայերենի բարբառների արևմտյան խմբակցության Վանի միջբարբառախմբի խոսվածքներում, մասամբ՝ հարավկենտրոնական բարբառախմբում, ինչպես նաև բարբառների արևելյան խմբակցության Խոյ-Մարաղայի բարբառախմբի խոսվածքներում: Ականատ բառի առկա երկու իմաստները՝ թակարդ և պատի մեջ բացված դարան, հետաքրքիր գուգահեռ ունեն վարմ և որմ բառերի հետ, որոնցից առաջինը իմաստով առնչակից է ականատ բառի թակարդ իմաստին, իսկ երկրորդը՝ որմ իմաստին (չնայած որ վարմ-ը համարվում է փոխառություն պարսկերենից, իսկ որմ-ը՝ բնիկ հայերեն բառ):

Սենյակում պատի մեջ թողած, երեսը բաց պահարան հասկացության բառանվանում է նաև ակն արմատից սերված աչկունք բառաձևը: Ըստ Աշոտ Աբրահամյանի՝ ակն բառը աղբյուրի ակի իմաստով հոգնակի ուղղականում ունենում է ակունք ձևը, գոհարեղենի իմաստով՝ ականք ձևը, իսկ աչքի իմաստով հոգնակի թվում գործածվում է աչք ձևը (*տե՛ս Ա.Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Ե., 1976թ., էջ 29*): Արդի հայերենում և բարբառներում աչք-ը ունի եզակի իմաստ և հոգնակիում ստանում է -եր վերջավորություն՝ աչքեր:

Ինչպես հայտնի է, բազմիմաստ աչք բառն ունի նաև դարակ նշանակությունը, և հայերենի բարբառներում աչկունք բառանունը աչք բառի բառիմաստային ճյուղավորմամբ առաջացած բառաձև է՝ սենյակում պատի մեջ թողած, երեսը բաց պահարան՝ դարակ իմաստով: Հայերենի բարբառներում առկա

հիշյալ աչկունք բառանունը սերտորեն առնչվում է Գողթան երգերից ավանդված «Վահագնի ծնունդ»-ի աչկունք-ի հետ.

Նա հուր հեր ուներ,

(Ապա թե) բոց ուներ մօրուս

Եվ աչկունքն էին արեգակունք: *(Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Գիրք առաջին, ԼԱ/ԼԲ):*

Աչկունք բառածն առաջացել է աչիկ=աչ+իկ փոքրացուցիչ-փաղաքշական բառային տարբերակից՝ գրաբարյան - ունք հոգնակերտի հավելմամբ:

Աչկունք-ը՝ իբրև սենյակում պատի մեջ թողած, երեսը բաց պահարան հասկացության բառանվանում, գործածական է հայերենի Մուշ-Տիգրանակերտի բարբառախմբի որոշ խոսվածքներում (Մուշի Բուլանուխի Միրբար գ.՝ աչկունք, Կոպ գ.՝ աճկունք և այլն):

Ալաշկերտի որոշ խոսվածքներում փաստված են նաև աչք բառային սկզբնաձևից առաջացած աճկոժ, աճկոնժ, աճկուոժ բառազուգաբանությունները՝ վերոհիշյալ իմաստով:

Սենյակում պատի մեջ թողած, երեսը բաց պահարան հասկացության հաջորդ բառազուգաբանությունը, որ առկա է հայերենի բարբառներում, դռնակ բառանունն է: Այն որոշ դեպքերում զուգահեռաբար գործածվում է պատըրհան և ականատ բառածների հետ: Դռնակ բառածը կղզյակի ձևով գործառում է Ջուղայի բարբառում (Նախիջևանի Փարաղաշտ՝ տըռնակ//պըտըրհան, Փառնակա՝ տըռնօկ//ականատ, Հին Ջուղա՝ տըռնակ):

Դուռն-ը բնիկ հայերեն բառ է՝ հնիս. *dhur* ձևից: Ըստ Հր. Աճառյանի՝ այն ունի նաև կիրճ, լեռների մեջ անցք իմաստը (*Հր. Աճառյան, ՀԱԲ, հտ. 1, 1971, էջ 684*):

Գևորգ Ջահուկյանը, ներկայացնելով իմաստային-քեմատիկ խմբերը, «բնակարան, տուն, կահկարասի» խմբի մեջ ընդգրկում է նաև դուռն բառը՝ որպես հնդեվրոպական բառանուն (*Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 264*): Խոսելով սեմական լեզուների և հայերենի բառապաշարի զուգադիպությունների մասին՝ լեզվաբանը նկատում է, որ դրանք հայերենի՝ այլ լեզուներից կատարած փոխառությունների արդյունք չեն: Ըստ նրա՝ առաջին շերտը կազմում են այն զուգադիպությունները, որոնք,

անկախ ցեղակցական հարաբերություններից և շփումներից, առկա են գրեթե բոլոր լեզուների մեջ. այս շերտը մա պայմանականորեն անվանում է «տարրական ցեղակցության բառեր»: Երկրորդ շերտը կազմում են այն զուգադիպությունները, որոնք արդյունք են սեմականից կատարված հնդեվրոպական հնագույն փոխառությունների (*Գ. Ջահուկյան, ՀԼՊ, ՆԺ, էջ 450*): Երբայերենում *dhuer բառն ունի քարե պատ, սյունաշար իմաստը. զուցեև հնագույն ժամանակներում այն հայերենում ևս ունեցել է պատ իմաստը, որը իմաստային փոխանցումով պահպանվել է հայերենի բարբառներում՝ արդեն պատի մեջ բաց արած պահարան իմաստով, ինչպես պատուհանի դեպքում, որի սկզբնական նշանակությունն է եղել «Ծակ որմոյ տան առ 'ի կողմանէ կամ 'ի վերուստ 'ի պէտս անցից լուսոյ և հողմոյ, որպէս թէ հողմանցոյց, որպէս դռնակ»:

Հայերենի բարբառների մի ստվար մասում սենյակում պատի մեջ թողած, երեսը բաց պահարան իմաստով գործածվել է պատրիան բառանունը: ՆՀԲ-ում վկայաբերված է պատուհան բառի երկու իմաստ՝

1. Ծակ որմոյ տան առ 'ի կողմանէ կամ 'ի վերուստ 'ի պէտս անցից լուսոյ և հողմոյ. լուսամուտ, լուսանցոյց.

2. Պահարան, խորշ, ծակ 'ի մեջ որմոյ (*ՆՀԲ, հտ. 2, Ե., 1981, էջ 621*):

Հր. Աճառյանը պատուհան բառի համար ներկայացնում է հետևյալ իմաստները՝

1. լուսամուտ, 2. պատի մեջ պահարան:

Ըստ նրա՝ պատուհան-ի հնագույն ձևը պատուրհան-ն է (*Հր. Աճ., ՀԱԲ, հտ. 4, 1979, էջ 50*): Գիտնականը ՆՀԲ-ի մեկնությունը (պարսկերեն «պատիուն, պատիւէն, որպէս թէ հողմանցոյց և յն որպէս դռնակ» կամ այլ մեկնաբանությամբ հողմամուտ, պատուհան) «անհարմար» է համարում և վկայակոչում է Փ. Տեր-Մովսեսյանին, որը պատուհան-ը ստուգաբանում է որպէս հայերեն պատ և հանել բառերից առաջացած բառածև, իբր՝ պատի մեջ ծակ:

Ըստ Գ. Ջահուկյանի՝ հին ձևը պատուրհան-ն է՝ առաջացած իրանական *paturhānā* (*pati-frāna*) ձևից (*Գ. Ջահուկյան, ՀԼՊ, ՆԺ, էջ 540*): Լավրենտի Հովհաննիսյանը նշում է, որ պատուհան բառի իրանական ծագման հավաստի փաստար-

կումներ կան մի շարք իրանագետների կողմից: Առանձնացված է հատկապես Է. Բենվենիստի ստուգաբանությունը. «Միջին իրանական *pātfrās*-ի համաբանությամբ՝ հյ. պատուհան, տեսնում է միջ. իրանական **pātrfān < *pāti.pāna.*frāna*, սնս. *prāna*, սողդ., *βր'ն.βր'ն(=fran)* «փչել» **patifrana* կազմության մեջ տեսնելով «օղանցք, լուսամուտ» իմաստը (BSL, 1957, 63): Ըստ գիտնականի՝ ավելի հավանական է քվում Բենվենիստի բացատրությունը, մանավանդ որ **patifrana*-ի համապատասխանությունը ակնհայտ է հատկապես պատուհանի պատուրհան տարբերակի հետ, որն ավելի հին ձև է և պահպանված է նաև արդի որոշ բարբառներում (*տե՛ս* *Լ.Հովհաննիսյան, Հայերենի իրանական փոխառությունները, Ե., 1990, էջ 257*):

Հայերենի բարբառներում սենյակում պատի մեջ թողած, երեսը բաց պահարան հասկացության բառազուգաբանություններ են պատուհան և պատրհան բառածները՝ մի շարք հնչյունական տարբերակներով:

Պլուրբիան հնչյունական տարբերակն առկա է բարբառների արևելյան խմբակցության Ղարաբաղ-Շամախիի միջբարաբառախմբի խոսվածքներում (Գորիս, Հաղբուք, Կիրովաբադ և այլն): Նախիջևանի Տանակերտ գյուղում փաստված է պլտօրան, Ագուլիսում՝ պլտըրօն, Եղեգնաձորի Հորս գ.-ում՝ բլղըրբիան տարբերակը:

Պատուհան կամ պատուխան հնչյունական տարբերակները փաստված են Վանի միջբարբառախմբի խոսվածքներում (Վանի Արճակ, Արտամետ գ., Արծկեի շրջ. Հատեն և Արջրա գ.-եր), կղզյակների ձևով՝ նաև Մուշ-Տիգրանակերտի բարբառախմբի բարբառներում (Մուշի Եկմալ, Լաթար գ.-եր, Բաղեշի Շամիրան գ.): Առավել «աղավաղված» հնչյունական տարբերակներով հանդես են գալիս բարբառների արևմտյան խմբակցության մի շարք խոսվածքներում, օրինակ՝ Սվեդիայի Խտրբեկ գ. - բնդիհուն, Չմշկածագ - բադիհոն, բադիֆօն, Տիգրանակերտ - բլղնհան, Քեսաբ - բեդիհուն, Խարբերդ - բադիֆօն (բադիֆօն): Որքան էլ տարօրինակ թվա, պարզվում է՝ այս «աղավաղված» ձևերը հնագույն անադարտ տարբերակներն են:

Մյուս բառանունը, որը գործածվում է սենյակում պատի մեջ բացված պահարան իմաստով, խլվակ բառազուգաբանությունն է, որ առկա է Կարճևանի բարբառում: Հիշյալ բառը

փաստված է նաև Աճառյանի գավառական բառարանում:
Խլուակ - պատի մեջ փորում զարակ, ըրաֆ (*Հր. Աճառ-
յան, Հայերեն գառնական բառարան, Թիֆլիս, 1913, էջ
472*): Ըստ Է. Աղայանի բացատրական բառարանի՝ խլվակ-ը
նաև խովակ իմաստն ունի, որն է՝ ջրի անցք, ծակ, որ թողնում
են այգու և պարտեզի պատերի տակից, որտեղից ջուրը մտնում
է այգին կամ պարտեզը: Խովակ բառը արձանագրված է նաև
Ս. Ամատունու «Հայոց բառ ու բան»-ում (*Ս. Ամատունի, Հայոց
բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 295*)՝ նույն բացատ-
րությամբ:

Կարծում ենք՝ բարբառային խլվակ գուգաբանությունը
սերտ առնչություն ունի խողովակ բառի հետ: Լ-ի և դ-ի՝ որպես
ինքնուրույն հնչույթներ գիտակցվելու և հնդեվրոպական Լ-ի
տարատեսակները լինելու օգտին են խոսում մեր բարբառներում
պահպանված այն բառաձևերը, որոնք մերք դ-ով, մերք լ-ով են
հանդես գալիս: Հ. Մուրադյանը, խոսելով այս երևույթի մասին,
գրում է, որ հայերենում երկու Լ-երի տարբերակումը ամենայն
հավանականությամբ կատարվել է հնդեվրոպական լեզվավի-
ճակից հայերենին անցնելու ճանապարհին, երբ աստիճանաբար
ձևավորվում ու կայունանում էր մախահայերենի արտասանա-
կան բազան: Այն հանգամանքը, որ դասական հայերենի շրջա-
նից մեզ ավանդված են ծագումնաբանական նույն արմատից
սերած, բայց իմաստային տարբեր երանգներ ունեցող բառեր,
որոնք հակադրվում են իրար միայն լ-ի կամ դ-ի գրությամբ, խո-
սում է հենց այդ երկու հնչույթների մասին: (*Հ. Մուրադյան,
Հայոց լեզվի պատմական քերականություն, Ե., 1982, էջ
209*): Այսինքն՝ նույն կերպ խլվակ -ը խողովակ բառի մի տար-
բերակն է՝ խողովակ > խըղըվակ - խըլվակ: Ի հաստատումն
այս ամենի՝ բերենք խողովակ բառի մեկնությունը ըստ Աճառ-
յանի. «Խողովակ - (գրված է նաև խողովակի, խողուակ,
խուղակ) «փողրակ, ջրի կամ ուրիշ մի հեղուկի անցք»:
Ըստ Ալիշանի Հին հաւ. 127, 129՝ աստղի անունը գրւած է նաև
խոլովակ, հոլովակ... գվռ. նույն բառերն են խովակ՝ Սվ.
պատերի ստորոտը բացւած ջրի շատ նեղ անցք, խլվակ՝ Հին
Ջղ. «պատի ստորոտը բացւած ծակ, որից ջուրը ներս է հոսում»
(*ՀԱԲ, հտ 2, 1973, էջ 389*):

Այս ամենից կարելի է եզրակացնել, որ պատի մեջ ծակ, որով

ջուրը ներս է հոսում, իմաստից բառիմաստային ճյուղավորմամբ առաջացել է պատրիհան՝ սենյակում պատի մեջ թողած, երեսը բաց պահարան իմաստը:

Բարբառներում հանդիպող քարեք բառածևը՝ սենյակում պատի մեջ թողած, երեսը բաց պահարան իմաստով, դարակ բառի բարբառային տարբերակն է: Հր. Աճառյանը այս բառը համարում է իրանյան փոխառություն՝ պիլ. *darān* ձևից առաջացած» (*ՀԱԲ, հտ 1, 1971, էջ 633*): Ա.Սուրիասյանը «Հայոց լեզվի հոմանիշների բառարանում» դարակ գլխաբառի տակ գետեղել է քարեք բառը՝ որպես պատի միջի դարակ (*Ա.Սուրիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Ե., 1967, էջ 163*): Հայոց լեզվի բարբառային բառարանում ևս փաստված է հիշյալ բառը. Թարեք՝ պատին ամրացված հորիզոնական տախտակ՝ վրան ամանեղեն և ուրիշ մանրմունք իրեր դնելու համար (*Հայոց լեզվի բարբառային բառարան, հտ. 2, Ե. 2002, էջ 86*): Ըստ ՀԲԱ ծրագրի հավաքած նյութերի՝ առկա է Համշենում՝ Թաթևի, Սասունում՝ Քարիկ. Ախալցխայի Ջուղա և Ծղալթբիլա գյուղերում՝ Թաթև, Կարսում, Մուշում՝ Քարեք և այլն:

Լոռու տարածքում (Թումանյանի Շամուտ, Իջևանի Ծաղկավան գյուղերի խոսվածքներում) կղզյակի ձևով առկա է *գանջինա* բառանունը՝ որպես *որմնախորշ* հասկացության բառագույգաբանություն:

Գանջինա բառագույգաբանությունը սերտորեն առնչվում է *գանձանակ* բառի հետ: Հր. Աճառյանը *գանձանակ* բառի համար տալիս է հետևյալ բացատրությունը. «Գանձարան, սնդուկ, դրամարկղ»: Նույն պիլ. *ganjānak* համեմատում է պրս. *ganjēna* «գանձարան մթերանոց, նկուղ», որը ծագում է *ganj* «գանձ» բառից: Շրոդերը հունարեն և պարսկերեն ձևերը հայերենից փոխառյալ է համարում:

Գ. Ջահուկյանը *գանձ*-ը և նրանից ածանցված *գանձանակ* բառերը համարում է պարսկերեն փոխառություն: Գլխունականը հիշատակում է Հ. Հյուրշմանի «Պարսկական ուսումնասիրություններ» աշխատությունը, որում մեղական աղբյուրից փոխառյալ են համարվել հայերեն *քրինձ*, *գանձ*, *պղինձ* բառերը, որոնց մեջ առկա են *ձ*՝ փոխանակ *ջ*-ի: Իսկ մեղերենը համարվում է հյուսիսարևմտյան իրանական լեզու, և այն հայերենի հետ

ամենից ավելի վաղ շփման մեջ մտած իրանական լեզուներից մեկն է, ընդ որում՝ այդ շփումը բավական երկարատև է եղել (տե՛ս Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմության Նախագրային ժամանակաշրջան, էջ 505, Ե. 1987թ.):

Մեր կարծիքով հետաքրքիր ճանապարհորդություն է կատարել *գանձանակ* բառը: Վերջինս պարսկերենից անցել է վրացերենին, իսկ վրացերենից՝ *գանջինա* տարբերակով Լոռու բարբառին: Այսինքն՝ *գանջինա*-ն *գանձանակ* բառի այլափոխված (աղավաղված) տարբերակն է (հմմտ. *Գանձակ-Գյանջա*): Հր. Աճառյանը ՀԱԲ-ում ևս փաստում է *գանջինա* բառաձևը. «Վրաց. գանձանակի *«եկեղեցու պնակ»* համարում է հայերենից փոխառյալ» նշանակության պատճառով, իսկ *գանջինա՝ «գանձանակ, դարակ»* պարսկերենից փոխառյալ ձևի պատճառով, (տես Հր. Աճառյան ՀԱԲ, հտ. 1, էջ 517-518, Ե. 1971թ.):

Սասունի Հազգո գյուղի խոսվածքում հանդիպում է պղնդորտ բառաձևը՝ քննության առարկա իմաստով: Ենթադրում ենք՝ այն պահնորդ բառի բարբառային տարբերակն է:

Բարբառային բառերի մեջ սենյակում պատի մեջ երեսը բաց պահարան նշանակությամբ հիշատակելի է նաև ծալքատեղ բառանունը, որը գործածական է Արարատյան բարբառի խոսվածքներում՝ իմաստային որոշակի տարբերակմամբ: Օրինակ՝ Օշականի խոսվածքում պղղըրհան-ը պատի մեջ փոքր պահարանն է, իսկ ծալքատեղ-ը՝ մեծը, որը ծառայում է անկողին պահելու համար:

Պատի մեջ պահարան հասկացության համար, ինչպես արդեն նշել ենք, բարբառներում գործածվում են նաև մի շարք փոխառյալ բառեր: Այսպես՝

1. փանջարա: Պարսկական փոխառություն է: Մեր բարբառներում այն փաստված է դեռևս միջնադարյան քնարերգության մեջ (հիշենք Սայաթ-Նովայի «Աշխարս մե փանջարա է» տաղը), իսկ մի շարք հնչյունական տարբերակներով դրսևորվում է Փոքր Ասիայի բարբառախմբի Կարինի բարբառում (Ախալքալաքի Վաչիան գ.՝ փըմճըրը, Գյումրի՝ փանջարա, Ախալքալաքի Օլավերդ գ.՝ փանճարն): Երբեմն բարբառներում տեղի է ունենում իմաստային տարբերակում. հիշատակված փանճարն-ն Ախալքալաքի Օլավերդի խոսվածքում, օրինակ,

ափսեների համար հատկացված պահարանն է, իսկ անկողնու պահարան իմաստով գործածվում է տօլապ-ը:

Փանջարա բառանունը փաստված է նաև հարավկենտրոնական բարբառախմբի որոշ խոսվածքներում (Խուրի Շեն, Թաղավանք գ.-եր, Մասունի Իրիցանք գ. և այլն): Հիշյալ բառանունը վկայված է նաև Օրդուի Չիբլուխու գյուղի խոսվածքում (փանջանք):

2. դօլաբ: Պարսկական փոխառություն է՝ պատի մեջ խորշ իմաստով: Յրիվ տարածքի հատկանիշ է դրսևորում՝ հանդիպելով Հաջընի բարբառում՝ դօլօբ, Վանում՝ դօլապ, Պարտիզակում՝ տ՞օլաբ, Գանձայում՝ դօլափ, Խարբերդում, Արաբկիրում, Մալաթիայում, Ալաշկերտում, ինչպես նաև Պարսկահայքի խոսվածքներում՝ դօլաբ:

3. շըբաբ: Փոխառյալ է արաբերենից: Գործառում է հարավկենտրոնական բարբառախմբի Տավրոսիկ-Մոսկանի (Նիչ գ.) և Բուն Մասունի բարբառներում:

4. յուբ: Թուրքերեն-ռուսերեն բառարանում այս բառը հետևյալ բացատրությունն ունի՝ 1. խորշ, 2. պահարան անկողնու և հագուստեղենի համար, յուբրուգ պատի մեջ փորված անկողնակալ, որի երեսին շոր են քաշել: Արձանագրված է Սեբաստիայի Ջառա գյուղաքաղաքի խոսվածքում, Ակնում, Ասլանբեկում, լուրգլուգ ձևով՝ Անտիոքի Բեյլանում՝ որպես անկողնու պահարան:

5. մուսլուդ, մուսանդան: Թուրքերեն-ռուսերեն բառարանում մուսլուդ-ը բացատրված է որպես ծորակ՝ հավանաբար ջուրը հոսելու անցք (ինչպես խլվակի դեպքում) իմաստով, իսկ մուսանդան-ն՝ որպես պատի մեջ մեծ պահարան անկողնու համար (Վան, Նիկոմեդիայի Ադաբազար):

6. ռաֆթ: Թուրքերեն փոխառություն է՝ փաստված Երևանի Նորքում:

7. դիւբանլան: Հիշատակված է Եդեսիայի Գարմունջ գյուղում, դիւբանլան-ն՝ Սևերեկում. հնարավոր է՝ փոխառություն է արաբերենից:

8. դիլով: Ծագումը մեզ անհայտ է: Զանի որ բառը փաստված է Վարդաշենի Յաղափու գ.-ում, հնարավոր ենք համարում աղվանական ցեղերի լեզուներից փոխառություն լինելը:

9. քախչա: Պարսկերենից փոխառյալ բառ է՝ պատի մեջ

խորշ ամանեղենի կամ անկողնու համար իմաստով (Պարսկահայք՝ Փերիա, Զյարվանդի շրջան, Չահարմահալի շրջան):

Հայերենի բարբառներում սենյակում պատի մեջ բացած պահարան իմաստով առկա են նաև նոր՝ ռուսերենից փոխառյալ բառեր՝ ակոշկա, շկաֆ (Մուշի Դուզնուզ գ., Նախիջևանի Շուռուտ գ.):

Այսպիսով՝ սենյակում պատի մեջ պահարան հասկացության բառանունների քննությունը հայերենի բարբառներում մեկ անգամ ևս վկայում է, որ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը ավանդվել են ժողովրդական լեզվամտածողությանը բնորոշ տարրեր, որոնք հին հայերենից անցել են բարբառներին՝ իմաստային որոշակի զարգացումներով, ինչպես նաև գործածվել են փոխառյալ բառեր, որոնք բարբառներ են մուտք գործել այս կամ այն ճանապարհով:

Ընդհանուր հայերենյան լեզվական հատկանիշները
բարբառներում

Մարդկային լեզուն դրսևորվում է առանձին լեզուների ձևով, որոնցից յուրաքանչյուրը մյուսներից տարբերվում է իր հնչյունական համակարգով, բառապաշարով և քերականական կառուցվածքով: Միաժամանակ, տարբեր լեզուներ հանդես են բերում առավել կամ պակաս ընդհանրություններ: Լեզուների համեմատական ուսումնասիրությունը վեր է հանում նրանց թե տարբերությունները, թե ընդհանրությունները, ինչը թույլ է տալիս կատարել տիպաբանական ու ցեղակցական դասակարգումներ:

Անցյալ դարի վաթսուհանգուցյալ թվականներից սկսած՝ լեզվաբանության մեջ կարևորվել է լեզվական այնպիսի հատկանիշների վերլուծության անհրաժեշտությունը, որոնք միավորում են լեզուների որոշակի բազմություն կամ աշխարհի բոլոր լեզուները: Լեզվաբանության պատմության մեջ հարցադրումը նորություն չէր: Լեզուների ընդհանրությունները այս կամ այն չափով դիտարկվել են դեռևս հին ժամանակներից սկսած: Լեզվաբանական գրականության մեջ նշվում է, որ գրեթե բոլոր դարաշրջաններում էլ լեզվաբանները դեկլարվել են լեզուներում որոշակի երևույթների ընդհանրականության վերաբերյալ պատկերացումներով¹: Նոր ժամանակներում դրանց հանգամանորեն անդրադարձել են Պոր – Ռոյալի քերականության (17-րդ դար) հեղինակները, որոնք նպատակ էին դրել «սահմանել բոլոր լեզուների քերականական ընդհանուր սկզբունքները և նրանց հիմնական տարբերությունների պատճառները»²: Լեզուների ընդհանրությունները ժամանակակից լեզվափիլիսոփայության ու ընդհանուր լեզվաբանության հիմնադիր Վիլհելմ ֆոն Հումբոլդտին թույլ են տվել անելու այսպիսի դատողություն. «Լեզվի մեջ այնքան հրաշալի կերպով է համաձայնեցված անհատականը համընդհանուրի հետ, որ միատեսակ ճիշտ է ասել, թե ողջ մարդկային սեռը խոսում է մեկ լեզվով և որ յուրաքանչյուր մարդ ունի իր լեզուն»³:

¹ Новое в лингвистике, выпуск V, М., 1970, с. 5.

² Գ. Չախուկյան, Լեզվաբանության պատմություն, հ. 1, Եր. 1960, էջ 253:

³ Նվ. աշխ., էջ 343:

20-րդ դարի երկրորդ կեսին ընդհանրական երևույթների վերլուծությունը պայմանավորված էր լեզվաբանական տիպաբանության զարգացմամբ, որի խնդիրն էր աշխարհի լեզուները դասակարգել ու խմբավորել նրանց քերականական կառուցվածքի ընդհանրությունների հիման վրա⁴։ Այդ նպատակին հասնելու համար առաջադրվում է լեզվական հանրույթների (ունիվերսալիաների) խնդիրը, հրապարակվում է «Լեզվական հանրույթների մասին հուշագիրը», որի հեղինակները նշում են. «Աշխարհի լեզուների անսահման ու ապշեցուցիչ բազմազանության հետևում թաքնված են նրանց բոլորի համար ընդհանուր հատկություններ։ Բոլոր անսահման տարբերություններով հանդերձ՝ պարզվում է, որ լեզուները ստեղծված են կարծես մեկ միասնական օրինակով»⁵։ Լեզվական հանրույթը (ունիվերսալիան) Չ. Հոկետը սահմանում է հետևյալ կերպ. «Լեզվական հանրույթը որևէ հատկանիշ է կամ հատկություն, որը հատուկ է բոլոր լեզուներին կամ լեզվին՝ ամբողջությամբ վերցրած»⁶, իսկ ընդհանուր առմամբ՝ լեզվական հանրույթ են համարվում նաև այն օրինաչափությունները, որոնք ընդհանուր են լեզուների բացարձակ մեծամասնությանը, այսինքն՝ ոչ բոլոր լեզուներին⁷։ Լեզվական հանրույթների ուսումնասիրությունը, վերջին հաշվով, նպատակ ունի պատասխանելու հետևյալ հարցերին. ա) ընդհանրապես ի՞նչ կարող է լինել և ի՞նչ չի կարող լինել լեզվում, բ) այս կամ այն լեզվի կառուցվածքում հետաքրքրություն ներկայացնող ի՞նչ յուրահատկություն կա⁸։

Կարծում ենք՝ լեզվական հանրույթների հասկացությունը կիրառելի է նաև մեկ լեզվի շրջանակներում, եթե նկատի ունենանք տվյալ լեզվի բոլոր դրսևորումներում հանդես եկող հատկանիշները։ Պարզ է, որ առանձին լեզվի հանրույթները իրենց բնույթով պակաս վերացական ու ավելի կոնկրետ կլինեն, քան ընդհանուր լեզվական հանրույթները, բայց առաջինների վեր-

⁴ Общее языкознание (Внутренняя структура языка), М., 1972, с. 545. Է. Բ. Աղայան, Լեզվաբանության հիմունքներ, Եր. 1987, էջ 687։

⁵ Меморандум о языковых универсалиях, Новое в лингвистике, выпуск V, М., 1970, с. 31.

⁶ Ч. Ф. Хоккетт, Проблема языковых универсалий, Новое в лингвистике, выпуск V, М., 1970, с. 45.

⁷ Новое в лингвистике, выпуск V, Москва, 1970, с. 10.

⁸ Նշվ. աշխ., էջ 10-11։

հանումն ու նկարագրությունը կարևոր նախապայման կարող է դառնալ երկրորդների ձևակերպման համար:

Յուրաքանչյուր առանձին լեզու, ամբողջականությամբ հանդերձ, իր բոլոր դրսևորումներում միասնական ու միօրինակ չէ: Ամեն մի լեզու ունի խոսակցական, բարբառային տարբերակներ, որպես կանոն՝ նաև գրական տարբերակ, որոնցից յուրաքանչյուրը առանձնահատուկ է տվյալ լեզվում դրսևորվող հատկանիշների յուրահատուկ խմբավորումով, առանձին դեպքերում՝ նաև միայն իրեն հատուկ հատկանիշով կամ հատկանիշներով: Որևէ լեզվի ամբողջական ուսումնասիրությամբ, մեր կարծիքով, կարող է նպաստել այդ լեզվի շրջանակներում հանդես եկող բոլոր լեզվական հատկանիշների վերհանումը, ինչպես նաև դրանցից այն հատկանիշների զատումը, որոնք ընդհանուր են տվյալ լեզվի բոլոր կամ գրեթե բոլոր դրսևորումների համար. վերջիններս կկազմեն տվյալ լեզվի հանրույթների ամբողջությունը, նրա հիմքը, ատաղձը կամ միջուկը, որը, համալրվելով այլ հատկանիշների այս կամ այն խմբով, ձևավորում է այդ լեզվի դրսևորման այս կամ այն տարբերակը: Փաստորեն, որևէ լեզվի ցանկացած տարբերակային դրսևորման հիմքում ընկած են տվյալ լեզվի համար պարտադիր ընդհանուր հատկանիշներ, որոնք յուրաքանչյուր դեպքում գուցորդվում են ամբողջ լեզվի համար ոչ պարտադիր, բայց տվյալ լեզվի շրջանակներում գործառող հատկանիշների յուրահատուկ փնջով: Է.Աղայանը այս առումով իրավացիորեն նշում է, որ յուրաքանչյուր լեզվի «բոլոր տարբերակների մեջ պահպանվում են տվյալ լեզվի բառապաշարի, քերականական կառուցվածքի, հնչյունական համակարգի ամենատեսական, բոլոր տարբերակներին ընդհանուր հատկանիշներն ու միավորները: ... որևէ հանրության լեզվի ընդհանրությունն ու միասնությունը պետք է դիտել որպես նրա բոլոր տարբերակներին հատուկ, բոլոր տարբերակների մեջ դրսևորվող ընդհանուր հորինվածքի, ընդհանուր բառապաշարի, հնչյունական համակարգի, քերականական ձևերի, հնչյունների, շարահյուսական կառուցվածքի ամբողջությունը»⁹: Այսպիսով, եթե նկատի ունենանք, որ առանձին լեզվի ցանկացած դրսևորում իր մեջ գուցորդում է ընդհանուրը և մասնավորը, հումբոլդտյան վերը բերված արտահայտությունը հայերենի դեպքում կարող ենք

⁹ Է.Բ.Աղայան, նշվ. աշխ., էջ 92:

վերաշարադրել հետևյալ կերպ. միատեսակ ճիշտ է ասել, թե ողջ հայությունը խոսում է մեկ լեզվով և թե յուրաքանչյուր բարբառախոս հայ խոսում է իր բարբառով:

Պետք է նշել, որ հայ լեզվաբանության մեջ առավելաբար ուշադրության արժանացել են հայերենի տարբերակների լեզվական առանձնահատկություններն ու տարբերությունները: Այսպես, գրական լեզվի ուսումնասիրությանը նվիրված աշխատություններում ներկայացվում ու մեկնաբանվում են այդ լեզվավիճակի նորմատիվ իրողությունները, և առանձին դեպքերում մերժվում են հանդիպող սխալ, ոչ գրական իրողությունները, իսկ բարբառներին նվիրված ուսումնասիրություններում շեշտը դրվում է լեզվական տարբերությունների վրա, ընդ որում՝ այդ տարբերությունները վեր են հանվում կամ գրաբարի, կամ արդի գրական հայերենի, հետ համեմատությամբ: Բարբառներում դրսևորվող այդպիսի յուրաքանչյուր լեզվական տարբերություն համարվում է բարբառային հատկանիշ, ու բարբառները բնութագրվում են նման հատկանիշների ամբողջությամբ: Վերջին հարյուրամյակում առանձին բարբառների ուսումնասիրությանն ու նկարագրությանը նվիրված հայագիտական աշխատություններում ներկայացվում է տվյալ լեզվական համակարգը՝ իր տարբերակիչ հատկանիշներով, և այդ հատկանիշների հաշվառումով էլ կատարվել են բարբառների ձևաբանական, հնչյունաբանական դասակարգումներ: Առավել ընդգրկունը, իհարկե, Գ.Ջահուկյանի կատարած բազմահատկանիշ դասակարգումն է՝ հնչյունական և ձևաբանական հարյուր բարբառային հատկանիշների ընդգրկումով, ինչը մեծ լեզվաբանին թույլ է տվել, իր խոսքերով ասած, խուսափել միակողմանիությունից, «բարբառները, ենթաբարբառներն ու խոսվածքներն առանձնացնելիս ելնել օբյեկտիվ չափանիշներից և հնչյունաբանական ու քերականական առանձնահատկությունները բաշխել ըստ պատմա - աշխարհագրական սկզբունքների»¹⁰: Նշենք նաև, որ Գ.Ջահուկյանի «Հայ բարբառագիտության ներածություն» աշխատությունը թե իր մեթոդի ու սկզբունքի նորությամբ և թե բերած հսկայական նյութով նոր հեռանկարներ է բացում հայերենի բարբառների հետագա ուսումնասիրության համար:

Լեզվական տարբերությունները, տվյալ դեպքում՝ բարբա-

¹⁰ Գ.Բ.Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Եր. 1972, էջ 28:

ռային հատկանիշները ներկայացնելիս, ինչպես նշում է Գ.Ջահուկյանը, պետք է ունենալ համեմատության որոշակի եզր: «Հայ բարբառագիտության մեջ մինչև հիմա սովորաբար այդպիսի եզր է ծառայել գրաբարը, երբեմն էլ արևելահայ կամ արևմտահայ գրական լեզուն»¹¹, - գրում է մեծ լեզվաբանը և ապա եզրակացնում. «Այսպիսով, ստացվում են տարբեր դեպքերի համար տարբեր էտալոններ, և կորչում է մի կողմից՝ բարբառային միավորների առանձնացման ընդհանուր չափանիշը, մյուս կողմից՝ միևնույն միավորների տարբեր կողմերի նկարագրության միասնականությունը»¹²: Ելքը մեկն է՝ «ընդհանուր դասակարգում կատարելիս բոլոր դեպքերում ունենալ համեմատության միևնույն էտալոնը», բայց հարց է ծագում՝ «ո՞րը պետք է լինի այդ էտալոնը»¹³: Գ.Ջահուկյանը առաջարկում է այսպիսի լուծում. «որոշել բարբառային հատկանիշները և դրանց հետևողական բացառմամբ հասնել մի վերացական «ոչ բարբառային» վիճակի, որ կրնոթագրվի բոլոր դեպքերում որպես ոչ նշանակիր անդամ: Այդ վերացական «ոչ բարբառային» վիճակը բոլոր 100 հատկանիշների համար կունենա միայն բացասական (զրո) նիշեր, իսկ գրական լեզուները և բարբառները՝ նաև դրական նիշեր՝ 1-ից մինչև 100-ի սահմաններում (ավելի ճիշտ մի քանիսից մինչև մի քանի տասնյակ), ընդ որում գրական լեզուները՝ սովորաբար ավելի քիչ չափով»¹⁴: Ի դեպ, այդ վերացական «ոչ բարբառային» վիճակը Գ.Ջահուկյանը անվանում է նաև «իդեալական վիճակ», որին և գրական լեզուներին, նրա կարծիքով, որքան ավելի կմոտենան բարբառները, այնքան ավելի մաքուր կլինեն¹⁵: Փաստորեն, Գ.Ջահուկյանի նշած «ոչ բարբառային, իդեալական» վիճակը գրական լեզուն է՝ առանց իր համար հիմք դարձած բարբառի բարբառային հատկանիշների: Այստեղից էլ հետևում է մեր կարծիքով ոչ ճիշտ դիտարկումը բարբառների մաքրության մասին: Բարբառը, ինչպես և գրական լեզուն, լեզվական համակարգ է, որը մաքուր կամ անմաքուր լինել չի կարող¹⁶:

¹¹ Նշվ. աշխ., էջ 39:

¹² Նույն տեղում:

¹³ Նույն տեղում:

¹⁴ Նշվ. աշխ., էջ 40:

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ Գրական լեզվի կամ որևէ բարբառի մաքրության ցուցանիշ թերևս կարող է լինել միայն օտար անհարկի փոխառությունների սակավությունը:

Խոսք կարող է գնալ ընդամենը գրական լեզվին տվյալ բարբառի մերձակցության մասին, ինչը բարբառի համար՝ իբրև լեզվական համակարգի, դրական կամ բացասական բնութագրման ու գնահատման չափանիշ լինել չի կարող. վայրի պտուղները հաճախ շատ ավելի համեղ են ու օգտակար, քան նրանց տնաբույս, մշակված կամ ջերմոցային օրինակները:

Կարծում ենք՝ բարբառային հատկանիշները որոշելիս և ներկայացնելիս համեմատության եզր կարող են դառնալ հենց համահայերենյան լեզվական հատկանիշները կամ հանրույթները, որոնց ամբողջական վերհանումն ու նկարագրությունը թույլ կտա ունենալու հայերենի հիմնական և ընդհանուր բնութագիրը՝ ավելի ամբողջական տեսքով: Ունենալով համեմատության մասն ճշգրիտ ու միասնական եզր՝ ավելի որոշակի կարելի կլինի ներկայացնել գրական ու խոսակցական լեզուների, բարբառների յուրահատկությունները: Ընդհանրությունները կարելի է որոշել և համաժամանակյա, և տարաժամանակյա կտրվածքներով: Համաժամանակյա մոտեցման դեպքում թերևս ճիշտ կլինի ուսումնասիրության ոլորտում ունենալ միայն բարբառները, որովհետև գրական ու խոսակցական լեզուների ընդհանուր հայերենյան բոլոր հատկանիշները գալիս են հենց բարբառներից: Տարաժամանակյա մոտեցման դեպքում ուսումնասիրության ոլորտում կարող են լինել հայերենի բոլոր դրսևորումները:

Հարցը համաժամանակյա կտրվածքով դիտարկելիս, կարծում ենք, կարելի է առանձնացնել լեզվական հատկանիշների այսպիսի խմբեր.

ա/ հատկանիշներ, որոնք հատուկ են հայերենի բոլոր բարբառներին, այսինքն՝ ընդհանուր հայերենյան են.

բ/ հատկանիշներ, որոնք հատուկ են բարբառների բացարձակ մեծամասնությանը և իրենց բնությամբ մույնպես ընդհանուր հայերենյան են, ուղղակի ինչ-ինչ հանգամանքների բերումով բացակայում են մեկ-երկու բարբառներում.

գ/ հատկանիշներ, որոնք բնորոշ են տարբեր բարբառների, բարբառների որևէ խմբի և կարող են բնութագրիչ լինել այդ խմբի համար.

դ/ հատկանիշներ, որոնք բնորոշ են առանձին բարբառների և կարող են բնութագրական լինել դրանց համար:

Հատկանիշների բերված չորս խմբերի համար հերթականությամբ բերենք մեկական օրինակ.

ա/ հայերենի բոլոր բարբառները բառասկզբում ունենում են *փ,թ,ք,ց,չ* բաղաձայններ.

բ/ հայերենի գրեթե բոլոր բարբառներում միավանկ բառերի սկզբնային *ե* - ից առաջ առկա է *յ* - ի հավելում¹⁷.

գ/ Վասպուրականի և Պարսկահայքի բարբառներում հին-հայերենյան *հ* - ի դիմաց առկա է *խ*.

դ/ Բայագետի բարբառում շրթնային *ա* ձայնավորը ունի գերհնչույթի արժեք. այն մի դեպքում *ա* հնչույթի տարբերակն է, մեկ այլ դեպքում ներկայացնում է երկբարբառային արտասանությամբ *ա* : Օրինակ՝ բարբառումս բացարձակապես նույն հնչումն ունեն *շար/շարեվ/* և *շոր/հագուստ/*, *պաչ/համբույր/* և *պոչ/ազի/* բառազույգերը:

Հատկանիշների վերջին երեք խմբերը կարելի է ձևավորել՝ նկատի ունենալով Գ.Ջահուկյանի ներկայացրած հարյուր հատկանիշները, ինչպես նաև նորանոր բարբառային տվյալների հաշվառումով: Ինչ վերաբերում է հատկանիշների առաջին խմբին, ապա այն կարելի է ձևավորել ըստ հնչյունական, բառապաշարային և քերականական մակարդակների՝ առանձնացնելով այն ընդհանուրը, որը դրսևորվում է ուսումնասիրության ենթակա բոլոր բարբառներում: Բերենք այս կարգի հանրույթների մեկական օրինակներ՝ ըստ լեզվի տարբեր մակարդակների.

ա. հնչյունաբանական - հայերենի բոլոր բարբառներն ունեն *ա,ե,ի,օ,ու,ը* ձայնավորները.

բ/ քերականական - հայերենի բոլոր բարբառներն ունեն *եր* հոգնակերտ մասնիկ¹⁸.

գ/ բառապաշարային - հայերենի բոլոր բարբառներն ունեն *հայր, մայր, քույր, ես, երկու* և նման բազմաթիվ այլ բառեր¹⁹:

Կրկին անդրադառնալով լեզվական հատկանիշների վերը բերված չորս խմբերին՝ նշենք, որ դրանցից առաջին երկու խմբերը ունեն ընդհանուր բնույթ և կազմում են լեզվի բուն միջուկը, իսկ վերջին երկուսը ունեն մասնավոր բնույթ և կազմում են բարբառային հատկանիշների ամբողջությունը: Ի դեպ, բարբառային հատկանիշների հետ համեմատելի են միայն գրական

¹⁷ Նշվ. աշխ., էջ 63 - 81:

¹⁸ Ար. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Եր. 1953, էջ 137:

¹⁹ Քերականական և բառապաշարային մակարդակներում հնչյունական զանազանությունները էական չեն:

լեզուներին բնորոշ առանձնահատկությունները՝ իբրև դրանց տարբերակիչ հատկանիշներ, որոնք նույնպես ակնհայտ կդառնան գրական լեզվից ընդհանուրհայերենյան հատկանիշները առանձնացնելուց հետո:

Արդի հայերենում դրսևորվող լեզվական բոլոր հատկանիշների վերհանումը, տարբերակված քննությունն ու դասակարգումը, այսպիսով, թույլ կտա ոչ միայն համալրել մեր լեզվի մասին եղած գիտելիքներն ու պատկերացումները, այլ նաև կնպաստի հայերենի յուրաքանչյուր տարբերակի առանձնահատկությունների ճանաչմանը, դրանց ուսումնասիրությանն առնչվող մի շարք հարցերի ճշգրտմանը:

ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ԼԱՏԻՆԱԲԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՏԱՐԲԵՐԱԿԻՉ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Տարբերակիչ հատկանիշը բնութագրում է լեզուն ժամանակային (հին, միջին և նոր), տարածքային (բարբառ, ենթաբարբառ, խոսվածք և այլն) և գործառական (գրական կամ խոսակցական, ընդհանուր կամ անհատական և այլն) տարբերակների որևէ իրողություն: Այն կարող է առանձնացվել լեզվի ինչպես համաժամանակյա կտրվածքի հարաբերությամբ, այնպես էլ նրա պատմության տարբեր փուլերում տեղի ունեցած փոփոխությունների առնչությամբ, ընդ որում լեզվի տարբեր մակարդակների միավորների ընդհանուր տեսության մշակման, ինչպես նաև դրանց կոնկրետ վերլուծության կամ նկարագրության նպատակով:

Տարբերակիչ հատկանիշներն առհասարակ բնորոշ են լեզվին, կազմում են նրա էական կողմը: Դրանք այն առանձնահատկություններն են, որոնք հիմք են հանդիսանում լեզուների տարբեր կարգի՝ պատմական, համեմատական, տիպաբանական և այլն ուսումնասիրությունների համար, հատկապես առանցքային նշանակություն ունեն լեզուների տարբերակային ուսումնասիրության մեջ:

Լեզվի ուսումնասիրությունն ըստ տարբերակիչ հատկանիշների առաջ է քաշվում բավականին ուշ, հիմնականում կառուցվածքային լեզվաբանության մեջ: Հայտնի են, օրինակ, ժամանակակից լեզուների հնչությային համակարգի, ավելի կոնկրետ՝ կենդանի խոսքի համաժամանակյա ուսումնասիրության մեջ դրանց առանձնացումը և բնութագրումը (Ռ.Յակոբսոն և ուրիշներ), գրաբարի հնչյունական համակարգի առանձին՝ ինքն իր մեջ կատարված վերլուծությունը, հայերենի նոր բարբառների վիճակագրական դասակարգումը նման հատկանիշների գործադրմամբ (Է. Աղայան, Գ.Ջահուկյան), որոնք օրինակ են ինչպես ուրիշ լեզուների, այնպես էլ հայերենի հետագա ուսումնասիրությունների համար¹:

¹ Հմմտ. Ր. Яковсон, Г.М.Фант, М.Халле, Введение в анализ речи: Различительные признаки и их корреляты. - "Новое в лингвистике", вып. 2, М., 1962. с. 173-230.

Ըստ այդմ տարբերակիչ հատկանիշներ կարելի է առանձնացնել ոչ միայն լեզվի կամ նրա որևէ վիճակի համաժամանակյա կտրվածքի հարաբերությամբ, այլև նրա պատմության տարբեր փուլերում տեղի ունեցած փոփոխությունների առնչությամբ:

Տվյալ դեպքում փորձում ենք ներկայացնել լատինաբան հայերենի տարբերակիչ հատկանիշները՝ ելնելով այն բանից, որ այն ընդգրկում է չորսուկես հարյուրամյակից փոքր-ինչ պակաս մի ժամանակաշրջան, գործածվել է որպես մի տեսակ արհեստական, ոչ կենդանի լեզու (կամ լեզվական տարբերակ) լինելու պայմաններում, ընդ որում ունեցել է մերթ քուռ վերելք և մերթ քավականին թույլ կամ աննշան դրսևորում:

Բոլոր այն հայագետները, որոնք այս կամ այն չափով անդրադարձել են մեզանում լատինաբան դպրոցի գործունեությանը, փոքրիշատե անդրադարձել են նաև այդ դպրոցի մշակած լատինաբան հայերենի առանձնահատկություններին: Այս առումով քավականին նկատելի է Հ.Աճառյանի արածը, որն այնուամենայնիվ ամբողջական չէ, հեռու է այդպիսին լինելուց, որովհետև երևույթի բնորոշումը չի բխում համապատասխան գրավոր հուշարձանների տվյալներից, այլ հենվում է ընդամենը մեկ ուսումնասիրության՝ Հովհ. Հովսեփ Կոստանդնուպոլսեցու քերականական աշխատության տվյալների վրա: Մա թերի մոտեցում է թե՛ ժամանակային ընդգրկման և թե՛ փաստական նյութի ծավալի տեսակետից: Հետագա ուսումնասիրողներն այդ երևույթին անդրադառնալիս հիմնականում հենվում են Աճառյանի տվյալների վրա, այսինքն՝ մինչև այժմ չունենք լատինաբան հայերենի պատմության որևէ ամբողջական և ըստ ամենայնի ավելի մանրամասն ուսումնասիրություն: Այս տեսակետից լատինաբան հայերենի տարբերակիչ հատկանիշներին անդրադառնալը ստանում է որոշակի կարևորություն մեր օրերի հայերենագիտության համար:

2. 14-18-րդ դդ. հայերենը որոշակի ազդեցություն է կրում ժամանակի, այսպես կոչված, մեռած լատիներենից, որը միջնադարյան Շվրոպայում կրոնաեկեղեցական, մաս ինչ-որ չափով գիտական, ընդ որում հիմնականում գրավոր, մասամբ բանավոր

М.С.Гурева, Н.А. Катагонщина, Сравнительно-сопоставительная грамматика романских языков (Галло-романская подгруппа), М., 1964. с. 22-27: Տես նաև Է.Բ.Ադայան, Գրաբարի քերականություն, հ. 1, Երևան, 1964: Գ.Բ.Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972:

հաղորդակցման միջոց էր, մանավանդ կաթոլիկական եկեղեցու միջավայրում: Այն ընթանում է Հռոմի կաթոլիկական եկեղեցու միսիոներների և նրանց տեղական հետևորդների լեզվական արհեստական միջամտության պայմաններում:

Լատինաբան հայերենի տարբերակիչ հատկանիշների դրսևորումները երևան են գալիս համապատասխան գրական հուշարձաններում: Միանգամայն ընդունելի է այն մոտեցումը, ըստ որի լատինաբան հատկանիշներն, ըստ էության, այլ բան չեն, քան մի կողմից՝ հեռացում, այսպես կոչված, «հայկաբան» հայերենից, մյուս կողմից՝ մոտեցում կամ համապատասխանեցում լատիներենին: Ուստի ստացվում է այնպես, որ հեռացումը ոչ թե հայերենի ներքին, բնականոն զարգացման ընթացքում երևան եկող «ինքնօտարում» է եղել, այլ արհեստական միջամտության հետևանք, իսկ մոտեցումն էլ ոչ այլ ինչ էր, քան անտարրոշ լեզվի (որակապես «չտարբերակված լատիներենի», ասենք՝ իբրև ընդօրինակման մոուշ վերջինիս ո՞ր տարբերակն էր ընտրվում՝ դասակա՞նը, թե՞ հետդասականը) տարօրինակ ընդօրինակում²: Այս առումով ուշագրավ է այն, որ լատինաբանության սկզբնական շրջանում(14-րդ դ. 1-ին երեք քառորդում) լատինաբան հայերենի պատկերն այլ է, քան հետագայում, այսինքն՝ ավելի քիչ են լեզվական «խաթարումները»: Ի թիվս այլ հանգամանքների՝ դա պայմանավորված է այն բանով, որ սկզբնապես, հատկապես այլ լեզուներից և լատիներենից կատարվող քարգմանությունների հարցում միարար քարոզիչներին զուգակցում էին հայ լուսավորչադավան կրոնավոր գործիչները: Այսպես, հայտնի է, որ լատիներենից հայերեն քարգմանություն անելիս Հովհաննես Երզնկացին (Շորժորեցին) օգնում կամ աջակցում էր Բարդուղիմեոսին, օրինակ, Թովմա Աբվինացու «Եօթն խորհրդոց գրքի» դեպքում³: Կարելի է կարծել, որ մնան գործակցումը սկզբնական շրջանում դրականորեն էր ազդելու հայերենի անադարտությանը հավատարիմ մնալու, լատինաբան, ինչպես նաև ժամանակի խոսակցական ձևերից, որքան որ հնարավոր էր, խուսափելու հարցում, որը խախտվում է հետագայում, հատկապես 17-րդ դ. ընթացքում:

² Տես «Եւրոպա» (ամսաթերթ), 1848, ք. 14, էջ 16:

³ Տես Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագիր ք. 560: Հմմտ. «Բազմավեպ» (ամսագիր), 1911, էջ 140: Գար. Յովսեփեան, Խաղբակեանք կամ Պողոշեանք հայոց պատմութեան մէջ, 2-րդ հրատ, Անթիլիաս, 1969, էջ 248:

Այնուհետև, Հովհաննես Քոնեցու «Յաղագս քերականին» աշխատության գիտական հրատարակությամբ շատ բան փոխվեց այս հարցում: Այդ գիրքը լատինաբան հայերենի քերականական կառուցվածքի մի աննախօրինակ նկարագրություն է, քերականական մի շարք երևույթների վերլուծության մեջ հեղինակը հանդես է բերում ոչ միայն ինքնուրույն մոտեցում, այլև որոշ դեպքերում (օրինակ՝ անունների սեռանիշ մասնիկների առանձնացման, դերանվան բնութագրման ու դասակարգման, բայի խոնարհման հետ կապված երևույթների բնորոշման հարցերում և այլն) տեղ է տրվում ժամանակի առումով համեմատաբար մոտ կանգնած քերականներից հատկապես Հովհաննես (Պլուզ) Երզնկացու և Հովհաննես (Ծործորեցի) Երզնկացու այս կամ այն մոտեցմանը⁴: Այս և նման մի շարք հանգամանքներ թույլ են տալիս կարծելու, որ լատինաբան հայերենի պատմության համեմատաբար լայն նկարագրության համար անհրաժեշտ է ամենից առաջ նկատի ունենալ հիշյալ դարերի գրական այն հուշարձանները, որոնք գրվելիս են եղել լատինաբան դպրոցի գործունեության ժամանակ, ինչպես նաև նրա ազդեցության պայմաններում:

3. Այդ գործունեությունն ու ազդեցությունը, կարծում ենք, եղել են քերականորեն անհավասարաչափ և գործառապես ոչ այնքան տարածված, այլև սկզբում ունեցել են համեմատաբար լայն ընդգրկում, իսկ հետագայում՝ շուրջ երկու-երեք հիսնամյակ, եղել են բավականին թույլ դրսևորված, սակայն 17-րդ դ. և 18-րդ դ. առաջին կեսին վերստին դառնում են տարածված, մինչև որ լատինաբանությունը լիովին հաղթահարվում է 18-րդ դ. 3-րդ քառորդից սկսած, թեև դրանից հետո մույնպես ինչ-ինչ ձևեր ինքնաբերաբար տեղ են գտնում տարբեր կարգի գրական հուշարձաններում: Լատինաբան հայերենով մեզ հասած գրական հուշարձանները բնութագրվում են արտաքին հանգամանքներով (բովանդակությամբ), այլև լեզվական առանձնահատկություններով (ձևով), որոնք ըստ էության ներկայանում են իբրև տարբերակիչ հատկանիշներ: Վերջիններս բնորոշում են լեզվի

⁴ Տես Յովհաննես Քոնեցի, Յաղագս քերականին, բնագիրը հրատարակության պատրաստեց Լ.Ս.Խաչիկյանը, ներածությունը Լ.Ս.Խաչիկյանի և Ս.Ա.Ավագյանի, Երևան, 1977, էջ 69-72, 79, 85-86 և այլն:

տվյալ վիճակը ոչ միայն ամբողջությամբ, այլև նրա տարբեր կամ առանձին մակարդակների առումով:

Ավելորդ չէ նշել, որ լեզվական հատկանիշները, տվյալ դեպքում, լինում են երկու կարգի՝ մենամակարդակային (միայն լեզվի տվյալ մակարդակում ի հայտ եկող) և միջմակարդակային (լեզվի երկու մակարդակներին հավասարապես վերաբերող): Առաջին դեպքում գործ ունենք հնչյունական, բառապաշարային, ձևաբանական և շարահյուսական, իսկ երկրորդ դեպքում, այսպես կոչված, ձևահնչույթաբանական (морфофонологические) և բառակազմական-ձևակազմական (слово-формообразовательные) հատկանիշների հետ:

Լատինաբան հայերենի տարբերակիչ հատկանիշների ընտրության սկզբունքների առումով կարելի է նշել հետևյալը: Նկատի ենք առնում՝ ա) նախկինում տարբեր առիթներով հայագետների կողմից նշված առանձնահատկությունները, բ) Հ.Աճառյանի «Հայոց լեզվի պատմություն» (մաս 2, Երևան, 1951, էջ 313-323) գրքում շարադրանքի ձևով բերվող տարբերությունները, գ) լատինաբան հայերենի հատկություններ պարունակող կարևորագույն քերականությունների տվյալները, դ) լատինաբան հայերենով ավանդված գրավոր հուշարձանների տարբեր կարգի լեզվական երևույթների կիրառությունները, ե) լատինաբան նորամուծությունների հաղթահարումը (ըստ որում՝ օգտագործելով այդ խնդրին նվիրված մեր ուսումնասիրությունների արդյունքները)⁵:

4. Մեր կողմից առանձնացվում է շուրջ 120 (ստույգ՝ 118) տարբերակիչ հատկանիշ՝ լեզվական մակարդակների հերթակարգությամբ, այն է՝ հնչույթային 11 հատկանիշ, բառային՝ 13, ձևաբանական՝ 76, շարահյուսական՝ 18: Ըստ էության ձևաբանական հատկանիշները 1,7 անգամ ավելին են, քան մնացած մակարդակներինը՝ միասին վերցված: Սա նշանակում է, որ լատիններենի օրինակով կազմված բառաձևերն ու կազմությունները լայնորեն տարածված են եղել լատինատիպ գրական հուշարձաններում: Ավելացնենք, որ տարբերակիչ հատկանիշների այսքան մեծ ամբողջություն նախկինում կատարված հայագիտական ուսումնասիրություններից ոչ մեկում գոյություն չունի:

⁵ Տե՛ս նաև Վ.Գ. Համբարձումյան, Գրաբարի լատինատիպ նորամուծությունների հաղթահարումը XVII դարում. ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1982, ք. 2, էջ 63-72: Նույնի՝ Գրաբարի գործառությունը որպես գրական լեզու ԺԸ-ԺԹ դդ., Երևան, 1990:

ա) Հնչյունական հատկանիշները համեմատաբար քիչ են, ընդգրկում են սահմանափակ դեպքեր ու փաստեր, երևան են գալիս գործառական ոչ հավասար պայմաններում, գործելիս են եղել տարբեր ժամանակներում:

Դրանցից են՝ մ-ին նախորդող *ռ*-ի պահպանում բայի անց-յալի հիմքում (*ընթեռցայ, ձեռքածութիւն*), *ւ*-ի արժեքավորում իբրև *ու*, հատկապես *իւ* երկբարբառի կազմում (*արիւն* «ար-յուն»), *ք*-ի վերածում *գ*-ի (*գիրգ* «մեկ գիրք»), նախահավելված *է*-ի գործածություն բոլոր դիրքերում (*էքեր, էտես* «բերեց, տեսավ»), *օ* և *ֆ*, այլև *ու*, և գրերի «օրինականացում» (դրանք բերվում են Հովհ. Հոլովի բերականության մեջ՝ այբուբենի ցանկում), կրկնագիր *դ*-ի պարզեցում (*ըմդէմ* «ընդդէմ») և այլն:

բ) Ընտրված բառային տարբերակիչ հատկանիշները գրեթե նույնքան են, որքան հնչյունականը: Դրանք գերազանցապես առաձնացվում են գրական հուշարձաններից, քանի որ, ինչպես գիտենք, բառապաշարի հարցերը հայերենի բերականություն-ներում առհասարակ ամենաքիչն են եղել, եթե չասենք ամենևին չեն եղել ուշադրության առարկա: Դրա հետևանքով, բնականաբար, շատ քիչ են, գրեթե բացակայում են «լատինաբան բառի» բաղադրության (կառուցվածքի) վերաբերյալ տվյալները: Այս դեպքում հատկանիշների առանձնացումը կատարում ենք բառակազմության և բառագործածության, այսպես կոչված, «տա-րօրինակության» (լատինաբանության) ընթացիկ, բացառիկ (էքսկլյուզիվ) սկզբունքների հիման վրա, որքանով որ հնարավոր է փաստեր հայթայթել համապատասխան գրական հուշար-ձաններից:

Դրանցից են՝ մեկ և մեկից ավելի նախածանցի անհարկի, ընդ որում կից կամ անջատ գործածություն (*համախոկումն*, փխ.՝ *խոկումն, ներպարառութիւն, ստորանկանիլ*, փխ.՝ *գտանել, մակ-յաւելիլ*, փխ. *յաւելում*), ցուցական *նա* դերանվան վերածում անձնականի (*is, ea, id – նա*), բայական սոսկածանցի գործա-ծություն՝ իբրև բառակազմական ածանց, այլև բայակազմական հիմքի տարածում (*թռչիմ ~ volo – թռնիմ ~ salto, ծանիմ~ճա-նաչեմ, յարիմ – յարնչիմ*), բառիմաստային պատճենում (*adprobatio ~ առփորձեցումն* «հավանություն», *satisfactio ~ բաւարարութիւն* «հատուցում», *conjectura ~ փաղարկութիւն* «կարծիք»), բառակապակցական պատճենում (*male sentio ~*

գզալ չարապէս), բառային փոխառություն (*Iedere* «վնասել» ~ *լետեմ, լետես, լետէ*) և այլն:

գ) Ձևաբանական հատկանիշները մեծ մասամբ դրսևորվում են գոյականի, ածականի, բայի և մակբայի, մասամբ խոսքի-մասային այլ միավորների (թվական, դերանուն և այլն) զանազան կազմությունների մեջ: Անհամեմատ մեծ է գոյականի և բայի բաժինը, և դա միանգամայն հասկանալի է: Նման կարգի շուրջ ութ տասնյակ հատկանիշներից նշենք հետևյալները՝ առանձին խմբերով:

1) Գոյականական հատկանիշներ. անեզական գոյականի եզականացում, և հակառակը (*միտք ~ միտ, կեանք ~ կեան, մախտերգանք ~ մախտերգան, կար ~ կարք* «կարողություն», *գիրք ~ գիրգ* «մեկ գիրք»), վերջնահանգ *ր* ունեցող գոյականի հոլովում է ներքին հոլովմամբ (*բլուր ~ բլեր, մեղր ~ մեղեր*), գոյականի սեռի ձևային առանձնացում (*hic, haec, hoc ~ իք, էք, օք*), ներգոյական հոլովի կազմում *ըն (ն)* մասնիկի միջոցով (*ըն բանում, մաստեղ*) և այլն:

2) Ածականական հատկանիշներ. բաղդատական աստիճանը *գոյն, գերադրականը գունեղ* մասնիկներով (*լաւ ~ լաւագոյն ~ լաւագունեղ*): Նման կազմություններ նկատում ենք նաև մակբայի դեպքում:

3) Դերանվանական հատկանիշներ. ցուցական որոշ դերանունների հոլովման կեղծ ձևերի հորինում (*նոյն ~ նոյնոյ, նոյնում, տքա ~ սայց, սոցայց*), իսկ *մա* դերանվան համար *նոյն* դերանվան թեք ձևերի հատկացում (*մա ~ նոյն, նորին, նմին*):

4) Բայական հատկանիշներ. բայի *-իլ* լծորդության հատկացում կրավորականին (*առնում ~ առնանիմ բառնամ ~ բառնիմ*), *ու* խոնարհման կրավորականի համար արհեստական ձևերի ստեղծում (*գեմում ~ գեմիմ, լնում ~ լնիմ* «լցվում եմ»), և խոնարհման բայերի կրավորաձև անկատարի ձևի հորինում (*գրէի ~ գրեէի* «գրվում էի», *գրեէիր* «գրվում էիր»), *ա* խոնարհման բայերի կրավորականի արհեստական ձևերի հորինում (*գրիցեմ ~ գրիցէի* «գրվեի», *գրիցէիր* «գրվեիր»), որոշ բայերի պակասավոր ձևերի «լրացում» (*գոմ ~ գուցեմ, գուցես, գուցեմք*), անկանոն որոշ բայերի խոնարհման «կանոնավորում» (*ճանաչեմ ~ ճանաչեաց, ճանաչեցից, մեղանչեմ ~ մեղանչեաց, ուտեմ ~ ուտեցայ, ուտեցաւ, տամ ~ տրեմ, տրի, տրեցի*), վերլուծական բայաձևերի ար-

հետաւական կազմութիւններ (*երանի սիրեալ իցէի, մարթան գրեցեալ իցէին*) և այլն:

դ) Շարահյուսական հատկանիշները համեմատաբար քիչ են, քանի որ այդ կարգի երկույթները չունեն այն մեծ ընդգրկումը, հատկապէս ուսումնասիրված լինելու առումով, որ նկատելի է միջնադարյան քերականութիւնների մյուս բաժիններում: Այդուհանդերձ, կարելի է առանձնացնել լատինաբան հայերենին հատկանշական շարահյուսական երկույթներ: Դրանք հիմնականում վերաբերում են համաձայնությանն ու շարադասությանը, եթե նկատի ենք ունենում առաջին հերթին հայ քերականագիտության ավանդական դրվածքը:

Այնինչ լատինաբան հեղինակներից առաջինները, լիովին հետևելով հռոմեացի (իմա՝ լատին) քերականների ավանդույթին հատկապէս շարահյուսության բնագավառում, հայերենի քերականական համակարգում ևս ներմուծում են շարահյուսական ինչ-ինչ երկույթներ: Նրանցից առաջինը Հովհաննէս Քոնեցին է, որի քերականության մի առանձին բաժին է կազմում շարահյուսությունը: Ավելորդ չէ նշել, որ վերջինիս քերականության մեջ այդ կարգի երկույթները քննության են առնվում բավականին մանրամասնորեն, ըստ կոնկրետ բաժինների ու գլուխների: Ընդ որում ուշադրության առարկա են բառակապակցությունն ու նախադասությունը՝ առնված իրենց տեսակներով, ավելի մասնավոր դրսևորումներով: Քոնեցին բավականին հետևողական է շարահյուսական երկույթների՝ ըստ լատիներենի օրինակի վերլուծության հարցերում: Նկատենք, որ նա ըստ անհրաժեշտության հենվում է Բարդ. Մարադացու տրամաբանական-շարահյուսական այն դրույթների վրա, որոնք ժամանակին ունեին հիմնականում տեսական արժեք: Բանն այն է, որ հետագա լատինաբան քերականներն այլևս այդպիսի ընդգրկումով, եթե չասենք խորությամբ չանդրադարձան շարահյուսությանը, ուստի այդ բնագավառն այդպէս էլ չստացավ այն մանրամասնությունը, որը նկատելի է ձևաբանության մեջ:

Ստորև ներկայացնենք շարահյուսական տարբերակիչ հատկանիշներից հետևյալները. նոր նախադրությունների առանձնացում (*ըն, մակ, Ծ*), նախադասության անդամների պարտադիր, առանց բացառության համաձայնություն (*համայնք խորհուրդք և արարմունք*), որոշչային կապակցության

պարտադիր համաձայնություն (*ի շաղէն ուղղականէ, ըն մարդում քեկանելում և մահկանացում*), ածականի բաղդատական աստիճանի խնդիրը հայցական, իսկ գերադրականը՝ սեռական և ներգոյական հոլովներով դնելը (հմմտ. *պարարտագոյն քան զառիծ, պարարտագունեղ առիծուց*, այլև՝ *ի յառիծս*) և այլն:

5. Լատինաբան հայերենի տարբերակիչ հատկանիշներն առանձնացնում ենք կետ առ կետ, բնագրային հստակ օրինակների մատնանշումով, այլև երբեմն վկայակոչում ենք գիտական այն ուսումնասիրությունները, որոնցում այս կամ այն չափով խոսվում է տվյալ հատկանիշի մասին: Դրանց առանձնացումն ունի ոչ միայն հայոց լեզվի պատմության ուսումնասիրության առավել ամբողջացման նպատակ, այլ նաև նպաստելու հետագայում այդ բնագավառում ավելի ծավալուն և ավելի ընդգրկուն ու մանրամասն ուսումնասիրությունների ձեռնամուխ լինելու գործին:

ՀԱՅՈՑ ԼԵՉՎԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ
ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Հայոց լեզվի պատմությունը միշտ էլ գտնվել է հետազոտողների ուշադրության կենտրոնում: Գիտական շրջանառության մեջ է դրվել փաստական հարուստ նյութ, նկարագրվել են հայերենի զարգացման տարբեր փուլերի լեզվական համակարգերը՝ ինչպես ամբողջությամբ, նույնպես և ըստ առանձին մակարդակների, գրվել է առանձին ժամանակահատվածների պատմությունը, արվել են լեզվի զարգացման ընթացքը քիչ թե շատ ամբողջական ձևով ներկայացնելու փորձեր, և որ ամենակարևորն է, մշակվել է հայոց լեզվի պատմության գիտական շրջանաբաժանումը: Բացի այդ, ձևավորվել են պատմական լեզվաբանության տեսական որոշ սկզբունքներ ու ելակետներ:

Մյուս կողմից՝ անհրաժեշտություն է զգացվում հայոց լեզվի պատմության առանձին շրջանների ու բնագավառների հետազոտության արդյունքներն ի մի բերող, ամբողջացնող, միասնական սկզբունքներով գրված աշխատության, որտեղ հայերենի պատմական զարգացման նկարագրությանը զուգընթաց հնարավոր լայն ընդգրկմամբ քննված կլինեն հայոց լեզվի պատմության կնճռոտ հարցերը, կլուծվեն ընդհանուր բնույթի խնդիրներ, կարվեն տեսական ընդհանրացումներ: Ներկայացվող հոդվածը փորձում է ներկայացնել այն ելակետներն ու սկզբունքները, որոնց հիման վրա հնարավոր կլինի լուծել նշված հարցերը:

1. «Լեզվի պատմություն» տերմինը կիրառվում է երկու տարբեր նշանակությամբ՝ ա) տվյալ լեզվի զարգացման բուն ընթացքը՝ որպես օբյեկտիվ իրականության երևույթ, և բ) այդ երևույթն ուսումնասիրող գիտություն՝ լեզվաբանական հատուկ գիտակարգ: Առաջին իմաստով գործածվելիս նշված տերմինը սովորաբար զուգակցվում է որևէ կոնկրետ լեզվի անվանման հետ (օր.՝ հայոց լեզվի պատմություն): Երկրորդ դեպքում այն ունի ավելի լայն և տարբերակված կիրառություն, ըստ այնմ՝ վերաբերում է առանձին վերցրած լեզուների, թե ընդհանրապես մարդ-

կային լեզվի զարգացման ընթացքի ուսումնասիրությանը: Կարելի է առանձնացնել մաս նշված տերմինի երրորդ նշանակությունը, որ ածանցվում է առաջիններից՝ «լեզվի պատմության նկարագրություն»՝ որպես տվյալ գիտակարգի հետազոտության արդյունք:

2. Լեզվի պատմության ուսումնասիրության առարկան է լեզուն որպես պատմականորեն զարգացող երևույթ: Պատմական լեզվաբանության գիտակարգերի մեջ այն աչքի է ընկնում հետազոտության բնագավառի լայնությամբ ինչպես ուսումնասիրության օբյեկտի ընդգրկման, այնպես էլ խնդրացանկի առումով: Ըստ այդմ լեզվի պատմությունն առնչվում է մի շարք լեզվաբանական և ոչ լեզվաբանական գիտակարգերի և ուղղությունների հետ:

Լեզվի բուն կառուցվածքի պատմական քննությամբ զբաղվում է պատմական քերականությունը (լայն իմաստով՝ ներառյալ մաս պատմական հնչյունաբանությունն ու պատմական բառագիտությունը), որի խնդիրն է ներկայացնել լեզվական կառուցվածքի տարբեր մակարդակների զարգացումը ժամանակի մեջ: Ինչ վերաբերում է լեզվի գոյության ձևերին, ապա կարող ենք ասել, որ դրանց ուսումնասիրության համար լեզվաբանության մեջ մինչև օրս որպես առանձին ձևավորված բաժիններ գոյություն ունեն միայն պատմական բարբառագիտությունը՝ լեզվի տարածական տարբերակների պատմությունը, գրական լեզուների պատմությունը՝ լեզվի մշակված ձևերի պատմական ուսումնասիրությունը և որոշ չափով մաս պատմական ոճագիտությունը՝ լեզվական ոճերի պատմական քննությունը: Ընդ որում՝ վերջին երկուսի համար միշտ չէ, որ ճշտորեն սահմանազատում են ուսումնասիրության առարկան, երբեմն մույնացնելով ինչպես մեկը մյուսի, այնպես էլ գրական լեզվի պատմությունը ընդհանրապես լեզվի պատմության հետ: Վերջին տարիներս փորձեր են արվում մաս պատմական (տարածամանկյա) տիպաբանության ասպարեզում:

Լեզվի գոյության մյուս ձևերի, առավել ևս լեզվական իրադրության և լեզվի գործառության պատմական ուսումնասիրության համար լեզվաբանական հատուկ գիտակարգեր չեն առաջացել: Հանրալեզվաբանությունը (սոցիոլինգվիստիկան), գործառական (ֆունկցիոնալ) լեզվաբանությունը հիմնականում զբաղ-

վում են լեզուների արդի վիճակի քննությամբ՝ համաժամանակյա կտրվածքով:

Առավել խորությամբ և լայն ընդգրկումով վերը նշված բնագավառները պետք է մտնեն լեզվի պատմության ուսումնասիրության ոլորտը: Լեզվի պատմությունը պետք է քննության ենթարկի ոչ միայն լեզվական համակարգն իր բոլոր մակարդակներով հանդերձ, այլև լեզվի տարածական, հասարակական, գործառական տարբերակների ամբողջությունը և ժամանակի ընթացքում նրանց կրած փոփոխությունները: Այս պարագայում լեզվի պատմությունը, տվյալ դեպքում՝ հայոց լեզվի պատմությունը կունենա ընդգրկման ամենալայն սահմաններ՝ ինչպես ժամանակագրական, այնպես էլ առարկայի ծավալի առումով, այսինքն՝ կներկայացնի հայոց լեզվի բոլոր տարատեսակների պատմությունը՝ սկսած նրա ծագման պահից մինչև օրս:

3.0. Պատմական լեզվաբանության վերը նշված բաժինների՝ պատմական քերականության, պատմական բարբառագիտության և գրական լեզվի պատմության կապը լեզվի պատմության հետ կարելի է բնութագրել որպես մասի և ամբողջի հարաբերություն, քանի որ այդ գիտաճյուղերը հանդես են գալիս մի կողմից որպես ամբողջ օբյեկտի, մյուս կողմից՝ որպես այդ նույն օբյեկտի բաղկացուցիչ տարրերի ուսումնասիրություն:

Լեզվի պատմությունը ամենասերտ հարաբերության մեջ է նաև համեմատական լեզվաբանության հետ: Հայերենի նախագրային շրջանի պատմությունը լեզվական համակարգի քննության առումով փաստորեն հանգում է հայերենի համեմատական քերականությանը (նույնպես լայն իմաստով՝ ներառյալ հնչյունաբանությունն ու բառագիտությունը), այն տարբերությամբ, որ լեզվի պատմությունն ավելի մեծ ուշադրություն է դարձնում լեզվական երևույթների ժամանակագրության սահմանմանը, փոփոխությունների հաջորդականությանը և ժամանակագրական տարբեր շերտերի առանձնացմանը և հիմնականում մնում է մեկ լեզվի հետազոտության շրջանակներում: Պատմահամեմատական լեզվաբանությունը պարզում է նաև համակարգի ծագումը, ներքին և արտաքին վերականգնման մեթոդներով փորձում է պարզել հնագույն լեզվական փաստերը և գտնել ծագումնաբանական ընդհանրություններ տարբեր լեզուների միջև:

Ինչ վերաբերում է լեզվական իրադրության, լեզվի գործա-

ռական կողմի և նրա հասարակական դերի պատմական ուսումնասիրությամբ, ինչպես նախագրային, այնպես էլ պատմական ժամանակաշրջաններում, ապա այդ կողմից լեզվի պատմությունն առնչվում է գործառական (ֆունկցիոնալ) լեզվաբանության և հանրալեզվաբանության հետ՝ լեզվի պատմական քննության մեջ հնարավոր չափով նրանց սկզբունքների ու մեթոդների կիրառման և նրանց նվաճումների օգտագործման տեսակետից:

Այսպիսով, լեզվի պատմությունը հանդես է գալիս որպես պատմական լեզվաբանության մի շարք բաժինների յուրատեսակ համակցություն: Այդ միավորումը սակայն չի կատարվում մեխանիկական կցման ճանապարհով, այլ իրագործվում է լեզվական կառուցվածքի և լեզվի տարածական, ժամանակային, հասարակական ու գործառական տարբերակների առաջացման ու զարգացման, նրանց փոխհարաբերությունների ընդհանրացված ու միասնական քննության ձևով:

3.1. Ոչ լեզվաբանական գիտակարգերի հետ լեզվի պատմության կապը այլ բնույթի է, հիմնականում հանգում է նրանց ընձեռած տվյալների օգտագործմանը: Հանրահայտ է, որ այդ տեսակետից ընդհանրապես մարդկային լեզվի պատմությունը առաջին հերթին առնչվում է մարդկության զարգացման պատմության հետ, իսկ առանձին լեզուների պատմությունը՝ տվյալ լեզուն կրող ժողովրդի պատմության հետ: Պատմագիտությունը կարևոր տվյալներ է ընձեռում պատմական ժամանակաշրջանում լեզվի գործառույթների, նրա հասարակական դերի բնութագրման, լեզվական փոփոխությունների պատճառների բացահայտման, լեզվի տարածական ու հասարակական տարբերակների առաջացման ժամանակի ու հանգամանքների որոշման և բազմաթիվ այլ հարցերի լուծման համար: Ինչպես տվյալ ժողովրդի պատմության, այնպես էլ լեզուների նախագրային շրջանի զարգացման ուսումնասիրության համար մեծ կարևորություն է ձեռք բերում նաև հնագիտական փաստերի օգտագործումը:

Լեզվի գործառական կողմի ուսումնասիրության ժամանակ չպետք է անտեսել նաև տվյալ ժողովրդի մշակույթի և գրականության պատմությունը: Ուստի հայոց լեզվի պատմությունը ճիշտ և լրիվ կերպով ներկայացնելու համար պետք է համակողմանիորեն ուսումնասիրել ոչ միայն հայ ժողովրդի քաղաքա-

կան ու սոցիալ-տնտեսական պատմությունը, այլև լայնորեն հաշվի առնել հայկական մշակույթի և հատկապես հայ գրականության զարգացման ընթացքն ու առանձնահատկությունները պատմական տարբեր ժամանակաշրջաններում՝ լեզվի պատմության վրա նրանց ազդեցությունը բացահայտելու նպատակով:

4. Լեզվի պատմական քննության հիմնական հայեցակետերի ու սկզբունքների ընտրությունը պայմանավորվում է ինչպես հետազոտության նպատակներով, այնպես էլ ուսումնասիրության առարկայի կոնկրետ առանձնահատկություններով:

Նպատակ ունենալով հնարավոր լիակատարությամբ ներկայացնել լեզվական համակարգի ձևավորման ու նրա կրած պատմական փոփոխությունների ընթացքը, դրանք առաջ բերող պատճառները, միջավայրի ազդեցությունը լեզվի կառուցվածքի և լեզվի տարբեր գոյաձևերի վրա, վերջիններիս առաջացման ու գործառության պայմանները, լեզվի զարգացման տարբեր փուլերում նրանց համամասնությունն ու գործառության բաշխումը և այլն՝ լեզվի պատմությունն ընդգրկում է տեսական հիմնախնդիրների լայն շրջանակ:

Լեզվի պատմության հիմնախնդիրների ամբողջությունը առնչվում է մարդկային լեզվի՝ որպես մի բարդ ու բազմակողմանի երևույթի հիմնական կողմերի՝ նրա էության, գործառության ու զարգացման հետ:

4.1. Լեզվի էության հետ կապված այն հիմնական հատկանիշը, որին առաջին հերթին անդրադառնում է լեզվի պատմությունը, լեզվական շարժումն է, լեզվի փոփոխականությունը ժամանակի մեջ: Այդ հատկանիշով տոգորված է լեզուն ամբողջությամբ վերցրած, թե՛ նյութական ու համակարգային, թե՛ գործառական կողմերով: Լեզվի փոփոխականությամբ է պայմանավորվում լեզվական համակարգի ժամանակային, տարածական, հասարակական ու գործառական տարբերակների գոյությունը: Փոփոխականության հատկանիշի շնորհիվ է տեղի ունենում լեզվի զարգացումն ընդհանրապես:

Որպես պատմական գիտակարգի՝ լեզվի պատմության ուշադրության կենտրոնում է լեզվի փոփոխականությունը հատկապես ժամանակային առանցքով, նրա հիմնական խնդիրն է պատմականորեն իրար հաջորդող լեզվավիճակների ուսումնասիրությունը:

4.2. Միաժամանակ լեզվի պատմության համար նույնքան կարևոր է լեզվի փոփոխականության հետ դիալեկտիկական միասնության մեջ գտնվող՝ լեզվի հարաբերական կայունության հատկանիշի հաշվառումը: Այլապես կարելի էր կանգնել լեզվի փոփոխականությունը, լեզվական շարժումը բացարձակացնելու, լեզուն իբրև հարափոփոխ, անկայուն, հեղհեղուկ երևույթ ներկայացնելու վտանգի առաջ:

Լեզվի հարաբերական կայունությունը լեզվի զարգացման յուրաքանչյուր կոնկրետ պահին հնարավոր է դարձնում հաղորդակցման՝ լեզվի հիմնական գործառույթի իրականացումը: Այդ է պատճառը, որ որոշակի ժամանակահատվածում համագոյակցող սերունդների գիտակցության մեջ լեզուն հիմնականում մնում է ինքն իրեն նույնական, անկատելի է մնում նրա շարժումը:

Լեզվի հարաբերական կայունությունն ապահովում է նրա փոփոխականության հետ միաժամանակ գործող և վերջինիս հակադիր՝ պահպանողական միտումներով, ժամանակի մեջ լեզվական փոփոխությունների դանդաղ ընթացքով, լեզվական շարժման սահմանափակ հնարավորություններով, որ պայմանավորված է լեզվի ներքին համակարգային կապերի պահպանման ձգտումով, արտաքին ազդակների նկատմամբ լեզվական համակարգի դիմադրողականության որոշակի ունակությամբ:

Լեզվի փոփոխականությունը և կայունությունը (դինամիկան և ստատիկան) ինքնին հատուկ են լեզվին նրա զարգացման յուրաքանչյուր պահի: Սրանից ելնելով՝ լեզվի պատմությունը լեզուն պետք է դիտի որպես որքան փոփոխվող, նույնքան էլ կայուն համակարգ (թեև որպես լեզվի տարաժամանակյա բնություն՝ լեզվի պատմությունն ավանդականորեն առանձնահատուկ կերպով բնորոշվում է որպես լեզվական փոփոխություններն ուսումնասիրող գիտակարգ): Հետևաբար, լեզուն պատմական դիտվածքով քննելու ընթացքում ևս հատուկ ուշադրություն պետք է դարձնել լեզվի կայուն, երկար ժամանակ անփոփոխ մնացող տարրերի վրա, բացահայտելով նրանց բնույթը, լեզվական համակարգում նրանց գրաված տեղը, ինչպես նաև պարզելով այդ կայունության աստիճանն ու պատճառները: Ամենայն հավանականությամբ լեզվական համակարգի առավել կայուն տարրերն են, որ կազմում են տվյալ լեզվի հիմնական նկարագիրը, պայմանավորում են նրա բնույթն ու տիպը:

4.3. Լեզվի էության հետ կապվող երրորդ հիմնական հատկանիշը, որ պետք է հաշվի առնել լեզվի ամեն մի ուսումնասիրության, այդ թվում՝ նրա պատմական քննության ժամանակ, լեզվի համակարգայնությունն է, այսինքն՝ նրա կազմակերպված լինելը որպես յուրահատուկ համակարգ:

Լեզվի համակարգայնության հատկանիշը նաև պատմական քննության դեպքում հաշվի առնելու սկզբունքը լեզվաբանության մեջ մշակվել է ի հակադրություն մի կողմից՝ երիտքերականների ատոմիզմի, մյուս կողմից՝ նաև ժամանակակից լեզվաբանության մեջ դեռևս տեղ գտնող այն ըմբռնման, ըստ որի լեզուն որպես համակարգ բացահայտվում է միայն համաժամանակյա քննության դեպքում, մինչդեռ տարածամանակյա մոտեցումը բացառում է լեզվի համակարգային ուսումնասիրությունը:

Նշված սկզբունքը լեզվի պատմության մեջ առաջին հերթին հանգում է հետևյալին. լեզուն դիտել որպես պատմականորեն զարգացող համակարգ, ժամանակի մեջ լեզվի շարժումն ուսումնասիրելիս չսահմանափակվել առանձին վերցրած լեզվական իրողությունների կրած փոփոխությունների բացահայտմամբ, այլապես լեզվական համակարգի զարգացումն իր ամբողջության մեջ կարող է դուրս մնալ ուսումնասիրողի տեսադաշտից: Մեթոդական տեսակետից լեզվի համակարգայնության հաշվառումը ենթադրում է տարածամանակյա քննության դեպքում ոչ թե լեզվական առանձին տարրերի, այլ հաջորդական ժամանակագրական կտրվածքների լեզվավիճակների համակարգային համեմատություն, ընդ որում այդպիսի համեմատությունը պետք է հնարավորություն ստեղծի բացահայտելու լեզվի յուրաքանչյուր տարրի արժեքը համակարգի մեջ և այդ արժեքի փոփոխությունը լեզվի զարգացման հաջորդական փուլերում՝ կապված ամբողջ համակարգի փոփոխության հետ:

Այնուհետև, նշված սկզբունքի կիրառումը պահանջում է պարզել պատմական զարգացման ընթացքում լեզվի կրած փոփոխությունների բնույթը, դրանց ամբողջության մեջ առանձնացնելով համակարգային և ոչ համակարգային փոփոխությունները: Հասկանալի է, որ առաջին տիպի մեջ կմտնեն այն կարգի փոփոխությունները, որոնք հանգեցնում են լեզվական ամբողջ համակարգի վերակառուցմանը, ներկայացնում են համակարգային տեղաշարժերը լեզվի մեջ: Այս դեպքում պետք է նկատի ունենալ,

որ համակարգային բնույթի փոփոխություններ կարող է կրել ինչպես լեզուն ամբողջությամբ վերցրած (այդ թվում լեզվի տիպաբանական կառուցվածքի փոփոխությունները, ասենք՝ անցում թեքականությունից կցականության և այլն), նույնպես էլ այս կամ այն մակարդակը իր «միկրոհամակարգերով»՝ հնչյունական, ձևաբանական, կամ ավելի նեղ՝ անվանական, բայական և այլն: Ընդ որում, պետք է նշել, որ վերջին դեպքում փոփոխությունները թեև կրում են համակարգային բնույթ, բայց շատ դեպքերում դուրս չեն գալիս տվյալ «մանրահամակարգի» շրջանակներից և նշանակալից ազդեցություն չեն գործում լեզվի մյուս տարրերի վրա (այսպես, պայթական բաղաձայնների տեղաշարժը որևէ կերպ չի կարող կապված լինել անվանական հոլովման տեխնիկայի վերակառուցման հետ): Այս առումով կարելի է ասել, որ գործ ունենք որոշ իմաստով «փակ» համակարգերի փոփոխությունների հետ:

Ոչ համակարգային փոփոխություններն իրենց հերթին կարող են լինել երկու կարգի. 1) փոփոխություններ լեզվական այն տարրերի, որոնք մնում են առանձնակի, չեն մտնում լեզվի համակարգի մեջ (բառային մակարդակի փոփոխություններ, փոխազդեցական հնչյունափոխության որոշ դեպքեր և այլն) և 2) համակարգային տարրերի մասնակի փոփոխություններ, որոնք ամբողջ համակարգի վերակառուցում չեն առաջացնում: Պետք է նաև նշել, որ մի շարք դեպքերում լեզվի զարգացման տվյալ փուլում կարող են լինել գոյակցող համակարգեր՝ հնի տարրերի պահպանումով և նորերի առաջացումով:

Եվ վերջապես, լեզվի պատմական փոփոխությունների բնույթը բացահայտելուն զուգընթաց պատմական քննության մեջ անհրաժեշտ է պարզել համակարգային և ոչ համակարգային փոփոխությունների համամասնությունը, որոշել յուրաքանչյուրի տեսակարար կշիռը լեզվական կառուցվածքի տվյալ մակարդակում և լեզվի զարգացման տվյալ փուլի մեջ:

5. Լեզվի համակարգայնության հաշվառման մյուս կողմը վերաբերում է լեզվական փոփոխությունների պատճառների բացահայտմանը: Լեզվի պատմաբանի կարևորագույն խնդիրներից մեկն է լեզվի կառուցվածքի և լեզվական իրադրության ձևավորման ու փոփոխությունների նկարագրությամբ զուգընթաց ըստ հնարավորին ներկայացնել դրանք առաջ բերող պատ-

ճառները, պարզել, թե յուրաքանչյուր կոնկրետ դեպքում լեզվական համակարգի կամ նրա տարբեր մակարդակների նյութական, կառուցվածքային ու գործառական փոփոխությունները ինչ ազդակներով ու գործոններով են պայմանավորված: Այս պատճառով լեզվի տարածամասկյա քննության համար կարևոր նշանակություն է ձեռք բերում ոչ միայն ընդհանրապես լեզվի զարգացման գործոնների առանձնացումն ու դասակարգումը, այլև տվյալ լեզվի շրջանակներում այս կամ այն գործոնի բնույթի և լեզվական փոփոխությունների զանազան տիպերի միջև եղած կապի բացահայտումը:

5.1. Լեզվական փոփոխությունների հետ կապված հանգամանքների ամբողջությունը բաժանվում է երկու հիմնական խմբի՝ արտալեզվական և ներլեզվական պատճառների, կամ, այլ խոսքով, լեզվի զարգացման արտաքին և ներքին գործոնների: Լեզվի զարգացման ներքին պատճառների մեջ զգալի դեր են խաղում համակարգային գործոնները, որոնք պայմանավորում են հատկապես լեզվի կառուցվածքային փոփոխությունները: Այդ փոփոխությունները կարող են պայմանավորված լինել համակարգով այն դեպքերում, երբ տարրերի նախկին հավասարակշռության խախտման հետևանքով առաջանում է այս կամ այն մանրահամակարգի վերակառուցման, հակադրությունների վերականգնման, այսպես կոչված «դատարկ վանդակները» լրացնելու, կամ էլ հակադրությունների համաչափություն ստեղծելու պահանջը: Որպես լեզվի զարգացման համակարգային պատճառներ կարող են հանդես գալ նաև լեզվական որոշ ձևերի կորստի փոխհատուցման, արտահայտությունների միօրինակացման ու համահարթեցման միտումները, համաբանությունը և այլն: Լեզվի զարգացման ներքին գործոններից կարևոր է նշել հետևյալները. լեզվական «մեխանիզմի» կատարելագործման պահանջ, որը դրսևորվում է լեզվական արտահայտությունների ավելցուկության նվազեցման, գործառական կամ իմաստային բեռնվածությունը կորցրած ձևերի վերացման, լեզվական միավորների գործածության ոլորտների հստակացման ուղղությամբ կատարվող փոփոխությունների մեջ. լեզվական մեխանիզմը մարդու հոգեբանափոսական առանձնահատկություններին հարմարեցնելու ձգտում, որի հետևանքով փոփոխություններ են կատարվում արտաբերության դյուրացման, լեզվամիջոցների

տնտեսման, լեզվական արտահայտությունների պարզեցման ուղղությամբ. լեզվի հաղորդակցական պիտանիությունը պահպանելու միտում, որով պայմանավորված է լեզվի հարաբերական կայունությունը և այլն:

5.2. Լեզվական փոփոխությունների արտալեզվական պատճառները սովորաբար հանգեցվում են լեզվի գոյության և գործառության արտաքին պայմաններին: Լեզվի մեջ նյութական, կառուցվածքային և գործառական փոփոխությունները կարող են առաջ գալ՝ կապված այդ լեզուն կրող հանրության քաղաքական, սոցիալ-տնտեսական կյանքի առանձնահատկությունների, նրա հոգևոր և նյութական մշակույթի զարգացման, պատմական զանազան իրադարձությունների, պետական-հասարակական կյանքի, տարածքային փոփոխությունների, վերաբնակեցումների և նման կարգի այլ երևույթների հետ: Լեզվի զարգացման արտաքին գործոնների մեջ ուրույն տեղ ունեն էթնիկական, մշակութային, լեզվական շփումները, որոնք կարող են զգալի փոփոխություններ առաջ բերել լեզվական կառուցվածքի գրեթե բոլոր մակարդակներում՝ արտասանական, շեշտաբանական առանձնահատկություններից սկսած մինչև ձևաբանական և շարահյուսական կաղապարները:

5.3. Այստեղից ակնհայտ է դառնում, որ լեզվի զարգացման պատճառների բացահայտումը և ընդհանրապես լեզվի տարածմանակյա քննությունը թերի է դառնում առանց տվյալ ժողովրդի պատմության ուսումնասիրության: Որևէ կոնկրետ ժողովրդի պատմության և նրա լեզվի պատմության կապի հաշվառման անհրաժեշտությունը ներկայումս ընդունվում է գրեթե բոլոր լեզվաբանների կողմից: Սակայն մինչև օրս դեռ հստակ կերպով բացահայտված չեն այդ կապի բնույթը, լեզվի և ժողովրդի պատմության փոխհարաբերությունների էությունը, ինչպես նաև լեզվի պատմական զարգացման քննության մեջ ժողովրդի պատմության փաստերի օգտագործման աստիճանը, եղանակներն ու նպատակադրությունը: Ժամանակակից լեզվաբանության մեջ ճիշտ կերպով հաղթահարված է լեզվի կառուցվածքի մեջ ժողովրդի պատմության կոնկրետ իրադարձությունների անմիջական մեխանիկական արտացոլումը տեսնելու վտանգը: Մյուս կողմից, սակայն, լեզվի պատմությանը նվիրված աշխատությունների մեջ հաճախ լեզվի և ժողովրդի պատմության

կապը բացահայտելու փորձերը հանգում են միայն ժողովրդի տվյալ ժամանակաշրջանի պատմությունը ակնարկային ձևով որպես լեզվի պատմական զարգացման ֆոն ներկայացնելուն, որից հետո և որից անկախ տրվում է լեզվական փոփոխությունների նկարագրությունը:

5.4. Իրականում լեզվի զարգացման և ժողովրդի պատմության փոխհարաբերությունը դրսևորվում է միջնորդված կապի ձևով: Ժողովրդի քաղաքական, հասարակական, մշակութային կյանքի իրադարձությունները ոչ թե անմիջապես ազդում են լեզվի կառուցվածքի վրա, այլ լեզվի գործառության ոլորտների և յուրահատկությունների, լեզվի գոյաձևերի առաջացման ու զարգացման գործընթացի վրա, պայմանավորում են այնպիսի երևույթներ, ինչպիսիք են, ասենք, լեզվի նախնական միասնության տրոհումը առանձին բարբառների ու բարբառախմբերի, գրական լեզուների ծագումն ու զարգացումը, լեզվի հասարակական գործառույթների լայնացումը կամ նեղացումը, լեզվի հասարակական, գործառական, ոճական շերտավորումը, լեզվի գոյաձևերի փոխհարաբերության բնույթը և այլն: Ժողովրդի պատմության ընթացքով պայմանավորված՝ լեզվի շերտավորման ու գործառության ոլորտների փոփոխություններն են, որ երկրորդաբար, լեզվի ներքին զարգացման օրինաչափությունների համագործակցությամբ իրենց կնիքն են դնում բուն լեզվական կառուցվածքի փոփոխությունների բնույթի, ընթացքի, յուրահատկությունների և տեմպի վրա:

6. Այստեղից երևում է, թե լեզվի կառուցվածքի պատմական զարգացման ընթացքը ճիշտ և լրիվ կերպով ներկայացնելու տեսակետից որքան կարևոր է լեզվի գործառական կողմի ուսումնասիրությունը: Հասարակական գործառության ընթացքի մեջ է տեղի ունենում լեզվի հասարակական և տարածական շերտավորումը, կազմավորվում են լեզվի գոյության տարբեր ձևերը, հստականում է դրանց հասարակական դերը, ճշգրտվում գործածության ոլորտները, ձևավորվում լեզվի կառուցվածքի և գործառության փոխազդեցությունների պատկերը:

Անհրաժեշտ է նշել սակայն, որ բացի լեզվի կառուցվածքային կողմի ուսումնասիրությանը նպաստելուց լեզվի գործառական կողմի բնությունն ունի նաև միանգամայն ինքնուրույն արժեք, (ճիշտ այնպես, ինչպես կառուցվածքային բնությունը) որպես

միևնույն օրյեկտի հետազոտման տարբեր հայեցակետեր, այլև այն պատճառով, որ լեզվի կառուցվածքային և գործառական կողմերը կարող են ունենալ զարգացման համեմատաբար ինքնուրույն ընթացք, և նրանց փոխազդեցությունները կարող են այնքան էլ ակնհայտ բնույթ չկրել:

7. Այսպիսով, լեզվի պատմության լիակատար նկարագրության պահանջից ելնելով, որպես հիմնական ելակետային սկզբունք պետք է ընդունել լեզվի պատմական քննությունը երկու հիմնական ուղղությամբ, երկու հայեցակետով տանելու անհրաժեշտությունը: Դրանցից մեկը պայմանավորված է լեզվի էությամբ՝ որպես որոշակի ձևով կազմակերպված համակարգի, իսկ մյուսը՝ լեզվի հիմնական՝ հաղորդակցական գործառնությամբ:

Առաջին դեպքում ուսումնասիրողի ուշադրության կենտրոնում են լեզվի համակարգն ինքն իր մեջ և այն կազմող լեզվական տարրերի փոխհարաբերությունները, լեզվի ներքին կառուցվածքն ու նրա պատմական փոփոխությունները, լեզվական տարբեր մակարդակների ու տարրերի զարգացումը, այլ կերպ ասած՝ լեզվի «գոյը» իր պատմական զարգացման մեջ:

Երկրորդ դեպքում կատարվում է լեզվի գործառական քննություն, լեզվական համակարգը և նրա տարբեր դրսևորումները ուսումնասիրվում են արտալեզվական իրականության հետ ունեցած հարաբերությունների տեսանկյունից: Մասնավորապես, լեզվի պատմական քննության ժամանակ հաշվի են առնվում լեզվի զարգացման արտալեզվական գործոնները, այդ լեզուն կրող ժողովրդի պատմությունը, նրա հասարակական ու մշակութային կյանքում տեղի ունեցած փոփոխությունները և դրա հետ կապված՝ ներկայացվում են լեզվի գործառական փոփոխությունները, լեզվագործածության ընթացքում առաջացած համակարգային և այլ տարբերակումները, մի խոսքով, լեզվի գործառության հետ կապված երևույթները, որոնք անմիջականորեն չեն բխում լեզվի կառուցվածքից: Բնութագրվում է լեզվական իրադրությունը, յուրաքանչյուր փուլի համար առանձնացվում են լեզվի գոյաձևերը, պարզվում է նրանց համամասնությունը, հասարակական դերն ու գործածության ոլորտները: Այսպիսով, այս երկու հայեցակետով լեզվի քննության հարաբերական ինքնուրույնության հետ զուգընթաց պետք է քննել լեզվի գործառական կողմի և նրա կառուցվածքի միջև եղած փոխհարաբերությունը, ըստ

հնարավորին բացահայտել լեզվական փոփոխությունների գործառական պայմանավորվածությունը: Ի դեպ նշենք, որ այս երկու հայեցակետերով լեզվի պատմության ուսումնասիրության պահանջը որոշ արձագանք է գտնում «արտաքին» ու «ներքին» լեզվաբանությունների սոսյուրյան տարբերակման մեջ:

8. Լեզվի պատմական քննության մեջ լեզվական համակարգի զարգացման ճիշտ պատկերը ներկայացնելու առումով նույնքան կարևոր է նաև համաժամանակյա և տարածամանակյա հայեցակետերի զուգակցումը, թեև առաջին հայացքից թվում է, որ լեզվի պատմության ուսումնասիրությունը կարելի է իրագործել միայն տարածամանակյա մոտեցմամբ: Համաժամանակյա լեզվաբանության սկզբունքների ու մեթոդների կիրառման անհրաժեշտությունը բխում է լեզվի պատմության խնդիրներից ու նպատակներից: Ամենից առաջ պետք է նկատի ունենալ, որ յուրաքանչյուր պատմություն ըստ էության ներկայացնում է համաժամանակյա կտրվածքների համեմատություն (թեև այդ համեմատությունը ոչ միշտ է կատարվում բացահայտ, գիտակցված և հետևողական կերպով): Հետևաբար, լեզվի պատմաբանը կարիք ունի առնվազն երկու ժամանակային կտրվածքի համաժամանակյա պատկերի: Ժամանակագրական կտրվածքների թիվը պետք է որոշել կոնկրետ լեզվի զարգացման առանձնահատկություններից և ուսումնասիրության նպատակներից ելնելով: Մասնավորեցնելով այս սկզբունքը հայերենի պատմական զարգացման խնդիրների տեսակետից՝ պետք է նշել, որ համաժամանակյա հայեցակետով անհրաժեշտ է քննել հայոց լեզվի զարգացման յուրաքանչյուր փուլի համար ելակետային կամ էական համարվող համակարգերը (ինչպես գիտենք, ընդունվում է երեք հիմնական ժամանակագրական կտրվածք՝ հին, միջին և նոր), իսկ այդ փուլերի միջև եղած տարբերությունների բացահայտումը կատարվում է համաժամանակյա կտրվածքների համեմատության միջոցով:

Լեզվական համակարգի նկարագրության ժամանակ համաժամանակյա քննության սկզբունքների պահպանումը պետք է դրսևորվի լեզվական կառուցվածքի տարրերի դասակարգման և նրանց փոխհարաբերությունների բացահայտման մեջ, թեև երբեմն անհրաժեշտություն է զգացվում նաև համաժամանակյա քննության դեպքում դիմելու պատմական կարգի բացատրու-

թյունների, սակայն դա չպետք է անդրադառնա լեզվական համակարգի պատկերի վրա: Տվյալ դեպքում լեզվական ձևերը պետք է գնահատվեն ոչ թե ըստ ծագման կամ պատմության, այլ համակարգում իրենց գրաված դիրքի, գործառույթի և փոխհարաբերությունների:

Տարածամանակյա քննության մեթոդներն ու սկզբունքները կիրառվում են տարբեր փուլերի ելակետային վիճակների միջև ընկած ժամանակաշրջաններում լեզվական համակարգի անցած ուղու նկարագրության դեպքում, լեզվական ձևերի ծագման, զարգացման և հետագա տարածման պատկերը ներկայացնելիս, ինչպես նաև լեզվական փոփոխությունների պատճառները բացահայտելիս:

Այսպիսով, համաժամանակյա և տարածամանակյա հայեցակետերի զուգակցում ասելով չպետք է հասկանա՞նք նրանց մեթոդների ու սկզբունքների շփոթում, այլ այս երկու մոտեցումների նպատակադրված և ընտրովի կիրառում հայոց լեզվի պատմության տարբեր հատվածների նկարագրության և տարբեր խնդիրների լուծման մեջ:

9. Լեզվի էության հետ կապված հաջորդ հատկանիշը, որը պետք է հաշվի առնել նրա պատմության նկարագրության ժամանակ, լեզվի փոփոխականությունը կամ տարբերակայնությունն է (վարիատիվությունը): Այդ նշանակում է, որ լեզուների մեծագույն մասը գոյություն ունի ոչ թե որպես մեկ միասնական (այսպես կոչված ստանդարտ) լեզվական վիճակ, այլ որպես փոփոխականների ամբողջություն, որը պատմական տարբեր փուլերում կարող է ունենալ տարբեր պատկեր ու համամասնություն, լեզվական փոփոխականների միջև գործառույթների տարբեր բաշխում և փոխներթափանցումների զանազան առանձնահատկություններ: Այս երևույթը հատկապես բնորոշ է հայերենի զարգացման միջին և նոր շրջաններին, որտեղ համագոյակցում և միմյանց վրա ուժեղ ազդեցություն են գործում լեզվի տարբերակային ձևերը՝ գրական լեզուներն ու բարբառները, հանդես բերելով սկզբնաղբյուրների լեզվական անմիօրինակություն, և հարուցելով այդ լեզվական տարբերակների կարգավիճակի ու փոխազդեցությունների բնույթի հետ կապված հիմնախնդիրների ուսումնասիրության անհրաժեշտությունը:

10. Ինչպես ամեն մի լեզվի, այնպես էլ հայոց լեզվի պատ-

մությունը չի կարող լիակատար համարվել առանց տիպաբանական քննության: Ընդ որում, անհրաժեշտ է ոչ միայն բացահայտել հայերենի կառուցվածքային տիպը այլ լեզուների համեմատությամբ, այլև պարզել հայոց լեզվի ժամանակագրական, տարածական, գործառական տարբերակների (հին, միջին, նոր փուլեր, գրական լեզուներ, բարբառներ և այլն) տիպաբանական կառուցվածքների փոխհարաբերությունը, տալ նրանց տիպաբանական դասակարգումը, դիտարկել անցումը մի տիպից մյուսին, ըստ հնարավորին բացատրել տիպաբանական անցումների պատճառները և այլն: Հայոց լեզվի պատմական զարգացման ընթացքի առանձնահատկությունները, մեզ ավանդված տարբերակների առատությունը, նրանց կառուցվածքային ու տիպաբանական բազմազանությունը այդ կարգի քննության համար առատ նյութ են տրամադրում:

11. Եվ վերջապես, լեզվի պատմական քննության անհրաժեշտ ելակետն ու նախապայմանը նրա պատմության շրջանաբաժանման մշակումն է: Հայոց լեզվի պատմության՝ շրջանաբաժանման առաջին քայլի հիմքում ընկած է գրավոր հուշարձանների առկայության հանգամանքը: Այս իմաստով շրջանաբաժանումը որոշ պայմանական բնույթ ունի. այն ոչ թե արտացոլում է լեզվի պատմական զարգացման երկու վիճակների իրական տարբերությունը (գրի ստեղծման պահին նախորդող և հաջորդող շրջանների լեզվավիճակները կառուցվածքային տեսակետից էական տարբերություններ ունենալ չէին կարող առնվազն մեկերկու հարյուրամյակի սահմաններում), այլ թելադրվում է այդ երկու շրջանների մասին մեր ունեցած գիտելիքների, ուսումնասիրության մեթոդների առանձնահատկություններով, ինչպես նաև հետազոտության արդյունքների բնույթով (նախագրային շրջանի համար դրանք ավելի ենթադրական են): Բացի այդ, որքան էլ լեզվի նյութական կառուցվածքի պատմական փոփոխությունների և զարգացման կոնկրետ օրենքների տեսակետից գրի ստեղծման ժամանակաշրջանը պայմանական պահ է, այնուամենայնիվ, այն որպես լեզվի զարգացման շրջանների սահմանագիծ ընդունելը արդարացվում է նաև լեզվի գործառական քննության հայեցակետից, քանի որ գրի ստեղծումը և լեզվի գրական մշակման գործընթացը իրենց հետ բերում են նաև լեզվի գործառույթների ընդլայնում, լեզվագործածության

ուլորտների, ինչպես նաև լեզվի զարգացման միտումների ընդհանուր ուղղվածության փոփոխություններ, որոնք վերջին հաշվով կարող են անդրադառնել նաև լեզվի համակարգի ու բնույթի վրա:

Ներկայումս հայոց լեզվի պատմության՝ բոլորի կողմից ընդունված գիտական շրջանաբաժանումը, որն առաջարկել է Գ.Ջահուկյանը, համակողմանիորեն արտացոլում է հայոց լեզվի պատմության հիմնական առանձնահատկությունները, քեև հետագա ուսումնասիրությունները նույնպես կարող են բերել որոշ մանրամասներ ու հավելումներ հայերենի զարգացման ընթացքի ընդհանուր պատկերի մեջ:

ԱՌԿԱՅԱՑՄԱՆ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ
ՎՐԱԲԱՐԴԻ ԲԱՐՔԱՌՈՒՄ

Արդի գրական արևելահայերենում գոյականի առկայացման կամ տարորոշման կարգին սովորաբար վերագրվում են քերականական հետևյալ իմաստները. ա) որոշյալություն, բ) ստացականություն, գ) դիմորոշություն, դ) ցուցականություն, որոնք արտահայտվում են *ը/ն, ս, դ* հոդերով [տե՛ս *Աբրահանյան*, էջ 107]: Գ. Ջահուկյանը առկայացման նշված քերականական իմաստները խմբավորում է երկու ենթակարգում՝ որոշյալության և ցուցաստացականության: Արտահայտության պլանում հոդերը հակադրվում են *զրո* վերջավորությանը (*մարդ - մարդը, տղա - տղամ*), որով դրսևորվում է գոյականի որոշյալ և անորոշ առումների տարբերությունները [*Ջահուկյան*, 1974, էջ 208]:

Առկայացման քերականական կարգը, որն ընդհանրապես հատուկ է հայերենի բոլոր տարբերակներին, բարբառներում, սակայն, ունի զանազան դրսևորումներ: Վարաբադի բարբառի խոսվածքներում, ի տարբերություն գրական արևելահայերենի և արևմտյան խմբակցության բարբառային միավորների, այն հատուկ է գոյականին իր բոլոր քերականական գործառնություններում՝ թվի, հոլովի, իրի կամ անձի առումի և այլն: Մենք ուսումնասիրել ենք Վարաբադի բարբառի՝ ինչպես 20-րդ դարում հրատարակված, այնպես էլ այդ նույն դարում ՀԲԱ ծրագրով հավաքված համապատասխան նյութերը: Այս բարբառի մեջ մտնում են Բոլնիս-Խաչենի, Շուշիի, Հաքերքի, Հարավի, Կաղարծիի, Շահումյանովսկի, Գորիսի, Ջանյաթադի, Հադրուքի, Շուշիքենդի, Տումիի, Շաղախի, Խանազահի խոսվածքները՝ իրենց ենթախոսվածքներով (*Ջահուկյան*, 1972, էջ 136): Ընդգրկել ենք նաև Կաքավաբերդի, Կապանի, Միսիանի խոսվածքները, որոնք բազմահատկանիշ դասակարգմամբ չնայած ուսումնասիրված չեն, սակայն իրենց հիմնական հատկանիշներով, կարծում ենք, Վարաբադի բարբառի միավորներ են: Ուսումնասիրությունը կատարել ենք համաժամանակյա կտրվածքում:

Որոշյալության քերականական իմաստն այս բարբառում,

բնականաբար, արտահայտվում է և՛ որոշյալ, և՛ ստացական-
 դիմորոշ հոդերով: Այսպես՝ ուղղ. հլ. *խօխա - խօխաս, -տ, -ն,*
տընէր - տընէրըս, -տ, -ը, սեռ. հլ. խոնխի՛, -ս, -տ, -ն, տընէ՛րի, -ս,
-տ, -ն, գործ. հլ. խոնխա՛վ, -ըս, -ըտ, -ը և այլն: Իսկ *-ա* հոլովման
 դեպքում սեռականում դիտվում է նույնիսկ կրկնակի հոդա-
 ռություն՝ *ախչիկ - սեռ. ա/ըխչըկա՛, -ն(ը) (պէ՛ժիքը, հէտի), կընի՛*
էկ - կընգա, -ն(ը) (շօ՛րը, յ/վիրո՛ւ): Որոշ ենթախոսվածքներում *-ա*
 հոլովմանն է պատկանում նաև *հարս* բառը: Օրինակ՝ *պատրօնը*
հա՛րսանը շատ ար սի՛րիս (տ. 388): Հոդառության այս երևույթը,
 թերևս, պետք է բացատրել այն հանգամանքով, որ տվյալ
 հոլովում հաճախ ավելացող *-ն* հոդը սկսել է գիտակցվել որպես
 հոլովական վերջավորության տարր, ինչպես՝ *վանքին տափը,*
կօխօզին տրակտորը, Սա/ըթիկին կօվը : Ըստ Կ. Դավթյանի՝
 Մարտակերտի և Ստեփանակերտի հարավի շատ գյուղերում «...
 գործածական է *-ն* հոդը նույնիսկ այն դեպքերում, երբ հարմար է
 գործածել *-ը* հոդը, ինչպես՝ *թօխտըն տա՛րէ. կալըն լնվ ա ըլն...»*
 [Դավթյան, էջ 120]:

Ղարաբաղի բարբառային որոշ միավորներում, հատկապես՝
 Ղարաբաղի տարածքի, *-ը* որոշյալ հոդը ձայնավորների
 ներդաշնակության օրենքի հետևանքով վերածվում է *ա/ւն, ի,*
ո/ւն տարբերակների: Օրինակ՝ *պմմքն նն* «բամբակը»,
մօ՛կունն «մուկը», *ճո՛րի/նն* «ջուրը» [Նույն տեղում]: Նման
 միտում է դիտվում նաև Գորիսի շրջանի Խնածախ գյուղի
 ենթախոսվածքում, որի կրողների մախնիները ղարաբաղցիներ
 են: Օրինակ՝ *ախիսին ճո՛րոն* «ջուրը», *վըխճախին կն՛ոն* «գառը»
 (տ. քիվ 102): Այս երևույթը հանդիպում է բարբառային այն
 միավորներում, որոնցում շատ հետևողականորեն է գործում
 վերոհիշյալ ներդաշնակության օրենքը:

Գոյականը, ինչպես նշվեց, հոդառություն ունի նաև հոգնակի
 թվի բոլոր հոլովներում: Այսպես. *շէնէ՛րին (-ս, -տ) ժուղօ՛վուրքը.*
ծըռէ՛րան (-ս, -տ) խոնձօ՛ր թափէց. կէտէ՛րունը լըղանում էն:
 Որոշյալ հոդ են ստանում նույնիսկ ուղղ. հոլովում *-ի/էք*
 հոգնակերտ ունեցող գոյականները: Օրինակ՝ *կընան-իքը, -օցը,*
-օցավը, մարթ-իքը, -օցը, -օցավը, խօխ-է(ր)քը, -օրցը, -օրցա-
վը, ճօ/օր-էքը «ջորհները», *-օցը, -օ/օցան, -օ/օցավը:*

Հոլովական իմաստները (բացառական, գործիական, ներգո-
 յական) հարադիր կազմությամբ արտահայտվելու դեպքում

գոյականի հոդառության սկզբունքը չի փոխվում: Օրինակ՝ *կանոնստին անա (նեստա) փիս նըղացալ էրմ. են կընէկը ուրանն խուխին անավ (նեստավ) ուրխանում ա (Գորիս). թութէն անէ դիհն («դռաք») ըք իհանծ. կուրկուտը հընաթէն անէ ըք սըրքիս (Ղարադաղ, տ. 100): Չըմօշկը մանցալ ա ցէխէն մանչին (Ղարադաղ, տ. 53): Ի դեպ, հոդ են ստանում նաև *անա, նեստա, մէչ* կապական բառերի հոլովված ձևերը. *անավը, նեստան - նեստավը - նեստումը, մէչան - մէչավը - մէչումը*, որոնք կիրառվում են և՛ գոյականի հետ, և՛ անկախ գործածություն ունեն (հատկապես վերջին երկուսը):*

Ղարաբաղի բարբառում *-վա* հոլովման պատկանող բառերը սեռականում (նաև բացառականում) սովորաբար *-ն* որոշյալ հոդ չեն ստանում՝ *տաթի - տաթվա (կէսը), շանփանք - շանփտվա (օրերը), ուրուճու - ուրգուճվա (հացը), խուտվա («խոտի»)* *հանդը, են բաքվա («Բաքվից»)* *յէկալ էր*: Այս հոլովում և բացառականում հոդ չեն ստանում նաև այն տեղանունները, որոնք ունեն *-ա* հոլովիչը: Օրինակ՝ *հուդրուքա («Հադրութի»)* *մուրը ցօրցօտ ա. հուդրուքա («Հադրութից»)* *էրկու մարթ ա յէկալ (Պողոսյան, էջ 121). հըթէրքա («Հաթերքից»)* *վէրը պըտահէ, բաշ տըվաք, պիրաք (Դավթյան, էջ 259) :*

Թեք հոլովներից հոդառության առումով ամենամեծ հաճախականություն դիտվում է սեռականում, իսկ ցածր հաճախականություն ունի գործիականը: Օրինակ. *ղըմբուդօլ («բունցքով»)* *տըվավ մէշկիս. սուրգանչօլ («փլավքամիկով»)* *պըրիմճը բանէց. հանսօլ կանթան յա քըխէլ (Մխիթան, տ.435): Չըքուճանօլ քըխից բաթէն: Պութը տինանկանօլ կըտըրալ ար (Հադրութի խավ., տ. 388): Բայց նաև՝ քըվօրավը մանակ դաթիէց (տ. 41, 53, 104 389). սըխտօրին քէփուկնէն հօդին իրէսանօլ մէկնըմ ա [Դավթյան, էջ 259]:*

Հատկանշական է, որ արևմտահայերեն գրական լեզվի հոդառության մասին խոսելիս Ա. Այտընյանը նկատում է, թե ուղղականն ու հայցականը մշտապես հոդ են ստանում, սեռականը, տրականն ու բացառականը՝ երբեմն, իսկ գործիականը «միշտ եւ ամեն դեպքի մէջ առանց յօդի կը մնայ»[*Այտընյան, էջ 24*]:

Ուսումնասիրողները նկատել են, որ Ղարաբաղի խոսվածքներում ազգակցություն ցույց տվող որոշ բառեր *իմ, քո* անձնական դերանունների հետ գործածվելիս մեծ մասամբ որոշյալ

հող չեն ստանում [տե՛ս *Դավթյան, Մարգարյան, Պողոսյան*]: Դրանք են՝ *հայր, մայր, եղբայր, տատ, պապ, քեռի, քեռակին, հորեղբայր, հորեղբոր կին, հորաքույր, մորաքույր, սկեսուր, սկեսրայր* և այլն: Օրինակ՝ *իմ (քու/քո) հե/ար (ա'պէր), մե/ար, տա'տի, պա'պի, ա'խպէր, քո'ր, դա'յի, քըռա'կին, դո'րփէր, ղըրփըրա'կին, հըրա'քո'ր* և այլն): *իմ մար էս չըխէս յեր ա լիմ կընաս...* [*Դավթյան, էջ 286, Շուշիքենդի խսվ.*]: *իմ քեր հաղը թո'ղէց, քինան ար [նույնը, էջ 258, Հաթերքի խսվ.]: ուրգո'նը քու' հեր վեր կան ա տօն, ա'սում էմ բա ըսէնց-ըսէնց պան [Մարգարյան, էջ 308, Գորիսի խսվ.]: Պետք է նկատել, որ տվյալ դեպքում *հե/ար, մէր/ար* միավանկ գոյականների շեշտը տեղափոխվում է դերանունների վրա. *իմ (քու') հե/ար լիվ մարթ ա, իմ (քու') մե/ար ճան ա է'փում*: Այսինքն՝ ստեղծվում են բարդ բառեր: Ի դեպ, առանց հողի գործածական է նաև *մէր ախճիկ, ծէր ախճիկ* ձևերը: Վերոհիշյալ փաստը վկայում է, անշուշտ, որ նման դեպքերում հողառության բացակայությունը հնաբանություն է, քանի որ դա բնորոշ է հին հայերենին՝ չնայած այնտեղ ստացական դերանունը մշտապես հետադաս գործածություն ունի, օրինակ՝ *Հայր իմ (քո, մեր, ձեր) սկսավ պատմել* :*

Անորոշ առումով, հատկապես՝ ընդհանրական, գործածվող գոյականները, ինչպես և գրական արևելահայերենում, սովորաբար հող չեն ստանում՝ *ա'րաշտ տա'րումը ցօ'րէն չի ինում. խօ'խա պա'հի/ելը տի'ծար ա. տօնը մարթ յե'կու/ը*: Անհող գործառություն ունեն կոչականները, օրինակ՝ *ա'յ մարթ, շտէղ է'ս ման կան*. տեղանունները, եթե ցույց են տալիս գործողության ուղղությունը, երբեմն էլ՝ կատարման վայրը. օրինակ՝ *անուր քանցնլ ան ըրէ'վան. կօ'րէս փիս թօռ ա կան* : Այլ բարբառների և գրական արևելահայերենի նման, հող չի ստանում նաև *աստված>ա'ստուծ* բառը՝ բոլոր հոլովներում: Իսկ *մի(ն), մըն* քվականին հանգող անորոշ հող ունեցող գոյականի քանակը՝ մեկ հատ, որոշակիորեն ընկալելի է: Այսպես. *միմ ձի, միմ թիվանգ ալ պա'րտք օնի լիմ [Մուրադյան, էջ 210, Կաթավաբերդի խսվ.]: միմ թունդ ու'շունց ա տըվալ [տ. 65, Կապանի խսվ.]: մի/ը(ն) մարթ յե'կու/ը, մի/ըն ախճիկ քինանց [Գորիսի խսվ.]*:

Ղարաբաղի բարբառում որոշյալ և ստացական հողերի գործառության միջև տարբերություններ չկան: Այստեղ գոյականը, ինչպես գրական արևելահայերենում, ստացական հողեր (-ս, -

տո՜ղ, -ը/մ) կարող է ստանալ եզակի և հոգնակի թվի ցանկացած հոլովում: Օրինակ՝ *բախշումըս (բախշէ՛քումըս) շատ թօթ կա, խօխօ՛րցատ խնքնի չօնէ՛ս* և այլն: Սակայն բարբառի խոսվածքներում մեծ գործառնություն ունի եզակի թվի *իմ, քո/ու* դերանունների հետ ստացական հոդերի կիրառությունը. *իմ տօ՛նըս (տըղաս, հա՛վէրըս), քու շօնըտ (մա՛րթըտ, ծա՛ռէրըտ)*: Օրինակ՝ *իմ տարըս* («տերս») *փիս խըսյաթ օնի...* [Մարգարյան, էջ 281, Գորիսի խավ.] *իմ կու՛իածըս* («խիածը») *հինչ ա դէ՛նալ, հօր քու կու՛իածըթ/տ ալ հինչ դէ՛ռի* [Մուրադյան, էջ 213, Կաքավաբերդի խավ.]: Թեպետ երբեմն հանդիպում է նաև *իմ տօնը, իմ խօխսան, քու շօնը, քու տըղան* և այլն կառույցներ:

Վերը նշվեց, որ հարազատական կապեր ցույց տվող շատ գոյականներ *իմ, քո/ու* դերանունների հետ գործածվելիս ստացական հոդ չեն ստանում: Սակայն կան նաև այդ իմաստային խմբին պատկանող որոշ թվով բառեր, ինչպես՝ *տըղա, ախճիկ, խօխսա, թօռ, ծօռ, հարս, փէ՛սա* և այլն, որոնք նշված դեպքում հաճախ հոդառու են՝ -ս կամ -տ: Այսպես. *իմ տըղա՛ս/ն, քու տըղա՛տ/ն, իմ թօ՛նըս/ը, քու թօ՛նըտ/ը*, բայց նաև՝ *մէր (ծէր) տըղան* և այլն: Այս երևույթը հավելությունություն է, որը ձևաբանական կառույցներում առաջանում է կա՛մ տվյալ ձևության բովանդակության պլանում թուլանալու հետևանքով, կամ էլ թելադրված է լինում քերականական իմաստի սաստկացման անհրաժեշտությանը: Տվյալ դեպքում շեշտվում է դիմային պատկանելության քերականական իմաստը: Կարծում ենք՝ դեր է կատարում նաև, բարբառում դիմորոշ հոդերի (-ս, -տ, -մ) գործածության սովորույթը:

Հատկանշական է, որ հոգնակի թվի *մէր, ծէր* դերանունների հետ գոյականը ստանում է ոչ թե առաջին և երկրորդ, այլ երրորդ դեմքի (կամ որոշյալ) հոդ: Օրինակ՝ *մէր խօխէրթը/ րախէրթը (կօվէրթը), ծէր շէները (մա՛րթիքը)*:

Բարբառագետները նկատել են, որ գոյականները հոգնակի թվում կրկնակի հոգնակերտներ են ստանում, եթե պատկանելության իմաստ են արտահայտում [Դավթյան, էջ 95. Մարգարյան, էջ 172-173]: Նման դեպքում գոյականի հետ չեն գործածվում հատկացուցիչ անձնական դերանուններ: Այսպես. *վընդըրնէ՛րիս* («մեր ոտերի») *տակը կրակ ա է՛րում. տընըրնիս* («մեր տները») *մօտ ա. հէրէրնիս* («մեր հայրերը») *քա՛ղաք է՛ն քնցալ*:

Վարաբաղի բարբառում ցանկացած խոսքի մաս, ինչպես գրական արևելահայերենում, գոյականաբար գործածվելիս ունի հոդառություն, սակայն, բնականաբար, դա կատարվում է տվյալ համակարգում գոյականին բնորոշ կանոններով. *լնվը սա յա, յսո՛սիլը գռն՝ դռն՝ չի*: Ուշագրավ է *մասին* կապի ստացական հոդառության փաստը *իմ և քո/ու* դերանունների հետ գործածվելիս՝ *իմ մասինս պնն չանես, քու մասիտ պատմի*: Այս հավելորդայնությունով նույնպես կարևորվում է տվյալ քերականական դեմքի շեշտվելը խոսողի կողմից:

Ինչպես գրաբարում, այնպես էլ Վարաբաղի բարբառում, *ս, տ, ը/ն* հոդերը բազմիմաստ են. նրանք ունեն մեկ ցուցականության իմաստ: Բարբառում *էս, էտ, էն* ցուցական դերանունների հետ և մեկ առանց դրանց գործածվում են *-ս, -տ, -ն/ը* հոդերը: Նման դեպքում սրանք դիմորոշ են այնքանով, որ նշում են խոսողի և տվյալ առարկայի տարածական հարաբերությունը: Օրինակ. *էս քիշէ՛րիս լնվ ա՛րագ էմ տէսալ, էտ ամէ՛ոնըտ յես մատու քինն՝ ցալ ինք սարը* [*Դավթյան*, էջ 265], *իմ խուխէն էն քնփուր աշխարքը մէ քըցիլ* [*Պողոսյան*, էջ 361]: Այս դեպքում հավելորդայնությունը առաջացել է, կարծում ենք, *-ս, -տ* հոդերի պատկանելիության իմաստի գերակայության հետևանքով: Փաստորեն այդ հոդերի դիմորոշությունն ավելի թույլ է արտահայտված, և անհրաժեշտություն է առաջացել ցուցական դերանունների կիրառության:

Այսպիսով՝ գոյականի հոդառությունը Վարաբաղի բարբառի բոլոր խոսվածքներում ունի մեծ գործառություն և համանման դրսևորումներ: Դրանով, նմանվելով արևելյան խմբակցության բարբառներին, ունի մեկ որոշ յուրահատկություններ, ինչպես, օրինակ՝ *իմ, քո* դերանունների կողքին գործածվող՝ ազգակցություն ցույց տվող գոյականների հետ հոդի բացակայությունը կամ՝ *մասին* կապի հոդառության փաստը:

Օգտագործած գրականության ցանկ

1. Ս. Գ. Աբրահամյան, Ն. Ա. Պառնասյան, Հ. Ա. Օհանյան, Ժամանակակից հայոց լեզու, հտ. 2, Երևան, 1974:
2. Ա. Այտընյան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Երևան, 1987:

3. Կ. Ս. Դավթյան, Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Երևան, 1966:
4. Ա. Մարգարյան, Գորիսի բարբառը, Երևան, 1975:
5. Հ. Դ. Մուրադյան, Կաթավաքերդի բարբառը, Երևան, 1967:
6. Ա. Ս. Պողոսյան, Հաղորդի բարբառը, Երևան, 1967:
7. Գ. Բ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972:
8. Գ. Բ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974:
9. ՀԲԱ ծրագրով լրացված տետրեր (թիվ 41, 123, 124, 125, 127, 173, 209, 217, 220, 243):

ՏԷՐ ԲԱՌՈՎ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆԻ
ԲԱՐԲԱՆԵՐՈՒՄ

Կրոնական փոխառությունները, գրաբարյան շրջանում հարազատ լինելով փոխատու լեզվին, հայերենի բարբառներում հիմնականում հանդես են եկել տվյալ բարբառին բնորոշ բաղաձայնական և ձայնավորական հնչյունափոխություններով: Նման փոխառությունների հնչարտասանական կայունության վրա հետազայում ազդել են հասարակական, քաղաքական, տնտեսական պայմանները: Է. Աղայանը «Նոր հայերեն բարբառների առաջացման հարցի շուրջ» հոդվածում գրում է. «Բազրատունյաց թագավորության կործանումով ջնջվեց հայ պետականությունը մեր երկրից: Միատարր կապը բացակայեց: Նույնիսկ «եկեղեցի, եպիսկոպոս, կաթողիկոս» բառերը միաձև չմնացին հայ լեզվի մեջ» (Պատմաբանասիրական հանդես, 1958, N 2):

Բարբառային բառապաշարի գործուն բառերից է համահայկական բառաշերտին պատկանող «տէր» բազմիմաստ բառը՝ իր կրոնական և աշխարհիկ առումներով: Այն գործածվել է և՛ գրաբարում, և՛ միջին հայերենում, այժմ էլ գործածական է արևմտահայ և արևելահայ գրական, ժողովրդախոսակցական լեզուներում և բարբառներում:

Հր. Աճառյանը «Հայերեն արմատական բառարանում» *տէր* բառի մասին գրում է. «Ծագում է *տի-այր* ձևից, ավելի հինը՝ *տէայր*, որ կազմուած է *տէ*՝ «մեծ» և *այր* «տղամարդ» բառերից» (Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, 4, Երևան, 1979, էջ 401): Բացատրական բառարաններում¹ տրված «տէր», «մեծ», «փշխան», «ամուսին», «հովանավոր» և այլ իմաստներից բացի, լայնորեն տարածված է «տէր» բազմիմաստ բառի «Աստված» նշանակությունը: Անդրադառնալով *տէր*, *աստուած*, *լոյս* և այլն բառերի իմաստաբանությանը՝ Վ. Համբարձումյանը «Հայերեն *Աստված* բառի ծագումն ու տիպաբանությունը» գրքում գրում է. «Քրիստոնեական եկեղեցին այդ անվանումներին ոչ

¹ Տե՛ս հայերենի բացատրական բառարանները:

այնքան հաղորդել է բոլորովին նոր իմաստ, որքան որ վերա-
իմաստավորել է իր հավատքին համապատասխան՝ պահպանե-
լով հնդեվրոպական ծագում ունեցող այդ բառերի ամենանախ-
նական իմաստներն ու նշանակությունը» (*Վ. Համբարձումյան*,
Հայերեն *Աստված* բառի ծագումն ու տիպաբանությունը, Երևան,
2002, էջ 10, 25):

Այնուհետև նշվում է, որ *տէր* բառը, բաղադրված լինելով *տի-*
հայր հնդեվրոպական ձևից, նախապես նշանակել է «հայր-
Աստված», «Երկինք-Աստված»:

Որպես կրոնական բառապաշարի միավոր՝ *Տէր*-ը մատնա-
նշում է Հայր *Աստծուն* և Որդի *Աստծուն* ու գրվում է մեծատառով,
օրինակ՝ «*Մովսեսը լսեց Տիրոջ ձայնը*», «*Հիսուս Քրիստոս՝ Տերը*,
պայծառակերպվեց»:

Տէր բառը հաճախ հոգևորական կամ աշխարհական
բարձրաստիճան անձանց հարգական դիմելւած է. երբեմն այն
մատնանշում է ընդհանրապես քահանա: Այդ մասին Ստ. Մալ-
խասյանցի «Հայերեն բացատրական բառարանում» կարդում
ենք. «Յարգական մակդիր, որ դնում են քահանայի անուան
առաջ, երբեմն և առանց անուան» (*Ստ. Մալխասեանց*, Հայերեն
բացատրական բառարան, հ. 4, Երևան, 1945, էջ 409): *Տէր*-ը
քահանայի անվան փոխարեն կամ որպես որոշիչ գործածվելիս
գրվում է փոքրատառով. օրինակ՝ «*Ա՛ տէր, զատիկը էս տարի ե՞ջի
տ*», «*Ըսօր պատարագիչը տէր Օհանեսն ա*»: Ներկայումս Մայր
Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից ընդունված է մեծատառով համա-
ռոտագրությունը. ինչպես՝ *Տ. Հակոբ, Տ. Հովհաննես* և այլն:

Տէր բառը նաև ազգանվան բաղադրիչ է, գրվում է մեծատա-
ռով և հատուկ անվան հիմնական մասին միանում է գծիկով, օրի-
նակ՝ *Տէր-Գաբրիելյան, Տէր-Գրիգորյան* և այլն: Նախա-
խորհրդային շրջանում *Տէր* բաղադրիչով ազգանուն ունեին
հատկապես հոգևորականների արյունակիցները: Խորհրդային
աստվածներժության տարիներին քաղաքացիական գրանցում-
ների բաժիններում ծննդյան վկայականներում այդ մասնիկը
պարզապես չէին գրում: Արդի անվանադրության գործընթացում
միտում կա *Տէր* բաղադրիչով ազգանունների վերականգնման:

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում «տէր»
ձևաիմաստային միավորով կազմությունների բարբառային
տարբերակները: *Տէր* բառով են բաղադրված *տէրտէր, տէր-*

տերակին, տիրուհի, տյառնընդառաջ, տերնընդայս, տերողորմյա
և այլ բառեր:

«Տեր հայր, քահանա» իմաստն են արտահայտում «տեր» բառի բարբառային հետևյալ գուգաբանությունները. *տեր* (Ալաշկերտ, Ախալցխա, Բուրդուր, Գորիս, Լոռի, Կարին, Սոկա, Մուշ, Շամախի, Ջուղա, Վան, Տփղիս, Ուրմիա), *տէ՛յր* (Մարաղա), *տար* (Մեղրի, Ղարաբաղ), *տւնր* (Շատախ), *տա՛րը* (Ղարաբաղ), *տայր* (Ագուլիս), *տերա* (Համշեն), *տէրա* (Շապին Գարահիսար), *դէր* (Առտիալ, Ասլանբեկ, Խարբերդ, Համշեն, Նոր Նախիջևան, Ռոդոսթո, Մեքաստիա, Տիգրանակերտ, Վաղուհաս, Խանազահ, Ուրգուրուն, Հադրուք, Մեծ Շեն, Բուրաստան, Պոդոսագունք, Հաթերք, Առաջաձոր, Ջանյաթաղ, Մադաղիս, Ղազանչի, Ծեբելդա, Ներքին և Վերին Խոտանան, Վինան, Քարագուլիս), *դէյ* (Հաճըն, Ջեյթուն), *դիր/դիրյ* (Սվեդիա), *դէրա* (Համշեն, Տրապիզոն, Ճանիկ), *դէրւ* (Չիբլուխու, Ունիե, Բալլու) և այլն:

Բարբառներում *տեր*-ը *հայր* բառի հետ անջատ կամ միասին արտաբերմամբ երբեմն գործածվում է որպես կոչական, օրինակ՝ *տէ՛ր հայր* (Փարպի), *տէր հայր* (Պտղնի, Զյուրազդարա, Ղարաղշլաղ), *տէր հ՛այր* (Սուրմալու՝ Մոլլաղանմար), *տէր հայ(ր)* (Լիզ՝ Ներքին Բուլանուխ), *տէրհայ* (Նախիջևան՝ Կ՛աղ), *դէր հայր* (Մասուն՝ Հոսներ, Գոմք, Արմաշ, Ղարաբաղ) և այլն: Քահանային դիմելիս *տէր* բառի սկզբում հաճախ ավելացվում է *այ* կոչական բառ-մասնիկը (ա՛յ տեր), որը երբեմն ձուլվում է բառին որպես նախահավելված՝ կազմելով ձևաիմաստային նոր միավորներ. օրինակ՝ *ւնդի* (Մուծումբար), *ադէր* (Ղափան, Խնձորեսկ), *ադը՛ր* (Քարահունջ, Վերինշեն, Բոուն, Խոտ, Վաղատուր) և այլն: Ինչպես տեսնում ենք, լեզվական այս իրողությունը բնորոշ է և՛ արևելյան, և՛ արևմտյան խմբակցության բարբառներին:

Տիգրանակերտի, Շամախիի, Լեհահայոց և այլ բարբառներում *տեր* բառը հանդես է գալիս պարսկերեն *բաբա* (>*բաբ, բուր*) «հայր» բառի հետ՝ կազմելով որոշիչ-որոշյալի բառակապակցություն կամ բարդություն, օրինակ՝ *դէր բւնր* (Տիգրանակերտ), *տէր բաբա* (Շամախի), *դէր բաբա* (Լեհահայք), *դէր բաբ/դէրբոբ* (Բեյլան) և այլն: Շամախիի խոսվածքում *բաբա* են կոչում Աստծուն: *Բաբա* բառի *բուր* հնչյունական տարբերակը Սվեդիայի բարբառում բազմիմաստ է և նշանակում է. 1. «քահանա», 2. «կնքահայր»:

Ռոդոսթոյում և Մերաստիայի Ջարա գյուղաքաղաքում *դէր հայր* բառակապակցությունն ունի մասնավորապես հարգական իմաստ:

Տէր բառը անճանաչելի է դարձել Սվեդիայի բարբառի *ուշնա-դէր* բաղադրյալ կազմության մեջ, որը նշանակում է՝ «օրինյա՛, տէր»:

Ախալքալաքի Բալխո և Ծալկա բնակավայրերում, որտեղ ապրում են կարնեցիներ, գործածական է *տէրք* բառը՝ «վարդավառ» իմաստով: Տվյալ դեպքում տեղի է ունեցել իմաստափոխություն կցորդության հիմունքով: Տիրոջ այլակերպության տոնը Տիրոջ պատվին կոչվում է *տէրք*:

Հոգևոր սպասավոր, քահանա է նշվում նաև այս արմատի կրկնությամբ կազմված *տէրտէր* բառով: Արևելյան և արևմտյան խմբակցության բարբառների մեծ մասում այն հնչյունափոխության ենթարկված չէ և ունի գրական արևելահայերենին բնորոշ հնչարտաբերություն, օրինակ՝ *տէրտէր* (Ախալցխա, Արաբկիր, Եվդոկիա, Ջեյթուն, Կարս, Կարին, Մուշ, Նոր Նախիջևան, Վան, Տփղիս, Խարբերդ, Հունգարահայք, Շամախի, Տիգրանակերտ, Շատախ, Մակու, Վերին Ճամբարակ, Բյուրական, Անտառուտ, Բաղնու, Ղաբուռ, Նորք, Մամգարա, Վահան, Գանձա, Ծաղկավան, Տոսու, Վերին Հնրոնք, Սիփան, Շուրիշկան, Մեծ Մամսար, Արտամետ, Չոլախլու, Կուրթան, Կաղ, Պոռշենց, Բուզլուխ, Կոճերեր): Մի շարք խոսվածքներում գործածվում են երկբարբառային, բաղաձայնական և հնչերանգային տարբերություններ ունեցող բառային զուգաբանություններ, ինչպես՝ *տէրտէր* (Էգնախոջա), *տէրտէր* (Արփի), *տը՛րտը՛ր* (Քարահունջ, Խոտ), *տէրդէյ* (Խոտրջուր՝ Միջին քաղ), *տէրդէր* (Հախվերիս, Խութ՝ Շեն, Քասաղ, Հազգո, Արաբկիր, Կարմիր գյուղ, Մադինա, Մրգաշատ, Լիզ, Կարս՝ Բյուրագոարա), *տէրդէր* (Ալիճագրակ), *տէրդէր* (Թաղավանք, Աղավնաձոր), *դէրդէր* (Լեհահայք, Մալաթիա, Տիգրանակերտ, Մուծումբար, Տրապիզոն, Հոսներ, Ընգուզնակ, Ռոդոսթո, Իրցանք, Գոմք, Հաբուսի, Արմաշ, Ջարա), *դ՛էրդէր* (Ապարանի Ղալայչի, Արագած, Ատմա) և այլն:

Արմավիրի չերքեզախոս հայերը գործածում էին *դ՛ենդեր*: Ինչպես տեսնում ենք, տեղի է ունեցել *ր* ձայնորդի անկում, իսկ գրաբարյան *մ* ձայնորդը պահպանվել է: Ն ձայնորդը պահպանվել է նաև նույն տարածքի *դիրանցու* (=տիրացու) բարբառային

գուգաբանության մեջ, որտեղ, սակայն, *և*-ն հեռացել է արմատից՝ հայտնվելով *-ացու* վերջածանցի մեջ:

Օհանավան գյուղի խոսվածքում գրանցված է *տետեր* ձևը. տվյալ պարագայում կա՛մ գործ ունենք սովորական վրիպակի հետ, կա՛մ տեղի է ունեցել առաջին վանկի *ր* ձայնորդի անկում: Հ. Աճառյանի «Գաւառական բառարանում» որպէս մանկական բառեր են նշված Թիֆլիսի բարբառի *տետե* և Արարատյան բարբառի Երևանի, Խոյի բարբառի Օհանավանի խոսվածքների *տետեր* բառերը: Վերջին օրինակը հնարավորություն է տալիս ենթադրելու, որ Օհանավանում ընդունված է *տետեր՝ ր* ձայնորդի անկումով ձևը, որը Աճառյանը համարում է մանկական բառապաշարի բառ:

Տիգրանակերտի բարբառում միաժամանակ գործածելի էին *տերտեր* և *դերդեր* հնչյունական գուգաձևությունները: Կարելի է ենթադրել, որ որպէս գրական փոխառություն այն մի դեպքում պահպանել է իր ձևը, իսկ մյուս դեպքում ենթարկվել է բարբառին բնորոշ բաղաձայնական հնչյունափոխության:

Տեր և *տերտեր* բառերի համեմատությունից պարզվում է, որ վերջինս բարբառներում ավելի լայն տարածում ունի:

Տերտեր բառին իմաստային որոշակի տարբերակմամբ հոմանիշ են *տիրացու*, *տերտերացու* բառերը, որոնք արևելյան և արևմտյան խմբակցության բարբառներում ունեն հետևյալ տեսքը՝ *տերտերացու* (Տփղիս), *տերտերցու* (Մանիսա, Պոլիս), *տիրացու* (Բուրդուր, Լոռի, Կաքավաբերդ, Շամախի), *տիրա՛ցու* (Առտիալ, Մեղրի, Վահրավար), *տերա՛ցու* (Ագարակ, Գուդեմնիս, Կուրիս), *տերացու* (Կաքավաբերդ, Շամախի), *դերացու* (Մալաթիա), *դիրացու* (Կարճևան, Պոլիս, Սուշավա), *դիրւնցու* (Գորիս), այսինքն՝ նա, ով պատրաստվում է տերտեր դառնալ կամ հարմար է տերտեր լինելու համար:

Էնկյուրիայի թրքախոս և Արմավիրի չերքեզախոս հայերը համապատասխանաբար գործածում էին *տիրացու* բառի հետևյալ գուգաբանությունները՝ *դերասու* և *դիրացու*, *դիրանցու*:

Տերտերացու բառը Բասենի Տադևրնա՛ն և Ապարանի Մելիք-գյուղում ենթարկվել է արտակարգ հնչյունափոխության՝ ստանալով *տացու* ձևը և ձեռք բերելով նոր իմաստ. նշանակում է «գրագետ, իմաստուն մարդ»: Տվյալ դեպքում առկա է իմաստափոխություն կցորդության հիմունքով. երկու անձերի միջև եղած

կապի (այս դեպքում գրագիտության), ընդհանրության հետևանքով կատարվել է անվանման անցում քահանայից այլ անձի:

Տերտեր բառի հոգնակին բարբառներում ունի «քահանայի գերդաստանը կամ ազգականները» իմաստները և կազմվում է *-ենք, -անք* հոգնակերտներով, օրինակ՝ *դերդրանք* (Ակն), *տերտերենք* (Պոլիս), *տերտերանք* (Եվդոկիա) և այլն:

Հայերենի բարբառներում իմաստային արտահայտության միջոցներով առանձնանում է *երեցկին* բառը, որի հոմանշային շարքում հետաքրքրություն են ներկայացնում նաև *տէր* բառով բաղադրվածները: Դրանք հիմնականում կարելի է ներկայացնել բառակազմական հետևյալ խմբերով՝ ա) *տեր+ուհի*, բ) *տեր+կին(իկ)*, գ) *այ տեր+կին(իկ)*, դ) *տերտեր+կին(իկ)*, ե) *տերի, տիրոջ* կամ *տերտերի կին(իկ)* հատկացուցիչ-հատկացյալ բառակապակցություն:

ա) *Տեր+ուհի*.- Շուրիշկանում և Միլակերտում գործածական է գրականհայերենյան *տիրուհի* ածանցավոր կազմությունը: *Տիրուհի* բառի հնչյունական և հնչերանգային զուգաբանություններից են՝ *տիրուխնի* (Ապարան՝ Վարդենիս, Օհանավան, Արտամետ, Գյաբուլներ, Մանդան, Մուսուն), *տիրուխնի* (Փարպի), *տիրոխնի* (Արարատյան, Հախվերիս, Էզնախոջա, Էջմիածին՝ Արագած, Բաղնոս, Քասաղ, Կոզովիտ, Մասիս, Ուլյա, Նոբաշեն, Բուրաստան), *տիրողնի* (Վան), *տիրոխնի* (Բյուրական), *տըրոխնի* (Մեսրոպավան), *տորոխնի* (Հօրմօրնոթ), *տէրոխնի/տէրոխնը* (Տոսու և Վերին Հնրնոթ, Ուշի, Նախիջևան՝ Գյումուր), *տէրոխնիք* (Դերըկ) և այլն: Ինչպես նկատելի է, *ի>խ* (դ) հնչյունական անցումից բացի բոլոր օրինակներում առկա է *ն* ձայնորդի հավելում: Կարծում ենք, այդ հավելումը կատարվել է *օրհնել* բառիմաստի ազդեցությամբ և համաբանությամբ: Շատախի տարածքում գրանցված է *տըրխորի* տարբերակը, որում, կարծում ենք, առկա է *իխ>խո* դրափոխություն և առաջին վանկի *ր* ձայնորդի համաբանությամբ բարդության երկրորդ բաղադրիչի մեջ *ր* ձայնորդի հավելում:

բ) *Տեր+ա+կին(իկ)*.- *տերակին* (Տիգրանակերտ, Ղարաբաղ), *տիրակին* (Ղարաբաղ, Տանակերտ), *դիրակեն* (Վաղուխաս, Աստապատ), *դիրանկին* (Չազլիկ), *դիրանկեն* (Հաթերք, Ջանյաթաղ, Մաղաղիս, Ղազանչի, Քարագլուխ, Շուշի), *դըրանկեն* (Վերին Հոռաթաղ), *դերակընէզ* (Ուրգուբուն), *դիրանկեն* (Բուրաստան,

Պողոսագոմեր, Առաջածոր), *դժբանակէն*՝ (Ղազարահող) և այլն:

Ինչպես նկատելի է, տվյալ դեպքում Տիգրանակերտի բարբառի օրինակում ևս բառասկզբում ձայնեղացում տեղի չի ունեցել:

զ) *Այ տեր+կին(իկ)*. - *ըղբրակին* (Վաղատուր), *աղ՛րակին* (Վերինշեն, Բոուն), *աղէրակընէզ* (Ղափան), *ըղբրկին* (Վաղատուր) և այլն: Ինչպես նախորդ, այնպես էլ այս բաժնի օրինակները ևս բնորոշ են հիմնականում Ղարաբաղի բարբառի խոսվածքներին:

դ) *Տերտեր+կին*. - *տէրտէրակին* (Դվին, Ղազախ, Ղարաբաղ, Մուծումբար, Կիրովաբադ), *տէրտէրակի՛ն* (Վերին Ճամբարակ), *տիրտիրակին* (Կիրովաբադ), *տըրտըրակին* (Քարահունջ, Նավուր), *տէրտէրագին* (Նորք), *տէրտէրագի՛ն* (Բյուրական), *տէրտէրագին* (Փարպի), *դէրդէրագին* (Աշնակ) և այլն: Ինչպես նկատելի է, -*ում* ճյուղի բարբառների շարքում տեղ է գտել արևմտյան խմբակցության Սասունի բարբառը: Երկրորդ, երրորդ և չորրորդ կետերում բերված օրինակները բացառապես հողակապով են և բնորոշ են արևելյան խմբակցության բարբառներին, մասնավորաբար՝ Ղարաբաղի բարբառի խոսվածքներին: «Մեր հին լեզվի պատմությունն ուսումնասիրողները անհողակապ բարդությունները համարել են բուն ժողովրդական կազմություններ և այդպիսիք հակադրել են հողակապով բարդություններին, որոնք համարվել են զուտ գրական, ոչ ժողովրդական կազմություններ: Այսպիսի մեկնաբանությունը որոշ վերապահությամբ պետք է ընդունել», - գրում է Վ. Առաքելյանը (*Առաքելյան Վ., Հինգերորդ դարի հայ թարգմանական գրականության լեզուն և ոճը*, էջ 128):

ե) Երեցկին իմաստը արտահայտվում է նաև *տեր* կամ *տերտեր* բառերով բաղադրված հատկացուցիչ-հատկացյալ բառակապակցություններով, օրինակ՝ *տէրտէրի կընիկ* (Հին Ջուղա, Նուխի, Շահումյան), *տէրտէրի կընիկ՛* (Մարաղա), *տիրտէրին կընըէկը* (Բուզլուխ), *տէրդըրոջ կընիզ* (Արմալու), *դէրային գընիզը* (Տրապիզոն, Ծինգեր, Միմեր, Բագատյաշա), *դէրդէրին գընիզը* (Տրապիզոն), *դէրո՛ւ կընէզ՛* (Ներքին և Վերին Խոտանան), *դէրի կընէզ՛* (Վինան), *դէրէն կընէզ՛* (Ղասմաշեն, Քեյվան) և այլն: Գործիսում և Խնձորեսկում նշված բառակապակցության սկզբում ավելանում է *այ* կոչական բառ-մասնիկը՝ համապատաս-

խանաբար կազմելով *աղօրը կընը՛կ, ըղէրի կընէկ* բարբառային զուգաբանությունները:

Երեցկին-տիրուհին հասարակ անունից անցում է կատարել հատուկ անվան և լայն տարածում ունի հայերենի բարբառներում: Օրինակ՝ *Տիրուհի* (Մարտակերտ՝ Զագլիկ, Ադաբազար, Առատաշեն), *Տիրուի* (Գարաքյարիս), *Տիրույի* (Զիբլուխու, Բեժանո, Փոզա, Չոլախլու, Մխկյա, Մխկներ, Մուլադանան), *Տիրօհի* (Նախիջևան՝ Մեծոփ), *Տարուհի* (Շուշի), *Տըրուհի* (Քարագլուխ), *Տուրուհի* (Վինան), *Տըրուհի* (Գորիս), *Դիրուհի* (Քոփ, Մարաշ), *Դիրույի* (Ռոդոսթո, Բազմաշեն, Բեյլան), *Դուրուհի* (Մալաթիա), *Դիրիֆի* (Չմշկածագ) և այլն: Չմշկածագի օրինակում ունենք հայերենի մի շարք բարբառներին բնորոշ *հ>ֆ* հնչյունափոխություն (իմա՝ *հող>ֆող, հոր>ֆոր*), որը տվյալ պարագայում կատարվել է ոչ թե բառասկզբում, այլ բառամիջում: Հաճախադեպ են նաև արտակարգ հնչյունափոխությամբ տարբերակները: օրինակ՝ *Տրունի* (Հաթերք), *Տիրուն* (Ծայծակ, Եղվարդ, Բալխո, Նախիջևան՝ Գյումուր, Զըխսամ, Ուլյա, Ալաստան, Կտրած քար, Իրցանք, Հազարեն, Չոլախլու, Հադգոն, Աղավնատուն, Բեժանո, Փիրան), *Տիրուխ* (Ծայծակ, Կվերս), *Տիրօ* (Գետազատ, Կողակ), *Տիրուկ* (Երզնկա), *Դուրիզ* (Մալաթիա), *Դիրուզ* (Ծինգեր, Միմեր, Բազատյաշտա, Ճանիկ, Սամսոն, օրմօնքօյ), *Դիրուխ* (Բեյլան), *Դիրօ* (Մըշկեղ, Փսանք) և այլն:

Նկատելի է, որ երեցկին*>տիրուհին* և հատկանուն *Տիրուհին* բարբառներում բացառապես հանդես են գալիս հնչյունափոխական տարբերություններով և առանձին ձևերով: Միայն Արճեշի Ծայծակ և Խոշաքի Հուրթուկ գյուղերում է *Տիրուխնի* ձևը միաժամանակ նշում է և՛ անձնանուն, և՛ երեցկին:

Տիրուհի հատկանունը կիրառելի չէր Նախիջևանի Փարադաշ բնակավայրում, և տրված բառի *տիրօխնի* հնչյունափոխված տարբերակն ունի միայն *երեցկին* իմաստը:

Տերտեր և *տերտերակին* բառերի բարբառային ձևերի դիտարկումից և համեմատությունից կարելի է եզրակացնել, որ երեցկինը՝ որպես անհատականություն, առանձնակի ուշադրության է արժանանում բարբառախոսների կողմից և ունի ոչ պակաս դերակատարություն, քան քահանան՝ տերտերը:

Տեր բառով կազմությունների մեջ իրենց բովանդակությամբ և ընդգրկված բարբառային սահմաններով առանձնանում են

տյառնընդառաջ և տերընդայս բառերը: *Տյառնընդառաջ* եզրը առաջին անգամ հիշատակված է Կարինի ժողովի կանոնների ցանկում՝ բյուզանդական կայսեր հրամանով գումարված մի ժողովի առիթով: Հետագայում այն լայնորեն ընդունվել է հայերենի բարբառների կողմից: Գ. Տաթևացին համոզված է, որ բառի ծագումը կապված է տոնի պատմության հետ, համաձայն որի՝ քառասնօրյա մանուկ Հիսուսին տանում են Երուսաղեմի տաճար՝ Աստծուն ընծայելու, և Սիմոն ծերունին ու Աննա մարգարեուհին ընդառաջ են գալիս աստվածորդուն: «Եւ ամենքեան վառեալ լուսով եկին ի տաճարն ընդառաջ Տեառն և ասեն՝ *Տէր էանց ընդ այս դուռնս*. ուստի և անուանեցաւ ատուրս տօն ընդառաջ և Տէր ընդ այս» (Գ. Տաթևացի, Նորին քարոզ գալստեան Տեառն քառասնօրեայ ի Տաճարն...», էջ 79):

Մաղաքիա պատրիարք Օրմանյանը բառի բացատրությունը կապում է Դուկասի ավետարանի տեքստում առկա «յանդիման առնել Տեառն» կապակցության հետ, որը նման է «ընդ առաջ Տեառն»՝ «ղեպի Տերը» արտահայտություններին (Դուկ. 2.29-32):

Օրմանյանը *Տերնտաս* տարբերակը կապում է Տիր անվան հետ և բառը վերագրում նախաքրիստոնեական մի այլ տոնի: «Եկին ի տեսանել զեկեալն ի տաճարն և միմեանց ձայն տուեալ ասէին: Տէր ընդ առաջ. և այլք պատասխանեալ ասէին. Տէր ընդ այս»: Իսկ սուրբ Գրիգոր Տաթևացին գրում է. «Տյառնընդառաջ և տերընդայս, զոր ծեփելով ասեմք *տերընդէս*» (տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 4, էջ 402): Բերված օրինակից կարելի է ենթադրել, որ այդ բառերը ստեղծվել են միաժամանակ:

Տյառն ընդ առաջ և *Տերն ընդ այս* արտահայտությունները տարբեր բարբառներում ունեն հետևյալ հասկացական-բառանվանողական զուգաբանությունները՝ *տօռոնց-տօռոնց* (Դազախ), *տառինց-տառինց* (Զուղա, Վաղարշապատ), *տերընտաս/տերընդաս* (Ակն, Այնթափ, Եվդոկիա, Խնուս, Կյուրին, Նոր Նախիջևան, Հին Բայազետ, Քղի), *տերընդաս* (Երզնկա), *տերընդազ/տերընդազ* (Մուշ), *տերընդէզ* (Բուլանուխ), *տըրընդէզ* (Արարատյան, Կարին, Մուշ, Շիրակ), *տենդառաջ* (Վան), *ղըրընդէզ* (Վաղարշապատ), *դառդառանց* (Վայքի բնիկներ), *տերինտառաջ/տանտառէջ* (Վայքի գաղթականներ), *դերընդաս* (Պոլիս), *դարնդաս* (Սվեդիա), *դառանչ* (Վայոց ձոր), *տըրըշթէրէնչ/թըրըշթառէնչ*

(Բուրդուր) և այլն: Ինչպես նկատելի է, երբեմն տեղի է ունեցել նշված երկու բառերի միաձուլում, սկզբնահնչյունների և այլ տարրերի համակցումով հապավական կառույցների առաջացում:

Համշենի բարբառում ունենք *տերնտա* բառը, որ նշանակում է՝ «տան միջի մեծ գերան», որի հետ կապված են որոշակի նախապաշարումներ:

Համշենի Ունիե և Բալլուղ գյուղերում Քրիստոսի այլակերպության տոնը, որ հայտնի է *վարդավառ* անունով, *վառտվառ* հնչյունական տարբերակից բացի ունի նաև *տերընդաս* ձևը: Հաճընի բարբառում *տերն ընդ այս* միջինհայերենյան արտահայտության հնչյունական զուգաձևությունն է *դէյէն դէզ*, որ ունի «կաղանդ, նոր տարի», այսինքն՝ աստվածահայտություն իմաստը:

Ակնհայտ է, որ *վառտվառ* օրինակում տեղի է ունեցել Քրիստոսի հրաշակերպության, իսկ *դէյէն դէզ*՝ ծննդյան և քառասորյա Տաճար գալու տոների անվանումների շփոթություն, որը բավականին տարածված է հայերենի բարբառներում:

Հաճախ բարբառախոսները *տեր* բառով կազմում են նորանոր բաղադրություններ, որոնց վերագրում են նոր իմաստներ: Նման բառերը կրոնական իմաստ չունեն, սակայն դրանց կազմությունը բխում է կրոնական հավատալիքներից:

Այսպես՝ «համրիչ» բառը բազմաթիվ բարբառներում ունի *տերօղորմյա* ձևը: Համրիչի հատիկները գցելիս ընդունված էր ասել՝ «խեր, շառ, աստված», նաև «Տե՛ր, ողորմյա՛»: *Պօպին գիծում ա նէլ տերաղորմին մըտկումը նահամ՝ «խայր, շառ, աստուծ»* (Տանակերտ): Կարծում ենք՝ այս է պատճառ դարձել համրիչը կոչելու *տերողորմյա*: Այս բառի հնչյունական զուգաբանություններից են՝ *տերօղորմյա* (Մուղնի, Քանաքեռ), *տերօղորմա* (Ազնավուլ, Վերին Քրդեր), *տերվօղորմյա* (Վան, Մուրմալու՝ Մոլլադանան), *տերաղորմի* (Տանակերտ, Մեծոփ), *տերօղորմիյա* (Մարաղա), *տերաղորմի* (Հաղբատ), *տերվաղորմա* (Կիրովաբադ), *տերաղորմա* (Շամուտ), *տերաղորմա* (Շավարշավան), *տերաղորմիյան* (Փարադաշ), *տիրիղորմա* (Մեյսուլան, Մեծ շեն), *տիրըղորման* (Պողոսագոմեր), *տըրըղորմյա* (Չափար), *տըրըղորմա* (Բուզլուխ), *տըրըղորման* (Ճարտար), *տըրըղորման* (Չագիկ), *տըրըղօրման* (Մարաղա, Քարազլուխ), *տիրըղօրման* (Շուշի), *տիրըղորմա* (Հաղորթ), *տոիրոնորմա* (Վաղուհաս) և այլն:

Տողորմա (Դաջան), *տողորմի* (Ամբերդ, Դոդս, Վերին Զրդեր), *տեղորմի* (Ծաղկունք, Շահունյան), *տըղորմա* (Վաղուհաս, Խնձորեսկ, Վերինշեն, Բոուն, Նավուր, Ղասմաշեն, Քեյվան, Ներքին և Վերին Խոտանան, Վինան) ձևերը բարբառային հապավական յուրօրինակ կառույցներ են:

Վանի բարբառում *տիրամայր* բառով կերտվել են Աստվածամոր ազդեցությանը վերագրվող մի շարք հիվանդությունների անվանումներ. *տիրամոր ընկնավոր*, *տիրամոր յարա*, (բժավոր վերք, որը բուժելու համար ապավինում էին Տիրամոր վանքին), *տիրամոր ք'ամի* (հոդացավ) և այլն: Բուլանուխի խոսվածքին հատուկ էր *տիրամոր բրբող* (=բողջ) հատկացուցիչ-հատկացյալը՝ «պալար, վերք» իմաստով:

Վան-Վասպուրականի տարածքի Թիմար, Դոնաշեն, Լիմ, Հուռթուկ, Խոշաբ բնակավայրերում սամիթ խոտաբույսը անվանում էին *տերաղօթիկ/տերաղօթիկ'*, օրինակ՝ *Պըռվածքի* (=բքվի) *մէշ տերաղօթիկ տիր* (Դոնաշեն):

Ախալքալաքի Վաչիան գյուղի խոսվածքում կա *տերտեր* բառը՝ «սարդ» իմաստով, օրինակ՝ *Տերտերը ճանճ էր պըռնէ*: Կարծում ենք՝ բառը պիտի ունենա գրության տարբերություն, բաղադրված չէ «տեր» բառից և լեզվի պատմության ներկա փուլում է ձեռք բերել համանունություն: Հնարավոր է, որ սարդը *տերտեր* են կոչում սև գույն ունենալու պատճառով: Տվյալ դեպքում առկա է իմաստային փոխանունություն:

Այսպիսով, *տեր* բառով կազմությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք բնորոշ են և՛ արևմտյան, և՛ արևելյան խմբակցության բարբառներին և հիմնականում կազմում են կրոնական բառապաշարի մաս: *Տեր*, *տերտեր* բառերի դիտարկումը բացահայտեց նաև, որ բարբախոսները չեն տարբերակում կուսակրոն ու ամուսնացյալ քահանայությունը և երկու դեպքում էլ գործածում են նույն բառերը:

Գրականություն

1. ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի բարբառային գրանցումներով տետրեր:
2. Աստուածաշունչ մատենան Հին և Նոր կտակարանաց, Երևան 1997:
3. *Աճառյան Հր.*, Հայերեն արմատական բառարան, Երևան, 1971-1979:
4. *Աճառեան Հր.*, Գաառական գառարան, Թիֆլիս, 1913:

Տօղորմա (Դաջան), *տօղորմի* (Ամբերդ, Դոդս, Վերին Զրդեր), *տեղորմի* (Ծաղկունք, Շահունյան), *տըղորմա* (Վաղուհաս, Խնձորեսկ, Վերինշեն, Բոուն, Նավուր, Ղասմաշեն, Քեյվան, Ներքին և Վերին Խոտանան, Վինան) ձևերը բարբառային հապավական յուրօրինակ կառույցներ են:

Վանի բարբառում *տիրամայր* բառով կերտվել են Աստվածամոր ազդեցությանը վերագրվող մի շարք հիվանդությունների անվանումներ. *տիրամոր ընկնավոր*, *տիրամոր յարա*, (բժավոր վերք, որը բուժելու համար ապավինում էին Տիրամոր վանքին), *տիրամօր ք'ամի* (հոդացավ) և այլն: Բուլանուխի խոսվածքին հատուկ էր *տիրամօր բրբող* (=բողջ) հատկացուցիչ-հատկացյալը՝ «պալար, վերք» իմաստով:

Վան-Վասպուրականի տարածքի Թիմար, Դոնաշեն, Լիմ, Հուռթուկ, Խոշաբ բնակավայրերում սամիթ խոտաբույսը անվանում էին *տերաղօթիկ/տերաղօթիկ'*, օրինակ՝ *Պըռվածքի* (=բքվի) *մէշ տերաղօթիկ տիր* (Դոնաշեն):

Ախալքալաքի Վաչիան գյուղի խոսվածքում կա *տերտեր* բառը՝ «սարդ» իմաստով, օրինակ՝ *Տերտերը ճանճ էր պըռնէ*: Կարծում ենք՝ բառը պիտի ունենա գրության տարբերություն, բաղադրված չէ «տեր» բառից և լեզվի պատմության ներկա փուլում է ձեռք բերել համանունություն: Հնարավոր է, որ սարդը *տերտեր* են կոչում սև գույն ունենալու պատճառով: Տվյալ դեպքում առկա է իմաստային փոխանունություն:

Այսպիսով, *տեր* բառով կազմությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք բնորոշ են և՛ արևմտյան, և՛ արևելյան խմբակցության բարբառներին և հիմնականում կազմում են կրոնական բառապաշարի մաս: *Տեր*, *տերտեր* բառերի դիտարկումը բացահայտեց նաև, որ բարբախոսները չեն տարբերակում կուսակրոն ու ամուսնացյալ քահանայությունը և երկու դեպքում էլ գործածում են նույն բառերը:

Գրականություն

1. ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի բարբառային գրանցումներով տեքստեր:
2. Աստուածաշունչ մատենան Հին և Նոր կտակարանաց, Երևան 1997:
3. *Աճառյան Հր.*, Հայերեն արմատական բառարան, Երևան, 1971-1979:
4. *Աճառեան Հր.*, Գաառական գառարան, Թիֆլիս, 1913:

Քարոզը և գանձը հայերենի երաժշտական
տերմինահամակարգում

Հայ հոգևոր երաժշտարվեստի տերմինաբանության մեջ առանձնանում է կրոնական, բարոյագիտական, խրատական, դավանաբանական մի հասկացություն, որն առնչվում է ինչպես սաղմոսասացությանը, այնպես էլ ճարտասանությանը:

Հայկական քարոզագրությունն առնչվում է 4-5-րդ դարերի հույն և ասորի մատենագիրների (Բարսեղ Կեսարացի, Եվսեբիոս Կեսարացի, Եփրեմ Ասորի, Հովհան Ոսկեբերան, Կյուրեղ Ալեքսանդրացի) երկերի թարգմանությանն ու մեկնությանը: Ակադեմիկոս Գ. Ջահուկյանը գրում է, որ ասորերենի ազդեցությունը հայերենի վրա իրականանում է հիմնականում մատենագրական ճանապարհով՝ ասորերենից կատարված թարգմանությունների միջոցով¹:

Միջնադարյան քարոզների հիմնական բովանդակությունը Աստվածաշնչի դրույթների մեկնաբանումն էր, սակայն հին դարերում *քարոզ* է կոչվել նաև աշխարհիկ և կրոնական իշխանությունների կարգադրություններն ու պատգամները հրապակայնորեն ազդարարողը կամ մունետիկը: Ավելին՝ տերմինն առնչվում է նաև երաժշտությանը՝ կիրառվելով *երածիշտ, նուագածու*, մասնավորապես՝ *փողար* իմաստներով²: Ասորերենում *քարոզ* են կոչվել նաև պատարագի ժամանակ կատարվող այն աղոթքները, որոնցում հիշատակվում էին եպիսկոպոսներ, պատրիարքներ, հոգևորականներ³: Նմանատիպ բացատրություն է տրված նաև ՆՀԲ-ում՝ քարոզը բնորոշելով իբրև *ներբողեան*. «Քարոզ ի գալուստ հոգւոյն սրբոյ. Քարոզ առաքելոց »⁴:

Առավել հետաքրքիր է հասկացության բնորոշումը Հ. Մկրյա-

¹ Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն, Նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 481:

² Նոր բառգիրք հայկազեան լեզուի (ՆՀԲ), հատ. Բ, Վենետիկ, 1837, էջ 999:

³ A Compendious Syriac Dictionary, Oxford, 1957, p. 225.

⁴ ՆՀԲ, նույն տեղում:

նի ուսումնասիրության մեջ. «Ամեն քարոզ անուամբ ընթերցուածք, զորս սարկավազը կը կարդա աղոթքեն առաջ, ընտիր և պատուական խրատներ են, թե ինչպէ՞ս պարտի քրիստոնեայն աղոթք և պատաղանք մատուցանել, և որպի՞սի վարք և առաքինութիւն ունենալ: Արդեն քարոզ բառն ինքնին կը ցուցնէ այս նշանակութիւնն, ուստի կը թուի, թէ այս քարոզք ժողովրդեան դառնալով կը կարդացուին ի հնումն»⁵: Հարկ է հաւելել նաև Կոմիտասի մեկնությունը. «Քարոզ, այսինքն՝ ճառ, որ ընթանում է ձայների որոշ հաջորդականութեամբ, թեև էապէս միևնոյն ձայնի վրա կանգնած են մնում: Յուրաքանչիւր բառի ամեն մի վանկ ունի միայն մի ձայն. բացառութիւն է կազմում վերջին հատուածի վերջընթեր վանկը»⁶: Ուսումնասիրողները նշում են, որ գրական տեքստի եղանակավորման մամատիպ ձևերը համընդհանուր են վաղ շրջանի եկեղեցիների պաշտոնագրության համար, իսկ տարբերությունները ժողովուրդների մեղեդային ելեջների ազգային առանձնահատկություններն են⁷:

Հայ պատմիչների երկերում հանդիպում են տերմինակազմության տարբեր օրինակներ՝ մասնավորապէս բաղադրյալ կազմություններ: օրինակ՝ *Ճշմարտաքարոզ* (Ստ. Տարոնեցի Ասողիկ, «Պատմութիւն տիեզերական»), *քաջաքարոզ* (Ագաթանգեղոս, «Պատմութիւն հայոց»), *քարոզակից, քարոզութիւն, միաքարոզ, քարոզակ* (Եզնիկ, «Եղծ աղանդոց»), *մարգարէաքարոզ* (Թեոդորոս Բոքենատուր, «Ընդդէմ մայրագումացոյն»)⁸: «Հինգերորդ և հատկապէս դասական մատենագրության մեջ հանդիպող բառերի համար, - գրում է Գ. Զահուկյանը, - պետք է ենթադրել դեռևս հնագույն շրջանում սկիզբ առած գործածություն:

Հայերենի ներգրավումը կրոնական ոլորտներում, քրիստոնեության մոտքի հետ կապված ասորական և հունական տերմինների գործածությունը հիմք են տալիս նոր կազմությունների, փոխառյալ և բնիկ հիմքերի զուգորդման: Ասորական և հունական կրոնական բառերից ու տերմիններից կազմվում են նոր հաս-

⁵ Հ. Սլյրյան, Աղօրագիրը ըստ ժամանակագրութեան Հայաստանեայց ս. եկեղեցւոյ, Կ.Պոլիս, 1895, էջ 91:

⁶ Կոմիտաս, Հոգիվածներ և ուսումնասիրություններ, Հայ եկեղեցական երաժշտություն, Երևան, էջ 156:

⁷ E. Wellesz, A history of Byzantine music and hymnography. Oxford, 1961, p. 250. H. Тагмизян, Теория музыки в древней Армении, Ереван, 1977, стр. 154-155:

⁸ Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. Դ, Երևան 1979, էջ 563:

կացություններ, օրինակ՝ եկեղեցի - եկեղեցական, քարոզ - քարոզություն»⁹: Այսինքն՝ մշակութային նոր արժեքները նոր հասկացություններ են ստեղծում:

Հայ հոգևոր երաժշտարվեստում առանձնացնելով *քարոզն* իբրև ուրույն ժանր՝ երաժշտագետ Ա. Արևշատյանն առանձնացնում է տերմինի ևս երկու իմաստ.

ա / քարոզն իբրև *թվերգի* տեսակ, որ ժամերգության ընթացքում գործածվում է որպես *ասերգ*: Այս իմաստով առանձնանում է *պատարագի քարոզը*, որը սարկավագի կողմից կատարվող բոլոր մասերի և քահանայի ընթերցած հատվածների շնորհիվ ստեղծում է որոշակի ծավալուն երաժշտաժխական ձև, և

բ / *ժամագրքի քարոզ*, որն արդեն ինքնուրույն երաժշտական - բանաստեղծական տեսակ է և իբրև այդպիսին՝ հատուկ է միայն հայկական ժամերգությանը¹⁰:

Հայտնի է, որ հայոց առաջին աղոթամատույցը սաղմոսարանն է եղել, որը Աստվածաշնչի թարգմանությունից հետո անջատվել է Հին Կտակարանից և բաժանվել ութ կանոնների հետևյալ կերպ՝ Ա - ԺԷ, ԺԸ - ԼԵ, ԼԶ - ԾԴ, ԾԵ - ՀԱ,

ՀԲ - ՉԸ, ՉԹ - ՃԵ, ՃԶ - ՃԺԸ և ՃԺԹ - ՃԽԷ¹¹: Այդ կանոններից յուրաքանչյուրը եզրափակվում է *մարգարեական օրհնությամբ, քարոզով* ու *աղոթքով*, որ հորինել էին Գ. Լուսավորիչը, Ս. Պարթևը և Հ. Մանդակունին¹²: Վ. Հացունին նկատում է, որ հայոց աղոթամատույցի քարոզներն « ավելի ճոխ էին, ճառածև և հայկական երանգով: Ըստ որում յոյն ժամագիրքը զուրկ քարոզներէ, չէր կրնար մերիմներուն օրինակ ըլլալ»¹³:

Կարելի է եզրակացնել, որ *պատարագի քարոզ* հասկացությունը հիմնվում է համընդհանուր քրիստոնեական ծիսական դրույթների վրա, իսկ *ժամագրքի քարոզը* հեղինակային ստեղծագործության կնիք ունի:

Ժամագրքի քարոզների ակունքները, ինչպես արդեն նշվել

⁹ Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 384-385:

¹⁰ Ա. Արևշատյան, Քարոզի ժանրը հայ հոգևոր երգաստեղծության մեջ, ՊԲՀ, 1992, N 2-3, էջ 200:

¹¹ Ն. Թահմիզյան, Հասարակ օրերի կանոնագրությունները «Էջմիածին», 1971, Դ, էջ 38:

¹² Վ. Հացունի, Պատմություն Հայոց Աղոթամատույցին, Վենետիկ, 1965, էջ 163: Յովհաննու Իմաստասիրի Ամենեայ Մատենագրութիւնը. Վենետիկ, 1953, էջ 42:

¹³ Վ. Հացունի, նշվ. աշխ., էջ 166:

է, վաղբրիստոնեական ասորական պաշտոներգութեան մեջ են: Սակայն եթե ասորական քարոզները սահմանափակվում են լոկ եկեղեցական ասերգի շրջանակներում, ապա հայկական քարոզներն ունենում են յուրօրինակ տարբեր դրսևորումներ և կոչվում *ազատ երգ*: «Քարոզները բազմացած են,- գրում է Հացունին,- քարոզներու մնան ազատ երգեր կը գրուին»¹⁴: Այսինքն՝ *Ժամագրքային քարոզները*, ունենալով որոշակի կանոնական ձևեր, այնուամենայնիվ, քարացած չէին, բացի այդ հայ եկեղեցական երաժշտության մեջ մշտապես կիրառվել են ինչպես կանոնական, այսինքն՝ կատարման համար պարտադիր, անպես էլ ազատ երգեր: Վերջիններս որոշակի ժամանակահատվածում կանոնացվել են, բայց դրանց փոխարեն ստեղծվել են նորերը, որոնց կատարումը դարձյալ միառժամանակ ազատ է եղել: Բնական է, որ նրանք պետք է արտացոլեին նոր ժամանակների գեղագիտական ըմբռնումներն ու ենթարկվեին մշակման: Նրանցից շատերը երկար ժամանակ կիրառվել են նույնիսկ իբրև արտապաշտամունքային երգեր: Այդ առումով հիշատակելի են պարականոն շարականները, զանձ, տաղ, մեղեդի շարքերը¹⁵:

Գր. Նարեկացու օրոք է, որ հնագույն քարոզները որոշակի փոփոխություններ են կրում ինչպես բովանդակության, այնպես էլ կառուցվածքի առումով: Ըստ էության Նարեկացին իր ստեղծագործությունները գրել է որպես կանոնացումից ազատ, տոնական երգեր և հենց այդպես էլ անվանել՝ *երգ* («Գրիգորի է երգս այս»)՝¹⁶: *Արծակ երգ* հասկացությունը տվյալ դեպքում, կարծում ենք, որոշակիորեն առնչվում է հենց *զանձ* կոչվող նորաստեղծ երգերին: Հայկազյան բառարանը *զանձը* մեկնում է իբրև « երգք եւ քարոզք, առեալ ի սկզբնաւորութենէ երգոց Նարեկացոյն. Գանձ լուսոյ, Գանձ բաղձալի »¹⁷:

Քարոզների և զանձերի ընդհանրությունը արձանագրել է նաև Մ. Օրմանյանը. «Գանձ կը կոչուին մեծ քարոզներ՝ որ հանդիսաւորապէս կ'երգուին առտուններն ու երեկոները մեսեդիներէն ետքը, և «Գոհանամք զքէն» և «Լուր ծայնից» աղօթքներէն առաջ:

¹⁴ Վ. Հացունի, նշվ. աշխ., էջ 256:

¹⁵ Ն. Թահմիզյան, Հանդիսավոր օրերի կանոնագրությունները, «Էջմիածին», 1971, Թ, էջ 43:

¹⁶ Գր. Նարեկացի, Տաղեր և զանձեր, Աշխատասիրությամբ Ա. Բյոշկեյանի, Երևան, 1981, էջ 120:

¹⁷ ՆՀԲ, հատ. Ա, Վենետիկ, 1836, էջ 529:

Գանձ անունը պատահաբար գործածուած է, որովհետեւ այդ ձեւով մեծ քարոզներուն առաջինները Ս. Գր. Նարեկացին գրած է, և իր անուան տառերով տուներու սկզբնագիրերը կազմել ուզելով՝ միշտ Գ տառով ու «Գանձ» բառով սկսած է երեք քարոզներն. և անկէ առնուելով ամէն նման ձեւով քարոզներ «Գանձ» կոչուած են»¹⁸: Այսինքն՝ ոչ միայն այդ երգերի սկզբնավորումն է վերագրվում Նարեկացուն, այլև հենց *գանձ* անվանումը պայմանավորված է հեղինակի ստեղծագործությունների սկզբնաբառերով: Ի դեպ, Նարեկացու գանձերի հին ընդօրինակությունները պահպանվել են ոչ թե *գանձ*, այլ *քարոզ* անունով¹⁹: Մատենադարանի ձեռագրերում հանդիպում են տարբեր գրություններ, որոնք վկայում են գանձերի ու քարոզների ոչ միայն միմյանց զուգահեռ գործածության, այլև մեկը մյուսով փոխարինած լինելու մասին: Օրինակ՝ «...Ասա եւ գանձս ընդ քարոզիս» կամ «...թէ գանձ չասես՝ զքարոզս ասա»²⁰: Գրչագիր տարբեր գանձաբաններում Նարեկացու միևնույն երգը հաճախ վերագրվում է եկեղեցական տարբեր տոների և անվանվում մերթ *գանձ*, մերթ *քարոզ*, մերթ էլ *տաղ* կամ *մեղեղի*: Ահա թե ինչու, ՆՀԲ-ում և Հր. Աճառյանի Արմատական բառարանում տերմինները միանշանակ չեն. քարոզը բացատրվում է նախ՝ իբրև *երգ*, այնուհետև՝ *գանձ տօնից*, նաև՝ *տօնական տաղ*²¹: Ըստ երևույթին անվանումների նման բազմազանությունը պայմանավորված է ոչ այնքան գրական կամ երաժշտական առանձնահատկություններով, որքան ծիսական արարողությունների ժամանակ նրանց կատարած դերով: Ահա թե ինչու բանաստեղծական կամ երաժշտական միևնույն կամ գրեթե միևնույն կառուցվածքի մի ամբողջ շարք կամ խումբ հաճախ տարբեր տեսակներ են համարվել և պայմանականորեն էլ նրանց տարբեր անվանումներ են տրվել: Միևնույն հասկացությունը արտահայտելու համար կազմվել են հոմանիշներ, որոնք վկայում են տերմինաբանության դեռևս անկայուն վիճակի մասին: Մարդկային ճանաչողության զարգացման, երևույթների նոր ձևով ընկալման հետևանքով,

¹⁸ Մ. Օրմանեան, Ծիսական բառարան, Անթիլիաս, 1957, էջ 96:

¹⁹ Գր. Նարեկացի, նշվ. աշխ., էջ 23:

²⁰ Մատենադարան, ձեռ. N 3503, էջ 12 Բ, ձեռ. N 4392, էջ 1 Բ:

²¹ ՆՀԲ, հատ. Բ, էջ 999: Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. Դ, Երևան, 1979, էջ 563:

անշուշտ, փոխվում է նաև հասկացությունների ըմբռնումը. այս դեպքում տերմինը թեև պահպանվում է, բայց կրում է իմաստային որոշ փոփոխություն: Ուստի կարելի է եզրակացնել, որ թե՛ *քարոզը* և թե՛ *գանձը* փաստորեն միևնույն նպատակին են ծառայում, այդ պատճառով էլ հաճախ նույնանում և փոխարինում են միմյանց:

Այսպիսով, *քարոզը* և *գանձը* արձանագրվել են հայերենի նախագրային շրջանում. առաջինը՝ սեմական լեզուներից կատարած փոխառությունների ցանկում, երկրորդը՝ հնագույն շրջանի իրանական փոխառությունների հիմնական շերտում: Առանձնացնելով հայ-ասորական էթնիկական փոխազդեցության, ասորական կրոնաքարոզչական գործունեության և դպրոցական ազդեցության այս երեք շրջանները՝ Գ. Ջահուկյանը հայերենի և ասորերենի բառային զուգադիպությունների միջև հաստատում է նույնիսկ հնչյունական համապատասխանություններ ($k - p$)՝ *kārōzā - քարոզ*²²: Ինչ վերաբերում է իրանական փոխառություններին, ապա դրանք ևս բնութագրվում են հնչյունական մի շարք առանձնահատկություններով, հատկապես իրանական բաղաձայնների և ձայնավորների՝ հայկականների հետ ունեցած փոխհարաբերությամբ: Հայերենի իրանական փոխառություններին բնորոշ է *ն*-ից հետո հանդիպող *ժ* - *ն* ջ - ի դիմաց (իրանական *j* և հայկական *ժ*, օրինակ՝ *գանձ*, բրինձ. հմմտ. հին պրս. **ganza* - միջ. պրս. *ganj*)²³:

Ակնառու բազմիմաստությունը տեղիք է տալիս տերմինային համանունության, ինչպես՝ *գանձ* - հարստություն, *գանձ* - երաժշտական - բանաստեղծական տեսակ: Ճիշտ է, ընդհանրապես բազմիմաստությունը և հոմանշությունը դժվարացնում են տերմինների ճիշտ ընկալումն ու կիրառությունը, այնուհանդերձ, դարերի ընթացքում բյուրեղացած *քարոզ* և *գանձ* հասկացությունները հայ հոգևոր երգարվեստի կարևոր օղակներից են և իբրև հայոց եկեղեցական ծիսակարգին առնչվող հասկացություններ՝ հեղինակային դրսևորումներ են և այսօր էլ երգվում են մեր եկեղեցում:

²² Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 475:

²³ Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 558:

ԱՍՈՐԵՐԵՆԻՑ ՓՈԽԱՌՅԱԼ ԿՐՈՆԱԿԱՆ ՄԻ ԶԱՆԻ
ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԻՍԱՍՏԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՍԻՆ

Հայերենի ասորական փոխառություններին անդրադարձել են Հ.Հյուբշմանը, Հ.Աճառյանը, Գ.Ջահուկյանը, Լ.Հովհաննիսյանը, Ա.Փերիխանյանը, Ն.Սկրտչյանը և ուրիշներ:

Ըստ Աճառյանի՝ ասորերենից կատարված փոխառությունների ընդհանուր թիվը 209 բառ է, որոնցից 120-ը գործածական են հայերենի բարբառներում կամ արդի հայերենում: Գ.Ջահուկյանը այդ բառացանկից առանձնացնում է *կապելայ*, *կոմս*, *մամոնայ*, *մափորոտն*, *սինհոդոս*, *մարանաթայ* բառերը՝ գտնելով, որ այս բառերը ասորերենը իր հերթին փոխառել է հունարենից, այսինքն՝ այս բառերը միջնորդավորված փոխառություններ են:

Աճառյանի բառացանկի մեջ կրոնական տերմինահամակարգին են պատկանում *հետեյալ բառերը՝ արեղայ*, *ադեն «եդեն»*, *առնակ*, *ատեսարոն «4 միախառնված ավետարան»*, *բուտ «կրոնական տեսուչ»*, *դերի «վանք»*, *Իբրամեն «Գիրք մնացորդաց»*, *խարամանի «ղև»*, *ծոմ*, *մարանաթայ «նզովք»*, *մծղենայ «աղանդ»*, *նածրացի «քրիստոնյա»*, *շարապայ «հորք կուռք»*, *շուշիայ «մասուրի շոր»*, *պրակսաւաթայք «Գործք Առաքելոց»*, *սատանայ*, *սիդա «բուրվառ»*, *սինհոդոս «ժողով»*, *սերովբե*, *քահանայ*, *քադդեայ (քադդեայ) «հմայող»*, *քարոզ*, *քերովբե*, *քուեայ*, *քուրմ (25 բառ) (ՀԼՊ, I, 336-342):*

Այս բառերին կարելի է ավելացնել *խորզ «քուրծ»*, *քուսիթայ «կնգուղ»*, *մամոնայ «սատանայ»*, *մար «տեր»* բառերը:

Ջահուկյանը հայ-ասորական հարաբերությունները բաժանում է երկու շրջանի՝

1. հայ-ասորական էթնիկական փոխազդեցության փուլ. մ.թ.ա. 2-րդ դարից մ.թ. 2-րդ դար. այս փուլում հայերի և ասորիների շփումը տեղի է ունենում ինչպես աշխարհագրական հարևանության, այնպես էլ քաղաքական սերտ հարաբերությունների պայմաններում.

2. ասորական կրոնաքարոզչական և դպրոցական ազդեցության շրջան՝ մ.թ. 3-րդ դարից 4-րդ դդ. այս փուլում ասորիները, որպես քրիստոնեություն ընդունած ժողովուրդ, լայն քարոզչու-

թյուն են սկսում Հայաստանում, իսկ հայերի՝ քրիստոնեություն ընդունելուց հետո ազդում հայերենի վրա ինչպես կրոնական-եկեղեցական բնագավառում (հայկական եկեղեցում ծիսական լեզուներ են եղել ասորերենը և հունարենը), այնպես էլ դպրոցական ուսուցման միջոցով (Ջահուկյան, 1987, 476):

Ակադ. Գ.Ջահուկյանը (Ջահուկյան, 475-485) նախագրային շրջանից ասորերենից հայերենին անցած բառերի մեջ նշում է կրոնին և նախապաշարմունքին վերաբերող հետևյալ բառերը՝ *աբեղայ, ադեն, խարամանի, ծոմ, հեթանոս, մծղենայ, սատանայ, սրո(վ)բե, քերովբե, քարոզ, քահանայ, քուրմ, քուսիթայ, քաղդեայ, մաշկն «վրան, խորան»* (15 բառ):

Ջահուկյանը հնարավորինս առանձնացնում է վաղ արամեական և համեմատաբար ուշ շրջանի բուն ասորական փոխառությունները: Կրոնին վերաբերող վերոթվարկյալ բառերը բուն ասորական են. վաղ արամեական շրջանից կատարված փոխառություններ չեն արձանագրված:

Լ.Հովհաննիսյանի՝ հիմնվելով դարից վկայված ասորական բառերի ցանկում (88 բառ) կրոնական բնույթի են հետևյալ բառերը՝ *խորզ, ծոմ, հեթանոս, սատանայ, սրովբե (սերովբե), քահանայ, քաղդեայ, քարոզ, քերովբե, քուեայ* «հմայական քար», *քուրմ, քուսիթայ* «կնգուղ» բառերը (12 բառ) (Հովհաննիսյան, 89-90):

Այժմ անդրադառնանք այդ բառերից մի քանիսին՝ նկատի ունենալով վերոհիշյալ դասակարգումները:

Ադեն (.ադին) - ասորերեն *aden* ձևից, որ նշանակում էր «դրախտ, եդեն»: Հայերենը Ս.Գրքի թարգմանության ժամանակ *եդեն*-ը տառադարձել է հունարենից, որն էլ իր հերթին տառադարձված էր եբրայերեն *eden* բառից: Եբրայերեն բառը համապատասխանում է արաբերեն «ախորժելի կյանք, հաճույք» բառերին, դրա համար էլ Ս.Գրքում երբեմն *եդեն*-ը թարգմանված է «դրախտ փափկութեան»: Օր.՝ «Եւ առ Տէր Աստուած զմարդն զոր արար, եւ եղ զնա ի դրախտին փափկութեան գործել զնա եւ պահել» (Ծն. Բ.15):

Աշխարհաբարում թարգմանվել է «բերկրության դրախտ»: Օր.՝ «Տէր Աստուած իր ստեղծած մարդուն տեղավորեց բերկրության դրախտում, որպէսզի սա մշակի ու պահպանի այն» (Աստուածաշունչ, 1999):

Եդեն բառը «Բառարան Սուրբ գրոցում» բացատրվում է.

«Անուն ասիական գաւառի յորում էր դրախտը» (ԲՄԳ, 151): Այս բացատրությանը տարբեր մեկնություններ են տրվել: *Եդեմ*-ը, որ, ըստ Աստվածաշնչի, բերկրության վայր էր, գտնվում էր Արևելքում: Սրանից ելնելով՝ շատերը եդեմը կամ դրախտը զետեղում են Հայաստանում, մյուսները՝ այլ վայրերում¹: Սակայն այդ հարցը այդպես էլ լուծված չէ:

Եդեմ արմատը, ըստ ՆՀԲ-ի, նշանակում է «փափկութիւն. տեղի դրախտին և դրախտն» (ՆՀԲ, 646): Այս արմատից կազմված նշվում են *եդեմաբուղխ* (*եդեմաբուխ*), *եդեմածին*, *եդեմական*, *եդեմահիւս*, *եդեմային*, *եդեմատունկ* բառերը: Ըստ Մալխասյան-ցի՝ «1. փափկութեան դրախտը, որի մէջ ըստ կրօնական ասանդութեան նախաստեղծներն ապրում էին մինչև մեղանշելը, 2. փխբ. վայելչութեան տեղ»: *Եդեմ* բառը «դրախտ» նշանակությամբ գործածվում է ժամանակահիշատակից հայերենում: Այն ոչ միայն կրոնական տերմինաբանական բառ է պատկանում, այլև գործածվում է որպես համագործածական բառ: *Ադեմ* ասորերենից փոխառյալ բառը աշխարհաբարյան փուլում չի գործածվում. գրաբարում էլ նրա գործածությունը հաճախական չէ:

Առնակ – Աճառյանը փոխառություն է համարում ասորերեն *harnaga* բառից, որ նշանակում էր «շնագայլ»: Բառը ՆՀԲ-ում վկայված չէ (հավանաբար կապված բառի՝ հեթանոսական կրոնին առնչվելու հետ): *Առնակ* բառը բացատրվում է «երևակայական ոգի կամ չար դև, որ հոգիներն առնում է՝ գրող, կրող» (ՀԲԲ, 1, 230): Ըստ Աճառյանի՝ *harnaga* ասորերեն բառը հայերենում պիտի դառնար *հառնագ*, բայց «հայ բերանների մէջ հայաձև կերպարանք է ստացել» (ՀԱԲ, 1, 261):

Այս բառին և նրա ծագմանը անդրադարձել է Ղ.Ալիշանը «Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը» աշխատության մէջ: «Ոգեղեններ» գլխում նա գրում է. «Այն հին ժամանակներում, բացի քաջքերից ու նրանց նմաններից, հավանորեն կար առնակ կոչված հոգեհան մի ոգի»: Նա բերում է օրինակը Պրոխորոնի գրվածքից, որտեղ Կինուպաս անունով կախարդը ասում

1 Այս մասին ուշագրավ տեղեկություններ է հայտնում Հ.Մարտիրոսյանը «Հայաստանը և աշխարհաբարման մասին հնագույն պատկերացումների ակունքները» հոդվածում (Աստվածաշնչական Հայաստան, Երևան, 2005, էջ 53-63) վկայակոչելով Եգեկիելի մարգարեությունը (Եգեկիել, ԻԸ, 13-16) և Ղևոնդ Ալիշանի վկայությունները (Ղ.Ալիշան, Հայաստան առաջ քան զլիմելն Հայաստան, Վեներտիկ, 1904, էջ 11) նա գտնում է, որ «...Եդեմը Մեծ Հայքի տարածքն է»:

է. « Առաքեմ Առնակ չար ի տուն՝ յորումէ, և պահանջեմ զհոգի նորա ի մմանէ» (Ալիշան, 118-119): Ալիշանը եզրակացնում է, որ ինչպէս *Գրող*-ը, որ տանում է հոգիները, այնպէս էլ «*Առնողն*» է տանում հոգիները, և *առնակը* ու *գրողը* կամ չար հրեշտակը նույնանում են: Ալիշանը բառի ծագումը կապում է «առնել» բայի հետ և *առնակ*-ը և *գրող*-ը համարում է հոմանիշներ: *Առնակ* ամատից կազմված բառերը գործածվում են հայերենի բարբառներում՝ *առնակավոր* (կատաղի շուն, չար), *առնակային*, *առնակաշուն* (Վանի բարբառ):

Վանի բարբառում «առնակաշուն» բառի առկայությունը կասկածելի է դարձնում *առնակ* բառի ասորական ծագում ունենալը: Ավելի հավանական է թվում *առնել* բայի հիմք + ակ վերջածանցով կազմված կառույցը, այսինքն՝ առնող-տանող (չար հոգի):

Ատեսարոն – Այս բառը սխալ ըմբերցման հետևանք է: Խոսքը վերաբերում է Տատիանոս Ասորու (մ.թ. 2-դդ.) կազմած սուրբ գրական առաջին համաբարբառին: Վերջինս ձեռնամուխ էր եղել չորս ավետարանների բնագրերը իրար հետ համեմատելու քննական աշխատանքին (փաստորեն ավետարանական համաբարբառ կազմելու առաջին փորձն էր): Հունալատինական աղբյուրներում Տատիանոսի կազմած այս բնագրին տրվում է diatessaron անունը, որը գալիս է հունարեն τὸ διὰ τεσσάρων εὐαγγέλιον քերականական արտահայտությունից, որը նշանակում է «աւետարան ի չորից», այսինքն՝ Ավետարան, որը կազմված է չորս Ավետարանների միջոցով: Ասորական աղբյուրներում ևս օգտագործվում է հունական ծագում ունեցող diatessaron բառը, բայց նրա բուն ասորական անվանումն է evangelion dāmēhallētē², որ նշանակում է «միախառնվածների (խառն բնագրերի) ավետարան, այսինքն՝ մի բնագիր, որի մեջ չորս ավետարանները միախառնված էին, համաբան ու համաբարբառ, և այս առումով էլ այս անվանումը հայացվել էր *համաբարբառ աւետարան*» ձևով: Տատիանոսի կազմած այդ ավետարանի մեկնությունը գրել է Եփրեմ Խուրի Ասորին, որը 5-րդ դարում թարգմանվել է հայերեն և կրել «Մեկնութիւն Աւետարանի համաբար-

2 Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Ն.Ս.Անասյան, Հայ համաբարբառային գրականությունը և հայ մատենագրության համաբարբառը, «Էջմիածին», 1971, թիվ 11 և Հ. Էսապալյան, «Հանդես ամսօրեայ», 1935, էջ 571-596:

բառ, գոր արարեալ է տեառն Եփրեմի Խուրին Ասորոյ»³: Հայ թարգմանիչը ասորերեն բառի բառասկզբի ժ-ն համարել է նախամասնիկ և հանել այն:

Մարանաթայ – Սա նզովքի բանածն է, որ մեկ անգամ գործածված է Նոր Կտակարանում՝ «Եթէ ոչ որ սիրէ զտէր Յիսուս, եղիցի նզովեալ մարանաթայ» (Ա. Կոր. ԺԶ. 22): Բառի բացատրությունը ՀՀԲ-ում հետևյալն է. «է սա երկու բառ՝ խառն ի բարբառոյ եբրայեցոց և ասորոց. վասնզի ընթերցեալ լինի այսպէս. մարան աթայ, որ թարգմանի՝ տէր մեր գայ: Եւ զայս եբրայեցիք բազում անգամ ի գործ ածէին ի նզովելն կամ ի յանիծանելն զոր, որով դիտէին ասել տէր եկեացէ դատել և պատուհասել զքեզ» (ՀՀԲ, 1749): Ասորերեն *mar-an-ata* արտահայտությունը Աստվածաշնչի թարգմանության ժամանակ տառադարձվել է հայերեն: Հունարենում նույնպես պահպանվել է այդ անեծքի բանածնը: ՆՀԲ-ի բացատրությունը համարյա համընկնում է ՀՀԲ-ի բացատրության հետ. այստեղ ավելացված է «մարանաթայ, այսինքն տէր գայ, մի անյոյս լինիք, և ըստ արժանեացն հատուցանէ» (ՆՀԲ, 2, 217):

Մծղնեայ – ասորերեն *mysallyyane* բառից, «մեսաղեան» (աղոթական) կոչված քրիստոնեական աղանդ էր: Բառը ասորերեն (արամեերեն) *seluta* «աղոթող» արմատից է (ՀԱԲ, 3, 330): Փոխաբերական իմաստով նշանակում է «պիղծ, զազիր, զզվելի»։ ՆՀԲ-ն բառը բացատրում է «պիղծ, պղծագործ, փծագործ որպէս պաղիկեանք, բորբորիտք, թոնդրակեցիք, սողոմայեցիք» (ՆՀԲ, 2, 284): Այս բառից են *մծղնեացի, մծղնի, մծղնագործութիւն, մծղնութիւն* բառերը:

Մծղնությունը քրիստոնական աղանդ էր, որ ծագել էր Միջագետքում, ապա տարածվել Ասորիքում, Եգիպտոսում, Հայաստանում 4-5-րդ դարերում: Այս աղանդը տարածվել է Հայաստանում և ընդգրկել ոչ միայն աշխարհականների, այլև հոգևորականների շրջանակը: Աղանդի հետևորդները խիստ մարմնական պատիժների են ենթարկվել, ճակատներին աղվեսադրոշմ է խարանվել, երեխաներին հեռացրել են ծնողներից և հանձնել հոգևորականների խնամքին: Հայ մատենագրության մեջ նրանց մասին ուղղակի տեղեկություններ չկան, այլ նրանց մասին լուտանքներ են: Այսպես, Եզնիկ Կողբացին նրանց մասին գրում

3. Ս. Եփրեմի Մատենագրութիւնը, հ. Բ, Վենետիկ, 1836, էջ 431:

է. «Չամուսնութիւնն սուեալ յԱստուծոյ՝ պղծութիւն համարիցին, որպէս Մարկիոնն և Մանի և մծղնեայք» (Եզնիկ, 287): Այսինքն՝ այս նախադասութիւնից պարզ է դառնում, որ *մծղնեայքունը* մերժում էր ամուսնութիւնը:

Մծղնեների գլխավոր շեղումը քրիստոնէութիւնից այն էր, որ նրանք արհամարհում, մերժում էին եկեղեցական խորհուրդներն ու առհասարակ եկեղեցական աստվածպաշտութիւնը: Նրանց համար իսկական կրոնական խորհուրդը աղոթքն էր: Աղոթքը բավական էր բոլոր մեղքերից ազատվելու համար⁴: Նրանց մասին ահա թէ ինչ է գրում «Կանոնագիրք հայոց»-ը. «...բազմանային որք յաճախէին ի գործս պղծութեան... և ոչ ոք էր, որ քաղէր զորոմն և սրբէր զգաղձն վնասակար, քանզի արմատացեալ էր սէզն և տարածանէր օր ըստ օրէ. լինէր հաճախումն մծղնեից և այլոց չարեաց՝ կնահանեից, պռոնկաց, գողոց, ամենայն խտտորմակ չարագործաց յաշխարհիս Հայոց, ի մէջ տանս Թորգոմայ, և լինէր սուզ և տրտմութիւն: Որք էին ի ժամանակին նախանձախնդիր վարդապետք, եպիսկոպոսք, երիցունք, որք ունէին զուխտ սրբութեան, պաշտոնեայք Քրիստոսի և մանկունք սրբոյ եկեղեցւոյ, այլ և յուխտէ քահանայիցն ոչ գնային ըստ սրբութեան արդար ճանապարհին»⁵: Ահա այս հակաբարոյական արարքների համար *մծղնեայքունը* բառը ստացել է «պիղծ» իմաստը՝ կորցնելով իր սկզբնական «աղոթող» իմաստը:

Հետագայում *մծղնեայքունը* համեմատվել է թոնդրակյան աղանդի հետ:

Հավանաբար, կարող ենք արձանագրել բառիմաստի շրջում:

Նածրացի – ասորերեն *nasraya* բառից, որ նշանակում էր «քրիստոնյա»: ՆՀԲ-ն այս գլխաբառի բացատրութիւնը հղում է «Նազարացի» և «Նազովրեցի» բառերին, իսկ «Նազովրեցի» բառի բացատրութիւնն էլ հղում է «Ուխտատու» բառին: Վերջինս բացատրվում է. «Ուխտադիր. որպէս նազովրեցի. եբր. նազիր, նեծիր. որ և նուիրական. Սրբեալ. Աղօթական. Ընծայաբեր» (ՆՀԲ, 2, 543):

Նազովրեցի բառը Նոր կտակարանում հանդիպում է Հովհաննեսի ավետարանում. «Գրեաց եւ տախտակ մի Պիղատոս, եւ եղ ի վերայ խաչին. եւ էր գրեալ. Յիսուս Նազովրեցի, թագաւոր հրէից» (Յովհ. ԺԹ. 19): Հայերենում այն ստուգաբանվում է որ-

4. Մ. Օրմանյան, Ազգապատում, 1, Ս.Էջմիածին, էջ 296:

5. Կանոնագիրք հայոց, 1964, էջ 425-426:

պես նազարեթցի: Ռուսերենում այս նախադասությունը այսպես է. “Пилат же написал и надпись и поставил на кресте. Написано было Иисус Назорей, царь Иудейский” (Иоан. 19.19): *Նազարեթ* տեղանունը բազմիցս գործածված է Նոր կտակարանում և բազմաթիվ եր մեր թարգմանիչներին, սակայն նրանք օգտագործել են *նազովրեցի* բառը: Այդպես է նաև ռուսերենում ու հունարենում:

Նազովրեցի բառի մասին ուշագրավ դիտողություններ ունի Կ.Դավաթյանը: Նա իրավացիորեն գտնում է, որ *նազովր(եցի)* բառը համապատասխանում է հունարեն *նազարայոս* և ռուսերեն *назорей* բառերին և նշանակում է «նվիրաբերված աստծուն»⁶: Հեղինակը զուգահեռ է անցկացնում Հին կտակարանից Սամվիսոնին նվիրված հատվածի հետ, որտեղ հայերենում արձանագրված է *ուխտաուր* բառը. «Ձի ահա յղասցիս դու եւ ծնցիս որդի, եւ երկաթ մի ելցէ ի գլուխ նորա. զի ուխտաուր Աստուծոյ եղիցի մանուկն անդստին յորովայնէ» (Դատ. ԺԳ. 5), ռուսերեն թարգմանության մեջ՝ “Ибо вот, ты зачнешь и родишь сына, и бритва не каснется головы его, потому что от самого черва младенец сей будет назорей Божий” (Суд. 13.5):

ՀՀԲ-ն *ուխտաուր* բառի բացատրության մեջ գրում է. «Ըստ այսմ էին և ի հին օրէնս ոմանք ի բարեպաշտ արանց, որք ուխտիւք նուիրեալ զանձինս իւրեանց Տեառն հրաժարէին ի գինւոյ և ոչ սափրէին զգլուխս իւրեանց: Եւ ի սոցանէ ոմանք ընծայեալ լինէին մշտենջենաւոր ուխտիւ. որպիսի էր Սամուէլ և Սամվիսոն» (ՀՀԲ, 853):

Ժամանակի ընթացքում *նազովր(եցի)* բառի իմաստը փոխվել է և նույնացվել *նազարեթցի* բառի հետ: *Նազովրեցի* բառի արմատը համապատասխանում է հունարեն *նազոր* բառին: Այստեղից հետևում է, որ Պիղատոսի մեղադրանքի մեջ կարևորվում է ոչ թե Քրիստոսի որտեղացի լինելը, այլ նրա առաքելությունը: Աստվածաշունչ մատյանի հայ թարգմանիչները ճիշտ են թարգմանել բառը՝ նկատի ունենալով *ուխտաուր* բառի *ուխտաւորի*, *ուխտ ունեցող*, *ընծայաբեր* իմաստները (ՆՀԲ, 2, 543):

Քուեայ (*քուէ,քւայ, քեայ, քւայ*) – այս բառը հայերենը փոխառել է արամեերեն *kuwyā* բառից, որն էլ իր հերթին փոխառել է հունարեն *κυβεια* «խորանարդ, վեզ» բառից (ՀԱԲ, 4, 590): Իր նախնական իմաստով բառն ունեցել է «կախարդի հմայական

6. Կ.Դավաթյան, «Նազովրեցի և հարակից հարցեր», ՊԲՀ, 2007, էջ 186-191:

քար», ապա «խաղալու վեգ» և «խորանարդ» նշանակությունները, որից *քուեխարցութիւն* և *քուական* բառերը: ՆՀԲ-ում բառի բացատրությունը հետևյալն է. «նշանակ բախտի կամ ընտրութեան վիճակ և խիճ կամ քար վասն խաղալոյ» (ՆՀԲ, 2, էջ 1011): Օրինակներ՝ «Եւ գգինի եւ զարբեցութիւն ընկալալ սիրտ ժողովրդեան իմոյ: Ի քուեայս հարցանէին, եւ գաւազանօք նորա պատմէին մմա» (Ովս.Դ. 12): «Թերևս ճանաչել կարասցուք զդիւք քուեիցն զկախարդն» (Բուզանդ, 214): «Եւ ինքն անցեալ ըստ ուղին՝ իջանէր ի հմայս քաղղէութեան, զքուեա հարցանէր» (Բուզանդ, 213): Հետագայում բառը ենթարկվել է իմաստափոխության: Նրա առաջնային իմաստը դարձել է «քվեարկության ժամանակ հոգուտ կամ ի վնաս մեկի տրված ձայն», «որևէ առարկա (թերթիկ, առարկա), որով քվեարկում են»: *Քվե* բառի այս իմաստափոխությունն ունի իր հիմքը. Հին Հունաստանում ընդունված էր ընտրություններն անցկացնել հրապարակային ձևով. դրվում էր երկու տակառ, որոնց մեջ ընտրողները գցում էին սև կամ սպիտակ *խիճ-քվե*ն (դրանք հավանաբար ունեցել են խորանարդի ձև), այսինքն՝ քվեարկում էին: Իհարկե, հետագայում *խիճք-վեով* չէին քվեարկում, սակայն մնացել են *սև քվե* և *սպիտակ քվե* կապակցությունները՝ «դեմ» կամ «կողմ» նշանակություններով:

Համառոտագրություններ

Ավիշան – Դ.Ավիշան, Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Երևան, 2002 (գրական արևելահայերենի վերածեց Վ.Գ.Բարսեղյանը):

ԱՀԲԲ – Է.Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 1-2, Երևան, 1976-1978:

ԲՍԳ – Բառարան Սուրբ գրոց, Կոստանդնուպոլիս, 1881:

Բուզանդ – Փաստոսի Բուզանդացույ Պատմութիւն հայոց, Ս.Պետերբուրգ, 1883: Եզնիկ – Եզնիկայ Կողբացույ Բագրևանդայ եպիսկոպոսի Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826:

ՀԱ – Հանդէս ամսօրեայ:

ՀԱԲ – Հ. Աճառյան, Հայերեն արձատական բառարան, հ. 1-4, Երևան, 1971-1979:

ՀԲԲ – Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, Երևան, 1944-1945:

ՀԼՊ – Հ.Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. 1-2, 1940-1951:

ՀՀԲ – Բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1749:

Հովհաննիսյան – Լ.Հովհաննիսյան, Գրաբարի բառալաշարը (V դ.), Երևան, 2006:

ՆՀԲ – Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1836-1837:

Ջահուկյան – Գ.Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987:

ՊԲՀ – Պատմա-բանասիրական հանդես:

ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՅԵՐԻ ՎԵՐԱԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՄԻ ՓՈՐՁ

Հին հայերենի բայերի դասակարգման ընդունված եղանակը (ըստ լծորդությունների, ըստ ներկայի հիմքի կազմության) ուսուցողական նպատակներով արդարացված էր եւ է: (Յիշենք, որ գրաբարի քերականության գրքերի մեծ մասը ուսումնական ձեռնարկներ են):

Խոնարհման հարացույցներից բխող կանոնները (կատարյալի հիմքի կազմություն, կատարյալի թեքություններ եւն: ձեւակերպված են ըստ յուրաքանչյուր լծորդության ու ներկայի հիմքի տիպի: Դրանք յստակ են -ե-, -ի-, -ա- լծորդությունների համար: Այս կանոններից շեղվող բայերը դիտվում են անկանոն, զարտուղի:

-Ու- լծորդության պարզ բայերը նույնպէս կանոնական են (ուրույն կանոնով, որի դրսեւորումը մյուս լծորդություններում անկանոնություն է): Այս լծորդության ածանցավոր բայերը, թէեւ ունեն կանոնական խոնարհում, բայց ի տարբերություն -ե-, -ի-, -ա- լծորդությունների բայերի ելակէտային (ներկայի հիմքում) ձեւական որեւէ տարբերակիչ չունեն:

Իսկ եթէ մենք փոխենք դիտարկման անկյունը, այսինքն գրաբարի բայական համակարգը դիտենք կատարյալի տեսանկյունից՝ ելակէտ ընդունելով անցյալ կատարյալի բայածելը:

Այս պարագային մեր դասակարգման համար մենք կունենանք երեք հարաչափ՝

ա) կատարյալի հիմքի կազմությունը.

բ) այդ հիմքերի հետ անցյալ կատարյալի թեքությունների զուգորդելիությունը.

գ) կատարյալի եւ ներկայի հիմքերի հարաբերակցությունը:

Ըստ անցյալ կատարյալի հիմքի կազմության բայերը երեք խմբի են բաժանվում.

ա) *արմատական* – ած-(ի / -այ), թող-(ի / -այ), նստ-(այ), անց-(ի), անկ-(այ), ջեռ-(այ), մեղ-(այ), հատ-(ի / -այ), առ-(ի / -այ), բարձ-(ի / այ), դարձ-(այ).

բ) -ի թույլ բաղադրիչով – փախի-(այ), սառի-(այ), երկի-(այ), յանցի-(այ), հարի-(այ), ծանի-(այ)

գ) -գ-ական – կարդ-աց-(ի), վագ-եց-(ի), իմ-աց-(այ), խօս-եց-(այ), յե-ց-(այ), զգե-ց-(այ), աղ-աց-(ի / -այ), սիր-եց-(ի / -այ), լ-ց-(ի / -այ):

Այս հիմքերի հետ անցյալ կատարյալի թեքությունների երկու շարքերի (ներգործակերպ, ակտիվ – Թ1, կրավորակերպ, պասիվ – Թ2) զուգորդելիությունն այսպիսին է.

ա) արմատական հիմք

1. + Թ1 անց-ի

2. + Թ2 անկ-այ, ջեռ-այ, նստ-այ, մեղ-այ

3. + Թ1 / Թ2 թող-ի / -այ, ած-ի / -այ, հատ-ի / -այ, առ-ի / -այ

բ) -ի թույլ բաղադրիչով հիմք

1. + Թ2 փախի-այ, սառի-այ, երկի-այ, յանցի-այ, յարի-այ, ծանի-այ

գ) -ց-ական հիմք

1. + Թ1 կարդ-աց-ի, վագ-եց-ի,

2. + Թ2 իմ-աց-այ, խօս-եց-այ, յե-ց-այ, զգե-ց-այ

3. + Թ1 / Թ2 աղ-աց-ի / -այ, սիր-եց-ի / -այ, լ-ց-ի / -այ

Այստեղ ընդգրկելով երրորդ հարաչափը (ներկայ-անկատարի հիմքի կազմությունը: Էս կստանանք բայերի հետեւյալ խմբերը (դասերը).

1. Կատարյալ՝ արմատական (պարզ) – անկատար (ներկայ)՝ արմատական (պարզ):

Այս ենթախումբը պայմանականորեն կանվանենք *արմատական դաս*:

Այստեղ ընդգրկվում են -ու- լծորդության բոլոր պարզ բալերը, -ե- լծորդության ածեմ, բերեմ, հանեմ հեղուսեմ բայերը, -ի- լծորդության նստիմ բայը:

թող-ի / ալ	թող-ուի	թող
ած-ի / ալ	ած-էի	ած
նստ-ալ	նստ-էին	իստ

Նշենք այս դասի բայերի առանձնատկությունները.

1. -Ու- եւ -ե- լծորդության բայերը ներգործական են եւ կատարյալում ստանում են առաջին շարքի թեքություններ (Թ1), իսկ կրավորական առումով՝ երկրորդ շարքի թեքություններ (Թ2):

2. Նստին բայը չեզոք է եւ ստանում է երկրորդ շարքի (Թ2: թերույթներ:

3. Բոլոր բայերի բուն հրամայականի եզակին արմատական է, անթերույթ:

4. Այս դասը կատարյալի եւ ներկայի հիմքերի համար ունի մի տարբերակիչ հատկանիշ՝ ներկայում լծորդ ձայնավորի առկայությունը: Չեզոք – ներգործական սեռային տարբերությունը կատարյալում (թերույթներով) տարբերակում է նաեւ նստին բայի ներկան (օր. եզ.Գ. դեմք նստի) կատարյալից (օր.Ա. դեմք նստայ, եւ ոչ *նստի, ածի-ի կամ թողի-ի նման):

Իսկ եթե բայը լինէր -ա- լծորդության եւ չեզոք, ինչպէս օրինակ՝ երթամ: Այս բայի աորիստը (կատարյալը) հնում եղել է *երթայ (ինչպէս կարելի է ենթադրել Բ ապ.եզ.Ա երթայց ձեւից, հմմտ. նստայց): Ըստ այսմ այն աորիստում թերեւս ունէր (նստին բայի նման) հետեւյալ հարացույցը՝

*երթայ	*երթաք
*երթար	*երթայք
*երթաւ	*երթան

Այս ձեւերից եզ. Ա. դեմքը համանուն է ներկայի եզ. Գ. դեմքին, յգ. Բ եւ Գ. դեմքերը ներկայի համապատասխան ձեւերին, եզ. Բ. դեմքը արգելական հրամայականի եզակիին: Հաւանաբար նման համանունությունից առաջացած շփոթն էր պատճառը, որ երթամ բայի բուն անցյալ կատարյալը փոխարինուէր չուեմ (նույնիմաստ բայի) կատարյալի ձեւերով:

Նշենք նաեւ, որ այս բայի բուն հրամայականը արմատական է՝ երթ, երթայք, ենթակայական դերբայը՝ երթող (եւ ոչ սպասելի *երթացող), որով այն լիովին ներառվում է այս խմբի մէջ:

2. Կատարյալ՝ արմատական (պարզ) – անկատար (ներկայ)՝ սոսկածանցավոր.

Այս ենթախումբը պայմանականորեն անվանենք *արմատական - սոսկածանցավոր դաս*: Կատարյալ - ներկայ հիմքերի տարբերակման այս եղանակի առանձնայատկությունն է ռնգային բայական միջածանցի գործածումը: Այն հայերենում կազմում է ներկայի հիմքեր:

Այս դասի բայերը հարացուցային առանձնայատկություններով բաժանվում են երեք ենթադասի:

1. -Ե- լծորդության -ան- սոսկածանցով (օր. հատ-ան-եմ)

եւ -ու- լծորդության սոսկածանցավոր (օր. առ-ն-ում), -ե- լծորդութան անկանոն առնեմ, -ա- լծորդության անկանոն բառնամ (*բարձ-ն-ամ) ներգործական սեռի բայերը: Այս բայերի բուն հրամայականի եզակին արմատական է՝ հատ, առ, արա(ր), բարձ: Այս բայերը կատարյալում ստանում են Թ1, կրավորական առումով՝ Թ2 թեքություններ:

հատ-ի /այ	հատ-ան-եմ	հատ
առ-ի /այ	առ-ն-ում	առ
արար-ի /այ	առ-ն-եմ	արա
բարձ-ի /այ	բառ-ն-ամ	բարձ

2. Երկրորդ ենթադասը կազմում են -ե- լծորդութան -ան- սոսկածանցով չեզոք բայերը (օր. անց-ան-եմ, բացառութեամբ յանց-ան-եմ:: Այս բայերը թեւ չեզոք են, բայց կատարյալում ստանում են առաջին շարքի (Թ1: թեքություններ: Բուն հրամայականի եզակին արմատական է՝ անց:

անց-ի	անց-ան-եմ	անց
-------	-----------	-----

3. Երրորդ ենթադասում միավորվում են -ի- լծորդության -ան- սոսկածանցով բոլոր եւ -ու- լծորդության -ն- սոսկածանցով որոշ չեզոք բայեր (օր. ջեռ-ն-ում, երդու-ն-ում:: Այս դասն ընդգրկում է նաեւ -ե- լծորդության մեղ-անչ-եմ, -ա- լծորդության դառ-ն-ամ (*դարձ-ն-ամ) անկանոն բայերը: Կատարյալում սրանք ստանում են երկրորդ շարքի (Թ2) թեքություններ: Հրամայականի եզակին կազմվում է -ի՛ր վերջավորութեամբ, որ կցվում է արմատին՝ անկ-ի՛ր, ջեր-ի՛ր, երդու-ի՛ր, մեղ-ի՛ր, դարձ-ի՛ր:

անկ-այ	անկ-ան-իմ	անկ-իր
ջեր-այ	ջեռ-ն-ում	ջեր-իր
երդու-այ	երդ(ու)-ն-ում	երդու-իր
մեղ-այ	մեղ-անչ-եմ	մեղ-իր
դարձ-այ	դառ-ն-ամ	դարձ-իր

Այս դասում նույնպես՝ կատարյալում տարբերակվում են (ոչ այնպես յստակ ինչպես առաջին դասում: ներգործական եւ չեզոք սեռի բայերը (հմմտ. առաջին եւ երրորդ ենթադասերը): Ի դեպ այստեղ մեկ այլ ուշագրաւ տարբերակիչ յատկանիշ էլ կայ չեզոք սեռի բայերի համար՝ հրամայականում -իր թեքությոնը (վերջավորությունը):

Թերեւս այս դասում ներառուեն -ի- լծորդության -չ-, -նչ-

սոսկածանցներով բոլոր (օր. փախ-չ-իմ, կոր-նչ-իմ) եւ -ու-լծորդության -ն- սոսկածանցավոր այն բայերը (օր. փախ-ն-ում, սառ-ն-ում), ինչպէս նաեւ յանց-ան-եմ, յառ-ն-եմ, ճ/ծան-աչ-եմ անկանոն բայերը, որոնց կատարյալի հիմքում ի յայտ է գալիս -ի- բաղադրիչը: Այս բոլոր բայերը չեզոք են, հարացույցով մնան երկրորդ դասի երրորդ ենթադասի բայերին, միակ տարբերությունը կատարյալի հիմքում -ի բաղադրիչի առկայությունն է:

փախի-այ	փախ-չ-իմ // փախ-ն-ում	փախ-իր
սառի-այ	սառ-չ-իմ // սառ-ն-ում	սառ-իր
երկի-այ	երկ-նչ-իմ	երկ-իր
յանցի-այ	յանց-ան-եմ	յանց-իր
յարի-այ	յառ-ն-եմ	ար-ի
ծանի-այ	ճան-աչ-եմ	ծան-իր

Հիմքերի տարբերակման այս եղանակը՝ ներկայում սոսկածանցավոր հիմք, կատարյալում՝ արմատական (կամ -ի- բաղադրիչով) քերես կարելի էր համարել լատգույն, եթէ լեզուի զարգացման ընթացքում այլ կարգի դժվարություններ չառաջանային:

Մինչեւ զարգացման յաջորդ փուլի քննարկումը դիտարկենք երկու անկանոն բայերի առիստ-կատարյալի ձեւերը:

ա) *Դ-նեմ*

Դ-նեմ բայը համարվում է անկանոն:

Դիտարկենք բայի հարացույցը անցյալ կատարյալի հիմքով բայաձեւերում՝

անց.կատարյալ	Բ ապառնի	բուն հրամ.	անցյալ դերբ.
ե-դի ե-դաք	ե-դից դիցուք		ե-դյալ
ե-դիր ե-դիք	դիցես դիջիք	դիր դիք	
ե-դ ե-դին	դիցէ դիցեն		

Իբրեւ -ե- լծորդության սոսկածանցավոր բայ (*դի-ն-եմ < *dhē-) անցյալ կատարյալում հանդէս է գալիս արմատական (դի-) ձեւով եւ բոլոր միավանկ բայաձեւերում՝ ե- նախահաւելվածով: Բայը ներգործական սեռի է եւ բնականաբար ստանում է թէ ակտիվ եւ թէ պասիվ թեքությներ. ըստ այսմ այն կարող է ներառուել առաջին ենթադասում:

Իսկ որոնք են այս բայի անկանոնությունները: Կատարյալի եզակիում, բոլոր դեմքերում, թեքությը եւ արմատական ձայնավորը միաձուլված են, իսկ երրորդ դեմքում թեքությի կորուստը (զրոյական թեքությ) հանգեցրել է նաեւ արմատական ձայնավորի

կորստին: Անկանոն է նաեւ հրամայականը՝ եզակիում -ը հանգով, յոգնակիում թերույթի եւ արմատական ձայնավորի ձուլմամբ (հմմտ. տամ բայի նույն ձեւերը):

Դիտենք մէկ անկանոն բայ եւս:

բ) *Լինիմ*

Ընդունված է համարել, որ այս բայը կորցրել է անցյալ կատարյալի իր ձեւերը, որոնք փոխարինուել են եղանիմ բայի համապատասխան ձեւերով: Երկրորդ ապառնին ունի նաեւ լիցիմ, լիցիս, լիցի եւն ձեւեր:

անց.կատարյալ	Բ ապառնի	բուն,հրամ	անցյալ դբ.
եղէ եղաք	եղէց եղիցուք		լեալ
եղեր եղեք	եղիցիս եղիջիք	լեր լերուք	
եղեւ եղեմ	եղիցի եղիցին		

Հարկ է նշել, որ կատարյալի նշված ձեւերը դարձյալ պետք է անկանոն դիտել, քանի որ եղանիմ բայը որպէս -ի- լծորդության սոսկածանցավոր բայ կատարյալում պետք է ունենար հետեւյալ հարացույցը՝

եղայ	եղաք
եղար	եղայք
եղաւ	եղան

Լինիմ-ը -ի- լծորդության սոսկածանցավոր բայ է. արմատն է *լե-, որ յաջորդ -ն ոնգականի ազդեցութեամբ դարձել է *լէ- եւ անշեշտ դիրքում *լի-: Բուն *լե- արմատը տեսնում ենք հրամայականի լեր, լերուք եւ անցյալ դերբայի լյալ ձեւերում: Որպէս սոսկածանցավոր բայ լինիմ բայի կատարյալի հիմքը պետք է ունենար՝ արմատական ձեւ *լե-, միավանկ բայածեւերում եւնախայաւելված, եւ ըստ այդմ անցյալ կատարյալի հետեւյալ հարացույցը՝

*ե-լեյ > *ելէ	*ելեաք>	*ելեաք	> *ելաք
*ե-լեր > *ելեր*	ելէյք	> *ելէք	
*ե-լեւ > *ելեւ	*ելեն	> *ելեն	

որի տարբերությունը առկայ հարացույցից (ըստ ընդունված տեսակետի՝ եղանիմ բայի կատարյալի ձեւերից) լ/դ հարաբերությունն է, որն իրականում տարբերություն էլ չէ: Ըստ այսմ լինիմ բայը բոլորովին անկանոն չէ, այլ ինչպէս դենեմ -ե- լծորդության բայը լիովին կանոնական:

Ինչպէս կարելի նկատել այս բայերի արմատները ձայնավորաբանգ են, եւ դրանց «անկանոնությունները» արդյունք են այդ

հանգամանքի՝ թեքույթի ձուլում արմատի ձայնավորին, արմատական ձայնավորի կորուստ: Ստորեւ կտեսնենք, թե ինչպէս է յաղթահարուել այս կնճիռը եւս:

3. Կատարյալ՝ *ց-ական* – անկատար (ներկայ)՝ պարզ (արմատական).

Կատարյալում՝ *-ց-ական* հիմքով բայերը երկու ենթախումբ են կազմում: Առաջինը՝ ներկայում արմատական հիմք ունեցող բայերն են: Այս դասը մինչեւ աւելի հարմար եզր գտնելը անվանենք *ածանցավոր-արմատական*:

Այն տրոհվում է երեք ենթադասի՝

1. *-Ե-* եւ *-ա-* լծորդությունների պարզ չեզոք սեռի բայերը (վագ-ենմ, կարդ-ամ), կատարյալում այս բայերն ստանում են առաջին շարքի թեքութիւններ (Թ1), բուն հրամայականի եզակիում կատարյալի հիմքն է՝ առանց *ց-ի*:

վագ-եց-ի վագ-ենմ վագ-եա

կարդ-աց-ի կարդ-ամ կարդ-ա

2. *-Ե-* եւ *-ա-* լծորդությունների պարզ ներգործական սեռի բայերը (սիր-ենմ, աղ-ամ), կատարյալում այս բայերն ստանում են առաջին շարքի թեքութիւններ (Թ1), բուն հրամայականի եզակիում կատարյալի հիմքն է՝ առանց *ց-ի*: Կրավորական առումով ստանում են երկրորդ շարքի (Թ2) թեքութիւններ:

սիր-եց-ի / -այ սիր-ենմ սիր-եա

աղ-աց-ի / -այ աղ-ամ աղ-ա

3. *-Ի-* լծորդության պարզ բայերը, որոնք ստանում են երկրորդ շարքի թեքութիւններ (Թ2: առանց սեռի խտրականության: Բուն հրամայականի եզակին կատարյալի հիմքն է:

խօս-եց-այ խօս-իմ խօս-եաց

4. Կատարյալ՝ *ց-ական* – անկատար (ներկայ)՝ սոսկածանցավոր.

Կատարյալում՝ *-ց-ական* հիմքով բայերի երկրորդ ենթախումբը այն բայերն են, որոնց ներկայի հիմքը սոսկածանցավոր է, պայմանականորեն այս դասն անվանենք *ածանցավոր* դաս: Այս դասում ընդգրկված բայերը թէ կատարյալում, թէ ներկայում ածանցավոր հիմք ունեն: Այս դասի բայերը տրոհվում են երկու խմբի:

1. *-Ա-* լծորդության *-ան-* սոսկածանցով բոլոր բայերը, *-ու-* լծորդության *յե-ն-ում*, *զգե-ն-ում*, *ընթեռ-ն-ում* բայերը: Այս

բայերը կատարյալում ստանում են միայն երկրորդ շարքի (Թ2) թեքությունը, բուն հրամայականի եզակիում կատարյալի հիմքին կցվում է -իք վերջավորությունը:

իմ-աց-այ	իմ-ան-ամ	իմ-աց-իր
յե-ց-այ	յե-ն-ում	յե-ց-իր
զգե-ց-այ	զգե-ն-ում	զգե-ց-իր
ընթեր-ց-այ	ընթեր-ն-ում	ընթեր-ց-իր

Նկատենք, որ յե-ն-ում, զգե-ն-ում բայերի արմատները ձայնավորահանգ են: Եւ եթէ չլինէր -ց- ածանցը, դրանք կատարյալում թերեւս կունենային լինիմ բային նման բայաձեւեր:

2. -Ա- լծորդության բա-ն-ամ, թա-ն-ամ եւ -ու- լծորդության լ(ի)-ն-ում, խ(ի)-ն-ում եւ ընկե-ն-ում բայերը: Այս բայերը ներգործական սեռի են, ստանում են Թ1 թեքությունը, կրավորական առումով՝ Թ2 թեքությունը: Բուն հրամայականի եզակիում կատարյալի ց-ական հիմքն է՝ բաց, թաց, լից, խից, ընկեա (վերջինում՝ ց-ի անկումով):

բա-ց-ի / ալ	բա-ն-ամ	բաց
թա-ց-ի / ալ	թա-ն-ամ	թաց
լ-ց-ի / -ալ	լ-ն-ում լի-ց	
խ-ց-ի / ալ	խ-ն-ում	խի-ց
ընկե-ց-ի / ալ	ընկե-ն-ումը	նկե-ա

Այս ենթադասի բայերը, ինչպէս տեսնում ենք, ձայնավորահանգ արմատներ ունեն, եւ -ց- ածանցի բացակայության դեպքում պետք է խոնրիվեին դնեմ բայի հարացույցով: Թերեւս ինչ-որ ժամանակ այդպէս էլ եղել է, նշենք լիր եւ *խիր (> խր-եմ, խր-իմ) բառերը, որոնք ձեւով եւ կազմութեամբ նույնն են ինչ դիր, տուր, լեր ձեւերը:

Ամփոփենք: Այս հոդվածում մենք ներկայացրինք մի քանի դիտարկումներ գրաբարի բայերի դասակարգման՝ ավանդականից տարբեր մեկ այլ եղանակի մասին: Այստեղ մենք ներկայացրինք նաեւ նախագրային շրջանում հայերենի խոնարհման համակարգի զարգացման մի ուրվագիծ: Այն չընդունենք որպէս գիտական հետազոտության եզրակացություն կամ հետեւություն: Մեր նպատակն էր միայն ցույց տալ, թէ ինչ հեռանկարներ ունի դասակարգման այս մոտեցումը հայերենի խոնարհման համակարգի համակարգված ուսումնասիրության խնդրում:

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ՊԱԿԱՍԱՎՈՐ ԲԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

Պակասավոր բայերի քանակի, ելակետային և թեք ձևերի վերաբերյալ կան տարբեր կարծիքներ¹: Հիմնականում նշվում է 13 բայ՝ *գալ, լալ, տալ, եմ, կամ, գիտեմ, ունեմ, արժեմ (արժել), լվալ, հոսալ, ցանկանալ, կենալ* «մնալ», *կենալ* «ապրել»²:

Սրանցից բացի՝ հայերենում կան պակասավոր այլ բայեր ևս:

Լվանալ բայը, որ սովորաբար նշվում է անկանոնների շարքում, իրականում պակասավոր բայ է. չունի անցյալ կատարյալ ժամանակաձև և եզակի հրամայական: Պակասը լրացվում է *լվալ* բայի համապատասխան ձևերով:

Լվալ և *լվանալ* բայերի անցյալ կատարյալի հիմքը (*լվաց*) և սրանից կազմվող ենթակայական, հարակատար, վաղակատար դերբայներն ու հոգնակի հրամայականը ձևով նույնն են (*լվացող, լվացած, լվացել, լվացեք*): Հաշվի առնելով, որ այսպես կոչված «հավելավոր» ձևերից պակասավոր են անաժանց բայերը, և հենվելով համաբանության օրենքի վրա՝ պետք է ենթադրել, որ նշված ձևերը *լվանալ* ածանցավոր բայինն են:

Կարող եմ կառույցը կամ համարում են *կարողանալ* բայի հավելավոր ձև՝ դրանց միջև տեսնելով կերպային տարբերու-

¹ Հովհ. Բարսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Ե., 1953: Ս. Աբրահամյան, Ժամանակակից գրական հայերեն, Ե., 1981: Էդ. Աղայան, Հ. Բարսեղյան, Հայոց լեզու, դասագիրք 5-7-րդ դասարանների համար, Ե., 1985: Ս. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու. ձևաբանություն, Ե., 1983: Ս. Աբրահամյան, Ն. Պառնասյան, Հ. Օհանյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 2, Ե., 1974:

² Հմմտ. Ս. Աբրահամյան և այլք, նշվ. աշխ., էջ 432: Ա. Մուրվալյանը կեցցե և կեցցես ձևերը համարում է գրաբարյան կեալ, «ապրել» բայի քերականական ձևեր, որոնք արդի հայերենում կորցրել են իրենց քերականական արժեքը և հանդես են գալիս միայն բառական արժեքով՝ որպես բացականչություններ՝ «թող ապրի», «ապրես» նշանակությամբ: Տե՛ս Ա. Մուրվալյան, Հայոց լեզվի բառային կազմը, Ե., 1955, էջ 141-142:

թյուններ³, և կամ էլ ածականից և հանգույցից կազմված կառույց, որ մասնակցում է բայական բաղադրյալ ստորոգյալի կազմությանը⁴ (*կարող է գրել*): *Կարող եմ* - ը, սակայն, բայ է, քանի որ ժխտական խոնարհման կազմության ժամանակ *եմ* բայը փոխում է շարադասությունը և եզակի երրորդ դեմքում դառնում է *ի* (*կարող է - չի կարող*): Մինչդեռ բաղադրյալ ստորոգյալ լինելու դեպքում օժանդակ բայը չէր ենթարկվի շարադասական փոփոխության և չէր հնչյունափոխվի:

Կարող եմ բայն ունի միայն սահմանական ներկա և անցյալ անկատար ժամանակաձևեր, որոնք կազմվում են «ենթակայական դերբայ + օժանդակ բայ» կաղապարով:

Այդպիսին է նաև *կարելի է* (*չի կարելի*) միադիմի բայը. գործածական է այս բայի սահմանական ներկա և անցյալ ժամանակաձևերի եզակի երրորդ դեմքը⁵:

Համեցեք բայաձևը Հովհ. Բարսեղյանը համարում է եղանակիչ մակբայ, Էդ. Աղայանը՝ ձայնարկություն⁶: Սակայն այս ձևին հատուկ է դեռևս բայական կիրառությունը (հմմտ. *Վաղը երեկոյան համեցեք մեր տուն՝ ճաշի*)⁷: Գործածական է այս բայի հրամայական ապառնիի հոգնակի III դեմքը:

Քիչ, բայց այնուամենայնիվ հանդիպում ենք *չիք* բայաձևի գործածության՝ սահմանական ներկայի եզակի /?/ III դեմքի իմաստով:

Յանկալ և հուսալ բայերի համար նշվում է, որ դրանք ունեն ըղձական, ենթադրական և հարկադրական եղանակների ժա-

³ Հովհ. Բարսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Ե., 1953, էջ 432: Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, ձևաբանություն, Ե., 1983, էջ 349:

⁴ Ս. Աբրահամյան և այլք, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, էջ 161:

⁵ Նկատելի է, որ՝ 1) կարող (եմ), կարելի (է) ձևերից առաջինը օժանդակ բայից անկախ, ածականական կիրառություններ կարող է ունենալ՝ կարող ուժեր, երկրորդը՝ ոչ. 2) կարող, կարելի ձևերը ածական հականիշներ ունեն՝ անկարող, անկարելի: Այնուամենայնիվ, պետք է փաստել, որ այս բայերի՝ բայից ածական խոսքիմաստային փոխանցումը լիակատար չէ. օժանդակ բայի հետ կապակցություններում սրանք բայեր են, անկախ կիրառություններում (եթե կան)՝ ածականներ:

⁶ Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան (ԱՀԲԲ), Ե., 1976, էջ 808:

⁷ Արդի հայերենում կա նաև *համենալ* կանոնավոր բայը՝ «ուշանալ, դանդաղել», իմաստներով (տե՛ս ԱՀԲԲ, էջ 807), որը համանունություն է դրսևորում *համեցեք* բայաձևի ենթադրյալ ելակետային ձևի հետ:

մանակաձևեր: Սրանք, սակայն, ունեն մահ ժխտական դերբայ, որով կազմվում են ենթադրական եղանակի ժխտական խոնարհման ձևերը (հմմտ. *չեմ ցանկա, չեմ հուսա*):

Այսպիսով՝ արդի հայերենում կարելի է առանձնացնել 18 պակասավոր բայ: Սրանցից ե խոնարհման են 3 բայ՝ *ունեմ, գիտեմ, արժեմ*, ա խոնարհման՝ 11 բայ՝ *լվալ, վանալ, հուսալ, ցանկալ, կենալ «մնալ», կենալ «ապրել», համեցեք* և վերապահությամբ՝ *գալ, լալ, տալ, կամ*: Իսկ 4 բայի՝ որ խոնարհման պատկանելը համաժամանակյա կտրվածքով որոշել հնարավոր չէ:

Գալ, լալ, տալ, կամ բայերը ա խոնարհման կարելի է համարել պայմանականորեն. ա ձայնավորը լծորդ համարելով՝ կհանգենք *գ, տ, լ, կ* տարրերին, որոնք էլ համարվել են այս բայերի առաջին հիմքերը մահ արմատները⁸: Գ.Ջահուկյանը գրում է, որ «.....հիմքակազմ վերջամասնիկներն ու վերջավորությունները սերտորեն կապված են մախորդ բաղադրիչների՝ մինչև դրանց սահմանների կորստի աստիճան (ծուլում կամ ֆուզիա) հմմտ. *տանեն-տարա*, որտեղ *ա-ի* «մաքուր» հիմքին պատկանելու, թե հիմքակազմ տարր լինելու հարցը դժվար լուծելի է, թեև ավելի հավանական է խոսել առաջին ենթադրության օգտին⁹»: Նաև՝ «Որոշ դեպքերում էլ դժվար է որոշել ձայնավորի «մաքուր», թե ձևավոր հիմքին պատկանելը (հմմտ. *տամ*)»¹⁰:

Քանի որ հիմք կարող է համարվել որևէ իմաստակիր հատված, իսկ *գ, տ, լ, կ* տարրերն իմաստակիր չեն, ուստի և հիմքեր էլ չեն: Ա ձայնավորը, մեր կարծիքով, արմատի բաղադրիչ է. մախ՝ արմատներն են հանդես գալիս գրաբարյան ներկայի եզակի III դեմքում (հմմտ. *եմ-ես-է*) մահ՝ *գամ-գաս-գալ, կամ-կաս-կալ*, մահ՝ *մնամ-մնաս-մնալ, զնամ-զնաս-զնալ*. երկրորդ՝ հենց դրանք էլ մասնակցում ենք բառակազմությանը (հմմտ. *որևէ, պարագա, ենթակա, ենթամնա, արտագնա*):

Պակասավոր բայերից պարզ են 14, ածանցավոր՝ 4 բայ՝ *լվանալ, կենալ «ապրել», կենալ «մնալ», համեցեք*: Ընդ որում՝ մեկը *ան* ածանցավոր (լվանալ), մյուսները՝ եմ:

⁸ Մ.Ասատրյան, նշվ. աշխ. էջ 348:

⁹ Գ.Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974, էջ 226:

¹⁰ Նույն տեղում, էջ 228:

Ներգործական սեռի են 8 բայ՝ *տալ, գիտեմ, ունեմ, արժեմ, ցանկալ, լվալ, լվանալ, կարող եմ*: Չեզոք սեռի՝ 10 բայ:

Ներգործական պակասավոր բայերից յուրահատուկ է ունեմ բայը. անձնանիշ գոյականների ուղիղ խնդիրը այս բայի մոտ դրվում է ուղղականաձև հայցականով՝ *Ունեմ երկու տղա*:

Վերոբերյալ բայերը պակասավորություն են դրսևորում նաև բայափոխների առկայության տեսանկյունից:

1. Սրանցից ոչ մեկը (բացի *լվալ* և *լվանալ*) բայի III՝ անորոշի հիմքը չունի: Չնայած որ *ցանկալ* և *հուսալ* (նաև *արժել*) բայերն ունեն անորոշ դերբայ, սակայն չունեն դրանով կազմվող ապակատար և համակատար դերբայական ձևեր: Ուստի և այս բայերի անորոշ դերբայները բայական հիմք չենք համարում:

2. Հիմքագուրկ են *չիք, կարելի է* բայերը:

3. Միայն առաջին հիմք ունեն *գիտեմ, ունեմ, արժեմ, ցանկալ, կարող եմ, հուսալ* և որոշ պայմանականությամբ՝ *զալ, լալ, տալ, կամ* բայերը:

4. Միայն երկրորդ հիմք ունի *համեցեք* բայը:

5. *Կենալ* «մնալ», *կենալ* «սալքել» բայերն ունեն առաջին և երկրորդ հիմքեր:

6. Բոլոր երեք հիմքերն ունեն *լվալ, լվանալ* բայերը:

Կապերի ներկայացման մի եղանակի մասին

Գոյություն ունի կախվածության ծառերի միջոցով լեզվի նկարագրման ընդունված եղանակ, ուր ծառի յուրաքանչյուր հանգույցին համապատասխանում է նախադասության որևէ անդամ, իսկ աղեղին՝ այդ անդամների միջև առկա շարահյուսական հարաբերություն: Նախադասության մման նկարագրման դեպքում առանձին հետաքրքրության առարկա է դառնում՝ 1.կապերի դիրքը կախվածության ծառի վրա, 2. դրանց հարաբերությունները ծառի մյուս հանգույցների հետ:

Կապ (առդիր՝ Jnt) ասելով այստեղ հասկացվում են ոչ միայն ավանդորեն այդ խոսքի մասի մեջ մտնող բառերը (օրինակ՝ *առաջ, առանց, դուրս, դեմ, դեպի, մոտ, հետ, միասին* և այլն), այլև այն բոլոր բառերը, որոնք նախադասության մեջ հանդես են գալիս կապի գործառույթով (օրինակ՝ *առիթով, բացառությամբ, գուզընթաց, ընթացքում, կապակցությամբ, հետևանքով* և այլն): Ըստ խնդրառվող բառի նկատմամբ ունեցած դիրքի՝ կապերը բաժանվում են երկու մեծ խմբերի՝ նախադրությունների (PrepJnt) և ետադրությունների (PostJnt). ուշադրությունից չեն վրիպել նաև երկու դիրքերով հանդես եկողները, այսպես կոչված, երկդրությունները (PrepPostJnt¹), ինչպես նաև գույզ հանդիպումները՝ *հետ միասին*:

Այս ուսումնասիրության համար հիմք են ծառայել եռանդամ կառույցները՝ հետևյալ նշանակումներով.

1. V - խնդրառող բառ,
2. Jnt - կապ (PrepJnt, PostJnt, PrepPostJnt տարատեսակներով),
3. N - կապից շարահյուսորեն կախված բառ,
4. → - շարահյուսական կապ, ընդ որում սլաքն ուղղվում է դեկավարող բառից դեպի խնդրառվողը,
5. {} - V-ի ու N - ի միջև հնարավոր այլ լեզվական միավոր,
6. * - ըստ ընդունված նորմերի անհնարին բառ կամ բառակապակցություն:

¹ Այս նշանակումները, ինչպես նաև որոշ օրինակներ մենք վերցրել ենք Լ.Հովսեփյանի կողմից կազմված՝ UNL - հայերեն քերականական բնութագրերից(ի մասնավորի՝ կապերի ցանկից):

Տեսականորեն հնարավոր են նշված երեք անդամների հետևյալ զուգորդությունները.

1. $V \{ \} Jnt \{ \} N$ Օրինակ՝ Միայն երբեմն մանր կոհակները գետի միջից երան-երան *վազում էին դեպի ավերքը*:

2. $V \{ \} N \{ \} Jnt$ Օրինակ՝ Մի քանի րոպե նրա գեղեցիկ աչքերը *վազում էին* տպած *տողերի վրայից*:

3. $Jnt \{ \} N \{ \} V$ Օրինակ՝ Նա *առանց ընկերոջ գնաց*:

4. $N \{ \} Jnt \{ \} V$ Օրինակ՝ Այդ թաղի շները հաչոցով *եղբորս վրա վազեցին*:

5. $N \{ \} V \{ \} Jnt$ * եղբորս վազեցին վրա

6. $Jnt \{ \} V \{ \} N$ * վրա վազեցին եղբորս

Մեր կողմից կազմված շուրջ 2000 օրինակներից բաղկացած Բարտարանում հանդիպեցին միայն առաջին, երկրորդ և չորրորդ դեպքերը. երրորդ դեպքի համար կազմված է լեզվում ոչ այնքան հազվադեպ հանդիպող օրինակ, իսկ հինգերորդ ու վեցերորդ դեպքերով դժվար է գտնել ժամանակակից հայոց լեզվի նորմերին բավարարող որևէ նախադասություն:

Սակայն «... ասույթի շարահյուսական կառուցվածքը նկարագրվում է ոչ միայն խնդրառությունների համակարգով, այլև բառերի շարադասությամբ: Ընդ որում, խնդրառությունն ու շարադասությունը իրարից անկախ չեն: Նրանց միջև գոյություն ունի կապ, որը պարզագույն դեպքում ընդունված է անվանել լեզվի «պրոյեկտիվության» հատկություն: Այդ հատկությունը, կոպիտ ասած, դրսևորվում է հետևյալում. եթե խնդրառության ծառի հանգույցները դասավորված են ուղիղ գծի վրա անհրաժեշտ կարգով և բոլոր սլաքները տարված են այդ ուղղի վրա միևնույն ուղղությամբ, ապա այդ սլաքները կարելի է տանել առանց միմ-

յանց հետ հատելու, իսկ խնդրառության ծառի հիմքին ոչ մի սլաք չի դրվի»²:

Այս մոտեցման հաշվառմամբ միայն առաջին ու չորրորդ կառույցները պետք է ուսումնասիրվեին, բայց քանի որ պրոյեկտիվության նշված հատկությունը կարող է խախտվել լեզվում գործող պրոյեկտիվության թույլատրելի խախտման դեպքերի հիման վրա, ուստի և ուսումնասիրվում են առաջին չորս կառույցները:

Այժմ բերենք այն ձևական հատկանիշները, որոնց օգնությամբ սահմանվում է ետադրություն հասկացությունը և որոնցով էլ վերջիններս սահմանազատվում են նախադրություններից:

1. Կախյալ բառի՝ N-ի ձևը պայմանավորվում է կապի շարահյուսական հնարավորություններով (սրանք վերջում ներկայացվում են աղյուսակով),

2. Ետադրության ու կախյալ բառի միջև հնարավոր չէ որևէ այլ բառ, այսինքն այս պարագայում $\{ \}$ - ը 0 է (2 -րդ ու 4 - րդ դեպքերում),

3. Չպետք է խախտվի խիստ պրոյեկտիվությունը:

Սակայն թե՛ ձևական հատկանիշների սահմանումը, թե՛ զուգադրությունների վերհանումը և թե՛ դրանց պրոյեկտիվության որոշումը օժանդակ միջոցներ են ընդհանուր խնդիրը լուծելու ճանապարհին, այսինքն որոշելու կապերի տեղը կախվածության ծառի վրա ու սահմանելու դրանց շարահյուսական ազդեցությունը կախյալ բառի ձևի վրա:

Գտնվելով կախվածության ծառի վրա՝ կապն ունի երկու շատ բնորոշ շարահյուսական հատկանիշ՝


1. այն խնդրառվում է անմիջապես գազաթի կամ ենթագազաթի կողմից և իր հերթին խնդրառում է մեկ և միայն մեկ բառ՝ չդառնալով երբեք տերմինալ ու դրանով իսկ տարբերվելով V-ից ու N-ից, որոնք կարող են ինչպես սերել մեկից ավելի սլաքներ, այնպես էլ փոխել իրենց մակարդակը,

2. կախվածության ծառի կապ պարունակող հանգույցները, ի տարբերություն չպարունակողների, չեն կարող դառնալ ենթագազաթ որևէ ենթածառի համար:

Առաջին հատկանիշից բխում է, որ անհրաժեշտ է տարբերակել $V \rightarrow Jnt$ և $Jnt \rightarrow N$ հարաբերությունները ծառի վրա:

2 Шрейдер. Ю. А. Свойства проективности языка, Научно - техническая информация, М., 1964, 8

V→ Jnt հարաբերությունը զուտ իմաստային հարաբերություն է, մինչդեռ Jnt→N .ը՝ շարահյուսական, ուր N-ի ձևը խիստ դետերմինացված է Jnt-ի ֆունկցիայով: Օրինակ՝ «Դրեցի սեղանի վրա» նախադասության մեջ՝







դրեցի → *վրա* հարաբերության մեջ *վրա* կապի առկայությունը բխում է *դճել* բայի իմաստից, անկախ այն բանից՝ այդ բառը գազաթում է, թե՛ ենթագազաթում: Ու թեև այդ իմաստը կարող է դրսևորվել նաև առանց կապի՝ «Դրեցի սեղանին», արդյունքում ստացվում են հոմանիշ կառույցներ (շարահյուսական մակարդակում):

Jnt→N հարաբերության դեպքում N-ի ձևը պայմանավորված է Jnt - ով: Նայած, թե սկզբունքորեն ինչպիսի ձևեր կարող են ընդունել N - ի տեղում հանդես եկող անդամները, անհրաժեշտ է ունենալ ծառի վրա Jnt-ի տեղում հանդիպող բոլոր բառերի ցանկը: Այդ բառերի այն մասը, որը կրավարարի վերը բերված երեք պնդումներից, ետադրություններ են, իսկ մյուսները՝ նախադրություններ:

Այսպիսով, ստացվում է մի աղյուսակ, ուր ներկայացված են կապերը, դրանց դիրքերը (Prep, Post և PrepPost), պահանջած հոլովները (նաև անհրաժեշտ դեպքերում՝ առումները) և օրինակներ (եռանդամ շարահյուսական կառույցներ): Եվ քանի որ աղյուսակում ընդգրկված են ոչ միայն կապեր, այլև կապի գործառույթով հանդես եկող գոյականների, ածականների ու խոսքի այլ մասերի հոլովված և ուղիղ ձևեր (օրինակ՝ *ազդեցությամբ*, *առկայությամբ*, *բացառությամբ*, *մասնակցությամբ*, *օգնությամբ* և այլն), ուստի այս իմաստով աղյուսակում կապերի ցանկը բաց է:

Ասվածը հիմք է ծառայում փորձելու ստանալ գազաթ - լրացում հարաբերությունները նկարագրող կաղապարներ:

Ուսումնասիրությունը թույլ է տալիս ենթադրել, որ վերջիններիս թիվը սահմանափակ է (նկատի ունենք եռանդամ կաղապարները):



(ուղղահայաց ընդհատ գծերը՝ կետագծերը, տարված են ակնհայտ դարձնելու համար բառերի շարադասությունը վերլուծվող նախադասության մեջ):

Ժամանակակից հայերենին բնորոշ զուգադրությունները կարելի է ստանալ, ունենալով՝

1. վերը բերված եռանդամ կառույցների ծառերը,
2. այդ ծառերից յուրաքանչյուրի վրա Jnt - ի տեղում հանդես եկող միավորների ցուցակը,
3. V - ի տեղում հանդիպող իմաստների հարացույցը:

Կադապարների թվի ենթադրվող սահմանափակությունը բխում է բայական հարացույցից, ինչպես նաև այն բանից, որ որոշ բայեր չեն ենթարկվում նշված ընդհանուր օրինաչափությանը և անկախ իմաստից՝ ընդունում են այս կամ այն կապը, ինչը առանձին ուսումնասիրության նյութ է: Եթե հնարավոր լինի տալ ամփոփ հարացույց, ապա կադապարների թիվը ևս կլինի վերջնական:

Կապերի խնդրառությունը ներկայացնող աղյուսակ

Կապեր	Դիրքը	Հոլովը	Օրինակներ
առ	Prep	ուղղ., ուղղ.որոշյալ	հղել աղոթք առ աստված, հաստատել առ մեկը մայիսի
առանց	Prep	սեռ.,տր.	գնալ առանց ընկերոջ, սպրեյ առանց քեզ
անց	Post	ուղղ.,ուղղ.որոշ.,բաց.	հանդիպել մի օր անց, հանդիպել հինգն անց, հանդիպել հինգից անց ...
առաջ	Post	ուղղ.,սեռ.,բաց.	մեկնել մեկ օր առաջ, կանգնել տան առաջ, պատրաստվել դասից առաջ
առջև	Post	սեռ.	կանգնել տան առջև
առջևից	Post	սեռ.	անցնել տան առջևից
առջևով	Post	սեռ.	անցնել տան առջևով
առջևում	Post	սեռ.	հավաքվել տան առջևում
առթիվ	Post	սեռ.	նվիրել ծննդյան առթիվ
առընթեր	Post	սեռ.	գործել կառավարությանն առընթեր
անկախ	Prep,Post	բաց.	կատարվել անկախ մարդուց, մարդուց անկախ կատարվել
անցած	Prep, Post	ուղղ.	անցած մի օր, մի օր անցած
բացի	Prep, Post	բաց.	բացի Արամից, Արամից բացի
բացառությամբ	Prep,Post	սեռ.	հեռացնել բացառությամբ ընկերոջ, ընկերոջ բացառությամբ ընդունել
դեմ	Post	սեռ.	սպասել տան դեմ
դեպի	Prep	ուղղ.	գնալ դեպի տուն
դեպքում	Post	սեռ.	չանել բացակայության դեպքում
դիմաց	Post	սեռ.	կանգնել տան դիմաց
դիմացից	Post	սեռ.	անցնել տան դիմացից
դիմացով	Post	սեռ.	վազել տան դիմացով
դեմից	Post	սեռ.	սկսել տան դեմից
դուրս	Post	բաց.	գտնվել տնից դուրս
երեսից	Post	սեռ.	տուժել ընկերոջ երեսից
զատ	Post	բաց.	սպրեյ կնոջից զատ
զուգընթաց	Post	տր.	կատարել դասին զուգընթաց

ընդառաջ	Post	տր.	գնալ ընկերոջն ընդառաջ
ընդդեմ	Prep, Post	սեռ., տր.	ալայքարել ընդդեմ բշնամու. բշնամուն ընդդեմ գնալ
ըստ	Prep	սեռ.	հանդիպել ըստ պայմանավորվածության
ժամանակ	Post	սեռ.	կատարել համերգի ժամանակ
ընթացքում	Post	սեռ.	լսել համերգի ընթացքում
ի	Prep	ուղղ.	ընդունել ի գիտություն
ինչպես	Prep	ուղղ.	վարվել ինչպես ընկեր
իբրև	Prep	ուղղ.	վարվել իբրև ընկեր
ի վար	Post	ուղղ. որոշ.	իջնել սարն ի վար
ի վեր	Post	ուղղ. որոշ.	բարձրանալ սարն ի վեր
ի հաշիվ	Prep	սեռ.	ապրել ի հաշիվ ընկերոջ
ի փառս	Prep	սեռ.	գործել ի փառս հայրենիքի
ի դեմս	Prep	սեռ.	հարգել ի դեմս ընկերոջ
ի լրումն	Prep, Post	սեռ., տր.	հավելել ի լրումն ասվածի, ասվածին ի լրումն ընդգծել
ի հավելումն	Prep, Post	սեռ., տր.	ընդունել ի հավելումն ասվածի, ասվածին ի հավելումն ընդգծել
ի հեճուկս	Prep	սեռ.	գնալ ի հեճուկս ընկերոջ
կապակցությամբ	Post	սեռ.	նվիրել ծննդյան կապակցությամբ
կողմ(ը)	Post	սեռ.	քեքվել տան կողմը
կողմից	Post	սեռ.	անցնել ետևի կողմից
կողմով	Post	սեռ.	գնալ ետևի կողմով
կողմում	Post	սեռ.	գտնվել ետևի կողմում
կողքը	Post	սեռ.	կանգնել ընկերոջ կողքը
կողքին	Post	սեռ.	կանգնել հոր կողքին
կողքից	Post	սեռ.	անցնել շենքի կողքից
կողքով	Post	սեռ.	անցնել տան կողքով
կից	Post	տր.	կառուցել այգուն կից
հակառակ	Prep, Post	սեռ.	վարվել հակառակ ընկերոջ, ընկերոջի հակառակ վարվել
հանդերձ	Prep, Post	գործ.	հրավիրվել հանդերձ ընտանիքով, ընդունել բերություններով հանդերձ
համուն	Prep	սեռ.	մարտնչել համուն հայրենիքի

հանձին(ս)	Prep	սեռ.	հանձին ընկերոջ (ընկերների) տեսնել
համաձայն	Prep,Post	սեռ.	ազատվել համաձայն դիմումի, դիմումի համաձայն ընդունվել
համապատասխան	Post	տր.	գործել պայմանին համապատասխան
հեռու	Post	բաց.	ապրել ընտանիքից հեռու
հետ	Post	սեռ.	մեկնել ընկերոջ հետ
հետ միասին	Post	սեռ.	ընկերոջ հետ միասին պարապել
հետևը	Post	սեռ.	քաքնվել պարսպի հետևը
հետևից	Post	սեռ.	անցնել շենքի հետևից
հետևով	Post	սեռ.	անցնել տան հետևով
հետևում	Post	սեռ.	գտնվել տան հետևում
հետևանքով	Post	սեռ.	առաջանալ հիվանդության հետևանքով
համար	Post	սեռ.	գնել քրոջ համար
հանդեպ	Post	սեռ.	տաճել մոր հանդեպ
համեմատ	Post	սեռ.	ունենալ ... ընկերոջ համեմատ
հանդիման	Post	տր.	գնալ ընկերների հանդիման
հասցեին	Post	սեռ.	ասվել... բեկնածուի հասցեին
հավասար	Post	տր.	դարձնել հողին հավասար
հիման վրա	Post	սեռ.	ընդունել ասվածի հիման վրա
հետո	Post	սեռ.	մեկնել համերգից հետո
հոգուտ	Prep	սեռ.	գործել հոգուտ ժողովրդի
ձեռքից	Post	սեռ.	տուժել ընկերոջ ձեռքից
ձեռքով	Post	սեռ.	գործել ընկերոջ ձեռքով
մասին	Post	սեռ.	մտածել կատարվածի մասին
մեկ	Post	գործ.	վազել փողոցով մեկ
մինչև	Prep	ուղղ.	վազել մինչև տուն
մոտ	Post	սեռ.,տր.(Prep)	ընկնել սահմանի մոտ, հայտնվել ինձ մոտ
մոտից	Post	սեռ.	անցնել տան մոտից
մոտով	Post	սեռ.	անցնել տան մոտով
մեջ	Post	սեռ.	դնել դարակի մեջ
միջից	Post	սեռ.	հանել դարակի միջից

միջով	Post	սեռ.	անցնել ծովի միջով
միջև	Post	սեռ.	հայտնվել երկուսի միջև
մեջտեղ(ը)	Post	սեռ.	կանգնել սենյակի մեջտեղը
մեջտեղի	Post	սեռ.	հասնել մեջտեղի մասից
մեջտեղից	Post	սեռ.	կտրել էջի մեջտեղից
մեջտեղով	Post	սեռ.	անցնել մայրի մեջտեղով
մեջտեղում	Post	սեռ.	գտնվել շարքի մեջտեղում
միջոցով	Post	սեռ.	գնել ծանոթի միջոցով
միջոցին	Post	սեռ.	կատարվել աշխատանքի միջոցին
մեջտեղին	Post	սեռ.	կախել տոնածաղի մեջտեղին
միասին(հետ միասին)	Post	սեռ.	կատարել ընկերոջ հետ միասին
նախքան	Post	ուղղ.որոշ.	ներկայանալ նախքան զգուշացումը
նայած	Post	տր.	կատարել նայած պահանջին
ներառյալ	Prep,Post	ուղղ. որոշ.	վճարել ներառյալ ընկերոջը,ընկերոջը ներառյալ վճարել
ներս	Prep	բաց.	մտնել դռնից ներս
ներսում	Post	սեռ.	հայտնվել շենքի ներսում
ներքո	Post	սեռ.	գտնվել հովանու ներքո
նկատմամբ	Post	սեռ.	տածել ...ընկերոջ նկատմամբ
նման	Post	սեռ.	վարվել ընկերոջ նման
նպատակով	Post	սեռ.	ժամանել հանդիպման նպատակով
նվիրված	Prep,Post	տր.	տարեղարձին նվիրված կազմակերպել,կազմակերպել տարեղարձին նվիրված,
ներքև	Post	բաց.	կառուցել տնից ներքև
շնորհիվ	Prep,Post	սեռ.	շնորհիվ ընկերոջ հասնել ..., ընկերոջ շնորհիվ հասնել ...
շուրջ	Post	սեռ.	արտահայտվել հարցի շուրջ
որպես	Prep	ուղղ.	աշխատել որպես ինժեներ
չանցած	Prep,Post	ուղղ.	չանցած մի օր հանդիպել, կատարվել մի օր չանցած
չնայած	Prep	տր.	մեկնել չնայած անձրևին
չհաշված	Prep,Post	ուղղ. որոշ.	չհաշված բացակայությունը գնահատել, գնահատել բացակայությունը չհաշված
չափ	Post	սեռ.	ուտել մեծի չափ

պատվին	Post	սեռ	կատարել ղեկավարի պատվին
պես	Post	սեռ.	վարվել հարազատի պես
պատճառով	Post	սեռ.	հրաժարվել հիվանդության պատճառով
պահին	Post	սեռ.	զանգել դասի պահին
ջոկ(հնց.)	Post	բաց.	ներկայանալ ընկերներից ջոկ
սիրուն	Post	սեռ.	երգել կնոջ սիրուն
սկսած	Post	բաց.	հաշվել ընկերոջից սկսած
սկզբում	Post	սեռ.	ներկայացնել զեկուցման սկզբում
վար	Post	բաց.	սահել պատից վար
վեր	Post	բաց.	բռնել ամպերից վեր
վրա	Post	սեռ.	դնել սեղանի վրա
վրայից	Post	սեռ.	վերցնել սեղանի վրայից
վրայով	Post	սեռ.	բռնել քաղաքի վրայով
վերև(ը)	Post	սեռ., բաց.	նստել տան վերևը, անցնել տնից վերև
վերևից	Post	սեռ.	բռնել գլխի վերևից
վերևով	Post	սեռ.	ցատկել գլխի վերևով
վերևում	Post	սեռ.	պտտվել գլխի վերևում
վերջում	Post	սեռ.	հայտնվել շարքի վերջում
վերաբերյալ	Post	սեռ.	արտահայտվել հարցի վերաբերյալ
վերաբերմամբ	Post	սեռ.	ունենալ ... ընկերոջ վերաբերմամբ
տակ	Post	սեռ.	նստել ծառի տակ
տեղ	Post	սեռ.	ստորագրել ընկերոջ տեղ
տեղակ	Post	սեռ.	ստորագրել ընկերոջ տեղակ
ցած	Post	բաց.	գլորվել սարից ցած
ուղղությամբ	Post	սեռ.	գնալ տան ուղղությամբ
փոխանակ	Prep	սեռ.	ժպտալ փոխանակ ամաչելու
փոխարեն	Post	սեռ.	կատարել ընկերոջ փոխարեն
օգտին	Post	սեռ.	ըվեարկել ընկերոջ օգտին
օրոք	Post	սեռ.	կատարվել տնօրենի օրոք

ՀԱՅԵՐԵՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ ՇՏԵՍԱՐԱՆ

Բնական լեզուն, որը մարդու միջնորդությամբ ստեղծված ու կատարելագործված ամենաբարդ ֆենոմենն է, միշտ էլ գտնվել է գիտության տարբեր բնագավառների ուսումնասիրության կենտրոնում: Այսօր, հենվելով լեզվաբանության նվաճումների վրա լեզվական առանձնահատկությունները ուսումնասիրվում են փիլիսոփայության, հոգեբանության, կիրեռնետիկայի, անգամ բժշկագիտության կողմից, որոնցում ստացված գիտական արդյունքները, չնայած գիտական հենքերի ու հայեցակետերի տարբերությանը, միահյուսվում, ավելի ճիշտ, հարում են իրար և դա բնական է, քանի որ ուսումնասիրության առարկան նույնն է՝ լեզուն: Նույնիսկ չի զարմացնում այն փաստը, որ այսօր տեխնիկական բարդ համակարգեր նախագծող մասնագետները հաճախ դիմում են լեզվական երևույթների ուսումնասիրությանը կամ հենվում նշված բնագավառներում ստացված գիտագործնական արդյունքների վրա, երբ այդ համակարգերի համար անհրաժեշտ է մշակել են գործընթացներ, որոնք ունենան տարաժամանակյա ու համաժամանակյա, ընդհանուր ու մասնակի, անփոփոխակալին ու տարբերակալին, կանոնական ու բացառիկ, ընդհանուր և մասնակի բնույթ (այս հակադրությունների ցանկը կարելի է շարունակել շատ երկար): Դժվար չէ համոզվել, այս ամենը համատեղ ձևով հանդես են գալիս լեզվի մեջ և այդ իսկ պատճառով դրանց համալիր ուսումնասիրությունն առաջին հերթին լեզվաբանության գործն է:

Նշված առանձնահատկությունները լեզուն ձեռք է բերել իր պատմական զարգացման և տարածքային բաշխման շնորհիվ: Այդ նշանակում է, որ լեզուն զարգանալով ժամանակի ու տարածության մեջ, նրա զարգացման տարբեր փուլերի արձանագրությունները մեզ մեզ հասել են տեքստերի տեսքով, որոնց մեջ պետք է առանձնանան ենթե՝ ժամանակայնությունը, թե՝ տարածքայնությունը: Դա մեզ հիմք է տալիս պնդելու, որ լեզվի մեջ հանդես

եկող ցանկացած օբյեկտ կամ երևույթ կարելի է դիտարկել թե՛ ժամանակային, թե՛ տարածքային պլանով: Հարկ է նշել, որ այդ առանձնահատկությունների բազմազանության պատճառով էլ լեզվական միավորների սահմանազատումը ժամանակային կամ տարածքային առումով հեշտ գործ չէ, քանի որ լեզվի բնականոն զարգացման ընթացքում նրանում փոփոխությունները տեղի են ունենում ոչ թե շեշտակիորեն, այլ դանդաղ և սահմանները հաճախ ուրվագծվում են են ոչ թե գծերի, այլ լայն շերտերի տեսքով ու այդ աղոտ տարածքում (ժամանակային և տարածական առումով) միաժամանակ կարող են հանդես են գալ սահմանակից տարածքի միավորներ: Չնայած այս անորոշությանը, այնուամենայնիվ, լեզվաբանական գիտության մեջ մշակված են մեթոդներ այդ սահմանները որոշելու համար: Մասնավորապես հայերենի համար մեր հետազոտություններում հիմք ենք ընդունել ակադեմիկոս Գ. Լորգ Զահուկյանի կողմից կատարված սահմանաբաժանումը, որ հրապարակված է լեզվի պատմությանը և բարբառագիտությանը նվիրված նրա աշխատություններում: Աղոտ սահմաններով միջավայրերի ուսումնասիրությամբ այսօր զբաղվում է նաև մաթեմատիկան: Այստեղ առաջացել է մի նոր ճյուղ, որն զբաղվում է աղոտ սահմաններով բազմությունների ուսումնասիրման և մոտավորություններ պարունակող խնդիրների, մասնավորապես լեզվաբանական, վճռման համար մեթոդների մշակման հարցերով: Այսօր առանձին իրողությունների ձևային նկարագրություններ կազմելիս լեզվաբանությունը փոխադարձաբար օգտվում է մաթեմատիկայի ընձեռած հնարավորություններից:

Ասվածը թույլ է տալիս պնդելու, որ ժամանակակից ինֆորմատիկայի տեսակետից լեզուն կարող ենք ներկայացնել իբրև ժամանակատարածքային վեկտոր, այսինքն՝ մի օբյեկտ, որի հետազոտման համար իբրև առանցներ կարելի է ընտրել ժամանակը և տարածությունը: Գործնական առումով դա նշանակում է լեզվի համակարգային ուսումնասիրության համար անհրաժեշտ է հետազոտման ոլորտ պետք է մտցնել մի կողմից հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը ստեղծված տեքստերը, իսկ մյուս կողմից՝ աշխարհագրական առանձին տարածքներում գործող տարբերակները: Այս պնդումը նորություն չէ, քանի որ լեզվի ժամանակային հարցերով զբաղվում է պատմական

լեզվաբանությունը, իսկ տարածքային հարցերով՝ աշխարհագրական կամ արեալային լեզվաբանությունը: Խնդիրն այստեղ նոր միջոցների և մեթոդների օգտագործումն է, որը մեր կարծիքով, կքարձրացնի լեզվաբանական հետազոտությունների արդյունավետությունը և հուսալիությունը, քանի որ հնարավորություն է ստեղծվում ուսումնասիրել շատ անգամ մեծ թվով փաստեր:

Հարցադրումից արդեն երևում է խնդրի ծավալայնությունը և բարդությունը: Կիրառել այս կադապարը, նշանակում է լեզվական ցանկացած միավորի կամ երևույթի համար կարողանալ ստանալ նրա ժամանակային և տարածքային բնութագրերը: Իսկ այդ անելու համար անհրաժեշտ է ունենալ շտեմարաններ, որտեղ գրանցված լինեն լեզվի ժամանակային ու տարածքային տարբերակները, և մեխանիզմ, որը թույլ կտա հաշվելու, որոշելու կամ սահմանազատելու այս կամ այն անհրաժեշտ պարամետրը:

Ելնելով խնդրո առարկայից մեր հիմնական խնդիրը տեսնում ենք հայ լեզվաբանական գիտության հետագա զարգացման համար ստեղծել մի շտեմարան, որն իր մեջ ամփոփի հայերենի տարածքային տարբերակները: Այնտեղ պահվելու են բարբառային բառերի բառարաններ, բարբառային նյութեր և լեզվաբանական ատլասներ, այսինքն՝ այն, ինչով դրսևորվում են հայերենի տարածքային առանձնահատկությունները: Դրանք կազմելու են հայերենի տարածքային շտեմարանի ինֆորմացիոն հենքերը: Այդ հենքերը սպասարկելու համար անհրաժեշտ է ունենալ նաև օգտատերի գերապատվությամբ աշխատող օպերացիոն համակարգ, որը թույլ կտա փորձարկել լեզվաբանական այս կամ այն վարկածը նշված ինֆորմացիոն հենքերի նկատմամբ:

Լեզվական խնդիրների ուսումնասիրության և վճռման հարցում արմատական բեկում մտցրին ժամանակակից համակարգիչները, որոնք բանող գործիքից աստիճանաբար վերափոխվում են բանական գործիքի, իրենց վրա վերցնելով հսկայական բանական բեռնվածություն: Կիրառել ժամանակակից համակարգիչները լեզվաբանական ուսումնասիրություններում նշանակում է ստեղծել մեր ունեցած ողջ ինֆորմացիայի էլեկտրոնային տարբերակը, որն առաջին հայացքից թվում է անընդգրկելի: Բավական է ասել, որ համակարգիչների մեջ անհրաժեշտ է գրանցել հարյուրավոր, նույնիսկ հազարավոր տեքստեր և տասնյակ բա-

ռարաններ, բառացանկեր, դրոնց համար ստեղծել սպասարկման համակարգեր, և միանգամից պարզ կդառնա թե ինչ հսկայական ծավալների հետ մենք գործ ենք ունենալու: Սակայն, մյուս կողմից, չսկսել այդ աշխատանքը, նշանակում է թողնել, որ հետագա լեզվաբանական ուսումնասիրությունները մտնեն փակուղի, որի նշանները արդեն 1-2 տասնամյակ է, ինչ առկա են: Այսօր շատ թե քիչ արժեքավոր աշխատանք հնարավոր չէ կատարել առանց համակարգիչների կիրառության: Գիտության բազմաթիվ ճյուղեր վաղուց արդեն ընդունել են այս իրողությունը, սակայն լեզվաբանությունը դեռ հապաղում է: Իհարկե կան օբյեկտիվ պատճառներ, սակայն իմ կարծիքով հիմնական պատճառը կրում է սուբյեկտիվ բնույթ: Իհարկե, կարելի պնդել, որ լեզվաբանության համար հիմնական խոչընդոտը համակարգիչների աշխատանքի ոչ բարձր հուսալիությանն է, գործելու նվազ արագությունը և ինֆորմացիայի կուտակիչների սահմանափակ ծավալը: Սակայն համակարգիչների աշխատանքի հուսալիության բարձրացման միտումը և արագության ու կուտակիչների ծավալի շեշտակի աճը հույս է ներշնչում, որ ապագայում կստեղծվեն այս կարգի խնդիրների վճռման համար պիտանի համակարգիչներ: Մի հարց, որ միշտ եղել է և այսօր էլ մնում է օրակարգում դա համակարգչային ծրագրերի ոչ լիովին հարմարվածությունն է լեզվաբանական խնդիրների վճռման համար: Լեզվաբանությանը օգնելու նպատակով ժամանակակից համակարգիչների հիմքի վրա անհրաժեշտ է ստեղծել լեզվաբանական գործընթացների (կազմել բառարաններ, համեմատել լեզվական միավորներ որոշ պարամետրերի ընդգրկումով, ուսումնասիրել գույգորդումներ և այլն) ավտոմատ կատարման հնարավորություն, որոնց համակցման միջոցով կարելի լինի հենքերի հիման վրա վճռել լեզվաբանական տարբեր կարգի խնդիրներ: Պրակտիկան ցույց է տալիս, որ այսօր միևնույն տեքստը համակարգիչների մեջ մուտքագրվում է կամ միևնույն ինֆորմացիոն հենքը ստեղծվում է բազմապատիկ անգամ տարբեր ուսումնասիրողների կողմից: Այսպես օրինակ, միևնույն տեքստի համաբարբառ կազմողերը, վիճակագրական հարցերով զբաղվողները կամ լեզվաառնական առանձնահատկություններն ուսումնասիրողները ձգտում են ստեղծել իրենց խնդիրներին համապատասխանող ինֆորմացիոն հենքեր և մշակել անհրաժեշտ գործընթացներ և

դա կրկնվում է տարբար կազմակերպություններում տարբեր ստեղծագործական խմբերում: Այս գեկուցմամբ ես ցանկանում եմ կոչ անել հայերենագիտությամբ զբաղվող մասնագետներին ընդհանուր ջանքերով, ինչպես անում են գիտության այլ բնագավառի ներկայացուցիչները, ձեռնամուխ լինել ընդհանուր միջոցների ստեղծմանը, որոնք կօգտագործվեն առանձին հետաքրքրություն ունեցող խնդիրների վճռման համար: Դրանք կարող են վերաբերել թե տեքստերի ընտրությանը, թե բառարանների անհրաժեշտությանը և այլն:

Հայ բարբառների լեզվաբանական շտեմարան: Հայերենը որպես աշխարհի բարբառներով հարուստ լեզուներից մեկը վերջին հարյուրամյակում մեծ հետաքրքրություն է առաջացրել օտարազգի հայագետների շրջանում: Վերջիններս հաճախակի արտահայտել են իրենց մտահոգությունը հայերենի բարբառագիտական ատլասի կազմության հապաղման առիթով՝ հույս ունենալով, որ ատլասի ընձեռած նյութերի ուսումնասիրությամբ կլուսաբանվեն նաև հնդեվրոպաբանության և ընդհանուր լեզվաբանության մի շարք խնդիրներ:


Հայագիտության զարգացման համար այս շատ կարևոր, վերջին տարիների հայ լեզվաբանության ամենաառաջնահերթ և հրատապ ձեռնարկումներից մեկն է: Այն պետք է սկսված ու ավարտված լիներ դեռևս 40-60-ական թվականներին, երբ ըստ ամենայնի կենդանի և գործուն էին թե՛ արևելյան, թե՛ արևմտյան տարածքների խոսվածքները: Այժմ, երբ ուժեղացել է բարբառների խառնման, համահարթեցման և վերացման գործընթացը, երբ կյանքից հեռանում են Արևմտյան Հայաստանից վերաբնակեցված հին սերնդի ներկայացուցիչները, ավելի քան հրատապ է դառնում բարբառային նյութի համալրման ու դրանց մշակման գործը: Եթե այդ չարվի առաջիկա մի քանի տարվա ընթացքում, ապա այլևս երբեք չի արվի, և կկորչի հայերենի բարբառների ճոխ, հարուստ գանձարանը ապագա սերունդների փոխանցելու հնարավորությունը:

Հայ լեզվաբանության մեջ առաջինը Հ.Աճառյանն էր, որ անմիջականորեն ծանոթ լինելով ֆրանսիական բարբառագիտական ատլասի ստեղծման աշխատանքներին, դարասկզբին նախանձախնդրությամբ փորձեց միայնակ ձեռնարկել հայերենի

բարբառների նյութերի հավաքման գործը: Սակայն Հ.Աճառյանի սկսած գործը ավարտին չհասավ:

1976 թվից Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում սկսվել և շարունակվում է գիտարշավների միջոցով բարբառային նյութերի հավաքումը, և առ այսօր արդեն կուտակվել են նյութեր մոտ 500 բնակավայրերից, որոնք ընդգրկում են հայերենի բարբառների թե՛ արևելյան, թե՛ արևմտյան տարածքների խոսվածքները: Բոլոր նյութերը հավաքվել են Հայ բարբառների լեզվաբանական ատլասի ծրագրին համապատասխան, որը բազմիցս քննարկվել է ազգային և միջազգային գիտաժողովներում և հավանության է արժանացել աշխարհի հայտնի բարբառագետների կողմից: Այն բաղկացած է չորս բաժնից՝ բառանվանողական, բառաիմաստային, քերականական և հնչյունային, որոնց հիման վրա կազմված 800 քարտեզները կարտացոլեն հայերենի բարբառների բառային, իմաստային, քերականական և հնչյունային ընդհանրություններն ու տարբերությունները: Նյութերի ընդհանուր ծավալը կազմում է մոտ 1000 մեգաբայթ, որի միայն մուտքագրումը տարիների աշխատանք է: Այս նյութերից առանձին լեզվի ինստիտուտում մշակված ունենք հայ բարբառների բառարանը, որն ամփոփում է ավելի քան 100000 բառահոդված, որոնց մեջ նկարագրվում են հայերենի բարբառային միավորները՝ նշված ըստ բարբառային պատկանելության:

Եթե սխեմատիկ ձևով ներկայացնենք հայերենի տարածքային տարբերակների շտեմարանը, ապա կունենանք հետևյալ տեսքը.



Աշխատանքում առաջ քաշվող առաջնային ու հիմնական խնդիրը հայերենի բարբառագիտական ատլասի կազմումն է, որի

մեջ ընդգրկվելիք քարտեզները կներկայացնեն հայերենի բարբառների հնչյունական, քերականական և բառային հատկանիշների տեղաբաշխումը ըստ բարբառախոս վայրերի: Քարտեզների գիտական մեկնաբանությունը կբացահայտեն բարբառային երևույթների տարածքային բաշխման պատմական հիմքերը, բարբառների և խոսվածքների փոխհարաբերությունը, նրանց միջև ուրվագծվող սահմանները:

Հայ բարբառների լեզվաբանական շտեմարանի տվյալները լայնորեն կկիրառվեն հայագիտական (լեզվաբանական, պատմական, ազգագրական, բանասիրական և այլն) հետազոտություններում:

Այսօր մախապատրաստվում է շտեմարանի առաջին հատվածը: Դա բառանվանողական զուգաբանությունների ներկայացումն է: Հիմնական ծրագրային միջոցը Access համակարգն է, որ թույլ է տալիս ինտերակտիվ ռեժիմով կատարել ծրագրով մախատեսած փորձարկումները:

Հարկ է նշել, որ թեև ժամանակակից համակարգիչները հսկայական հնարավորություններ են ընձեռում ինֆորմացիայի արագ և արդյունավետ վերամշակման համար, սակայն խնդիրն այլ է բարբառային նյութերի վերամշակման ժամանակ: Բանն այն է, որ բարբառային միավորների ներկայացման համար անհրաժեշտ են բավականին շատ գրանշաններ, որոնք բացակայում են համակարգիչների գրանշանային ցանկերից: Տողերիս հեղինակը բարբառագիտական բաժնի աշխատակիցներ Ա.Հանեյանի և Մ.Աղաբեկյանի աշխատակցությամբ ստեղծել է գրանշանների համախումբ՝ հայերենի բարբառների գրանցման համար: Խնդիրն է, համատեղել այդ գրանշանները Access համակարգի հնարավորություններին:

Ստորև տրված է հայերենի բարբառային գրանշանների ամփոփիչ աղյուսակը.

	Հնչյունական հատկաչանք	Գրանշան	Font 0 - 5	Լրացուցիչ ստեղծ	Font-ի անվանումը
1.	Չայնավորի կարճ արտաբերում	ն	Ctrl + 1	Shift	HnchaGir-1
2.	Սասն. ըմ. ծայնավորի կարճ արտաբերում	ն	Ctrl + 5	Alt	HnchaGir-5
3.	Ըմ. ծայնավորի կարճ արտաբերում	ն	Ctrl + 5	–	HnchaGir-5
4.	Տևական արտաբերում	ն, զ	Ctrl + 1	–	HnchaGir-1
5.	Սասն. ըմ. ծայնավորի տևական արտաբերում	ն	Ctrl + 5	Shift	HnchaGir-5
6.	Ըմ. ծայնավորի տևական արտաբ.	ն	Ctrl + 1	Alt	HnchaGir-1
7.	Չ. փակություն	խ	Ctrl + 2	Shift (x –)	HnchaGir-2
8.	Չ. մասնակի փակություն	խ	Ctrl + 3	Shift	HnchaGir-3
9.	Չ. բացություն	փ	Ctrl + 2	–	HnchaGir-2
10.	Չ. մասնակի բացություն	փ	Ctrl + 3	–	HnchaGir-3
11.	Բաց ծայնավորի չրթնայնացում	փ	Ctrl + 4	–	HnchaGir-4
12.	Շրթնայնացում	ա, ս	Ctrl + 3	Shift	HnchaGir-3
13.	Չ. մասնակի չրթնայնացում	փ	Ctrl + 3	Alt	HnchaGir-3
14.	Ըմայնացում	ն	Ctrl + 2	Shift	HnchaGir-2
15.	Սասնակի ըմայնացում	զ	Ctrl + 2	Alt	HnchaGir-2
16.	Բ. ծայնեղ շնչեղացում	բ	Ctrl + 4	–	HnchaGir-4
17.	Չայնեղ Բ. թույլ շնչեղացում	բ	Ctrl + 2	–	HnchaGir-2
18.	Չայնորդ Բ. խլացում	լ	Ctrl + 4	–	HnchaGir-4
19.	Կոկորդային Բ. ծայնեղացում	հ	Ctrl + 4	Shift	HnchaGir-4
20.	Բ. հիմն. ծայնաբ. հատկ. ուժեղաց.	բ	Ctrl + 3	–	HnchaGir-3
21.	Բ. հիմն. ծայնաբ. հատկ. թուլացում	բ	Ctrl + 3	Shift	HnchaGir-3
22.	Բ. առաջընթաց արտաբերում	լ	Ctrl + 1	Shift	HnchaGir-1
23.	Բ. հետընթաց արտաբերում	զ	Ctrl + 1	Shift	HnchaGir-1
24.	Հնչյունի ըմպայնացում	□	Ctrl + 1	Alt	HnchaGir-1
25.	Հնչյունի ըմպանային արտաբերում	լ	Ctrl + 1	Shift	HnchaGir-1
26.	Հնչյունի կոկորդային հպում	բ	Ctrl + 4	Shift	HnchaGir-4
27.	Կիսաշփական Բ. շփականացում	ւ	Ctrl + 4	Alt	HnchaGir-4
28.	Շփական Բ. հպականացում	զ	Ctrl + 4	Alt	HnchaGir-4
29.	Հնչյունի ռնգայնացում	ա	Ctrl + 4	Alt	HnchaGir-4
30.	Գրական լեզվի այբուբեն	ա - ֆ	Ctrl + 0		HnchaGir-0
31.	Լրացուցիչ	с	Ctrl + 0	3	HnchaGir-0
32.	Լրացուցիչ	с	Ctrl + 0	Shift + 3	HnchaGir-0
33.	Լրացուցիչ	у	Ctrl + 0	Shift + 4	HnchaGir-0
34.	Լրացուցիչ	а	Ctrl + 0	Shift + 5	HnchaGir-0

Իբրև օրինակ ցուցադրենք գրանշանների գրանցման մի հատված, որ հեղինակին տրամադրել են Ա.Հանեյանը և Մ.Ադաբեկյանը.

ա) Չայնավորի բացություն՝ ա, է, ը
օր.՝ խպց, պպտ (Վան), մէս «միս», ծէտ «ծիտ», կէր «կեր» (Ղրբ.),
գըսը «կասի, ասում է» (Հազգո), գիկը «գալիս է», գուզը «ուզում
է», ըմմէն «ամեն», հընդը «ահա (Մասուն).

բ) Չայնավորի փակություն՝ ը, է, օ
օր.՝ խընամը «խնամի», հօքը «հոգի» (Ղրբ. Հավարիկ), մէս
«միս», վէգ «վիգ» (Քեսաբ), քօլօխ «գլուխ», գօձու «կծու»
(Մալաթիա), կօլօխ (Չալթր Ն.Ն.).

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Աբրահամյան Անահիտ, Արոր գործիքանիշ հասկացության բառագուգաբանությունները հայերենի բարբառներում.....	5
Ասիլբեկյան Շուշան, Լրացուցիչ տվալներ Շամշադինի խոսվածքի մասին	16
Բառնասյան Ջենմա, Յուգական դերանունների ձևախմաստային դրսևորումները հայերենի բարբառներում	25
Բարսեղյան Ամալյա, Խնդրառական կապակցությունների սխալ դրսևորումները արդի մամուլում	35
Գևորգյան Գայանե, Բայի անդեմ ձևերի գործառական տարարժեքության վերացումը բարբառներում	44
Գրիգորյան Աստղիկ, <i>Օժիտ</i> հասկացությունը հայերենի բարբառ- ներում	55
Դալալյան Տորք, «Արևելախրանական միջնաշերտի» որոշ նմուշներ հայոց բառապաշարում	61
Դիլբարյան Նարինե, Տեղանվանակերտ կենսունակ ածանցներն արդի հայերենում	70
Խաչատրյան Հասմիկ, (Ռմմախորշ) հասկացության գուգաբանությու- նները հայերենի բարբառներում	80
Կատվալյան Վիկտոր, Ընդհանուրհայերենյան լեզվական հատկա- նիշները բարբառներում	90
Համբարձումյան Վազգեն, Նկատառումներ լատինաբան հայերենի տարբերակիչ հատկանիշների վերաբերյալ	98
Հովսեփյան Լիանա, Հայոց լեզվի պատմության հիմնախնդիրներն ու սկզբունքները	107
Միքայելյան Ժաննա, Առկայացման քերականական կարգը Ղարաբաղի բարբառում	123
Մեսրոպյան Հայկանուշ, <i>Տէր</i> բառով կազմությունները հայերենի բարբառներում	130
Մխիթարյան Գայանե, <i>Զարոզը</i> և <i>գանձը</i> հայերենի երաժշտական տերմինահամակարգում	142
Պապիկյան Սիլվա, Ասորերենից փոխառյալ կրոնական մի քանի տերմինների իմաստային փոփոխությունների մասին	148

Ջիհանյան Վռամշապուհ, Հին հայերենի բայերի վերադասակարգման մի փորձ	156
Սանթրոյան Արեն, Արդի հայերենի պակասավոր բայերի մասին	164
Տիտյան Մուսաննա, Կապերի ներկայացման մի եղանակի մասին	168
Ուռուտյան Ռոբերտ, Հայերենի տարածքային տարբերակների շտեմարան	178

ՋԱՀՈՒԿՅԱՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ-2008
Հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ
(Երևան, մայիսի 7-8, 2008թ.)

ДЖАУКЯНОВСКИЕ ЧТЕНИЯ—2008
доклады республиканской научной сессии
(Ереван, май 7–8, 2008г.)

JAHUKIAN REDINGS – 2008
Republican Scientific session reports
(Yerevan, May 7–8, 2008)

Խմբագիր՝ Ա. Սահակյան
Համակարգչային էջադրումը՝ Վ. Պապյանի

Հրատ. պատվեր՝ N 209
Հանձնված է արտադրության՝ 28.07.2008 թ.:
Չափեր՝ 60 x 84 ¹/₁₆: Թուղթ՝ օֆսեթ N 1:
11.8 տպագր. մամուլ: Տպաքանակը 200 օրինակ:
Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն,
Երևան, Բաղրամյան 24գ:

1500yr]

ՀԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՒՆ ԳԻՒՆ



FL0081554

A π
93746